

Է.Ս.ԳԵՎՈՐԳՅԱՆ, Ֆ.Դ.ԴԱՆԻԵԼՅԱՆ, Ա.Յ.ԵՍԱՅԱՆ, Գ.Գ.ՄԵՎՈՅԱՆ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

10

(ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՀՈՍՔԵՐԻ ՀԱՄԱՐ)



ԵՐԵՎԱՆ, «ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ», 2010

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՅ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 363.167.1: 574/577(075.3)

ԳՄԴ 28.0 ս72

Կ-414

Ընդհանուր խմբագրությամբ՝ ՀՅ ԳԱԱ թղթակից ամդամ, պրոֆեսոր Ա.Չ. Թօքումյանի

- Կ-414** **Կենսաբանություն-10:** Դասագիրք ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական և ընդհանուր հոսքերի համար/ Է.Ս.Գևորգյան, Ֆ.Դ.Դանիելյան, Ա.Չ.Եսայան, Գ.Գ.Սևոյան - Եր., «Աստղիկ Գրատուն», 2010, -208 էջ:

Դասագրքի որոշ պարագրաֆներում առավել մանրակրկիտ նկարագրված նյութերն առանձնացված են կապույտ եզրագծով, իսկ դրան վերաբերող հարցերը՝ կապույտ գույնով:

ՀՏԴ 363.167.1: 574/577(075.3)

ԳՄԴ 28.0 ս72

ISBN 978-99941-76-53-3

© Է.Ս. Գևորգյան, Ֆ.Դ. Դանիելյան, Ա.Չ. Եսայան, Գ.Գ.Սևոյան, 2010
© «Աստղիկ Գրատուն» հրատարակչություն, 2010

«ԱՍԴԻԿ ԳՐԱՏՈՒՆ» հրատարակչություն

0009, Երևան, Գևորգ Քոչարի փ., 21.

հեռ.+374 10 52 88 00, E-mail: ast_gratun@yahoo.com

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ Է Կյանքի և նրա դրսնորումների մասին: Կենսաբանությունը որպես գիտություն կյանքի մասին վերջնականապես ձևավորվեց դեռևս 19-րդ դարում: Այնուհետև այն ընդլայնվեց և դարձավ մի համալիր բնագավառ, որն իր մեջ ներառում է երկրագնդի բոլոր օրգանիզմներին՝ բակտերիաներին, սնկերին, բույսերին, կենդանիներին, ինչպես նաև մարդուն նվիրված բաժինները և օրգանիզմների կենսագործունեության ընդհանուր օրինաչափություններն ամբողջացնող ուղղությունները: Միջին դպրոցի դասընթացներում դուք հակիրծ ծանոթացել եք կենդանի օրգանիզմների կառուցվածքին և ֆունկցիաներին, կենդանի բջիջների ընդհանրությանը, կյանքի ոչ բջջային ձևերին, կենդանի օրգանիզմների ժառանգականությանն ու փոփոխականությանը, նրանց վրա շրջակա միջավայրի տարբեր գործոնների ազդեցությանը, ինչպես նաև երկրագնդի վրա կյանքի ծագմանը և զարգացմանը նվիրված հարցերին: Ավելի խոր ծանոթացում կենսաբանության նշված ուղղություններին նախատեսում են ավագ դպրոցի դասընթացները, ինչը բխում է 21-րդ դարում կյանքի մասին գիտության կարևորությունից և առաջնահերթությունից:

Դիրավի, կենսաբանությունը գրավում է իր կարևոր և ուրույն տեղը բնագիտական առարկաների շարքում: Առանց կենսաբանության մեր պատկերացումները բնության մասին, որպես երկրագնդի անկենդան մարմինների և կենդանի օրգանիզմների միասնության, կլինեին շատ և շատ թերի:

Կենսաբանությունը սերտ կապված է գիտության այլ բնագավառների հետ:

Ուսումնասիրներով բակտերիաները, սնկերը, բույսերը, կենդանիները, ինչպես նաև մարդուն՝ բացահայտվում է տարբեր օրգանիզմների կենսագործունեության ընդհանուր օրինաչափությունների հիմքում ընկած կապը քիմիայի և ֆիզիկայի հիմնական օրինաչափությունների հետ: Այդ կապի դրսնորումներից են կենդանի օրգանիզմների բջիջների քիմիական կազմը, դրանցում տարբեր քիմիական տարրերի առկայությունը, եներգիայի և նյութերի փոփոխակերպումները և այլն:

Բակտերիաներում և կանաչ բույսերում ընթացող ֆոտոսինթեզի ժամանակ արեգակնային էներգիայի փոխակերպումը քիմիականի, պարզ անօրգանական նյութերից՝ ջրից և ածխաթթու գազից օրգանական նյութերի՝ շաքարների սինթեզը և կենդանի օրգանիզմներում ընթացող բազմաթիվ այլ գործնթացներ վկայում են այն մասին, որ օրգանիզմներում գործում են ֆիզիկայի և քիմիայի օրենքները, որոնք կենդանի համակարգերում ստանում են իրենց ուրույն դրսւորումները:

Կենսաբանությունը սերտորեն կապված է մաթեմատիկայի հետ: Կենդանի օրգանիզմների կառուցվածքի և ֆունկցիաների ցուցանիշները, կենսագործունեության ընդհանուր օրինաչափությունների քանակական վերլուծությունները, դիֆերենցիալ հավասարումների միջոցով ստացված մաթեմատիկական մոդելները վաղուց լայն կիրառություն ունեն կենսաբանական համակարգերի ուսումնասիրություններում: Ներկայումս նճան հետազոտությունները նոր թափ են ստացել հատկապես կիրառական մաթեմատիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ կապված, ձևավորվել է գիտության նոր ճյուղ՝ կենսահինֆորմատիկան, որը բուրում զարգացում է ապրում:

Բնագիտական առարկաների շարժում առանձնահատուկ է կենսաբանության կապն աշխարհագրության հետ, քանի որ բակտերիաների, սնկերի, բույսերի, կենդանիների, ինչպես նաև մարդու ապրելը տարբեր աշխարհագրական գոտիներում պայմանավորված է նրանցում տարբեր բնակլիմայական պայմաններով և այլ հատկություններով: Հատկանշական է կենդանի օրգանիզմների տեսակի աշխարհագրական չափանիշը, որը բնութագրում է տեսակն երկրի վրա իր տարածման վայրով՝ արեալով:

Երկրաբանության հետ նույնպես կապ ունի կենսաբանությունը, քանի որ երկրի վրա կյանքի ծագման և զարգացման, ինչպես նաև կենդանի օրգանիզմների տարածման պարզաբանումը պահանջում է երկրագնդի կեղևի մասին համապատասխան գիտելիքներ:

Աստղագիտական օրինաչափությունների իմացությունը հնարավորություն է տալիս պարզաբանելու շատ երևույթներ և գործուներ, որոնք կապված են կյանքի ծագման և զարգացման, կենդանի օրգանիզմների կենսագործունեության վրա ունեցած ներգործությունների հետ:

Բնագիտական տարբեր գիտությունների հետ կենսաբանության կապի դրսւորումն է կենսաֆիզիկայի, կենսաքիմիայի, կենսաաշխարհագրության, կենսաճարտարագիտության և այլ գիտությունների ձևավորումը և զարգացումը:

Կենսաբանությունն, իր մեջ ներառելով տարբեր բնագիտական բնագավառների տեղեկությունները, բուրում զարգացում է ապրում մեր օրերում: Այն դարձել է 21-րդ դարի առաջատար գիտություններից մեկը և կոչված է լուծելու արդիական այնպիսի համընդհանուր իհմնախնդիրներ, ինչպիսիք են, օրինակ, կենդանի օրգանիզմների և առաջին հերթին մարդու պահպանությունը, սննդամբերքով և այլընտրանքային էներգիայով մարդկության ապահովումը և այլն:

Կենսաբանության զարգացումը Հայաստանում: Կենսաբանական ուսումնասիրություններն սկիզբ են առել շատ վաղուց՝ հնագույն ժամանակներից։ Ծանոթանալով կենսաբանության զարգացման համառոտ պատմությանը՝ կարող ենք փաստել, որ կենդանի օրգանիզմների մասին, դրանց կառուցվածքի և ֆունկցիաների, ինչպես նաև զարգացման վերաբերյալ տեղեկություններ նշվել են հայ նշանավոր մտածողների աշխատություններում դեռևս 4-6-րդ դարերում։

Այդ ժամանակ արդեն Հայաստանում հայտնի էին լոշտակի, սև գնդիկի և այլ բույսերի, ինչպես նաև տարբեր հանքանյութերի բուժիչ հատկությունները։ Ազաքանգեղոսը, օրինակ, հիշատակել է բույսերի մի քանի տասնյակ տեսակ և տվել բույսերի դասակարգումը՝ խմբավորելով դրանք ըստ արտաքին կառուցվածքի նմանության (**նկ. 1**):



Նկ. 1. Մատենադարանում պահվող բուսատեսակների նկարագրությամբ ձեռագիր։

Եզնիկ Կողբացուն հայտնի էին կենդանիների բնազդը, մարդու արյան և այլ հեղուկների հատկությունները, մարդու հատկանիշների ժառանգումը։ Ղազար Փարպեցին ճշգրտորեն նկարագրել է Հայաստանում տարածված բույսերն ու կենդանիները, Դավիթ Անհաղթը մարդուն բնորոշել է որպես «ուղղորդագնաց էակ», Գրիգոր Մագիստրոսը խոսել է մարսողության մասին և այլն։

Կենսաբանության զարգացումը 12-րդ դ. ընթացել է Կիլիկյան Հայաստանում։ Մեծ հեղինակություն էր վայելուն Մխիթար Յերացին կամ Մեծ Մխիթարը, ով իրավամբ համարվում է հայոց բժշկապետ։ Լինելով փորձարար՝ նա հետազոտություններ է կատարել իր իսկ փորձասենյակում կամ էլ հիվանդի

անկողնու մոտ, որոնց արդյունքներն ընդհանրացրել է իր աշխատություններում: Դրանցից գլխավորը «Ձերմանց մխիթարություն» գիրքն է, որը պահպան է Մատենադարանում: Նա նկարագրել է մեծ թվով հիվանդություններ, այդ թվում՝ տենոր, բացահայտել շատ հիվանդությունների, հատկապես տիֆի վարակիչ բնույթը: Մխիթար Հերացին տվել է նաև շատ հիվանդությունների բուժման համար պիտանի բույսերի, այդ թվում՝ նունուֆարի, մանուշակի, հիրիկի, կղմուխի, դաղձի, օշինդրի, եզան լեզվի մանրակրկիտ նկարագիրը:

13-14-րդ դարերում կենսաբանության հետագա զարգացումն ընթացավ Հայաստանում գործող կրթական օջախներում համալսարաններում, որտեղ ուսումնասիրում էին բնագիտություն և բժշկություն: Գրիգոր Տաթևացին (Տաթևի համալսարանից) բացատրում էր, թե ինչո՞ւ, օրինակ՝ սերմերը չեն ծլում ձմռանը և ամռանը, կամ կենդանիների մոտ ինչպե՞ս են առաջանում համը, հոտը, գույնը և այլն (**Ակ. 2**): Նա խմբավորել է Հայաստանի բույսերն, ինչպես նաև ձկները և թռչունները: 15-րդ դ. բժշկապետ և բուսաբան Ամիրդուկիար Անասիացին նկարագրել է բազմաթիվ դեղաբույսեր, տվել դրանց տարածման շրջանները: Այդ դեղաբույսերից են կոծծուկը, կղմուխը, ուրցը, երիցուկը, վաղենակը, երկաթախոտը, լոշտակը: Նա բուժման համար կիրառել է նաև բարդ բնական նյութ՝ մումիոն, որը գոյանում էր բույսերի և կենդանիների քայլայումից:



Ակ. 2. Գրիգոր Տաթևացին աշակերտների հետ:

19-րդ դ. բուսաբան և բժիշկ Ստեփանոս Շահրիմանյանը հրատարակել է «Հայաստանի ֆլորան» աշխատությունը, որտեղ նկարագրված են հարյուրավոր բույսեր: Նման աշխատություն՝ «Հայբուսակ կամ հայկական



Նկ.3. Երևանի պետական համալսարանը և Կենսաբանության ֆակուլտետը:

բուսաբառ» անվանումով, բայց արդեն մի քանի հազար բույսերի ընդգրկմանք, կազմել է Ղևոնդ Ալիշանը: Կենդանի օրգանիզմների պատմական զարգացման մասին պատկերացումներ է տվել Միքայել Խալքանդյանը:

Կենսաբանությունը բուրն զարգացում ապրեց 20-րդ դարում Երևանի պետական համալսարանի հիմնադրմամբ (1919թ.) (**Նկ. 3**): Այդտեղ կազմակերպվեց հայկական կենսաբանական դպրոցը հանձինս Յակոբ Շովհաննիսամի (Նկ. 4), Տիգրան Մուշեղյանի (Նկ. 5), Պապա Քալամբարյանի (Նկ. 6), Շովկակիմ Բեդելյանի (Նկ. 7), Յանշա Բուճիաբյանի (Նկ. 8), Գագիկ Դավթյանի (Նկ. 9), Յանան Բատիկյանի (Նկ. 10) և ուրիշների:

Նոր թափ ստացան և ընդլայնվեցին կենսաբանական հետազոտությունները Յայաստանի գիտությունների ակադեմիայի (Անդրկայումս՝ Յայաստանի Յանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա) և գիտական ու կրթական տարբեր օջախների հիմնադրմամբ:

Վերելք ապրեցին բուսաբանությունը, բույսերի ֆիզիոլոգիան, սնկաբանությունը, կենդանաբանությունը, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիան և



Նկ. 4. Յակոբ Շովհաննիսամի (1875-1941թթ.):

Նկ. 5. Տիգրան Մուշեղյան (1886-1935թթ.):

Նկ. 6. Պապա Քալամբարյան (1887-1942թթ.):

Նկ. 7. Շովկակիմ Բեդելյան (1874-1940թթ.):



Ակ. 8. Հրաչյան
Բունիածյան
(1907-1981թթ.):



Ակ. 9. Գագիկ
Ղավրյան
(1909-1980թթ.):



Ակ. 10. Հրաման
Բատիկյան
(1909-1983թթ.):



Ակ. 11. Արմեն
Թախտաջյան
(1910-2009թթ.):

Կենսաբանության այլ ճյուղերը: Մասնավորապես, սկսվեց հայրենի ֆլորայի ուսումնասիրությունն անվանի բուսաբան ակադեմիկոս Արմեն Թախտաջյանի (Ակ. 11) ղեկավարությամբ և հրատարակվեց «Հայաստանի ֆլորան» աշխատությունը: Լույս տեսավ «Հայաստանի սնկերի ֆլորան» բազմահատորյակը: Սեղանին դրվեց «Հայաստանի կենդանական աշխարհը» գիրքը:

Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ու հատկապես նյարդաֆիզիոլոգիայի զարգացման գործում մեծ ներդրում ունեցան Լևոն Օրբելին (Ակ. 12), Էզրաս Շասրաբյանը (Ակ. 13), Վիկտոր Ֆանարջյանը (Ակ. 14) և ուրիշներ: Բույսերի ֆիզիոլոգիայի բնագավառում՝ Միքայել Չայլախյանը (Ակ. 15):

20-րդ դարի 2-րդ կեսում Հայաստանում զարգացում ապրեցին մանրէաբանությունը, ֆիզիկաքիմիական կենսաբանությունը և կենսատեխնոլոգիան: Բնութագրվեցին Հայաստանի հողերի, հանքային ջրերի աղբյուրներից անջատված բակտերիաները, կաթնաթթվային բակտերիաների օգտագործման միջոցով ստեղծվեց «Լարինե» արժեքավոր սննդանյութը: Էական առաջնթաց ապրեց կենտրոնական նյարդային հանակարգի կենսաքիմիան, պարզաբանվեցին գլխուղեղից անջատված նոր՝ սպիտակուցային բնույթի ամբողջ շարք միացություններ, մանրակրկիտ ուսումնասիրվեց օրգանիզմում ամոնիակի փոխանակությունը:



Ակ. 12. Լևոն
Օրբելի
(1882-1958թթ.):



Ակ. 13. Էզրաս
Շասրաբյան
(1903-1981թթ.):



Ակ. 14. Վիկտոր
Ֆանարջյան
(1898-1976թթ.):



Ակ. 15. Միքայել
Չայլախյան
(1902-1991թթ.):

Բույսերի կենսաքիմիայի, կենսաբանության կիրառական հարցերի, կենսատեխնոլոգիայի, Քայաստանում կենսաբանության նոր ուղղությունների զարգացմանը իր զգալի նպաստն է բերել ակադեմիկոս Նորայր Սիսակյանը (**նկ. 16**):


Քայաստանում զարգացում են ապրել նաև բույսերի հիդրօպոնիկ աճեցման ուղղությունը, Սևանա լճի և այլ ջրամբարների էկոլոգիայի ուսումնասիրումը, փորձարարական մուտագենեզի մեխանիզմների պարզաբանումը, մարդու գենետիկայի և շատ այլ հիմնախնդիրների հետազոտումը:

Կենսաբանության նոր ուղղություններից է կենսաֆիզիկան, որն ուսումնասիրում է կենսագործունեության հիմքում ընկած ֆիզիկական և ֆիզիկաքիմիական գործընթացներն, ինչպես նաև շրջակա միջավայրի ֆիզիկական գործուների ազդեցությունը կենդանի օրգանիզմների վրա: Մեզ մոտ զարգացում է ապրում մոլեկուլային և բջջային կենսաբանությունը: Ներկայումս ուսումնասիրվում են ժառանգական ապարատի և կենսաբանական թաղանթների կառուցվածքը և ֆունկցիաները, կենսագործունեության տարրեր գործընթացների ներքջջային կարգավորումը և մի շարք այլ հետաքրքիր և հեռանկարային հիմնախնդիրներ:

Կենսաբանության զարգացումը Քայաստանում նպաստում է արդյունաբերության շատ ճյուղերի և գյուղատնտեսության զարգացմանն ու ընդլայնմանը, նոր ուղղությունների հիմնադրմանը, բույսերի նոր սորտերի, կենդանիների նոր ցեղատեսակների, բակտերիաների և սնկերի նոր շտամների ստեղծմանը, բարելավմանը և արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ ներդրմանը: Մասնավորապես, Քայաստանում շրջանացվել են



Նկ. 16. Նորայր
Սիսակյան
(1907-1966 թթ.):



Նկ. 17. Քայաստանում ստեղծված բույսերի սորտեր:



Նկ. 18. Քայաստանում ստեղծված կենդանիների ցեղատեսակներ:

բույսերի հարյուրավոր սորտեր, ստեղծվել են աշնանացան և գարնանացան ցորենի, գարնանացան գարու, ինչպես նաև կարտոֆիլի, լոբու, պոմիոդորի, տաքդեղի, բաղրիջանի, սեխի, խաղողի, ծիրանի, դեղձի և այլ բույսերի բազմաթիվ սորտեր ու հիբրիդներ (**Ակ. 17**):

Ստեղծվել են նաև օյուղատնտեսական կենդանիների նոր ցեղատեսակներ: Դրանց թվին են պատկանում կիսակոպտարուրդ ճարպապոչավոր ոչխարների, ինչպես նաև ճագարների, հավերի, մեղուների նոր ցեղատեսակները (**Ակ. 18**):

Կենսաբանությունը հիմք է հանդիսանում բժշկագիտության համար՝ պայմանավորելով մեզանում բժշկության նոր ուղղությունների մշակումն ու ներդրումը: Կյանքի մասին գիտությունը կարևոր է նաև Քայաստանում բնական պաշարների արդյունավետ օգտագործման և բնապահպանական հիմնահարցերի լուծման առումով:

Գերմանացի հանճարեղ բանաստեղծ Գյոթեն ասել է. «Բնությունը կատակներ չի ընդունում: Նա միշտ ճշմարիտ է, միշտ էլ լուրջ, միշտ խիստ, իսկ սխալները և մոլորությունները ծագում են մարդկանցից»: Ուսումնասիրելով կենսաբանությունը, փորձենք հասկանալ կյանքը, սիրենք և պահպանենք բնությունը:

ԲԱԺԻՆ / ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ: ԳԻՏԱԿԱՆ ճԱՆԱԳՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՏՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1. ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ՆՇԱՆԱԿՈՐ ԿԵՆՍԱԲԱՆՆԵՐ

Կենսաբանությունը հնագույն գիտություններից է: Այն սկիզբ է առել նախնադարում՝ հնագույն քաղաքակրթություններում, երբ մարդիկ սկսել են ուսումնասիրել, նկարագրել և օգտագործել տարրեր կենդանի օրգանիզմներ: Մեծ է եղել մարդու հետաքրքրությունը ճանաչել ինքն իրեն: Զարգացել է ձգտումը հասկանալու կյանքի զարմանալի հանելուկը: Դեռևս Յին Եգիպտոսում, Միջագետքում, Չինաստանում հայտնի են եղել բույսերի և կենդանիների օգտագործնան տարրեր կիրառական եղանակներ: Ըստ Էնության, հնագույն, քարանձավային մարդիկ, որոնք ապրել են հազարավոր տարիներ առաջ, հավանաբար, եղել են «առաջնակարգ բնագետներ», եթե դատելու լինենք տարրեր կենդանիների և շրջակա աշխարհի այն քարանձավային նկարներից, որոնք մեզ են հասել դարերի խորքից:

Ըստ Էնության, կենդանի օրգանիզմների մասին պատկերացումները կազմել են բնագիտության հիմքն ու զարգացել նրա հետ: Այդ է պատճառը, որ մեծ թվով բույսերի և կենդանիների նկարագրություններ, մարդու կազմաբանության ու առանձին ֆունկցիաների, ինչպես նաև կյանքի էնության մասին տեղեկություններ և ընդհանրացումներ կարելի է գտնել Յին Յունաստանում, իսկ այնուհետև Յին Յունում՝ Երևանի փիլիսոփաներ Յիպոկրատի, Արիստոտելի, Գալենի և այլոց աշխատություններում:

Միջնադարում նկարագրական մոտեցումը աստիճանաբար փոխվեց փորձարարությանք: Անգլիացի բժիշկ, սաղմնաբան և ֆիզիոլոգ Ու. Յարվեյը գրեց «Կենդանիների սրտի և արյան շարժնան կազմաբանական հետազոտությունը» աշխատությունը՝ ստեղծելով կենդանիների արյան շրջանառության մասին ուսմունք: Մեկ այլ գրքում նա ձևավորեց ձվից կենդանի օրգանիզմների զարգացման գաղափարը: Այդ ժամանակ բացահայտվեցին նաև ձվաբջիջները, բակտերիաները և նախակենդանիները: Ավելին, անգլիացի կենսաբան Զ. Պրիստլին ցույց տվեց թթվածնի անջատումը բույսերի



Նկ. 19. ժամ Բատիստ Լամարկ
(1744-1829թթ.):

կողմից, իսկ հետո հաստատվեց նաև ածխաթրու գազի յուրացումը: Ֆրանսիացի Ա. Լավուազյեն բացահայտեց թթվածնի դերը կենդանիների կյանքում:

Սակայն կենսաբանությունը, որպես այդ-պիսին, վերջնականապես ձևավորվեց 17-18-րդ դարերում, իսկ 1802 թ. ֆրանսիացի բնագետ Ժան Բատիստ Լամարկը առաջարկեց հենց այդ անվանումը (նկ. 19):

Նա առանձնացրեց կենսաբանությունը որպես կյանքի մասին գիտություն, որը կենտրոնացավ կյանքի էներժյան և դրա դրսևնումների, կենդանի օրգանիզմների բազմազանության և առանձնահատկությունների, դրանց ընդհանուր օրինաչափությունների պարզաբանման վրա: Դիշատակենք 18-րդ դ. շվեդ բուսաբան Կարլ Լինեյի «Բնության համակարգի մասին» աշխատությունը, որը փորձ էր համակարգելու կենդանի օրգանիզմների մասին բազմաթիվ տեղեկություն-

ներ և կազմելու մեկ ընդհանուր դասակարգում (նկ. 20): Իր «Կենդանաբանության փիլիսոփայություն» գրքում Ժ.Բ. Լամարկը տվեց կենդանի օրգանիզմների պատմական զարգացման՝ էվոլյուցիայի պատկերացումը:

Հետագայում կենսաբանությունը, որպես բնագիտության հիմնարար բնագավառներից մեկը, նոր զարգացում ապրեց, որի պատմությունն ունի առավել մեծ հետաքրքրություն:

Այնուամենայիկ, չնայած հսկայական թվով կուտակված փաստերին, հարյուրամյակներ շարունակ բնագետները չէին կարողանում բացահայտել «կյանքի հանելուկը», ուստի նրա որակական առանձնահատկության հիմքում տեղ էին հատկացնում օրգանիզմներում առկա հատուկ, ոչ նյութական բնության սկզբնակներին, որը ստացել էր «կենսական ուժ» անվանումը:

Կենսաբանությունը զգալի առաջընթաց ապրեց, հատկապես, 19-րդ դարում, այն արտահայտվեց անգիտական մեջ՝ կենսաբան Ջարլ Պարվինի (նկ. 21) կողմից օրգանական աշխարհի պատմական զարգացման օրինաչափությունների բացահայտման մեջ: Դա «Բիգլ» նավով կատարած շրջագայության արդյունքում գրված «Տեսակների ծագումը՝ բնական ընտրության միջոցով կամ հարմարված ծների պահպանումը» աշխատությունն էր, որը լույս տեսավ 1859 թ. և սպառվեց ընդհամենը մեկ օրում: Կենդանի օրգա-



Նկ. 20. Կարլ Լինեյ
(1707-1778թթ.):


ԳԼՈՒԽ 1. ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Եիզմների էվոլյուցիայի մասին նրա տեսությունն ունեցավ հսկայական ներգործություն բուսաբանության, կենդանաբանության, բջջաբանության, սաղմնաբանության և կենսաբանության այլ ճյուղերի զարգացման վրա:

19-րդ դ. մշակվեց նաև կենսաբանության մեջ հետագայում հեղաշրջում մտցրած ուսմունքը՝ **բջջային տեսությունը**, համաձայն որի բոլոր կենդանի օրգանիզմների՝ բակտերիաների, սմկերի, բույսերի, կենդանիների, ինչպես նաև մարդու կառուցվածքի և զարգացման հիմքում ընկած է հիմնական կառուցվածքային միավորը՝ բջջը, և որ յուրաքանչյուր բջջ առաջանում է բջջից: Առանձնահատուկ է ֆրամսիացի քիմիկոս և կենսաբան Լ.Պաստյորի (**Ակ.** 22) դերը նյութափոխանակության ուսումնասիրման գործընթացներում, ինչպես նաև շատ հիվանդությունների առաջացման հարցում բակտերիաների նշանակության բացահայտման գործում: Նա մշակեց ջերմաստիճանի բարձրացման միջոցով բակտերիաների ոչնչացման եղանակը, նրան հաջողվեց ստեղծել առաջին պատվաստուկներից (վակցիններից) մեկը:

Մարդուն հետաքրքրող **ժառանգականության** երևույթի մասին առաջին օրենքները ձևակերպեց բուսաբան և բնագետ Գրեգոր Սենդելը: Նա կարողացավ բացահայտել այդ երևույթի մեխանիզմները: Դրա հետ մեկտեղ բջջում նույլեինաթքունների, սպիտակուցների և այլ **օրգանական միացությունների** մասին տեղեկություններն էապես փոխեցին կենսաբանության հենքը՝ ներմուծելով կոնկրետ մոտեցումներ կենսագործունեության հիմքում ընկած նյութական փոփոխությունների պարզաբանման համար:

Կենսաբանության զարգացումն ընթացավ նաև մարդու և կենդանիների օրգանիզմների ներքին միջավայրի բացահայտման և դրա կայունության պահպանման, տարբեր ֆունկցիաների և դրանց բազմաթիվ դրսնորումների պարզաբանման ճանապարհով: Դիշենք ռուս սաղմնաբան և ինունարբան Ի.Ի. Մեչնիկովի ֆագոցիտոզի մասին տեսությունը, համաձայն որի օրգանիզմում կան հատուկ բջջներ, որոնք «խժում» են օտարածին մասնիկները, որանով իսկ պաշտպանելով օրգանիզմները վնասումից: Դետաքրիր են գիտական որոնումները ոգևորող նրա խոսքերը՝ **«Աշխարհում ոչինչ չկա անհասկանալի, շատ բան դեռևս չի հասկացվել»**:



Ակ. 21. Զարդ Շարվին
(1809-1882թթ.):



Ակ. 22. Լուի Պաստյոր
(1822-1895թթ.):

Կենսաբանությունը թևակոխտեց 20-րդ դար՝ ունենալով լուրջ հաջողություններ տարբեր ուղղություններում:

Առավելապես 20-րդ դ. կենսաբանության զարգացումը հնարավորություն ընձեռեց ճշգրիտ սարքավորումների օգտագործման միջոցով, վերլուծական նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումով բացահայտել նորանոր առանձնահատկություններ՝ կապված տարբեր օրգանիզմների բջիջներում տեղի ունեցող գործընթացների և դրանց հիմքում ընկած մեխանիզմների հետ: Դա թույլ տվեց հաստատել, որ բակտերիաների, սնկերի, բույսերի, կենդանիների, այդ թվում՝ մարդու բջիջներն ունեն գորեթե նույն քիմիական կազմը՝ տարբերի պարունակությամբ, ինչպես նաև նոլեկուլային մակարդակով: Բացահայտվեցին բջջում նյութափոխանակության, օրգանիզմների ժառանգականության և փոփոխականության, դրանց անհատական զարգացման և այլ գործընթացների օրինաչափությունները:

Դրանցից առանձնապես կարևոր է **ԴՆԹ-ի կառուցվածքային մոդելը**, որը փոխեց ժառանգական տեղեկատվության պահպանման և փոխանցման մեխանիզմների մասին պատկերացումները: Բացահայտվեցին գեները, հայտնաբերվեցին դրանց արտահայտման, կարգավորման և օրգանիզմից օրգանիզմ տեղափոխման հնարավորությունները, սկզբնավորվեց **գենային ճարտարագիտությունը**՝ տարբեր կենդանի օրգանիզմների ժառանգականության կառավարման նպատակով: Դա հնարավոր է իրականացնել հատուկ ֆերմենտների օգնությամբ և փոքր գենետիկական կառույցների միջոցով: Այդ կառույցներից հայտնի են ԴՆԹ-ի ոչ մեծ հատվածները՝ **պլազմիդները** (**նկ. 23**): Դրանք կարող են պարունակել մինչև մի քանի տասնյակ կամ առավելագույնը հարյուր գեներ: Կարևոր հայտնագործություն էր նաև կենսաբանական թաղանթների կառուցվածքի մոդելը, որը մասնագետների ուշադրությունը հրավիրեց բջիջ կառուցվածքի, նրա ներսում փոխազդեցությունների, բջիջի և շղթակա միջավայրի միջև կապի վրա: Տարբեր բջիջներից ստացվեցին նոր

բջիջներ, մշակվեցին առանձին բջիջներից ամբողջական օրգանների և օրգանիզմների աճեցման եղանակներ, դրանց բազմացման միջոցով ստացվեցին արժեքավոր կլոններ:

Յուրաքանչյուր բջիջ կամ օրգանիզմ իրենից ներկայացնում է մի բաց համակարգ, այսինքն մեկուսացված չէ անկենդան մարմիններից: Բջջից դեպի այդ միջավայր, ինչպես նաև շղթակա միջավայրից դեպի բջիջ, անընդհատ տեղի է ունենում նյութերի և էներգիայի, ինչպես նաև տեղեկատվության հոսք: Պարզվեց ցանկացած **կենդանի բջջի, յուրա-**



Նկ. 23. ԴՆԹ-ի հատվածներ, պլազմիդներ:

քանչյուր օրգանիզմի սերտ կապը շրջակա միջավայրի հետ: Հաստատվեց, որ բոլոր կենդանի օրգանիզմների, ինչպես նաև դրանց և շրջակա միջավայրի միջև ձևավորված են բազմապիսի էկոլոգիական փոխազդեցություններ, որոնց բացահայտումը նոր առաջընթաց է խոստանում:


Կենդանի օրգանիզմների ուշագրավ հատկություններից է նաև **ինքնակարգավորումը**, որի հությունը կայանում է նրանում, որ օրգանիզմը քանի դեռ կենդանի է, պահպանում է իրեն բնորոշ կառուցվածքը, քիմիական բաղադրությունը, ֆիզիկական հատկությունները և այլն:

Կենսաբանության կարևորագույն նվաճումներից արժանահիշատակ է նաև ռուս ֆիզիոլոգ Ի.Պ. Պավլովի (**նկ. 24**) կողմից պայմանական ռեֆլեքսների բացահայտումը:

20-րդ դ. կենսաբանության զարգացումը չէր կարող տեղի ունենալ այլ բնագավառներից, հատկապես բնական գիտություններից, մեկուսացված: Ժամանակակից կենսաբանության զարգացման հիմքում ընկած է ֆիզիկական, քիմիական, մաթեմատիկական, տեղեկատվաբանական մեթոդների և մոտեցումների կիրառումն, ինչը հնարավորություն ընձեռեց կենսաբանության նոր ուղղությամ՝ **մոլեկուլային կենսաբանության** զարգացման համար: Այն բույլ է տալիս մարդուն դեկավարելու կենսական շատ գործընթացներ, դրանով իսկ բուժելու մի շարք ժառանգական հիվանդություններ կամ կանխելու դրանց անցանկալի դրսնորումները:

20-րդ դարավերջի և 21-րդ դ. սպիտակուցների և նուկլեինաթթումների կառուցվածքի և ֆունկցիաների պարզաբանման, գեների վերժանման, կենդանի օրգանիզմների գեների հավաքակազմի, նյութափոխանակության նոր ուղիների բացահայտման ուսումնասիրությունները և այլ նորագույն հայտնագործություններ վկայում են այն մասին, որ կենսաբանությունը բուռն զարգացող և խիստ հեռանկարային գիտություն է, որն ի օրու է լուծել մարդու և շրջակա միջավայրի պահպանության, մարդկության առջև ժառացող սննդային, էներգիական և այլ հիմնախնդիրներ:

Կենսաբանությունը դարձել է նաև կենդանի օրգանիզմների և նրանց կենսագործումներության տարրեր դրսնորումների օգտագործմամբ պայմանավորված **տեխնոլոգիական** գիտություն: Այն ապահովում է արդյունաբերական մասշտաբներով տարրեր օրգանական նյութերի արտադրումը, սննդանյութերի, դեղորայքի կամ հակամարմինների ստացումը, կենսավառելիքի անջատումը կամ նրա նոր տեսակների կենսաբանական (կենդանի օրգանիզմների



Նկ. 24. Իվան Պավլով (1849-1936թ.)
(Ակարիչ՝ Մ. Նեստերով):

միջոցով) ստացումը, օգտագործումը և այլն (**Ակ. 25**): Յայտնի է տարբեր մետաղների կուտակումը բակտերիաներում և բույսերում, ինչն արդեն կիրառվում է մետաղահանման արդյունաբերության մեջ:



Ակ. 25. Կենսաստեխնոլոգիական արտադրությունում:

Կենսաբանության հետ զուգընթաց զարգանում է **բիոնիկան**, որն ուղղված է կենդանի օրգանիզմների կառուցվածքի և դրանց կենսագործունեության առանձին գործընթացների հիման վրա նորագույն տեխնիկական և ճարտարագիտական խնդիրների լուծմանը, նոր սարքերի ստեղծմանը:

Յարցեր կրկնության համար.



1. Ե՞րբ է կենսաբանության մեջ ներդրվել փորձը:
2. Ո՞վ և ե՞րբ է առաջարկել կենսաբանություն անվանումը:
3. Ի՞նչ հաջողությունների է հասել կենսաբանությունը 19-րդ և 20-րդ դարերում:
4. Թվարկեք նշանավոր կենսաբաններին, ի՞նչ գիտեք նրանց մասին:
5. Կենսաբանության ինչպիսի՞ նոր ուղղություններ գիտեք: Ի՞նչ է գենային ճարտարագիտությունն, ի՞նչ գիտեք պլազմիդների մասին:
6. Ինչպիսի՞ համակարգ է կենդանի բջիջը կամ օրգանիզմը: Արդյո՞ք այն փոխազդում է շրջակա միջավայրի հետ:
7. Կարելի՞ է կենսաբանությունը դիտարկել նաև որպես տեխնոլոգիական գիտություն, ինչո՞ւ:

ԳԼՈՒԽ 2. ԿԵՆԴԱՍԻ ՆՅՈՒԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՂԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. ԿՅԱՆՔԻ ԷՌԻԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՆԴԱՍԻ ՆՅՈՒԹԻ ՂԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Կյանքի էությունը: Կյանք ասելով՝ առաջին հերթին հասկանում ենք երկրագնդի վրա ապրող բոլոր կենդանի օրգանիզմները՝ բակտերիաները, սնկերը, բույսերը, կենդանիները, ինչպես նաև մարդը։ Նրանք սնվում են, շնչում, աճում և բազմանում, ստեղծում իրենց նմաններին։ Իհարկե, մեզ մոտ անմիջապես մի շարք հարցեր են ծագում, որոնցից ամենագլխավորներն են։ «Ե՞նչ է կյանքը։ Ինչո՞վ է այս կամ այն կենդանի օրգանիզմը տարբերվում անկենդան մարմնից»։ Այս հարցերի պատասխաններում տարիների ընթացքում աստիճանաբար գերակշռում են նյութական պատկերացումները։ Սակայն, կյանքի, որպես իրական գոյություն ունեցող երևույթի, պարզ և հստակ սահմանում ոչ կենսաբանները, ոչ փիլիստիկաները չեն կարողանում տալ։ Չնարավոր է միայն առանձնացնել որոշ հատկանիշներ կամ չափանիշներ, որոնց միջոցով կարող ենք կենդանի օրգանիզմը տարանջատել անկենդան մարմնից։ Դա առաջին հերթին սպիտակուցների և նուկլեինաթթուների համակարգված կառույցներն են, դրանց գոյության ձևը։

Կենդանի նյութի կազմավորման հիմնական մակարդակները: Կենդանի օրգանիզմները կազմում են կենդանի նյութը, որի համար բնորոշ են կառուցվածքագործառական կազմավորման տարբեր մակարդակներ։ Դրանց միջև գոյություն ունի բարդ ենթակայություն։ Նախորդ դասարանների դասընթացներից գիտենք, որ կենսաբանության տարբեր բաժինները տարբեր մակարդակներում ուսումնասիրում են կյանքն իր բոլոր դրսնորումներով։

Հայտնի է, որ կենդանի օրգանիզմներին բնորոշ էվուլյուցիայի արդյունքում տեղի է ունեցել դրանց փոփոխությունը՝ պարզի դեպքի բարդը։ Ըստ դրա էլ կարելի է տարբերակել կենդանի նյութի կազմավորման մի քանի մակարդակներ (նկ. 26)։

Ամենացածր մակարդակը՝ **մոլեկուլային կառուցվածքների** մակարդակն է (տե՛ս նկ. 26)։ Կենդանի օրգանիզմներին բնորոշ կառուցվածքներից են կենսաբանական խոշոր մոլեկուլները, առաջին հերթին՝ նուկլեինաթթուները և սպիտակուցները, որոնց միջոցով, օրինակ, տեղի է ունենում սերնդից սերունդ կենդանի օրգանիզմի հատկանիշների, հատկությունների ու ֆունկցիաների փոխանցումը և իրականացումը։ Այստեղով է անցնում կենդանի օրգանիզմի ու անկենդան մարմնի սահմանը։

Հաջորդ՝ **բջջային** մակարդակին (տե՛ս նկ. 26) արդեն բնորոշ են կենդանի օրգանիզմների հատկանիշներ ու հատկություններ։ Եվ բջիջը, և դրանուն գտնվող մոլեկուլային կառուցվածքներն իրենց գլխավոր բնագծերով նման



Նկ. 26. Կենդանի նյութի կազմավորման հիմնական մակարդակները:

Դանի օրգանիզմի այս մասը, որը կատարում է որոշակի ֆունկցիա, կոչվում է **օրգան**: Նշենք, օրինակ՝ արմատը կամ տերևը մերկասերմ բույսերում, ծաղիկը՝ ծածկասերմերում, աչքը, սիրտը կամ երիկամը՝ կաթնասուն կենդանիների օրգանիզմում: Բազմաբջիջ բույսի կամ կենդանու ցանկացած օրգան ունի իր որոշակի կառուցվածքը, ձևն ու տեղը օրգանիզմում, որոնք հարմարեցված են այդ օրգանին բնորոշ որոշակի ֆունկցիա կատարելու համար:

Մի քանի օրգաններ, որոնք համատեղ կատարում են այս կամ այն ֆունկցիան օրգանիզմում, կազմում են **օրգանների համակարգ**:

Կենդանի նյութի մյուս մակարդակն ամբողջական **օրգանիզմն է** (**Նկ. 26**): Կենդանի օրգանիզմն օրգանների մեխանիկական գումար չէ: Այստեղ դիտվում է օրգանների ու դրանց համակարգերի համաձայնեցված գործունեություն, որը բնորոշում է օրգանիզմին հատուկ երևույթները և որպանց դրսևորումները, օրինակ՝ աճն ու անհատական զարգացումը: Ինչով էլ մինչյանցից տարբերվեն օրգանիզմները, նրանց միավորում է այն, որ կազմված են բջիջներից:

Են բոլոր կենդանի օրգանիզմներում: Դուք գիտեք, որ ընդամենը մեկ բջջից են կազմված բոլոր բակտերիաները, միաբջիջ ջրինուրներից, օրինակ, կանաչուկը կամ էլ կենդանիներից շատ ծանր հիվանդության՝ մալարիայի հարուցիչ մակարդույթը:

Դյուսվածքաօրգանային մակարդակը (**Նկ. 26**) բնորոշ է միայն բազմաբջիջ օրգանիզմներին, որոնց բըջիջներն ու դրանցից կազմված օրգանիզմի տարբեր մասերը հասել են մասնագիտացման բարձր աստիճանի: Ընդ որում, նման կառուցվածք ունեցող և որոշակի ֆունկցիա կատարող բջիջներն ու միջբջջային կառուցվածքները կազմում են **հյուսվածք**: Բույսերին բնորոշ են վեց տարբեր տիպերի բուսական, իսկ կենդանիներին՝ չորս տիպի կենդանական հյուսվածքներ (**Նկ. 27**): Կեն-

Տեսակը, որը միավորում է իրեն պատկանող օրգանիզմները, կազմում է կենդանի նյութի կազմավորման ավելի բարդ մակարդակ (տե՛ս նկ. 26): Այս մակարդակն արտացոլում է կենդանի օրգանիզմների պատմական զարգացման որակական փուլ և ունի իր կարևոր չափանիշներն, այդ թվում՝ ծևաբանական ֆիզիոլոգիական և այլն: Որպես տեսակի օրինակ նշենք վայրի սոխը, վայրի շաղգամը կամ էլ սոխի ցեղը, շաղգամի ճերմակաթիթեռը: Ընդ որում, տեսակների անվանումները կրկնական են. դա առաջարկել է դեռ շվեյ բուսաբան Կ. Լիննեյը: Տեսակի հետ է առնչվում պոպուլյացիայի հասկացությունը: Պոպուլյացիա ասելով՝ հասկանում ենք որոշակի տարածքում ապրող միևնույն տեսակի առանձնյակների համախումբը: Տեսակում կարող են միավորվել միմյանցից հարաբերականորեն մեկուսացված պոպուլյացիաները: Այստեղ գործում են տեսակին բնորոշ՝ օրգանիզմների ներտեսակային հարաբերությունների օրինաչափությունները:



Նկ. 27. Կենդանական և բուսական հյուսվածքների տեսակները:

Վերջապես, էլ ավելի բարձր մակարդակ է կենդանի օրգանիզմների համակեցությունների՝ **կենսացեղնողների** մակարդակը (տե՛ս նկ. 26), որտեղ գործում են միջտեսակային հարաբերությունների օրենքները: Ցանքի որոշակի հատվածում կամ ջրավազանում ապրող բույսերի, սնկերի ու կենդանիների, ինչպես նաև բակտերիաների համախմբում այդ կենդանի օրգանիզմները փոխազդում են ինչպես միմյանց, այնպես էլ ապրելավայրի այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են լուսը, խոնավությունը, ջերմաստիճանը, միջավայրի թթու կամ հիմնային ռեակցիան, ծայնը և այլն:

Երկրագնդի վրա ապրող բոլոր կենդանի օրգանիզմները կազմում են **կենսոլորտը**, որը երկրագնդի վրա կենդանի նյութի կազմավորման ամենաբարձր մակարդակն է (տե՛ս նկ. 26): Բոլոր կենդանի օրգանիզմներն առաջացնում են կենսոլորտի նյութերի կենսաբանական շրջապատույթ:

Կենդանի նյութի կազմավորման բարձր մակարդակներին բնորոշ օրինա-

չափությունները չեն բացառում ավելի ցածր մակարդակների երևույթներն ու օրենքները:

Օրգանական աշխարհի բազմազանությունը: Կենդանի օրգանիզմները շատ բազմազան են, դա լավ հայտնի է ցանկացած մարդու՝ մեծին և փոքրին: Կանաչ ու գորշ ջրիմուռները, գլխարկավոր սնկերը, մորուքավոր քարաքսները, փշատերև ծառերը, կլոր ու տափակ որդերը, զանազան միջատները, կրծող ու գիշատիչ գազանները, ինչպես նաև մանրադիտակով տեսանելի գնդաձև ու գոռիկաձև բակտերիաները կենդանի օրգանիզմներ են: Դրանք զանազանվում են տեսքով, չափսերով, գույնով, արտաքին ու ներքին կառուցվածքով և այլն: Այդ բազմազանությունն արտահայտվում է **կյանքի** տարրեր՝ **ոչ բջջային և բջջային ծերով:** Վերջիններս եւ ներկայացված են մեկ կամ բազմաթիվ բջջներից կազմված կենդանի օրգանիզմներով՝ բակտերիաներով, սնկերով, քարաքսներով, բարձրակարգ բույսերով, բազմաթիվ կենդանիներով և, վերջապես, մարդով:

Այդ բազմազանությունը պայմանավորված է այն բանով, որ կենդանի օրգանիզմները տարածված են և բնակվում են ամբողջ Երկրագնդում՝ այստեղ առկա տարրեր պայմաններում: Բույսերի, կամ կենդանիների կարելի է հանդիպել քաղցրահամ ջրերում ու ծովերում, հողում, ցամաքի մակերևույթին և այլուր: Լեռներ ու սարեր բարձրանալիս տեսնում ենք լեռնային թռչուններ: Օվկիանոսի ամենախոր փոսերում հայտնաբերվում են որդեր, խեցգետնակերպեր, փափկանարմններ և այլ կենդանիներ: Շատ շատերին էլ մենք չենք նկատում դրանց թաճնված ապրելակերպի պատճառով կամ էլ մեզ տեսանելի չլինելու հետևանքով: Եվ իհարկե, դրանք ևս հարմարված են տարրեր պայմաններում ապրելու համար:

Կենդանի օրգանիզմների բազմազանությունն ընդգրկում է բակտերիաների հազարավոր, սնկերի հարյուր հազարավոր, բույսերի մի քանի հարյուր հազարավոր ու կենդանիների մեկ միլիոնից ավելի տեսակներ: Եվ դա եւ թիւ է, որովհետև կա կարծիք, որ գիտնականների կողմից մինչ այժմ նկարագրված է Երկրագնդի վրա ապրող կենդանի օրգանիզմների մոտ կեսը: Մեր օրերում էլ



Նկ. 28. Նայկական լեռնաշխարհի բույսերի էնդեմիկ տեսակներ:

ԳԼՈՒԽ 2. ԿԵՆԴԱԿԻ ՆՅՈՒԹԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԴԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

հայտնաբերվում են բույսերի կամ կենդանիների և այլ կենդանի օրգանիզմների նոր տեսակներ:

Կենդանի օրգանիզմների էվոլյուցիայի հետ ծանոթանալիս պարզվել է, որ այդպիսի բազմազանությունը չի առաջացել միանգամից, դա պատճական զարգացնան արդյունք է:

Հայաստանի բնությունը բնորոշվում է կենդանի օրգանիզմների բազմազանությամբ: Դա բացատրվում է Հայկական լեռնաշխարհում, մեր հանրապետությունում տարբեր բնական լանդշաֆտային գոտիների առկայությամբ: Որ քաղաքից ու գյուղից էլ դուրս գաք, շատ արագ կանցնեք մի գոտուց մյուս՝ բարձր սարերից ու անմատչելի լեռներից դեպի դաշտավայրեր ու բացատներ կամ հակառակը, կհանդիպեք գեղեցիկ լճակներ, սառնորակ աղբյուրներ ու աղմկոտ, ջրվեժներով ներքև սլացող գետակներ: Հայաստանում կարելի է հանդիպել բույսերի կամ կենդանիների այնպիսի տեսակների, որոնք չկան Երկրագնդի այլ վայրերում: Դրանք տեղական **էնդեմիկներ** են, մեր բնաշխարհի մենաշնորհը: Արոսենին Հայաստանյան, կտտկենին Տիգրանի,



Նկ. 29. Հայկական լեռնաշխարհի կենդանիների էնդեմիկ տեսակներ:

հաղարծենին հայկական, սրոհունդն ելեանորայի, կորասերն օազը, սապնարմատը թախտաջանի էնդեմիկ բույսեր են (նկ. 28): Կենդանիներից էնդեմիկ են արարատյան որդան կարմիրը, արաքսյան բնդեռիկը, հայկական ծղրիդը, Սևանի իշխանը, հայկական իժը, հայկական մուֆլոնը (նկ. 29):

Կենդանի օրգանիզմների բազմազանությունը հարստանում է նաև մարդու կողմից ստեղծված բույսերի սորտերով, բակտերիաների կամ սնկերի շտամներով, կենդանիների ցեղատեսակներով, որոնց ծանոթ եք: Դրանք կենդանի օրգանիզմների այն նոր ձևերն են, որոնք ունեն գործնականում այնպիսի արժեքավոր հատկություններ, ինչպիսիք են բերքատվությունն ու ցոտադիմացկունությունը բույսերում, վիտամինների, սպիտակուցների և հակաբիոտիկների բարձր պարունակությունը բակտերիաներում և սնկերում կամ թռչունների ձվատվությունը, խոշոր կաթնասունների կաթնատվությունը ու մսատվությունը:



Դարցեր կրկնության համար.

1. Ինչպէ՞ս կրնութագրեք «կյանք» հասկացությունը:
2. Ինչպիսի՞ կառուցվածքագործառական մակարդակներով է դրսևուկում կենդանի նյութը: Ի՞նչն է բնորոշ դրանցից յուրաքանչյուրին:
3. Արդյո՞ք բոլոր կենդանի օրգանիզմներում կամ հյուսվածքներ, օրգաններ, օրգանների համակարգեր:
4. Կա՞ արդյոք, որոշակի ենթակայություն կենդանի նյութի մակարդակների միջև ու ինչպէ՞ս է այն արտացոլված:
5. Ինչո՞վ է արտահայտվում կենդանի օրգանիզմների բազմազանությունն: Ինչո՞վ է այն պայմանավորված:
6. Ինչպէ՞ս բացատրել այն, որ մեր օրերում էլ են հայտնաբերվում բույսերի կամ կենդանիների նոր տեսակներ:
7. Դարո՞ւստ է, արդյոք, Դայաստանի բնությունը բույսերի կամ կենդանիների բազմազանությամբ: Ինչպէ՞ս է դա բացատրվում:
8. Դայաստանում բույսերի և կենդանիների ի՞նչ էնդեմիկ տեսակներ գիտեք:

3. ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍՎԱՐԳԵՐԻ ԴԻՄԱԿԱՆ ԴԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Կենսաբանական համակարգերի հիմնական հատկանիշները: Ցանկացած կենսաբանական համակարգ, այդ թվում՝ կենդանի օրգանիզմ լինի դա, օրինակ՝ սունկ, բույս, թե կենդանի, օժտված է այնպիսի հատկանիշներով և հատկություններով, որոնք բացակայում են անկենդան մարմինների մեջ մասում: Դրանցից նշենք հիմնականները:

Նախ, կենդանի օրգանիզմների հատկանիշներից է նրանց կազմավորման բարդությունը: Դրա արտահայտությունն է, օրինակ՝ նրանց բավականին բարդ արտաքին կամ էլ ներքին կառուցվածքը: Բույսերից սուսի թեփուկաթղանթի խոշորացույցի կամ մանրադիտակի օգնությամբ դիտվող պատկերն ունի որոշակի բարդ կառուցվածք (**նկ. 30**), որտեղ տարբերակվում են բջիջները ու դրանց ներսում հատուկ կառույցներ՝ օրգանոիդները: Կենդանիներից անձրևորդի ներքին կառուցվածքում առանձնացվում են բաղկացուցիչ մասեր՝ օրգաններ, օրինակ՝ աղիներն ու արյու-



Նկ. 30. Սոխի թեփուկաթաղանթի մանրադիտակային պատկերը:

ԳԼՈՒԽ 2. ԿԵՆԴԱԿԻ ԼՅՈՒԹԻ ՔԻՄԱԿԱՆ ՂԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

նատար անոթները, որոնք ևս ունեն բարդ կառուցվածք: Կենդանի օրգանզմներում տարբեր բարդ օրգանական նյութերի շարքում է **սպիտակուցների** ամբողջ բազմությունը:


Կենդանի օրգանիզմի հատկանիշ են ցանկացած բաղկացուցիչ մասի **առանձնահատուկ նշանակությունը ու որոշակի ֆունկցիաները**: Դա վերաբերում է ոչ միայն, օրգաններին, ասենք, բույսի արմատին կամ տերևին, կենդանու թքերին կամ երիկամներին, իյուսվածքներին, ասենք, բույսի տերևի վերնամաշկին կամ կենդանու արյան, այլ նաև մանրադիտակով դիտվող ավելի փոքր կառուցվածքներին ու մոլեկուլներին, որոնք կատարում են որոշակի դեր: Չեզ լավ հայտնի են բջջակորիզի, միտոքոնդրիումների կամ պլաստիդների ֆունկցիաները, տարբեր օրգանական նյութերի դերը:

Կենդանի օրգանիզմներն ունակ են կլանել, ձևափոխել՝ ճեղքել շրջակա միջավայրի նյութերը, կամ առաջացնել՝ սինթեզել նորերն, ինչպես նաև կլանել, ձևափոխել և օգտագործել այդ միջավայրի էներգիան: Այդ էներգիան կարող է ստացվել կամ սննդանյութերի տեսքով կամ էլ, օրինակ՝ Արեգակի ճառագայթների ձևով: Շրջակա միջավայրից ստացվող այդ նյութերի ու էներգիայի շնորհիվ, կենդանի օրգանիզմները պահպանում են իրենց ամբողջականությունն ու կատարում տարբեր ֆունկցիաներ: Նյութերի ճեղքման արգասիքներն և այդ ընթացքում անջատվող ջերմությունը վերադարձվում են բնություն: Կարևոր է նաև տեղեկատվության փոխանակումը: Այստեղ կարող ենք նշել ինչպես նույնագույնաթիւների ժառանգական տեղեկատվությունն, այնպես էլ էլեկտրամագնիսական ալիքների ձևով տեղեկատվությունը, որն ընդունում է կլանում կամ էլ արձակում է կենդանի օրգանիզմը: Այսինքն, կենդանի օրգանիզմներն իրագործում են **նյութերի, էներգիայի և տեղեկատվության փոխանակություն**:

Կենդանի օրգանիզմներին բնորոշ են **ածն ու անհատական զարգացումը**: Ազգ կարելի է զնահատել կենդանի օրգանիզմի քանակական փոփոխություններով, օրինակ՝ բույսի կամ կենդանու հասակի մեծացմանը, դրանց մարմնի զանգվածի և ծավալի ավելացմանը: Դա ընկած է կենդանի օրգանիզմների անհատական զարգացման հիմքում, երբ դրանցում առաջանում են որակական փոփոխություններ, որոնց հետևանքով վերափոխվում են այդ օրգանիզմների կառուցվածքը, (**նկ. 31**) կազմը և այլն:

Գիտենք, որ բոլոր օրգանիզմներն ունեն կյանքի որոշակի տևողություն: Դրանք կարող են ապրել մի քանի րոպե, ժամ, օր կամ, վերջապես, հարյուրավոր ու տասնյակ հարյուրավոր տարիներ: Դայաստանում հայտնի են, օրինակ, դարավոր կաղնիներ, որոնք ապրում են հարյուրավոր եւ նույնիսկ հազարավոր տարիներ (**նկ. 32**):

Կենդանի օրգանիզմների ամենաապշեցուցիչ հատկությունն ինքնավերարտադրման, կամ բազմացման ունակությունն է: Սերունդը միշտ նման է ծնողներին: Կարելի է խոսել սերնդից սերունդ կենդանի օրգանիզմի հատկանիշների, հատկությունների ու ֆունկցիաների փոխանցման, այսինքն՝ **ժառանգականության** մասին: Սակայն սերնդի ու ծնողների նմանությունը երբեք չի լինում ծնողի ճշգրիտ պատճենը, լինելով նման ծնողներին՝ միշտ



Նկ. 31. Կենդանի օրգանիզմի աճը և ամհատական զարգացումը:

ինչ-որ ձևով սերունդը տարբերվում է: Դրանում է կայանում փոփոխականության երևույթը: Այսպիսով, կենդանի օրգանիզմներին բնորոշ են բազմացումը, ժառանգականությունն ու փոփոխականությունը:

Կենդանի օրգանիզմները յուրահատուկ ձևով են պատասխանում շրջակա միջավայրի փոփոխություններին: Բույսերի ցողունների ու տերևների շարժումը դեպի լուսը, կենդանիների տեղաշարժը սուր առարկայի դիպչելիս նման պատասխանների օրինակներ են: Միջավայրի ազդակներին պատասխանելը՝ գրգռականությունը կենդանի օրգանիզմների ընդհանուր հատկությունն է, որը կարող է տարբեր դրսևնորումներ ունենալ:

Ծանոթանալով քլամիդոմնադի, թթենու, սոճու, իշխանի կամ մողեսի կառուցվածքին՝ ընդհանուր գծերով բավականին հեշտ է պատկերացնել, թե ինչպես ու որտեղ են դրանք ապրում. կենդանի օրգանիզմները լավ հարմարված են ապրելու միջավայրին:

Կենդանի օրգանիզմների գրեթե բոլոր ֆունկցիաները կախված են Արեգակի ու Երկրագնդի դիրքի փոփոխությունից, ցերեկվա ու գիշերվա, տարվա եղանակների հերթափոխությունից, Լուսնի փուլերից և այլն: Այսպիսով, դրանք ունեն պարբերականություն: Դայտնի են, օրինակ, բույսերի աճն ու զարգացումը գարնանն ու ամռանը, տերևաթափն՝ աշնանը, հանգիստը՝ ձմռանը: Կենդանիների և մարդու քնի ու արթուն վիճակի հերթափոխությունն օրվա ընթացքում: Պարբերականությանը է օժտված կենդանի օրգանիզմների նյութերի ու էներգիայի փոխանակությունը: Կենդանի օրգանիզմների պարբերականությունն ունի միջավայրի փոփոխությունը պայմաններին հարմարվելու նշանակություն:

Կենդանի օրգանիզմներին բնորոշ է նաև էվոլյուցիայի ունակությունը՝ պարզից դեպի բարող փոփոխությունը: Կենդանի օրգանիզմների կազմավորվածության աստիճանական բարդացումը, նրանց բազմազանությունն ու ապրելու միջավայրին հարմարվածությունը դրա արդյունքն են հանդիսանում:

Սրանք են կենդանի օրգանիզմների հիմնական հատկանիշները և հատկությունները, դրանց թվարկումը կարելի է շարունակել:


Գրգռականությունն արտաքին գործոնների ազդեցության նկատմամբ օրգանիզմների ընտրողական ռեակցիան է: Բոլոր կենդանի բջիջները և օրգանիզմներն, ինչպես նշեցինք, օժտված են գրգռականությամբ. դա շրջակա միջավայրի ներգործությանը որոշակի ռեակցիայով պատասխանելու նրանց ունակությունն է: Այդ ռեակցիան բջիջի կամ օրգանիզմի անմիջական պատասխանն է:

Գրգռականությունը տարբեր է բույսերի և կենդանիների, ինչպես նաև բակտերիաների, սնկերի մոտ: Բույսերում գրգռականությունը դրսենորվում է տարբեր շարժողական պատասխաններով, որոնք կոչվում են **տրոպիզմներ** կամ **նաստիաներ** (**նկ. 33**):

Տարբեր գործոններին, օրինակ՝ սուր առարկային, վառ լույսին, թթու միջավայրին, որևէ աղի, բույսերը պատասխանում են իրենց աճի արագության կամ ուղղության փոփոխությամբ, փոխվում են նյութափոխանակության գործընթացները: Նայտնի է շատ բույսերի աճը դեպի լույսը, կամ, օրինակ՝



Նկ. 32. Մի քանի հարյուր տարեկան կաղնին Նայաստանում:



Նկ. 33. Բույսերում տրոպիզմների և նաստիաների դրսենորումները:

ծաղկավոր բույսեր, որոնք մեխանիկական գրգռումից փոխում են իրենց տերևների դիրքը: Միջավայրի տարբեր գործոնների մկատմամբ կենդանիների մոտ գրգռականության շարժողական պատասխանները կոչվում են **տարսիս-ներ**: Որոշ կենդանիների նյարդային և մկանային քիչջների գրգռականությունը դրանց դրդումն է, որը բերում է պատասխանի՝ **ռեֆլեքսի**: Շատ բակտերիաներ շարժվում են դեպի այնպիսի քիմիական նյութեր, որոնք պիտանի են և հակառակը՝ դրանք հեռանում են այնպիսիներից, որոնք «զզվելի» են: Կան այնպիսի բակտերիաներ, որոնք շարժվում են դեպի լույսը:

Վերջին տարիներին բացահայտվել են տարբեր օրգանիզմների պատասխանները շրջակա միջավայրի այնպիսի գործոնների նկատմամբ, ինչպիսիք են միջավայրում օքսիդացված և վերականգնված նյութերի խտությունների (կոնցենտրացիաների) հարաբերությունը կամ, օրինակ՝ էլեկտրամագնիսական դաշտը:

Կենսագործունեության գործընթացների պարբերականությունը, կենսաբանական ռիթմեր և դրանց նշանակությունը: Կենդանի օրգանիզմներին և դրանց խմբերին բնորոշ կենսագործունեության շատ գործընթացներ ունեն կրկնվող պարբերական (ռիթմիկ) բնույթ: Կենսաբանական ռիթմերը հենց կենսաբանական տարբեր գործընթացների ուժգության և բնույթի կանոնավոր փոփոխություններն են: Այդպիսի երևույթը բնորոշ է, գրեթե, բոլոր կենդանի օրգանիզմներին, որոնք օժտված են համակարգված և համաձայնեցված գործողություններով և ժամանակի մեջ կողմնորոշվելու ունակությամբ. դա ժառանգվում է: Այդ երևույթը հայտնի է շատ վաղուց. դեռևս 3ին 2ինաստանում աշխատում էին ճիշտ որոշել տարբեր հիվանդությունների դեպքում մարդու կենսագործունեության որոշ գործընթացների վրա արդյունավետ ներգործության ժամանակը:

Կենսառիթմերը լինում են ֆիզիոլոգիական և էկոլոգիական: Դրանցից առաջիններից են որոշ կենդանիների և մարդու շնչառության ռիթմերը, սրտխփոցը և արյունատար անորմներում զարկերակային ճնշման տատանումները, որոնց տևողությունը կարծ է և հասնում է մի քանի րոպեի: Էկոլոգիական կենսառիթմերի օրինակներ են որոշ բույսերի տերևների օրվա ընթացքում շարժումները և աշնանային տերևաթափը, թռչունների չուն, շատ կենդանիների ձմեռային քունը՝ պայմանավորված սեզոնի կամ տարվա հետ կապված տատանումներով, որոնք, պարզ է, ավելի երկարատև են: Դրանց վառ դրսերումն է տարբեր բույսերի ծաղկների բացվելը և փակվելը օրվա ընթացքում: Ինչպես ասում են, տարբեր բույսեր «քնում» են և «արթնանում» օրվա որոշակի ժամերին: Էկոլոգիական կենսառիթմերը կայուն են տարբեր ներգործությունների նկատմամբ և ընթանում են շրջակա միջավայրում ցիկլիկ փոփոխությունների պատճառով: Օրինակ՝ օրվա կենսառիթմերը պայմանավորված են երկրագնդի իր առանցքի շուրջ պտույտներով, երկրագնդի էլեկտրական և մագնիսական դաշտերի պարբերական փոփոխություններով:


Կենսառիթմերն արտահայտվում են նաև քիչջներում ՈՆԹ-ի սինթեզի, ոիբրոսոմների առաջացման, նյութերի արտազատման, քիչջների կիսման և այլ գործընթացների փոփոխություններով:

ԳԼՈՒԽ 2. ԿԵՆԱՎԱՆԻ ՆՅՈՒԹԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԴԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կենսառիթմերի մեխանիզմները դեռևս պարզաբանված չեն, սակայն դրանց մասին իմացությունն արդեն իսկ հնարավորություն է ընձեռել կառավարելու բույսերի և կենդանիների կենսագործունեության որոշ գործնթացներ՝ խթանելու բույսերի ծաղկումը ջերմոցներում, մեծացնելու գյուղատնտեսական կենդանիների արտադրողականությունը: Միաժամանակ հայտնի են նաև հիվանդություններ, որոնց պատճառը կենսառիթմերի խախտումներն են:

Էներգիայի օգտագործման ձևերը կենդանի օրգանիզմների կողմից: Ցանկացած կենդանի օրգանիզմի կենսագործունեությունն ընդգրկում է սպիտակուցների և նուկլեինաթրուների կենսասինթեզը, տարբեր նյութերի փոխադրումը թաղանքներով. օրգանիզմները շարժվում են, կծկվում, պատահանում գրգիռներին և տարբեր գործններին, հարմարվում են շրջակա միջավայրին: Այդ և նման բազմապիսի գործններացներն իրենցից ներկայացնում են աշխատանք, որի համար ծախսվում է էներգիա: Էներգիայի օգտագործման հոգ բնորոշ ձևեր կան կենդանի օրգանիզմներում:

Կենդանի օրգանիզմների էներգիական պահանջնունքները բավարարվում են **էներգիայի աղբյուրների** հաշվին: Դրանցից է տարբեր նյութերում կուտակված քիմիական էներգիան: Այդ նյութերից հայտնի են ֆոսֆորական թթվի մնացորդ պարունակող օրգանական միացությունները: Դրա օրինակ է Ալեֆ-ը: Չիշեցնենք, որ բոլոր օրգանական նյութերի՝ ծարպերի, սպիտակուցների և ածխաջրերի ճեղքումից անջատվում է օգալի քանակի էներգիա: Այդ նյութերից շատերը պաշարվում են և օգտագործվում որոշակի պայմաններում: Կարևոր է նաև լուսային էներգիան, որի անսպառ աղբյուր է Արեգակը: Լուսային էներգիան օգտագործվում է ֆոտոսինթեզի ժամանակ, որն ընթանում է որոշ բակտերիաներում և կանաչ բույսերում: Լուսային էներգիան կլանվում է նաև այլ բակտերիաների կողմից և ձևափոխվում քիմիական նյութերում կուտակված էներգիայի (նկ. 34):



Նկ. 34. Արեգակնային էներգիայի կլանումը և օգտագործումը ֆոտոսինթեզի ընթացքում:

Կենդանի բջջում օգտագործվում է էլեկտրաքիմիական էներգիան, որը ներկայացնում են տարբեր իոնների թաղանթների միջով գրադինտները: Դրանք ունեն էլեկտրական և օսմոսային բաղադրիչներ, որոնցից առաջինը՝ պայմանավորված է թաղանթների երկու կողմերում էլեկտրական պոտենցիալների տարբեր արժեքներով, իսկ երկրորդը՝ լիցքավորված մասնիկների տարբեր քանակությամբ: Դայտնի են պրոտոնների գրադինտները բակտերիաների, միտոքոնդրիումների, պլաստիճների թաղանթներում, նատրիումի և կալիումի իոնների գրադինտները՝ բուսական և կենդանական բջիջների պլազմալեմում: Կան նաև գրադինտներ կալցիումի և այլ իոնների համար:

Կենդանի օրգանիզմներում դիտվում է քիմիական, լուսային կամ էլեկտրաքիմիական էներգիայի անցում մի ձևի մյուսը: Էներգիայի այդպիսի փոխակերպումը հայտնի է թերմոդինամիկայի առաջին օրենքից: Սակայն կենդանի օրգանիզմներում էներգիայի մի մասն էլ ցրվում է մի ձևի մյուսին անցման ընթացքում, այնպես որ մշտապես անհրաժեշտ է էներգիայի հոսք շրջակա միջավայրից:

Ձերմային էներգիան անջատվում է տարբեր օրգանական նյութերի օքսիդացման ժամանակ և օգտագործվում է օրգանիզմի տաքացման համար, նրա մի մասը ցրվում է, սակայն այն աշխատանք չի կատարում:

Կենդանի օրգանիզմներում էներգիայի փոխակերպման գործընթացներն ուսումնասիրում է կենսաբանության գիտաճյուղերից մեկը՝ կենսաէներգետիկան:

Դարցեր կրկնության համար.

1. Կենդանի օրգանիզմների ինչպիսի՞ հիմնական հատկանիշներ ու հատկություններ գիտեք: Նրանցից որո՞նք են բնորոշ միայն կենդանի օրգանիզմներին:
2. Ի՞նչ է գրգռականությունը: Ինչպե՞ս է այն դրսևորվում:
3. Կենդանի օրգանիզմներում էներգիայի օգտագործման ի՞նչ ուղիներ գիտեք:



Առաջադրանքներ.

1. Դիտարկեք թեգոնիան, ֆիկուսը, կռզին և հալվեն կամ էլ դրանց նկարները: Կարո՞՞ եք այդ բույսերի արտաքին տեսքով նկարագրել դրանց ապրելու բնական միջավայրերը: Այնուհետև, դիտարկեք կենդանի ձուկն ու մողեսը կամ էլ դրանց նկարները: Այդ կենդանիների արտաքին տեսքով նկարագրեք դրանց ապրելու բնական միջավայրերը:

2. Կազմեք կենսաբանական ժամացույց ձեր տարածքում հայտնի մի քանի տեսակի ժաղկավոր բույսերից, փորձեք կատարել դիտարկում մի քանի օրվա ընթացքում և համոզվել այդ ժամացույցի միջոցով իրական ժամանակը որոշելու ճշտության մեջ:

4. ԿԵՆԴԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ճԱՆԱՀՈՂԱԿԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ

ԿԵՆԴԱՆԻ բՆՈՒԹՅԱՆ ճԱՆԱՀՈՂՈՄԸ: Մարդը միշտ հետաքրքրվել է և այսօր էլ հետաքրքրվում է իրեն շրջապատող բնությամբ, տարբեր կենդանի օրգանիզմներով: Նա ցանկանում է նկարագրել, պարզել, հասկանալ դրանց կառուցվածքը, ֆունկցիաները, վարքը, դերը. մի խոսքով՝ ճանաչել կենդանի օրգանիզմները և նրանց ապրելու միջավայրը: Դա ինքնանպատակ չէ. կարևոր է նաև կենդանի օրգանիզմների օգտագործումը մարդու կյանքում:

ԿԵՆԴԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂԱՆ մԵԹՈՂՆԵՐԸ, նՈՐ ՄԵԽԱՆՈՂՈԳԻԱՆԵՐԻ կիրառումը կԵՆԴԱՆԱԿԱՆ հԵՏԱԳՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ: Յուրաքանչյուր գիտություն ունի հետազոտության սեփական առարկան, մեթոդները, խնդիրներն ու նպատակները: Մինչդեռ կենսաբանությունը, որն ուսումնասիրում է կենդանի օրգանիզմների հսկայական բազմազանությունը, հանդիսանում է իրարից խիստ տարբերվող գիտությունների մի համախումբ, որտեղ ընդգրկված են, օրինակ՝ մանրէաբանությունը, բուսաբանությունը, սմկաբանությունը, կենդանաբանությունը, մարդաբանությունը, բջջաբանությունը, գենետիկան, ֆիզիոլոգիան, կենսաքիմիան, կենսաֆիզիկան, կենսատեխնոլոգիան և այլ գիտայինըեր:

Ժամանակակից կենսաբանությունն ուսումնասիրում է, ինչպես արդեն գիտենք, կենդանի օրգանիզմների ողջ բազմազանությունը, դրանց կազմակրվածության տարբեր մակարդակները և կառուցվածքի առանձնահատկությունները, բջջի քիմիական բաղադրությունն, ընդհուած մինչև ատոմային մակարդակ, կենդանի օրգանիզմների կենսագործունեության բոլոր գործընթացները և այլն: Ուստի նրա ուսումնասիրում մեթոդներն ընդգրկում են ինչպես նկարագրական և դիտարկման, խնբավորման և համեմատության, այնպես էլ փորձի, ընտրության, ընտրասերման և բազմաթիվ այլ մեթոդներ, որոնց մի մասը ծեզ լավ հայտնի են կենսաբանության տարբեր բաժինների հետ ծանոթացումից:

Այսպես, **դիտարկումը** թույլ է տալիս հայտնաբերել այս կամ այն կենդանի օրգանիզմն ու կենսաբանական երևույթը, նկարագրել տարբեր կենդանի օրգանիզմների, հիմնականում, արտաքին կառուցվածքը: **Դամենատումը** հնարավորություն է տալիս հաստատելու տարբեր կենդանի օրգանիզմների ու երևույթների ընդհանուր օրինաչափություններն, իսկ **փորձը** ստեղծում է արհեստական պայմաններ կենդանի օրգանիզմների այս կամ այն հատկանիշն ու հատկությունը բացահայտելու համար (**նկ. 35**): Այսպես, օրինակ, լաբորատոր պայմաններում կամ փորձնական հողամասում ու ջերմոցում կատարված փորձները նպաստել են բույսերի կամ կենդանիների հատկանիշների ու հատկությունների պարզաբանմանը: Փորձով կարելի է հանողվել, օրինակ, որ թույները լույսի ազդեցությամբ օգտագործում են օդի ածխաթթու գազն ու արտազատում թթվածին (**նկ. 35**), որը շատ կարևոր է երկրագնդի վրա կենսուլորտի գոյատևման համար:

Ուսումնասիրում մեթոդներից է նաև **պատմական մԵթողը**, որը թույլ է տալիս ժամանակակից կենդանի օրգանիզմների անցյալի ու նախնիների



Նկ. 35. Բույսերի մոտ շնչառության ուսումնասիրման փորձը:


տարրերի որոշման մեթոդները: Կենսաբանության համար կարևոր են և լայն կիրառում ունեն չափիչ և վերլուծական ֆիզիկական և քիմիական բազմաթիվ մեթոդները, որոնցից նշենք էլեկտրաչափիչ, օպտիկական սարքերի օգտագործման, խառնուրդների ցենտրիֆուգման, բաժանման, կշռման եղանակները, քիմիական ռեակցիաների միջոցով նյութերի և

տարրերի որոշման մեթոդները: Կենսաբիմիական, կենսաֆիզիկական ու մոլեկուլակենսաբանական լաբորատորիաներում կարելի է հանդիպել էլեկտրաչափիչ սարքերից արյան, ավշի, տարրեր այլ հեղուկ միջավայրերի ռեակցիան որոշող թՀ-չափիչներ, հեղուկների օպտիկական խտությունը որոշող տարրեր սպեկտրաչափիչներ (նկ. 36):

Ստեղծվել են կենտրոնախույս ուժի հիման վրա գործող բարդ սարքեր՝ ցենտրիֆուգներ (նկ. 37), որտեղ հետազոտվող նյութը պարունակող ռոտորը



Նկ. 36. Կենսաբանական ուսումնասիրություններում օգտագործվող տարրեր սարքեր:



Նկ. 37. Ցենտրիֆուգ՝ տարբեր ռոտորներով:

մեկ րոպեում մինչև հարյուր հազար պտույտ կարող է կատարել: Այսպիսի սարքերի օգնությամբ կարելի է անջատել և բաժանել բջջի բաղադրամասերը, անջատել նրա օրգանոնիդները, որովհետև դրանք տարբեր թանձրություն ունեն: Այս մեթոդը հնարավորություն է տալիս առանձին-առանձին ուսումնասիրել բջջի յուրաքանչյուր մասի կամ օրգանոիդի հատկությունները:


Նշված մեթոդական մոտեցումներին ավելացնենք քանակական տվյալների մաթեմատիկական վերլուծության մեթոդները, որոնք իրականացվում են համակարգչային տեխնիկայի միջոցով:

Ժամանակակից կենսաբանությանը բնորոշ են նաև տեխնոլոգիական շատ մոտեցումներ: Դրանցից են արդեն ծանոթ գենետիկական և բջջային ճարտարագիտությունը, որոնց միջոցով ստացվում են փոփոխված հատկություններով նոր բջջներ և օրգանիզմներ (**նկ. 38**):

Բջջի ուսումնասիրության մեթոդները: Բջջաբանությունն ունի ուսումնասիրման բազմաթիվ բարդ մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու բջջի կառուցվածքի նույր մանրամասները և հայտնաբերելու անենաբազմազան բջջների և դրանց բաղադրամասերի կամ օրգանոիդների ֆունկցիաները: Բջջի կառուցվածքի հետազոտություններում շարունակում է մեծ դեր խաղալ **լուսային մանրադիտակը** (**նկ. 39**), որը ներկայումս մի քանի հազար անգամ խոշորացնող, բարդ և անընդհատ կատարելագործվող սարք է:

Բջջի ուսումնասիրության գործում մեծ դեր են խաղում լուսային մանրադիտակի նոր տեսակները՝ փուլացայտերանգային, ինտերֆերենցիոն և այլ տիպի մանրադիտակները:

Ուսումնասիրությունների նոր դարաշրջանի սկիզբ դրեց **էլեկտրոնային մանրադիտակը** (**նկ. 40**): Այդ մանրադիտակում լույսի փոխարեն օգտագործում են էլեկտրոնների արագ հոսքը, իսկ լուսային մանրադիտակի ապակե



Նկ. 38. Ինսոլյին արտադրող գենետիկորեն վերափոխված

բակմներիաներ (1):

Լուսատիտիկի գեներով ծխախոտի բույսը (2):

ուսպնյակները փոխարինված են էլեկտրամագնիսական դաշտերով: Մեծ արագությամբ սլացող էլեկտրոններն սկզբից կենտրոնանում են հետազոտվող օբյեկտի վրա, ապա ցրվում և ընկնում են դիտարկման էկրանի վրա. այստեղ կարելի է դիտել օբյեկտի տասնյակ և հարյուր հազարավոր անգամ խոշորացված պատկերը:

Բջջի ուսումնասիրնան համար օգտագործվում են նաև ռենտգենյան ճառագայթները, որոնք անցնելով օբյեկտի միջով տալիս են դրա կառուցվածքի կազմավորման և առանձնահատկությունների մասին հետաքրքիր պատկերներ:

Կենդանի բջջի, նրա նրբագույն կառուցվածքների և ֆունկցիաների ուսումնասիրությունը հեշտ խնդիր չէ: Մոլեկուլային կենսաբանների, կենսաքիմիկոսների, ֆիզիոլոգների, գենետիկների, կենսաֆիզիկոսների և կենսատեղեկատվաբանների համատեղ ջանքերի և հսկայական աշխատանքի գուգակցումը հնարավորություն է տվել մանրամասն ուսումնասիրել նրա բաղադրիչ մասերը՝ օրգանոիդները և որոշել դրանց դերը:

Կենսաբանության նվաճումների կիրառումը արդյունաբերության, գյուղատնտեսության, բժշկության մեջ և այլ բնագավառներում: Կենսաբանությունը 20-րդ դարում հասավ այնպիսի նվաճումների, որոնք այն դարձրին մեր օրերի գիտատեխնիկական առաջընթացի ամենակարևոր և առաջատար բնագավառը:

Կենդանի օրգանիզմները կամ դրանց գործընթացները վաղուց են օգտագործվում արդյունաբերության և գյուղատնտեսության տարբեր ոլորտներում՝ հացաթխման, գարեջրի ստացման, գինեգործության, կաթնամթերքների արտադրության մեջ: Սակայն ֆիզիկաքիմիական և մոլեկուլային

ԳԼՈՒԽ 2. ԿԵՆԱՅԻՆ ՆՅՈՒԹԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԴԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կենսաբանության, ինչպես նաև կենսատեխնոլոգիայի վերջին նվաճումները բերեցին սկզբունքորեն նոր ուղղությունների զարգացման:

Հնարավոր դարձավ արդյունաբերական մասշտաբներով տարրեր նյութերի ստացման նպատակով օգտագործել փոփոխված հատկություններով բակտերիաների և սմկերի նոր տեսակի բջիջներ, որոնք աչքի են ընկնում բարձր արդյունավետությամբ: Դրանք լայնորեն կիրառվում են կերային և սննդային սպիտակուցների, լիզինի, վալինի, լեյցինի և այլ ամինաթթուների, տետրացիկլինի, վալինոմիցինի և այլ հակաբիոտիկների, հորմոնների, վիտամինների, վնասատուներից և տարրեր հիվանդություններից բույսերը պաշտպանող միջոցների ու բազմաթիվ այլ նյութերի արտադրության ժամանակ:

Մշակման նոր տեխնոլոգիական ռեժիմների կիրառմամբ այսօր արդեն տարրեր նյութեր ստացվում են նոր աղբյուրներից: Այսպես, օրինակ՝ զյուլկոզն արդեն ստանում են թաղանթանյութից ծծմբաթթվի և ֆերմենտների օգնությամբ:

Մետաղների անջատման տեխնոլոգիական հայտնի եղանակ է մետաղական հանքանյութի լավարկումը՝ բակտերիաների միջոցով: Դա բերեց հին և աղքատ հանքերի մշակմանը:

Բացարիկ է կենսաբանության դերը կենսավառելիքի արտադրության ընդայնման և էներգիայի նոր աղբյուրների ստացման գործում:

Կենսաքիմիական և կենսաֆիզիկական նոր մեթոդներ են ներդրվել բժշկության մեջ: Դրանք իիմք են հանդիսանում ժամանակակից ախտաբանության համար: Նյութերի թաղանթային փոխադրման մեխանիզմների շարքում վերջերս բացահայտվել են տարրեր սպիտակուցային համակարգեր, որոնք բջիջը պաշտպանում են օտարածին մասնիկներից, կամ դեպի բջիջ ներթափանցելու դեպքում՝ դրանց դուրս բերում շրջակա միջավայր՝ ծախսելով էներգիա: Սովորական է դարձել նոր դեղամիջոցների մշակումը և դրանց ազդող դեղաչափերի որոշումը:

Բուժման արդյունավետ եղանակների շարքում ևս տեղ են գտել նոր մեթոդներ և մոտեցումներ, որոնք ուղղված են տարրեր



Նկ. 39. Լուսային մանրադիտակներ:



Նկ. 40. Էլեկտրոնային մանրադիտակ:

Նկ. 41. Ախտաբանական նպատակով օգտագործվող սարք:

հիվանդությունների հիմքում ընկած խանգարումների պատճառների հաղթահարմանը (Գլ. 41):

Մկանային կծկումների խախտմամբ պայմանավորված անշարժության հաղթահարման վառ օրինակ է ներկայացրել ամերիկացի կենսաքիմիկոս Ա.Լենինցերը: Նա բուժեց այդ հիվանդությամբ անշարժության դատապարտված և 17 տարի սայլակին գամված մի աղջկա՝ ներարկելով հիվանդին միտոքոնդրիումներում բացակայող սպիտակուցներ և այլ բաղադրիչներ:

Դարցեր կրկնության համար.

1. Որո՞նք են կենսաբանության ուսումնասիրման մեթոդները:
2. Ի՞նչ սարքեր գիտեք, որոնք օգտագործվում են կենդանի օրգանիզմների ուսումնասիրման նպատակով:
3. Ի՞նչո՞ւմ է կենսաբանության գործնական նշանակությունը:
4. Ի՞նչ նյութեր են ստանում բույսերից, կենդանիներից և այլ կենդանի օրգանիզմներից:
5. Քերե՛ք մարդու կյանքում կենդանի օրգանիզմների, կենսաբանության նվաճումների օգտագործման ձեզ հայտնի օրինակներ:



ԲԱԺԻՆ / / ԲԶԻՉ

ԳԼՈՒԽ 3. ԿԵՆԴԱՍԻ ՆՅՈՒԹԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԱԿՈՐՎԱԾՈՒՅԹՆԵՐ

5. ՈՒՍՍՈՒԹ ԲԶՃԻ ՄԱՍԻՆ


Կենդանի բջջի հայտնաբերումը: Տարբեր կենդանի օրգանիզմների բջիջների մասին պատկերացումների սկիզբը դրվեց պարզագույն խոշորացույցի նման մի սարքի օգնությամբ, երբ դեռևս 17-րդ դարում տարբեր բույսերից պատրաստված կտրվածքներում հոլանդացի ֆիզիկոս և բուսաբան Ուրբերտ Շուկը նկատեց իրար նման խցիկներ (Ակ. 42): Այդ խցիկները նա անվանեց բջիջներ:

Տարիներ հետո՝ կատարելագործելով մանրադիտակը՝ Շուկի հայրենակից Անտոնի վան Լենինիկը արդեն տեսավ շատ փոքր բջիջները՝ բակտերիաները: Բջիջներում հայտնաբերվեցին տարբեր կառուցվածքներ, օրինակ՝ բջջակորիզմները: Մանրադիտակների միջոցով տեսանելի դարձան բույսերի և կենդանիների շատ տարբեր բջիջներ:

Բջջային տեսություն:
Բջջի մասին տեղեկությունների ընդհանրացումը 19-րդ դարի սկզբներին կատարեցին գերմանացի կենսաբաններ՝ բուսաբան Մատիաս Շլայդենը և կենդանաբան Թեոդոր Շվանը (Ակ. 43): Նրանք ստեղծեցին բջջային տեսություն, որը սկիզբ դրեց բջջի մասին ուսմունքին և բջջաբանությանը:

Բջջային տեսությունը հաստատեց, որ միմյանցից շատ տարբերվող կենդանի օրգանիզմները՝ բակտերիաները, սնկերը, բույսերը, կենդանիները, ինչպես նաև մարդը, բոլորն ել կառուցված են բջիջներից:

Իր «Կենդանիների և բույսերի կառուցվածքի և ածի համապատասխանության մասին մանրադիտակային ուսումնասիրություններ» աշխատության մեջ (1839թ.) Թ.Շվանը տվեց բջջային տեսության հիմնադրույթները:



Ակ. 42. Ո. Շուկը (1635-1703 թթ.) և իր կողմից պատկերված բջիջները:



Նկ. 43. Բջջային տեսության հիմնադիրներ՝ Մատիաս Շլայխենը (1804-1881թթ.) և Թեոդոր Շվանը (1810-1882թթ.):

ինքնուրույն միավոր է, բայց միանալով մյուս բջջային մասին մի ամբողջություն՝ հյուսվածքը:

Շվանի նշված աշխատության մեջ արձանագրվեց նոր բջջային առաջացումը, դրանց աճը և կառուցվածքի փոփոխությունը տարբեր բույսերում և կենդանիներում:

Բջջային տեսությունը մեծ զարգացում ունեցավ՝ կենտրոնացնելով գիտնականների ուշադրությունը կենդանի օրգանիզմների հետազոտման բջջային մակարդակի վրա: Հատկապես նշանակալի դարձավ 19-րդ դարակեսին գերմանացի մեկ այլ բնագետ և բժիշկ Ռուդոլֆ Վիրխովի (Նկ. 44) կողմից ծևակերպված նոր դրույթն այն մասին, որ յուրաքանչյուր բջջ առաջանում է նույնական բջջ: Այնուհետև ցույց տրվեց, որ բույսերի և կենդանիների նոր օրգանիզմը հաճախ զարգանում է երկու բջջների՝ ծվարջի և սպերմատոզորիդի միաձուլումից: Հետագայում բացահայտվեց բջջ ուղղակի և անուղղակի կիսումը, հայտնաբերվեցին տարբեր օրգանիզմներ:

Բջջային տեսությունը տարեցտարի զարգացում ապրեց նոր տեսակի՝ լուսածորվող և էլեկտրոնային մանրադիտակների ստեղծման և նորագույն ֆիզիկական ու քիմիական մեթոդների օգտագործման շնորհիվ:

Այդ տեսությունը հստակեցվեց, լրացվեց, և արդեն ժամանակակից բջջային տեսությունը ներկայանում է:

Բոլոր կենդանի օրգանիզմների բջջների մասին իր հետևյալ հիմնադրույթներով.

- բջջը օրգանիզմների կառուցվածքի, կենսագործումներյան, բազմացման և զարգացման տարրական՝ ամենափոքր միավորն է.

- բոլոր օրգանիզմների բջջները միմյանց նման են իրենց կառուցվածքով, քիմիական բաղադրությամբ, նյութափոխանակության և կենսագործումներյան հիմնական դրսնորումներով.

Նախ, ըստ Շվանի, բջջը բոլոր կենդանի օրգանիզմների կառուցվածքի տարրական միավորն է. բջջները միմյանց նման են, առաջանում են և աճում նույն ձևով: Այդ դրույթը բոլոր կենդանի օրգանիզմների միասնականության շատ կարևոր ապացույց է: Դա հնարավոր է դարձնում խորհել կյանքի էության և ծագման մասին ընդհանուր առումով:

Բջջային տեսությունը պնդում է նաև, որ յուրաքանչյուր բջջ



Նկ. 44. Ռուդոլֆ Վիրխով (1821-1902թթ.):

բոլոր կենդանի օրգանիզմների բջջների մասին իր հետևյալ հիմնադրույթներով.

- բջջը օրգանիզմների կառուցվածքի, կենսագործումներյան, բազմացման և զարգացման տարրական՝ ամենափոքր միավորն է.

- բոլոր օրգանիզմների բջջները միմյանց նման են իրենց կառուցվածքով, քիմիական բաղադրությամբ, նյութափոխանակության և կենսագործումներյան հիմնական դրսնորումներով.

- յուրաքանչյուր նոր բջիջ առաջանում է ելակետային (մայրական) բջիջի բաժանման արդյունքում. բազմաբջիջ օրգանիզմներն սկիզբ են առնում մեկ կամ մի քանի նման բջիջներից.

- բազմաբջիջ օրգանիզմներում բջիջները մասմագիտացված են ըստ իրենց կատարած ֆունկցիաների. կառուցվածքով և ֆունկցիայով նման բջիջներն առաջանում են հյուսվածքներ, հյուսվածքներն էլ՝ օրգաններ, որոնց գործունեությունը կարգավորվում է նյարդային և հումորալ համակարգերի միջոցով:

Բջջային տեսությունը ներկայունս ևս պահպանել է իր նշանակությունը: Այդ տեսությունը կենսաբանության ամենակարևոր ընդհանրացումներից է:

Սակայն կան հարցադրումներ, որոնք դեռևս քննարկվում են և չեն ընդհանրացված: Այդպիսիններից է այն, որ բջջային տեսությունը չի ընդգրկում վիրուսները, որոնք դիտարկվում են որպես կյանքի ոչ բջջային ձևեր: Տարբերակվում են բջիջների երկու տեսակներ՝ **նախակորիզավոր** (պրոկարիոտ) և **կորիզավոր** (էուկարիոտ), որոնց միջև կան ոչ միայն նմանություններ, այլ նաև էական տարրերություններ. դրանք ներկայացվում են հաջորդ գլխում: Անհրաժեշտ է տալ բազմաբջիջ օրգանիզմների որպես ամբողջի բնութագիրը, պարզաբանել օրգանիզմներում ընթացող տարաբնույթ գործընթացների մեխանիզմները:



Դարցեր կրկնության համար.

1. Ո՞վ է հայտնաբերել կենդանի բջիջներն, ի՞նչ սարքի օգնությամբ:
2. Ովքե՞՞ր ձևակերպեցին բջջային տեսությունը:
3. Որո՞նք են եղել այդ տեսության հիմնադրույթները:
4. Ինչպիսի՞ ներդրում ունեցավ Ռ. Վիլխովը բջջային տեսության զարգացման մեջ:
5. Ինչի՞ հաշվին բջջային տեսությունը զարգացում ունեցավ:
6. **Թվարկեք ժամանակակից բջջային տեսության հիմնադրույթները: Կան արդյո՞ք ընդհանրացման համար քննարկվող հարցադրումներ:**

6. ԿԵՆԴՐԻ ՆՅՈՒԹԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ: ՔԻՄԻԱԿԱՆ ՏԱՐՐԵՐ: ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Քիմիական տարրերի պարունակությունը բջջում: Բոլոր կենդանի օրգանիզմները՝ բակտերիաները, սնկերը, բույսերը, կենդանիներն, ինչպես նաև մարդը պարունակում են տարրեր բնույթի, բայց իրար նման հազարավոր քիմիական նյութեր, որոնցով կառուցում են բջիջները և ապահովում բջջի կենսագործունեությունը:

Բջջում կարելի է հայտնաբերել բնության մեջ առկա քիմիական տարրերի մեջ մասը. առանձնահատուկ տարրեր չկան: Բջիջներում առանձին տարրերի պարունակությունն, ինչպես գիտեք, տարրեր է, և ըստ դրա էլ տարրերը

բաժանվում են խմբերի՝ **մակրոտարրերի, միկրոտարրերի և ուլտրամիկրոտարրերի** (Ակ. 45):

Քիմիական տարրերի պարունակությունը բջջում

Տարրեր	քանակը %-ով	Տարրեր	քանակը %-ով
Թթվածին	65-75	Ցինկ	0,0003
Ածխածին	15-18	Պղինձ	0,0002
Զրածին	8-10	Յոդ	0,0001
Ազոտ	1,5-3,0	Ֆոսի	0,0001
Ֆոսֆոր	0,20-1,00	Ուրան	
Կալիում	0,15-0,4	Մեղիկ	
Օծումբ	0,15-0,2	Ուկի	
Բլոր	0,05-0,10	Ցեզիում	
Կալցիում	0,04-2,00		
Մագնեզիում	0,02-0,03		
Նատրիում	0,02-0,03		
Երկար	0,01-0,015		


Նկ. 45. Բջջի մակրոտարրերը և միկրոտարրերը:

Մակրոտարրերը կազմում են բջջի զանգվածի մոտ 99 %-ը: Դրանցից թթվածինն, ածխածինն, ազոտը և ջրածինը միասին կազմում են բջջի ամբողջ պարունակության գութեք 98 %-ը: Մակրոտարրերի շարքին են դասվում նաև ծծումբը, ֆոսֆորը, բլորը, կալիումը, մագնեզիումը, նատրիումը, կալցիումը, երկարը: Թեև դրանք բջջի չոր զանգվածի շատ փոքր մաս են կազմում, չափազանց կարևոր նշանակություն ունեն բջջի կառուցման մեջ:

Սյուս տարրերը (միկրոտարրեր) բջջի մեջ պարունակվում են անհամեմատ փոքր քանակությամբ (0,01 %-ից պակաս), թեև որոշ տարրեր, մասնավորապես ցինկը, պղինձը, յոդը և ֆոտորը շատ կարևոր են բջջի բնականոն կենսագործունեության համար: Դրանք մտնում են ֆերմենտների, վիտամինների, հորմոնների և այլ շատ կարևոր նյութերի կազմի մեջ և պայմանավորում են դրանց կենսաբանական ակտիվությունը: Վերջապես, կան տարրեր, որոնք առկա են բջջում չափազանց չնչին քանակություններով (0,000001 %-ից պակաս): Դրանցից են ուրանը, սնդիկը, ուլկին, ցեզիումը և այլ հազվագյուտ տարրերը, որոնք կոչվում են ուլտրամիկրոտարրեր: Դրանց մասին առայժմ քիչ գիտենք, բայց բջջի կենսագործունեության մեջ դրանք, երևի, ունեն իրենց ուրույն նշանակությունը:

Չնայած նրան, որ կենդանի օրգանիզմներում հանդիպող տարրերը հանդիպում են նաև անկենդան մարմիններում, դրանց պարունակությունը կարող է խիստ տարբեր լինել: Այսպես, թթվածնի պարունակությունը բույսերում ավելին է, քան այն հողում, որտեղ դրանք աճում են: Քաջ հայտնի է, օրինակ, շրջակա միջավայրում նատրիումի հոնների ավելի շատ քանակությունը, քան տարբեր տեսակի կենդանի բջջներում, և հակառակը, կալիումի հոնների շատ ավելի քիչ քանակությունը շրջակա միջավայրում (Ակ. 46):

Կենդանի օրգանիզմներն ունեն առանձնահատկություն՝ այս կամ այն քիմիական տարրերը կուտակելու ունակություն, հասցնելով դրանք տարբեր քանակությունների: Հայտնի են մանգանի կուտակումները որոշ բակտերիաներում, կամ յոդի մեջ քանակը որոշ ծովային ջրիմուներում:




Նկ. 46. Տարրեր տարրերի ամհավասարաչափ բաշխումը բջջի և շրջակա միջավայրի միջև:

Բջջներում քիմիական տարրերը ներկայացված են ինչպես առանձին, այնպես էլ տարրեր միացությունների կազմում: Այդ միացություններից են անօրգանական և օրգանական տարրեր նյութերը, որոնց մեջ մասը ներկայում քաջ հայտնի է:

Բջջի անօրգանական նյութերը: Բջջի կազմում ամենամեծաքանակ և ամենատարածված նյութը **ջուրն** է: Դրա պարունակությունը տատանվում է շատ լայն սահմաններում: Սակայն միջինն այն կազմում է բջջի զանգվածի 70-80%-ը: Այդ զանգվածը կարող է ենթարկվել զգալի փոփոխությունների՝ կախված շրջակա միջավայրի պայմաններից: Այդպիսի փոփոխությունները կրում են ժամանակավոր բնույթ: Բջջներն ունեն ջրի քանակի կարգավորման համակարգեր: Սակայն բջջի երկարատև ջրագրկումը հանգեցնում է կենսագործունեության լուրջ փոփոխությունների և կարող է տանել նախվան:

Զրի դերը բջջում շատ մեծ է և կարևոր: Կենսաբանության նախորդ դասընթացներից հայտնի են ջրի այն հատկությունները, որոնք որոշում են նրա դերը բջջում: Նշենք ջրի մոլեկուլի փոքր չափերը և նրա դիպոլային հատկությունները: Դրանց հաշվին ջրի մոլեկուլները միանում են իրար քրածնային կապերի միջոցով (նկ. 47): Այդ կապերը ոչ միայն կայունացնում են ջրի կառուցվածքն, այլ նաև պայմանավորում են ջրի մոլեկուլների փոխազդեցությունը տարրեր նյութերի հետ և դրանց փոխակերպումները:

Զուրը որոշում է բջջի ծավալն, ապահովում դրա առաձգականությունը: Զուրն օժտված է նաև բավարար ջերմահաղորդականությամբ և մեծ ջերմունակությամբ: Այդ հատկությունների շնորհիվ զուրն ունի մեծ նշանակություն բջջում և օրգանիզմում ջերմային հավասարակշռության պահպանման գործում: Զուրը լուծիչ է, որում լավ լուծվում են կամ հիդրոֆիլ են բազմաթիվ նյութեր: Դրանցից են անօրգանական աղերը, թթուները, հիմքերը, իսկ օրգանական նյութերից՝ սպիրտները, ամինները, ածխաջրերը, սպիտակուցները և այլն: Սակայն կամ նաև շատ հիդրոֆոր նյութեր, որոնք վատ են լուծվում կամ բոլորովին չեն լուծվում ջրում:



Ակ. 47. Ձրի մոլեկուլների միջև ջրածնային կապերի առաջացնան գծապատճերը:

Գործունեության բազմապիսի գործընթացներին:

Բջջում սպիտակուցների, ածխաջրերի, լիպիդների և այլ միացությունների ճեղքավորման բազմաթիվ ռեակցիաներ ընթանում են ջրում դրա աննիջական մասնակցությամբ: Յիդրոլիզի այդ ռեակցիաներն ընթանում են մի շարք ֆերմենտների ազդեցության տակ: Բոջջում ջուրը նաև թթվածնի և ջրածնի կարևոր աղբյուր է:

Բջջի անօրգանական նյութերից են **հանքային աղերը**, որոնք գտնվում են կամ լուծված՝ կատիոնների և անիոնների ձևով, կամ պինդ, անլուծելի վիճակում: Այդ նյութերը մասնակցում են կենսագործություններին:



Դարցեր կրկնության համար.

1. Ինչպիսի՞ն է տարրեր բջջներում քիմիական տարրերի բաղադրությունը, որանցից որո՞նց քանակությունն է առավել մեծ և առավել փոքր:
2. Արդյո՞ք հավասարաչափ են բաշխված տարրերը բջջում և նրա շրջապատող միջավայրում:
3. Կարող են արդյո՞ք որոշ տարրեր կուտակվել կենդանի օրգանիզմներում:
4. Ինչպիսի՞ն է ջրի պարունակությունը բջջում, կարո՞ղ է այն փոփոխվել:
5. Ի՞նչ հատկություններով է օժնված ջուրը:
6. Որո՞նք են ջրածնային կապերը և ի՞նչ նշանակություն դրանք ունեն:
6. Ի՞նչ դեր է ջուրը կատարում բջջում: Մասնակցո՞ւմ է ջուրն այլ քիմիական նյութերի փոխարկումներին, բերեք օրինակներ:
7. Բջջում կա՞ն հանքային աղեր:

Առաջադրանք.

Անփոփելով ձեզ հայտնի տեղեկությունները՝ կենսաբանության նախորդ դասագրերից լրացրեք բջջում քիմիական տարրերի մասին հետևյալ աղյուսակը:

Քիմիական տարրերի խումբ	Բջջում ո՞ր նյութերի կազմում են հանդիպում	Բջջի կենսագործունեության ո՞ր գործընթացներում են մասնակցում
Սակրոտարրեր		
Միկրոտարրեր		
Ուլտրամիկրոտարրեր		

7. ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԱԾԽԱԶՐԵՐԻ ԵՎ ԲԱՐՊԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐՆ ՈՒ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ


Բջջի օրգանական նյութերը: Բջջի հիմնական օրգանական նյութերից են մեծ մոլեկուլները՝ սպիտակուցները, նուկլեինաթթուներն, ածխաջրերն, ինչպես նաև ճարպերը և մի շարք փոքր մոլեկուլները՝ հորմոնները, կենսաբանական գունակները (պիզմենտները), ամինաթթուները, պարզ շաքարները, նուկլեոտիդները և այլն:

Ածխաջրեր: Ածխաջրերը, ինչպես գիտենք, $C_n(H_2O)_n$ ընդհանուր բանաձև ունեցող օրգանական միացություններ են:

Ածխաջրերը լինում են պարզ և բարդ, տարրերում են միաշաքարներ (մոնոսախարիդներ) և բազմաշաքարներ (պոլիսախարիդներ): Մոնոսախարիդներ են **պենտոզները** և **հեքսոզները**, որոնք տարրերվում են մոլեկուլում ածխածնի ատոմների քանակով՝ պարունակում են համապատասխանաբար ածխածնի 5 և 6 ատոմներ (**նկ. 48**): Կարբոնիլային խմբի բնույթով տարրերում են ալդոզներ և կետոզներ:

Բացի լավ հայտնի գլյուկոզից, ֆրուկտոզից, գալակտոզից, ռիբոզից, դեօքսիռիբոզից, մոնոսախարիդներ են նաև էրիթրոզը, որը բույսերում առաջանում է ֆոտոսինթեզի ընթացքում, և բնափայտի շաքար քսիլոզը: Մոնոսախարիդներն ունեն բարձր քիմիական ակտիվություն և հաճախ փոխազդում են տարրեր այլ նյութերի հետ՝ կազմելով բարդ միացություններ:

Բարդ ածխաջրերը պոլիմերներ են, որոնց մոնոմերները մոնոսախարիդներն են: Տարրերում են պոլիսախարիդներ, որոնք կազմված են մի տեսակի մոնոսախարիդից, և այնպիսի պոլիսախարիդներ, որոնց կազմում հանդիպում են տարրեր տեսակի մոնոսախարիդներ (**նկ. 49**): Կան պոլիսախարիդներ, որոնք ունեն ճյուղավորված շղթաներ: Տարրերվում են պոլիսախարիդներն իրենց մոլեկուլի ձևով:



Նկ. 48. Որոշ հեքսոզների կառուցվածքը:

Լայն տարածված օսլայից, թաղանթանյութից (ցելյուլոզ) և գլիկոգենից բացի, պոլիսախարիդներ են նաև խիտինը և մանամը, որոնք կազմում են սնկերի բջջապատճ, իսկ խիտինը հանդիպում է նաև հողվածոտանիների արտաքին ծածկույթում (**նկ. 49**): Պոլիսախարիդ է նաև հեպարինը, որը կենդանիների մոտ արգելակում է արյան մակարդումը, մասնակցում լիպիդների փոխանակման կարգավորմանը:



Նկ. 49. Տարբեր պոլիսախարիդների կառուցվածքը:

Ածխաջրերը բջջում կամ կենդանի օրգանիզմներում հիմնականում երկու ֆունկցիա են կատարում՝ **կառուցողական և էներգիական**: Այդ ֆունկցիաներն արդեն հայտնի են: Դրանցից բացի, ածխաջրերին բնորոշ են նաև **սննդանյութերի պաշարումը և պաշտպանական** ֆունկցիաները: Այսպես՝ սերմերում, սոխուկներում, պալարներում և բույսերի այլ հատվածներում պաշարվում է օսլան, իսկ կենդանիներում պաշարանյութը է գլիկոգենը: Պաշտպանական ֆունկցիա է կատարում, օրինակ, շատ բջջները պատող լորձը, որը պարունակում է ածխաջրուր: Թաղանքների մակերևույթում գտնվող ածխաջրերը հաճախ փոխադրում են տարբեր սպիտակուցների և լիպիդների հետ և մասնակցում են **բժիշների միմյանց հետ միակցմանը** հյուսվածքներում և օրգաններում, կատարում նաև այլ ֆունկցիաներ:

Պոլիսախարիդներից՝ թաղանթանյութն ունի շատ կարևոր նշանակություն մարդու կյանքում: Այն օգտագործվում է թղթի, մետաքսի, ցելոֆանի, տարբեր թելերի և այլ նյութերի ստացման համար:

Լիպիդներ: Լիպիդները նիշավորում են ճարպերն, ինչպես նաև ճարպանան տարբեր միացություններ, օրինակ՝ լեցիտինը, խոլեստերինը, ֆուֆոլիպիդները, մի շարք հորմոններ և այլն: Լիպիդներն սպիտակուցների կամ ածխաջրերի հետ կարող են կազմել նաև բարդ միացություններ:

ճարպերն իրենցից ներկայացնում են սպիրտների և ճարպաթթուների միացություններ (**նկ. 50**): Կենդանական ճարպերում հիմնականում հանդիպում են հագեցած ճարպաթթուներ, որոնք պայմանավորում են կենդանական ճարպերի սենյակային ջերմաստիճանում պինդ լինելը (օրինակ՝ կարագը): Բուսական ճարպերը կամ յուղերը հարուստ են չիագեցած ճարպաթթուներով և սենյակային ջերմաստիճանում հեղուկ են:

ճարպերի կազմում առկա սպիրուների մոլեկուլները լուծվում են ջրում, սակայն ճարպաթրուները ջրում լուծելի չեն. այդ պատճառով ճարպերի մոլեկուլները ջրի մակերևույթին առաջացնում են մի շերտ՝ մոլեկուլների մի մասով ընկղմված ջրի մեջ, իսկ ճարպաթրուների մասով՝ ուղղված ջրից դուրս: Ջրում ճարպերն առաջացնում են բշտիկներ՝ լիպոսոմներ, որոնք ջրով լցված լիպիդային երկշերտ կառույցներ են (Ակ. 51): Այսպիսի հատկությունը շատ կարևոր է կենսաբանական թաղանթներում, որոնց հենքը կազմում է լիպիդներից ծևավորված երկու շերտը: Այդ երկշերտը մեկուսացնում է ճարպային այդ կառույցը ջրից:

Ֆուֆոլիպիդների ոչ ճարպաթթվային մասում՝ այսպես կոչված գլիսիկում համդիպում են տարբեր կողմնային խմբեր, որոնք կարող են կրել լիցքը: Այս լիպիդները **կառուցողական ֆունկցիան** կատարում բջջային թաղանթներում:


Ճարպերը կատարում են նաև *էներգիական և փոխադրական ֆունկցիաներ*: Առանձնահատուկ է ճարպերի վերափոխման արդյունքում մեծ քանակությամբ ջրի առաջացումը:

Հայտնի են նաև ճարպերի **սննդանյութերի պաշարման, ջերմակարգավորման** և այլ ֆունկցիաները:


Ճարպերը, մեծ քանակով կուտակվելով որոշ կենդանիների մաշկի տակ, ջերմանեկուսիչ դեր են կատարում: Բացի դրանից, ջերմակարգավորման ֆունկցիան իրականանում է այսպես կոչված գորշ ճարպում, որը կուտակվում է ցածր ջերմաստիճանում ապրող տարբեր կենդանիների օրգանիզմներում և հայտնաբերվել է նորածին երեխաների մոտ:

Ճարպերը մասնակցում են նաև մի շարք **հորմոնների** կենսասինթեզին: Դրանցից են որոշ կենդանիների և մարդու մակերիկամների և սեռական համակարգի հորմոնները:

Կարևոր է ճարպերի կազմի մեջ ճարպաթրուների **կարգավորիչ** ֆունկցիան, երբ դրանց ազդեցությամբ փոփոխվում է կենդանիների և մարդու ուղեղի և տարբեր այլ օրգանների աշխատանքը:



Ակ. 50. Շագեցած (1) և չհագեցած (2) ճարպաթթուներով ճարպերի կառուցվածքը:



Ակ. 51. Լիպոսոմները բջջում և դրանց կառուցվածքը:



Դարցեր կրկնության համար.


1. Թվարկեք բջջի օրգանական նյութերը:
2. Ի՞նչ են ածխաջրերը, ածխաջրերի ի՞նչ խմբեր կան:
3. Սոնսախարիդների ի՞նչ հատկություններ գիտեք:
4. Ի՞նչ տեսակի պոլիսախարիդներ կան բջջում, ինչո՞վ են դրանք տարրերվում մոնսախարիդներից:
5. Որո՞նք են ածխաջրերի ֆունկցիաները բջջում:
6. Ի՞նչ գիտեք բաղանքանյութի մասին, ինչպես է այն օգտագործվում մարդու կյանքում:
7. Ի՞նչ են լիպիդներն, ի՞նչ լիպիդներ գիտեք:
8. Լիպիդների ի՞նչ հատկություններ են հայտնի, դրանցից ո՞րն է կարևոր կենսաբանական բաղանքների համար:
9. Որո՞նք են լիպիդների ֆունկցիաներն, ի՞նչ է գորշ ճարպը:

8. ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊՈԼԻՍԵՐՆԵՐ: ՄՊԻՏԱԿՈՒՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կենսաբանական պոլիմերներ: Բջջի օրգանական նյութերից շատերն ունեն բավականին մեծ չափսեր, որոնք պայմանավորված են դրանց կազմում տարրեր կառուցների կրկնությամբ: Այդպիսի միացությունները կոչվում են **պոլիմերներ:** Կենսաբանական պոլիմերներից ամենակարևորներն են սպիտակուցները և նուկլեինաթթուները:

Սպիտակուցների կառուցվածքը: Սպիտակուցների կառուցվածքը բավականին բարդ է: Յիշեցնենք, որ սպիտակուցները կազմված են ամինաթթուներից: Սպիտակուցների մեծ մասում հանդիպում են 20 տարրեր տեսակի ամինաթթուներ:

Ամինաթթվի մոլեկուլը կարծես կազմված է երկու մասից: Մի մասը բոլոր ամինաթթուներում միատեսակ է:



Այն կազմված է ամինախմբից ($-\text{NH}_2$) և կարբօքսիլային խմբից ($-\text{COOH}$): Փաստորեն, ամինաթթուներն ունեն և՛ թթվի, և՛ հիմքի հատկություններ:

Մոլեկուլի մյուս մասը՝ **ռադիկալը** ամինաթթուներում տարրեր է: Կան պարզ կառուցվածք ունեցող ռադիկալներով ամինաթթուներ, սակայն հայտնի են նաև բավականին բարդերը: Ռադիկալներն իրարից տարրերվում են նաև ձևով, բազմաթիվ հատկություններով (նկ. 52):


Սպիտակուցի կառուցվածքը չափազանց բարդ է և ունի տարրեր մակարդակներ՝ առաջնային, երկրորդային, երրորդային և չորրորդային: Առաջնային կառուցվածքն իրենից ներկայացնում է տարրեր ամինաթթուների հաջորդականությունը, երբ դրանք մեկը մյուսին միանում են մի ամինաթթվի կարբօքսի-

ԳԼՈՒԽ 3. ԿԵՆԱՎԱՆԻ ՆՅՈՒԹԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԱԿՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ


լային խմբի և հարկան ամինաթթվի ամինախմբի միջոցով **պեպտիդային կապի** առաջացման հաշվին: Պեպտիդային է կոչվում տարբեր ամինաթթուների այդ խմբերի միջև առաջացած $-\text{NH}-\text{CO}-$

կովալենտ կապը (նկ. 53): Պեպտիդային կապերի հաշվին կազմավորվող միացությունները կոչվում են պեպտիդներ: Կազմված լինելով տարբեր ամինաթթուներից՝ սպիտակուցները ոչ կանոնավոր պոլիմերներ են: Ընդ որում ոչ միայն ամինաթթուների քանակը, այլև դրանց տեսականին տարբեր սպիտակուցներում նույնը չէ:

Կան սպիտակուցներ կազմված հարյուրավոր ամինաթթուներից, իանդիպում են նաև հազարավոր ամինաթթուներից կազմված խոշոր սպիտակուցներ: Ինսուլինը և ռիբոնուկլեազն այն առաջին սպիտակուցներն են, որոնց առաջնային կառուցվածքը պարզաբանվեց դեռևս 20-րդ դ. և դրա շնորհիվ հնարավոր դարձավ այդ սպիտակուցների սինթեզը ոչ բջջային՝ արհեստական




Նկ. 52. Որոշ ամինաթթուների կառուցվածքները:



Նկ. 53. Պեպտիդային կապի առաջացման գժապատկերը:


համակարգում: 51 ամինաթթվային մնացորդներից կազմված ինսուլինի առաջնային կառուցվածքի պարզաբնանան կարևորությունը նշանավորվեց անգլիացի կենսաբիոմիկոս Ռ.Սենժերին Նոբելյան մրցանակի շնորհումով (**նկ. 54**):



Նկ. 54. Ինսուլին սպիտակուցի երրորդային կառուցվածքի համակարգչային մոդելը:

Երրորդային կառուցվածքն առաջանում է պոլիակեպտիդային շղթայի լիովին կամ մասնակիորեն պարուրածն ոլորվելու արդյունքում. դա կատարվում է ջրածնային կապերի առաջացման հաշվին: Յնարավոր է նաև պոլիակեպտիդային շղթաների շերտերի առաջացումը: Երրորդային և չորրորդային կառուցվածքները (**նկ. 55**) իրենցից ներկայացնում են համապատասխանաբար մեկ պոլիակեպտիդային շղթայի և մի քանի շղթաների յուրահատուկ տարրածական դիրքորոշում (դարսվածք, թելիկմերի փուլնշ). դա սպիտակուցի տարածական կառուցվածքն է կամ **կոնֆորմացիան** է: Այդ կառուցվածքները պայմանավորված են ամինաթթուների ռադիկալների միջև տարբեր տեսակի թույլ, օրինակ՝ հիդրոֆոր կամ էլեկտրաստատիկ փոխազդեցություններով: Սակայն ամինաթթուների ռադիկալներում ծծմբի ատոմների միջև առաջացող ավելի ուժեղ կովալենտ -S-S- կապերը ևս մասնակցում են սպիտակուցների կոնֆորմացիայի կազմավորմանը:

Սպիտակուցի մեկ մոլեկուլում մի քանի պոլիակեպտիդային շղթաների միջև փոխազդեցությունը բերում է բավականին կայուն կառույցի առաջացման:



Նկ. 55. Պոլիակեպտիդային շղթայի տարածական կառուցվածքները:

ԳԼՈՒԽ 3. ԿԵՆԴՐԱՆԻ ՆՅՈՒԹԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՎԱԶՄԱԿՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ


Այդ շղթաների փոխազդեցությունը նաև շատ յուրահատուկ է:

Սպիտակուցների չորրորդային կառուցվածքում կարող են հայտնաբերվել ոչ սպիտակուցային բնույթի տարրեր բաղադրիչներ:

Սպիտակուցների կառուցվածքի և հատկությունների մասին վերջին տարիների տեղեկատվությունն էապես հարստացել է դրանց բյուրեղների ստացման և ուսումնասիրման միջոցով:

Սպիտակուցների հատկությունները: Սպիտակուցների հատկությունները չափազանց բազմազան են: Դրանց մի մասին բնորոշ է ջրում լուծելիությունը. կան նաև ջրում վատ լուծվող, կամ ընդանրապես չլուծվող սպիտակուցներ: Շատ սպիտակուցներ կրում են լիցքեր, որոնք կարևոր են դրանց ակտիվության համար:

Որոշ սպիտակուցներ օժտված են քիմիական ակտիվությամբ և մասնակցում են տարրեր տեսակի քիմիական փոխարկումներին: Այդպիսի ակտիվություն սպիտակուցները դրսնորում են երրորդային և չորրորդային կառուցվածքներում: Այդ, ինչպես նաև երկրորդային, կառուցվածքների խախտումը կոչվում է **բնափոխում (դենատուրացիա)** (**նկ. 56**):



Նկ. 56. Սպիտակուցի բնափոխումը:

Բազմաթիվ սպիտակուցների բնափոխումը դարձելի է և սպիտակուցներն ունակ են վերականգնելու իրենց բնորոշ կոնֆորմացիան և ակտիվությունն, այսինքն ընդունակ են ռենատուրացիայի:

Դարցեր կրկնության համար.




1. Ինչո՞վ են առանձնահատուկ բջջի օրգանական նյութերից շատերն, ի՞նչ են կենսաբանական պոլիմերները: Բերե՞ք օրինակներ:
2. Ի՞նչ կառուցվածք ունեն ամինաթթուները:
3. Կառուցվածքային ի՞նչ մակարդակներ ունեն սպիտակուցները:
4. Ինչի՞ հաշվին է կազմավորվում սպիտակուցների տարածական դիրքը:
5. Սպիտակուցների ի՞նչ հատկություններ գիտեք:
6. Ի՞նչ նշանակություն ունի սպիտակուցների բնափոխման դարձելի լինելը:

9. ՍՊԻՏԱԿՈՒՑՆԵՐԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Միաբջիջ և բազմաբջիջ օրգանիզմներում սպիտակուցները կատարում են բազմազան և կարևոր ֆունկցիաներ: Դրանցից են՝ **կառուցողական, կատալիզային, շարժողական, փոխադրական, պաշտպանական, ազդանշանային, էներգիական և կարգավորիչ** ֆունկցիաները:

Բջջի նյութափոխանակության մեջ բացարիկ է սպիտակուցների կատալիզային ֆունկցիան, որն իրականացվում է **ֆերմենտների** միջոցով: Ֆերմենտները, լինելով կենսաբանական կատալիզատորներ, բազմակի, նույնիսկ հազարավոր կամ միլիլիոնավոր և ավելի անգամ արագացնում են քիմիական նյութերի փոխակերպումները քջում: Նրանք չեն ծախսվում քիմիական ռեակցիայի ընթացքում: Ֆերմենտների մասնակցությամբ շատ փոխակերպումներ հնարավոր են դառնում որոշակի, այդ բվում՝ նաև ոչ բարձր ջերմաստիճաններում, ինչպես նաև բնականոն մթնոլորտային ծննդան պայմաններում:

Ֆերմենտներից առաջինը հայտնաբերվել է Զ. Սամների կողմից դեռևս 20-րդ դարասկզբում: Դա **ուրեազն** էր, որն արագացնում է միզանյութի ճեղքումը (**նկ. 57**): Այսօր հայտնի են բազմաթիվ՝ մի քանի հազար ֆերմենտներ: Կան ֆերմենտներ, որոնք տարբեր լրացուցիչ քիմիական խնբեր ունեցող կամ առանձին փոքր մոլեկուլներ, օրինակ՝ վիտամիններ, պարունակող բարդ սպիտակուցներ են:



Նկ. 57. Ուրեազն ֆերմենտը և միզանյութի ճեղքումը:

Ֆերմենտների մի մասն ապահովում է քջում նյութերի փոխակերպման մեկ կամ մի քանի տեսակի ռեակցիաներ: Ըստ այդմ, տարբերում են ֆերմենտների մի քանի խմբեր: Ֆերմենտների անվանումները հիմնականում որոշվում են այն ելանյութերով, որոնց քիմիական փոխակերպումները որանք իրականացնում են, ինչպես նաև համապատասխան փոխակերպման բնույթով: Ֆերմենտների քանակով քիչները տարբեր են: Մարդու և որոշ կենդանիների շարողի բջիջներում կան մոտ 10 հազար տարբեր ֆերմենտներ, որոնց միջոցով իրականանում են բազմաթիվ քիմիական ռեակցիաներ:


Բջջում ֆերմենտները որոշակիորեն տեղաբաշխված են: Նրանց մեջ նաև կապված է բջջային թաղանքների հետ կամ գտնվում է թաղանքների կողմից կազմավորված տարբեր օրգանիզմներում: Այդ պատճառով ֆերմենտների մասնակցությամբ նյութերի փոխանակության տարբեր ուղիներն ունեն որոշակի ինքնուրույնություն:

Ֆերմենտների ներգործությունն իրականանում է յուրահատուկ ելանյութի կամ ելանյութերի հետ նրա փոխազդեցության և կապման միջոցով՝ ֆերմենտի որոշակի հատվածում՝ **ակտիվ կենտրոնում** (նկ. 58), որից հետո այդ նյութը ենթարկվում է փոխակերպման: Կան ֆերմենտներ, որոնք փոխազդում են նաև վերջնանյութի կամ վերջնանյութերի հետ. դրա հաշվին շատ ռեակցիաներ դարձելի են: Իրեն յուրահատուկ նյութի հետ ֆերմենտի փոխազդեցությունը հնարավոր է այդ նյութի կառուցվածքին համապատասխանող նրա ակտիվ կենտրոնի որոշակի կառուցվածքի դեպքում:

Ֆերմենտների գործունեությունը կարգավորվում է ներբջջային և շրջակա միջավայրի շատ գործոններով, ինչը կենսագործության հուսալիության դրսևորում է: Այդ գործոններից են միջավայրի ռեակցիան, ջերմաստիճանը, փոխակերպվող նյութերի կոնցենտրացիաները, տարբեր հատկություններ ունեցող այլ նյութերի առկայությունը և այլն: Առանձնահատուկ ազդեցություն ունեն տարբեր բնույթի արգելակիչները և խթանիչները: Ծանր մետաղների իոնները կարող են արգելակել, իսկ պղնձի, ցինկի, երկարի, մանգանի, կալցիումի իոնները, հակառակը, խթանել որոշ ֆերմենտների ակտիվությունը:


Շարժողական մի շարք սպիտակուցներ ապահովում են բջիջների և օրգանիզմների շարժումները: Դրանցից են **ակտինը** և **միոզինը** մկաններում, որոնք կազմավորում են մկանաթելիկներ և միմյանց հետ փոխազդելով, մեկը մյուսի նկատմամբ սահելով, ապահովում են մկանների կծկումը (նկ. 59): **Դիմեիծ կամ ֆլագելին** սպիտակուցներն իրականացնում են թարթիչների և մտրակների շարժումները: Այդպիսի սպիտակուցների ֆունկցիան էներգիայի մեջ ծախս է պահանջում:

Սպիտակուցների **փոխադրական** ֆունկցիան արտահայտվում է տարբեր քիմիական տարրերի (օրինակ՝ թթվածնի) կամ այլ նյութերի մի տեղից մյուսը տեղափոխման ձևով: Սպիտակուցային բնույթի շատ փոխադրիչներ քաջ հայտնի են. դրանցից է, օրինակ, հեմոգլոբինը, որը տեղափոխում է թթվածնը և ածխաթթու գազը: Փոխադրող սպիտակուցներից են **պերմեազները**, որոնք բջջադրանքներում կապում և տեղափոխում են անօրգանական և




Նկ. 58. Ելանյութի կապումը ֆերմենտի ակտիվ կենտրոնում:

օրգանական տարբեր նյութեր: Այդ սպիտակուցները հայտնաբերվել են վաղուց, և դրանցից շատերը լավ ուսումնասիրված են. բակտերիաներից աղիքային ցուպիկում, օրինակ, կան նի քանի տասնյակ պերմեազներ: Այդպիսի փոխադրիչները տարբերակում են քջի համար պիտանի և ոչ պիտանի նյութերը: Սակայն, եթե դա արդյունավետ չի կատարվում, գործի է դրվում փոխադրիչների մեկ այլ խումբ, որը լրացնում է այդ տեղափոխումը կամ նյութը տեղափոխում հակառակ ուղղությամբ: Նշենք, որ պերմեազները ֆերմենտներ չեն, փոխադրող սպիտակուցների այդ անվանումը հնուց է գալիս:



Նկ. 59. Ակտինը և միոզինը մկաններում:


Սպիտակուցները կատարում են նաև շատ կարևոր պաշտպանական ֆունկցիա: Դրա դրսևորումներից է կոլագեն սպիտակուցի հիմնական ֆունկցիան, որը յուրատեսակ կառուցվածքային արգելք է հանդիսանում ուսկրերում, կոճիկներում, ջլերում, մաշկի տարբեր շերտերում: Պաշտպանական ֆունկցիան դրսևորվում է նաև սպիտակուցների հետ որոշ բունավոր նյութերի կապման և դրանց չեզոքացնան մեջ, վնասվածքների դեպքում կամ ախտածին գործոնների նկատմամբ օրգանիզմի պաշտպանական գործընթացներում: Քաջ հայտնի է մարդու և կենդանիների իմունային համակարգի կազմում սպիտակուցային բնույթի **հակամարմինների** դերը (Ակ. 60): Վերջիններս հաջողությամբ պաշտպանում են օրգանիզմը վիրուսներից, բակտերիաներից և տարբեր օտարածին մասնիկներից՝ հակածիններից: Հակամարմինները սովորաբար նի քանի պոլիպեպտիդային շղթաներից կազմված սպիտակուցներ են: Դրանք արտադրվում են լիմֆոցիտների կողմից՝ միլիոնավոր տեսակներով, որոնցից յուրաքանչյուրն ունի հակածինի կապման իր հատվածը: Պաշտպանական սպիտակուցներից են **իմունագլոբուլիններն, ինսերֆերոնը**: Սպիտակուցների մի մասը կարող են ազդա-



Նկ. 60. Հակամարմինները և հակածինների հետ նրանց կապումը:

Աշան հաղորդող մասնիկներ լինել: Այդպիսի սպիտակուցներից են ինսուլինը և որոշ այլ հորմոններ, որոնք, փոխազդելով և կապվելով համապատասխան ընկալիչի հետ, որպես ազդանշան սկընավորում են պատասխան ռեակցիա (**նկ. 61**): Հետաքրքիր է այն, որ հորմոնը կարող է ներգործել նաև մեկ այլ հորմոնի ընկալման վրա. սա ևս հաստատում է հորմոնի ազդանշանային դերը: Բջիջների միջև փոխազդեցություններն ապահովում են վիտամինները՝ հանդիսանալով նաև օրգանիզմներում ախտաբանական գործընթացների ազդանշաններ:

Մարդու ստանում է սպիտակուցների մեծ քանակ տարբեր նպատակներով օգտագործելով հանար: Շատ ֆերմենտներ կիրառվում են հացարխնան, գարեջրագործության, գինեգործության, կաշվի մշակման, դեղամիջոցների և քիմիական տարբեր նյութերի ստացման և արդյունաբերության այլ ճյուղերում: Ֆերմենտների միջոցով կերեղի մշակումը լայնորեն օգտագործվում է գյուղատնտեսության մեջ: Շատ են բժշկության մեջ կիրառվող ֆերմենտային դեղամիջոցները, որոնք փոխարինում են տարբեր հիվանդությունների դեպքում խախտված, քայրայված կամ անհետացած ֆերմենտներին: Կան ֆերմենտային դեղամիջոցներ, որոնք օգտագործվում են վարակիչ հիդանդությունների դեմ պայքարում:



Նկ. 61. Ինսուլինի փոխազդեցությունը ընկալիչի հետ և պատասխան ռեակցիան:

Դարցեր կրկնության համար.



1. Թվարկեք սպիտակուցների ֆունկցիաները բջջում:
2. Ի՞նչ են ֆերմենտներն, ի՞նչ դեր են կատարում դրամբ բջջում:
3. Ինչպես է իրականանում ֆերմենտների ներգործությունը նյութերի փոխակերպման մեջ: Ո՞րն է ֆերմենտի ակտիվ կենտրոնն: Ի՞նչ գործոններով է կարգավորվում ֆերմենտների ակտիվությունը:
4. Ի՞նչ պաշտպանական սպիտակուցներ գիտեք:
5. Ինչպես է դրսնորվում սպիտակուցների ազդանշանային ֆունկցիան:
6. Ո՞րն է սպիտակուցների կիրառական նշանակությունը:
7. **Ի՞նչ են պերմեազները:**

Առաջադրանք.

Դիշելով դպրոցում կենսաբանությունից ստացած գիտելիքները, պատմեք ինսուլինի և նրա դերի մասին:


10. ՆՈՒԿԼԵԻՆԱԹԹՈՒՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Նուկլեինաթթուներ: Նուկլեինաթթուները հազարավոր և միլիոնավոր նուկլեոտիդներից կառուցված պոլիմերներ են:

Բջջում նուկլեինաթթուները երկու տեսակի են՝ **դեզօքսիռիբոնուկլեինաթթու՝ ԴՆԹ և ռիբոնուկլեինաթթու՝ ՌՆԹ:** Այդ երկու տեսակի նուկլեինաթթուները միմյանցից տարբերվում են իրենց կազմով, կառուցվածքով և ֆունկցիաներով:

ԴՆԹ-ի և ՌՆԹ-ի քանակները միևնույնը չեն տարբեր տեսակների պատկանող կենդանի օրգանիզմների բջջներում:

ԴՆԹ-ի կառուցվածքը և ֆունկցիան: ԴՆԹ-ներում տարբերում են 4 տեսակի նուկլեոտիդներ, որոնց **դեզօքսիռիբոզ** ածխաջուրը և ֆոսֆորաթթուն միանման են և դրանք իրարից տարբերվում են ազոտական հիմքերով: ԴՆԹ-ների կազմում հանդիպող ազոտական հիմքերն են՝ **պուրինային (ադենինային և գուանինային) և պիրիմիդինային (ցիտոզինային և թիմինային)** հիմքերը (**Ակ. 62**): Այդ հիմքերը հայտնաբերվել են Է.Ա.Կոսելի և է. Ֆիշերի կողմից: Պուրինային հիմքերն ունեն միզաթթվի նման կառուցվածք:



Ակ. 62. Նուկլեինաթթուների ազոտական հիմքերի կառուցվածքները:


Ազոտական հիմքերը նշանակվում են իրենց անվանումների մեջատառերով՝ **Ա, Գ, Ց և Թ**: Դրանցից ադենինային հիմքերի քանակը միշտ հավասար է թիմինայիններին: Այս օրինաչափությունը հայտնաբերել է ամերիկացի կենսաբիոլոգ Է.Չարգաֆը: Նույն ձևով գուանինային հիմքերի քանակը միշտ հավասար է ցիտոզինայիններին:

ԴՆԹ-ի մեկ շղթայում նուկլեոտիդները միմյանց միանում են մեկ նուկլեոտիդի ֆոսֆորական թթվի և մյուսի ածխաջրային մնացորդի միջև առաջացող կովալենտ կապով: Սակայն ԴՆԹ-ի մոլեկուլի համար հայտնի է կրկնակի պարույրի տեսքը, որը ռենտգենան ճառագայթների միջոցով ստաց-

ԳԼՈՒԽ 3. ԿԵՆԱՎԱՆԻ ՆՅՈՒԹԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԱԿՐՈՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ված պատկերների օգնությամբ բացահայտել է անգիտացի ֆիզիկոս Մ. Ուիլկինսը: Այդպիսի պարույրում մեկ շղթայի հարևան նուկլեոտիդների միջև հեռավորությունը կազմում է 0,34 նմ, իսկ շղթայի մեկ պտույտում նուկլեոտիդների թիվը կազմում է 10-ը: Երկու շղթաները մեկը մյուսի հետ պարուրվում են ընդհանուր առանցքի շուրջ: ԴՆԹ-ի կառուցվածքը 1953 թ.-ին առաջարկել են ամերիկացի կենսաբան Ջ. Ուոթսոնը և անգլիացի ֆիզիկոս Ֆ. Կրիկը:

Ըստ նրանց կողմից առաջարկված մոդելի, ԴՆԹ-ի մոլեկուլում նուկլեոտիդներից կազմված երկու շղթաներն իրար հետ միանում են արդեն ազդական հիմքերի միջև առաջացող ջրածնային կապերի միջոցով (նկ. 63): Այդ կապերն ապահովում են ԴՆԹ-ի մոլեկուլի կայունությունն: Ընդ որում Ա և Թ հիմքերով նուկլեոտիդների միջև առաջանում են 2, իսկ Գ և Ց նուկլեոտիդների միջև՝ 3 ջրածնային կապեր:



Նկ. 63. ԴՆԹ-ի մոլեկուլի կառուցվածքը:

ԴՆԹ-ի երկու շղթաների միացման մեջ կարևոր օրինաչափություն կա. մի շղթայի Ա կամ Գ ազոտային հիմքով նուկլեոտիդի դիմաց մյուս շղթայում հայտնվում է Թ կամ Ց հիմքով համապատասխան նուկլեոտիդը (տե՛ս նկ. 62), յուրաքանչյուրում գույզ նուկլեոտիդները կարծես իրար լրացնում են: Մեկ շղթայում նուկլեոտիդների հաջորդականությունը կարելի է որոշել մյուսի նուկլեոտիդների հաջորդականության միջոցով: Օրինակ՝ մեկ շղթայի մի հատվածում Ա-Ա-Գ-Ց-Թ հաջորդականության դեպքում մյուսում նուկլեոտիդների հաջորդականությունը կլինի Թ-Թ-Ց-Գ-Ա:

ԴՆԹ-ի կառուցվածքը և հատկությունները որոշվում են նրա մոլեկուլում գ-8 զույգերի պարունակությամբ: ԴՆԹ-ն ունի բարձր խտություն, կարող է բնափոխվել:

ԴՆԹ-ի շղթայում նուկլեոտիդների հաջորդականությունը գաղտնագրում է ժառանգական տեղեկատվությունն, իսկ նրա երկշղթա կառուցվածքն ապահովում է այդ տեղեկատվության կայունությունը և դրա ճշգրիտ փոխանցման հուսալիությունը:

ՈՆԹ-ի կառուցվածքը և ֆունկցիաները: ՈՆԹ-ի մոլեկուլի կառուցվածքը տարբերվում է ԴՆԹ-ից: Բացի նրանից, որ ՈՆԹ-ն միաշղթա է և ՈՆԹ-ի նուկլեոտիդներում ածխաջուրը ռիբոզն է, այդ նուկլեինաթթվի նուկլեոտիդներում թագուական հիմքը փոխարինված է ռիբոզիլով (ՈՒ):

Բջջում ՈՆԹ-ների տեսակները տարբերվում են իրենց շղթայի երկարությամբ և չափսերով, բայց բոլորն եւ մասնակցում են սպիտակուցի սինթեզին՝ կատարելով տարբեր ֆունկցիաներ: **Փոխադրող** ՈՆԹ-ները (փ-ՈՆԹ) կարծ են և ՈՆԹ-ներից ամենափոքրը (**նկ. 64**), նրանք սպիտակուցների սինթեզի ընթացքում ամինաթթուները փոխադրում են դեպի ռիբոսումներ: **Տեղեկատվական (հնֆորմացիոն)** ՈՆԹ-ները (ի-ՈՆԹ) փ-ՈՆԹ-ներից շատ մեծ են և ավելի բազմապիսի: Դրանց ֆունկցիան ԴՆԹ-ից սպիտակուցի կառուցվածքի մասին տեղեկատվության փոխադրումն է դեպի ռիբոսումները: Երրորդ տեսակը **ռիբոսոմային** ՈՆԹ-ն է (ռ-ՈՆԹ), որի մոլեկուլներն ամենամեծն են և կազմում են ռիբոսումների էական մասը:

Բջջները իրարից տարբերվում են ՈՆԹ-ների պարունակությամբ և տեսակներով:



Նկ. 64. Փոխադրող ՈՆԹ-ի կառուցվածքը:

Դարցեր կրկնության համար.

- Ի՞նչ նուկլեինաթթուներ կան բջջում, ինչո՞վ են դրանք տարբերվում իրարից:
- Բնութագրեք ԴՆԹ-ի կառուցվածքն, ինչ նուկլեոտիդներ գիտեք:
- Նկարագրեք ԴՆԹ-ի կրկնակի պարույրը, նրա կառուցվածքի Ուորսոնի և Կրիկի մոդելը:
- Ինչո՞ւմ է ԴՆԹ-ի շղթայում նուկլեոտիդների հաջորդականության նշանակությունը:
- Կարելի է արդյո՞ք ԴՆԹ-ի մի շղթայում նուկլեոտիդների հաջորդականությամբ գտնել նրա մոլեկուլի մյուս շղթայի համապատասխան հատվածում նուկլեոտիդների հաջորդականությունը:
- Ինչո՞ւմ է ՈՆԹ-ի կառուցվածքի տարբերությունը ԴՆԹ-ի կառուցվածքից:
- ՈՆԹ-ի ի՞նչ տեսակներ գիտեք: Ո՞րն է դրանց դերը բջջում:

11. ԱՌԵՆՈԶԻՆԵՌՈՖՈՐԱԿԱՆ ԹԹՎԻ (ԱԵՖ) ԿԱՐՈՒցՎԱՃՐԸ և ԿԵՆՍԱԲՐԱՄԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Արենոզինեռֆուֆորական թթվի (ԱԵՖ) կառուցվաճրը և կենսաբրամական շրջանակությունը: ԱԵՖ-ը բջջում հանդիսանում է էներգիայի հիմնական աղբյուրներից մեկը: Այն հայտնաբերվել է բոլոր կենդանի բջջներում:

Կառուցվաճրով ԱԵՖ-ը նման է նուկլեոտիդի: Ինչպես յուրաքանչյուր նուկլեոտիդում, նրանում ևս առկա են ազոտային հիմքի մնացորդ աղենինն, ածխաջուր ռիբոզը և ֆուֆորական թթուն (**նկ. 65**): Դրա հետ մեկտեղ ԱԵՖ-ն էական տարրերվում է սովորական նուկլեոտիդներից՝ մեկ ֆուֆորական թթվի մնացորդի փոխարեն ունի երեքը:


Ֆուֆորական թթվի այդ երկու լրացուցիչ մնացորդների միջև կապերում պահեստավորված է մեծ քանակի էներգիա (Q): Դրա պատճառով այդ կապերը կոչվում են **մակրոլոգիկ**:

ԱԵՖ-ի մոլեկուլի կառուցվաճրը կայուն չէ: Զրի հետ փոխազդեցության արդյունքում ֆերմենտի միջոցով այդ կապերից մեկը ճեղքվում է: ԱԵՖ-ը ձևափոխվում է աղենոզինկրկնաֆուֆորական թթվի՝ ԱԿՖ-ի:



Դրա արդյունքում անջատվում է էներգիա (մոտ 30 կՋ/մոլ), որն ապահովում է տարրեր գործընթացների իրականացումը: Բջջում անջատված էներգիայի քանակն ավելի մեծ է: Բջջի և դրա օրգանոիդների շարժումը, որոշ նյութերի փոխադրումը, տարրեր միացությունների կենսասինթեզը, էլեկտրականության ու լուսի առաջացումը և բջջային ակտիվության այլ գործընթացներն իրականանում են ԱԵՖ-ի ճեղքումից անջատված էներգիայի հաշվին:

Սակայն բջջում ԱԵՖ-ը երբեք չի պահեստավորվում: Ահա թե ինչու, ԱԵՖ-ի քայլաման հետ մեկտեղ, անհրաժեշտ է նաև նրա անընդհատ սինթեզը ֆերմենտի ազդեցությամբ ԱԿՖ-ին ֆուֆորական թթվի մնացորդի միացման ձևով, որը սովորաբար կատարվում է միտոքոնդրիումներում և պլաստիդներում: Ծախսված ԱԵՖ-ը լրացնելու համար օգտագործվում է ածխածրերի, ճարպերի և այլ նյութերի օքսիդացման արդյունքում ճեղքումից առաջացած էներգիան: Միտոքոնդրիումներում այդ գործընթացը կոչվում է **օքսիդային ֆուֆորիլացում**: Այն բացահայտել է ռուս



Նկ. 65. ԱԵՖ-ի կառուցվաճրը:

կենսաքիմիկոս Վ.Ա. Ենգելհարդտը: ԱԵՖ-ի սինթեզն իրականանում է նաև ֆուտոսինթեզի ընթացքում: Լարված, սակայն կարճատև ֆիզիկական աշխատանքի ընթացքում մկաններն աշխատում են բացառապես իրենց մեջ մտնող ԱԵՖ-ի ճեղքման հաշվին: Մկաններում ԱԵՖ-ի ճեղքման ակտիվությամբ է օժտված կծկվող սպիտակուցներից միոցինը: Այդպիսի աշխատանքն ավարտելուց հետո մարդը շատ արագ է շնչում, այդ ժամանակ տեղի է ունենում ածխաջրերի և այլ նյութերի ուժգին օքսիդացում ու քայլայում, և մկաններում ԱԵՖ-ի քանակը վերականգնվում է:

Նշենք, որ բացի ԱԵՖ-ից, բջջում որպես էներգիայի անմիջական աղբյուր կարող են ծառայել ֆուֆորական թթվի այլ ածանցյալներ: Կարող է նաև օգտագործվել լուսային կամ այլ տեսակի էներգիան:

ԱԵՖ-ը կարող է ծառայել նաև որպես ՈՆԹ-ի սինթեզի աղբյուր:

Վիտամիններ, օրգանիզմում դրանց կատարած ֆունկցիաները: Վիտամինները տարբեր կառուցվածք ունեցող օրգանական միացություններ են (**նկ. 66**): Դրանք հայտնաբերվել են 19-րդ դարում ռուս բժիշկ Ն.Ի.Լուժինի կողմից: Վիտամիններ անվանումն առաջարկել է լեհ գիտնական Կ.Ֆունկը:

Դայտնի են շատ վիտամիններ, դրանք նշանակվում են լատինական այբուբենի մեծատառուպ՝ A₁, A₂, B₁, B₂, B₆, B₁₂, C, D, E, H և այլն: Դրանց մի մասը, օրինակ՝ B խմբի և C վիտամինները լուծվում են ջրում: Կան նաև ճարպերում լուծվողներ (A, D և այլն): Վիտամինները փոքր մոլեկուլներ են: Վիտամիններից շատերն անկայուն միացություններ են:

Վիտամինները շատ փոքր քանակներով մասնակցում են սպիտակուցների, ածխաջրերի, լիափինների և այլ նյութերի փոխանակությանը, տարբեր նյութերի փոխադրմանը, մտնում որոշ սպիտակուցների, այդ թվում ֆերմենտների, կամ հորմոնների կազմության մեջ: Նրանք ապահովում են մարդու աճը, խթանում էրիթրոցիտների առաջացումը, մասնակցում արյան մակարդմանն, անհրաժեշտ են նաև որոշ այլ ֆունկցիաների համար: Վիտամինները նպաստում են, օրինակ, վերքերի ապաքինմանը: Սակայն վիտամինները չեն հանդիսանում նյութերի սինթեզման կամ էներգիայի աղբյուր: Շատ վիտամիններ մարդն ստանում է սննդի միջոցով: Բոլոր վիտամինների նկատմամբ օրգանիզմի պահանջը նույնը չէ. այն տարբեր է նաև երեխաների և հասուն մարդու համար: Վիտամիններով հարուստ են խմորասնկերը, ձավարեղենը, տարբեր պտուղներ, կաղամբը, կարտոֆիլը, ձկան յուղը և խավիարը, թռչունների



Նկ. 66. Որոշ վիտամինների կառուցվածքը և նրանցով հարուստ սննդամբերներ:



Նկ. 67. Ա վիտամինի պակասի դեպքում դիտվում են տեսողության տարբեր խանգարումներ, Ծ վիտամինի պակասի դեպքում ռարջանում է ռախիտ հիվանդությունը:

ձվի դեղնուցը, կենդանիների լյարդը, կաթնամթերքները և այլն: Կան նաև վիտամինային պատրաստուկներ: Աղիներում վիտամինների կրանումը կատարվում է սպիտակուցների և տարբեր այլ գործոնների օգնությամբ: Արդեն հայտնի են հատուկ փոխադրիչներ, որոնք վիտամինները հասցնում են հյուսվածքներ: Սակայն որոշ վիտամիններ սինթեզվում են մարդու օրգանիզմում:

Վիտամինների պակասի դեպքում զարգանում են տարբեր հիվանդություններ, որոնցից լավ ծանոթ են **լճախստք, հավկուրությունը, բերի-բերին, չարորակ սակավարյունությունը, ռախիտը, մաշկային հիվանդությունները, մազաքափությունը** և այլն (**նկ. 67**): Դրանք նյութափոխանակության խանգարումներ են:

Դարցեր կրկնության համար.



1. Ի՞նչ կառուցվածք ունի ԱԵՖ-ը: Ո՞ր կապն է կոչվում մակրոէրգիկ, քանի՞ այդպիսի կապ կա ԱԵՖ-ի մոլեկուլում:
2. Ինչպիսի՞ն է ԱԵՖ-ի նշանակությունը բջջում: Ի՞նչ գործընթացներ են իրականանում ԱԵՖ-ի էներգիայի հաշվին:
3. Բջջում արդյո՞ք ԱԵՖ-ը պահեստավորվում է, ինչպե՞ս է լրացվում նրա ժախսը:
4. Բջջում էներգիայի ի՞նչ այլ աղբյուրներ գիտեք:
5. Ի՞նչ են իրենցից ներկայացնում վիտամինները: Ո՞վ է հայտնաբերել դրանք:
6. Ի՞նչ վիտամիններ գիտեք: Ո՞րն է դրանց նշանակությունը մարդու օրգանիզմում: Թվարկեք վիտամինների պակասով պայմանավորված հիվանդություններ:

ԳԼՈՒԽ 4. ԲԶՁԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ


12. ՆԱԽԱԿՈՐԻՉԱՎՈՐ ԵՎ ԿՈՐԻՉԱՎՈՐ ԲՁԻՉՆԵՐ: ԲՁՁԻ ՀԻՄԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՍԱՍԵՐԸ

Բժիջը որպես կենդանի նյութի կառուցվածքային և գործառական միավոր: Բժիջը ցանկացած կենդանի օրգանիզմի՝ բակտերիայի, սմկի, բույսի, կենդանու, ինչպես նաև մարդու տարրական կառուցվածքային միավորն է: Յիշեցնենք, որ բժիջն ունի որոշակի կառուցվածք, որը ներառում է հիմնական բաղադրամասեր և տարրեր կառույցներ: Բժջի բաղադրամասերը շատ չեն. դրանք են շրջակա միջավայրից այն մեկուսացնող բջջաբաղանքը, ներփին պարունակությունը կազմող ցիտոպլազման «ժառանգականության նյութը» (նկ. 68): Վերջինս կարող է գտնվել անմիջապես ցիտոպլազմայում կամ մեկուսացվել բջջակորիզում: Բժջում այս կամ այն ֆունկցիան կատարող տարրեր կառույցները կոչվում են օրգանոիդներ կամ օրգանելեր: Այդպիսիք բժջում համեմատաբար շատ են, և բժիջներն իրարից կարող են տարրերակվել օրգանոիդներով: Դրանցից են ռիբոսոմները, միտոքոնդրիումները, էնդոպլազմային ցանցը, Գոլջիի ապարատը, քլորոպլաստները, լիզոսոմները և այլն:

Կենդանի օրգանիզմները տարբերվում են իրարից բժջի կառուցվածքով: Այդ տարբերությունը հիմնականում վերաբերում է ձևավորված բջջակորիզի (հունարեն «կարիո» կորիզ, այստեղից է անվանումը) առկայությանը: Բոլոր կենդանի օրգանիզմները բաժանվում են երկու խոշոր խմբերի՝ նախակորիզավորների (պրոկարիոտների) և կորիզավորների (եռկարիոտների):

Նախակորիզավոր օրգանիզմների բժիջն ունի համեմատաբար պարզ կառուցվածք, դրանում բացակայում է ձևավորված բջջակորիզն, այն ունի ռիբոսոմներ և փոքր քանակի այլ օրգանոիդներ: Այս խումբն ընդգրկում է բակտերիաները և կապտականաչ ջրիմուները: Ենթադրվում է, որ նախակորիզավոր բժիջներից են առաջացել կորիզավոր բժիջների միտոքոնդրիումները և քլորոպլաստները:

Կորիզավոր բժիջն ունի բարդ կառուցվածք, տարբերակվում են բջջաբաղանքը, ցիտոպլազման և ցիտոպլազմայում գտնվող արդեն իսկ ձևավորված կորիզը (նկ. 68): Կամ նաև բազմաթիվ օրգանոիդներ՝ միտոքոնդ-



Նկ. 68. Կենդանի բժջի բաղադրամասերը՝ բջջաբաղանք, ցիտոպլազմա և «ժառանգականության նյութ»:

ԳԼՈՒԽ 4. ԲՁՁԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՖՈԽՆԿՑԻԱՆԵՐԸ

դիումներ (բացի ամեռաների որոշ տեսակներից), էնդոպլազմային ցանց, Գոլջիի ապարատ և այլն: Այս երկրորդ խումբը կազմում են նյուս բոլոր կենդանի օրգանզմները:


Նախակորհզավոր և կորհզավոր բջիջները միմյանցից տարբերվում են չափսերով և **բջջակմախքի** զարգացմամբ: Բջջակմախքի առկայությունը և առավել զարգացումը պայմանավորում են նախակորհզավորների կայուն և պարզ ձևը և կորհզավորների ձևերի մեջ բազմազանությունը և դրա փոփոխականության ունակությունը: Բջջակմախքի զարգացումը բերում է բջիջների խոշորացմանը. նախակորհզավոր բջիջները մի քանի անգամ ավելի փոքր են կորհզավորներից: Կորհզավորների մեջ կան հսկա բջիջներ. մեծ չափսերով հայտնի են, օրինակ, շնաձկան և ջայլամի ձվաբջիջները (**նկ. 69**), կաթնասունների հսկա նյարդաբջիջները և այլն:

Կորհզավոր բջիջների առանձնահատկությունները: Կորհզավոր օրգանզմների բջիջներն իրարից տարբերվում են իրենց ձևով, ծավալով, կառուցվածքով և բաղրությամբ: Դա հստակ երևում է սնկային, բուսական և կենդանական բջիջներում:


Բջիջների ձևի տարբերությունները վերաբերում են արտաքին տեսքին (նկ. 70**):** Հայտնի են գնդաձև, կլորավուն, տափակ, երկարավուն, ալիքաձև, սկավառակաձև և այլ ձևի բջիջներ: Տարբեր բջիջների ձևը կապված է դրանց կողմից կատարվող ֆունկցիաների և օրգանիզմում տեղաբաշխման հետ: Զնով տարբերվում են նաև տարբեր օրգանիզմներում նույն ֆունկցիան կատարող բջիջները, օրինակ, ձվաբջիջները և սպերմատոզոդները, արյան ձևավոր տարբերը:

Բջիջները միմյանցից տարբերվում են չափսերով. կան մեծ և փոքր բջիջներ: Օրինակ, մարդու ձվաբջիջը ծավալով մեկ մլն անգամ մեծ է սպերմատոզոդից:

Սնկային բջջում բջջապատը կազմված է պոլիսախարիդներ խիստինից և մածանից, այդ բջջում չկան



Նկ. 69. Շնաձկան և ջայլամի ձվաբջիջները. Յամեմատեք դրանց չափսերը մյուս կենդանիների ձվաբջիջների չափսերի հետ:



Նկ. 70. Տարբեր ձևի կորհզավոր բջիջներ:

պլաստիդներ: Բուսական բջիջներին բնորոշ է հիմնականում թաղանթանյուրից (ցելյուլոզից), ինչպես նաև այլ ածխացրերից, առանձին սպիտակուցներից և այլ օրգանական միացություններից կազմված ամուր բջջապատը և խոշոր վակուուլների առկայությունը, կան նաև պլաստիդներ (**նկ. 97, 98**): Բջջապատն ունի տարբեր հաստություն, շերտավորվածություն և կարծրություն: Բարձրակարգ բույսերի բջիջներում բացակայում է բջջային կենտրոնը: Կենդանական բջիջներում չկա բջջապատ կամ այն թույլ է արտահայտված, չկան պլաստիդներ և խոշոր վակուուլներ: Այդ բջիջների բջջաթղանքի արտաքին շերտը կազմված է ածխացրերից, սպիտակուցներից, ինչպես նաև լիպիդներից:

Կորիզավոր բջիջներն իրարից տարբերվում են նաև օրգանական նյութերի պարունակությամբ և կազմով, դրանց փոխակերպման առանձնահատկություններով:




Դարցեր կրկնության համար.

1. Ինչպե՞ս կարող եք բնորոշել կենդանի բջջի կառուցվածքը, նրա բաղադրամասերը և օրգանիդները:
2. Ո՞ր բջիջներն են կոչվում նախակորիզավոր, որոնք՝ կորիզավոր:
3. Ինչո՞վ են իրարից տարբերվում կորիզավոր բջիջները:
4. Դամեմատեք սմկային, բուսական և կենդանական բջիջների ձևը, կառուցվածքային առանձնահատկությունները, նշեք դրանց տարբերությունները:

13. ԲԶՁԻ ԹԱՂԱՆԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԹԱՂԱՆԹԱՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Բջջաթղանք: Բջջաթղանքը բոլոր կենդանի բջիջների պարտադիր բաղադրամասն է: Շրջակա միջավայրից ցանկացած կենդանի բջջի բաժանվում է բջջաթղանքով: Այն իրականացնում է բջջի անմիջական փոխազդեցությունն ինչպես շրջակա միջավայրի, այնպես էլ հարևան բջիջների հետ՝ բազմաթիվ օրգանիզմներում (**նկ. 71**): Այդպիսի փոխազդեցությունը նպաստում է հյուսվածքներում բջիջների միացմանը: Դա կատարվում է տարբեր եղանակներով: Բջջաթղանքը կազմված է արտաքին շերտից կամ բջջապատից և դրա տակ գտնվող պլազմային թաղանթից կամ պլազմալիմից: Տարբեր բջիջներում բջջապատն, ինչպես արդեն գիտեք, կազմված է տարբեր օրգանական միացություններից, ինչպես նաև անօրգանական աղերից, սակայն գրեթե բոլոր բջիջ-




Նկ. 71. Երկու հարևան բջիջների փոխազդեցությունը:
Պարզ երևում են բջջաթղանքները:

ԳԼՈՒԽ 4. ԲՁՁԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՖՈԽՆԿՑԻԱՆԵՐԸ

Աերում, որտեղ այն առկա է, բջջապատր կատարում է հիմնականում արտաքին կմախսի և պաշտպանական դեր:

Պլազմալեմի կառուցվածքը: Պլազմալեմը կազմված է հիմնականում լիպիդներից և սպիտակուցներից: Այս օրգանական նյութերը, փոխազդելով միմյանց հետ և որոշակիորեն դասավորվելով, առաջացնում են մի կառույց, որը որոշում է պլազմալեմի հատկությունները և ապահովում է դրա ֆունկցիաների իրագործումը: Թաղանթի կառույցի հենքը կազմում է լիպիդային երկշերտը, որում լիպիդների ճարպաթթվային «պոչիկներն» ուղղված են դեպի ներքին հատված, իսկ լիպիդների «գլխիկները»՝ դեպի արտաքին կողմերը (**Ըկ. 72)**: Սպիտակուցները գտնվում են կամ լիպիդային երկշերտում, անցնելով պլազմալեմի մի կողմից դեպի մյուսը, կամ պլազմալեմի այս կամ այն կողմից



Ըկ. 72. Պլազմալեմի կառուցվածքը:

հպվում են լիպիդների հետ: Փաստորեն թաղանթն իրենից ներկայացնում է վերմոլեկուլային կառույց: Պլազմալեմի լայնքով անցնող սպիտակուցները կարող են առաջացնել ծակոտիներ կամ անցքուղիներ, որոնք տարրերվում են իրենց չափսերով և կառուցվածքով: Թաղանթում լիպիդներին և սպիտակուցներին բնորոշ է շարժունակությունն ինչպես պտտողական՝ իրենց սեփական առանցքի շուրջ, այնպես էլ թաղանթում երկայնական և լայնական ուղղություններով: Պլազմալեմի կառուցվածքի այսպիսի պատկերացումը 20-րդ դ. 2-րդ կեսին առաջարկել են ամերիկացի գիտնականներ **Զ.Սինգերը** և **Գ.Սիկոլսոնը**՝ կոչելով այն թաղանթի կառուցվածքի **հեղուկ բյուրեղյա մոդել**: Մոդելն ընդհանրացնում է ոչ միայն պլազմալեմի, այլ նաև բջջի ներսում բոլոր թաղանթների կառուցվածքի մասին տեղեկատվությունը:

Բացի լիպիդներից և սպիտակուցներից, պլազմալեմում հանդիպում են քիչ քանակով տարրեր ածխաջրեր և ջուր: Ածխաջրերի հետ փոխազդող

տարբեր սպիտակուցներ և լիախիդներ հատկապես շատ են կենդանական բջիջների պլազմալեմում:

Պլազմալեմը շատ բարակ է. ունի մոտավորապես 10-12 նմ հաստություն: Այն լավ տեսանելի է էլեկտրոնային մանրադիտակի օգնությամբ: Բջիջների կտրվածքներում հստակ տարբերակվում են պլազմալեմը կազմող մուգ և թափանցելի շերտեր (նկ. 71):


Գտնվելով հեղուկաբյուրեղային վիճակում, այսինքն ունենալով մասամբ հեղուկների, մասամբ էլ պինդ մարմնի հատկություններ, պլազմալեմն անընդհատ շարժվում է, հոսում, կատարում ալիքաձև տատանումներ: Նրա հատկություններից է նաև ձկունությունը: Պլազմալեմի վրա կան ելուստներ կամ ներփռումներ: Պլազմալեմում առկա են մեծ թվով մանրագույն անցքեր՝ ծակոտիներ, այսինքն՝ այն հոգ չէ: Պլազմալեմը համասեր չէ, այսինքն նրա կառուցվածքը միևնույնը չէ տարբեր հատվածներում:

Պլազմալեմն օժտված է ընտրողական թափանցելիությամբ: Նրանով հեշտությամբ անցնում են փոքր մասնիկները և ճարպալուծ միացությունները:

Պլազմալեմի ֆունկցիաները: Պլազմալեմը կատարում է բազմապիսի ֆունկցիաներ: Բացի արդեն նշված մեկուսացնող և հյուսվածքներում բջիջները միացնող ֆունկցիաներից, այն ապահովում է նյութերի, էներգիայի և տեղեկատվության փոխանակությունը բջջի և շրջակա միջավայրի միջև: Այս ֆունկցիան անմիջականորեն առնչվում է բջջում ջրի քանակի կարգավորման հետ:

Տարբեր նյութեր, ընդ որում և փոքր, և մեծ չափսերի, բջջի են անցնում անմիջապես պլազմային թաղանթում առկա ծակոտիների միջոցով, լիախիդների միջով կամ անուղղակի ճանապարհով՝ որոշակի սպիտակուցների միջոցով, որոնք գործում են որպես փոխադրիչներ: Այդ փոխադրիչները կարող են միաժամանակ տեղափոխել մի քանի մասնիկներ թե՛ միևնույն, թե՛ տարբեր ուղղություններով: Նման դեպքում մեկ նյութի տեղափոխումն ապահովում է մյուսի փոխադրումը:

Նյութերի տեղափոխման համար միշտ ծախսվում է էներգիա, սակայն երբ դրանք տեղափոխվում են իրենց ցածր խտության (կոնցենտրացիա) տիրույթից դեպի բարձր կոնցենտրացիայի տիրույթ՝ որոշակի փոխադրիչների օգնությամբ, ապա պահանջվում է արտաքին էներգիայի հատուկ աղբյուր: Այդպիսի փոխադրման գործընթացը կոչվում է **ակտիվ** (նկ. 73):



Նկ. 73. Նյութերի ակտիվ փոխադրումը թաղանթի միջով:

Հատ փոխադրիչներ նաև ֆերմենտներ են. դրանց մի մասը, այսպես կոչված, **պոմպեր** են: Դայտնի է նատրիումի և կալիումի իոնները տեղափոխող պոմպը, որն այդ իոնների տարբեր ուղղություններով փոխադրման համար ճեղքում է ԱԵՖ-ը և օգտագործում այդ ճեղքման ժամանակ անջատված էներգիան: Այդ պոմպը կազմված

է մեծ և փոքր զանգվածով սպիտակուցային ենթամիավորներից, որոնք թաղանթում միանալով երկուական կազմավորում են որոշակի ուղղորդված փոխադրող մի համալիր: Քանի որ այդ պոմապի աշխատանքի արդյունքում ինները (լիցքերը) փոխանակվում են ոչ հավասար քանակներով (բջջում եղած նատրիումի երեք ինը փոխանակվում են միջավայրի կալիումի երկու իններով), ապա պլազմակազմի վրա առաջանում է էլեկտրական պոտենցիալների տարբերություն: Դա շատ կարևոր դեր ունի բջջի կյանքում: Նատրիում-կալիումական պոմապին նման է կալցիումական պոմապը, որը կալցիումի իններ է փոխադրում ԱԵՖ-ի էներգիայի հաշվին: Այս պոմապի առանձնահատկություններից է կալցիումի իններ կապող հատուկ սպիտակուցների առկայությունն, ինչը հնարավոր է դարձնում այդ ինների կապումը և թաղանթով պոմապի միջոցով տեղափոխումը՝ դրանց նույնիսկ շատ փոքր քանակների դեպքում: Տարբեր բջիջների թաղանթներում գործում են ոչ միայն մետաղների և այլ անօրգանական նյութերի իններ, այլ նաև օրգանական նյութեր, օրինակ՝ ամինաթթուներ, փոխադրող պոմապեր:

Դայսնի են հիվանդություններ, որոնց պատճառը պոմապերի խափանումն է: Այդ հիվանդությունների բուժման նպատակով ստեղծվել են պոմապերի աշխատանքը կարգավորող դեղամիջոցներ:


Բացի ԱԵՖ-ից, նյութերի փոխադրման համար օգտագործվում է նաև այլ թիմիական նյութերում կուտակված էներգիան: Այդպիսի նյութերից են ֆոսֆոռական թթվի մնացորդ պարունակող տարբեր միացություններ: Կան պոմապեր, որոնք օգտագործում են լուսային էներգիան: Թաղանթով նյութերի փոխադրման համար օգտագործվում է նաև ինների գրադիենտի, օրինակ՝ պրոտոնային գրադիենտի էներգիան:

Նյութերի հակառակ տեղափոխությունը՝ բարձր խտությունից դեպի ցածրն, այսինքն ըստ գրադիենտի, կոչվում է **պասիվ** (նկ. 74): Այն արտաքին էներգիայի ծախս չի պահանջում:


Նյութերի տեղափոխման արդյունքում ստեղծվում և շատ դեպքերում պահպանվում է դրանց անհավասարաչափ բաշխումը բջջի ցիտոպլազմայի և շրջակա միջավայրի միջև:

Տարբեր նյութերի տեղափոխման յուրահատուկ եղանակ է **ցիտոզը**, երբ թաղանթով մասնիկի փոխադրման ժամանակ փոխվում են պլազմակազմը և կառուցվածքը: Ցիտոզը խոշոր մասնիկների, այդ թվում՝ շատ սպիտակուցների և նույնականաթթուների փոխադրման բնորոշ ծև է: Նեղուկ կաթիլները կամ պին մասնիկները բջջ կարող են թափանցել համապատասխանաբար պին- և ֆազոցիտոզի եղանակներով (նկ.

75): Դրանք նկարագրվել են ամերայի մոտ, տարբեր կենդանիների շարակցական հյուսվածքի բջիջներում: Եթե պլազմակազմի վրա մասնիկների համան տեղում առաջանում է ներփակում, թաղանթի եզ-



Նկ. 74. Նյութերի պասիվ փոխադրումը թաղանթի միջով:



Նկ. 75. Ցիտոզ (նյութերի թափանցումը (1) և դուրս բերումը (2) բջջից) և ֆագոցիտոզը ամերայի մոտ (3):

Կուցների երրորդային և չորրորդային կառուցվածքները՝ նրանց կոնֆորմացիան, ինչն էլ սկզբնավորում է բջջի պատասխանը: Այդ գործընթացներին մասնակցում են բազմաթիվ ֆերմենտներ: Նույն ձևով են ընկալվում տարբեր հակածիները (անտիգեները):

Բջջում կան շատ օրգանիզմներ, որոնք ունեն թաղանթներ: Դրանք ներկայացված են վիալ գնդածն ու ճյուղավորված ցանց առաջացնող կառուցվերով: Այդ թաղանթներն իրենց կառուցվածքով ննան են պլազմալեմին:



Դարցեր կրկնության համար.

1. Ի՞նչ է բջջաբաղանքն, ինչի՞ց է այն կազմված:
2. Ի՞նչ օրգանական նյութեր կան պլազմալեմում:
3. Ի՞նչ կառուցվածք ունի պլազմալեմն, ի՞նչն է դրա հենքը:
4. Նկարագրեք ցիտոզը:
5. Պլազմալեմի ի՞նչ հատկություններ գիտեք:
6. Նկարագրեք պլազմալեմի ֆունկցիաները: Կարելի է արդյո՞ք պնդել, որ պլազմալեմի ֆունկցիաներն իրականացվում են սպիտակուցների միջոցով:
7. Նյութերի փոխադրման ո՞ր գործընթացն է կոչվում ակտիվ, իսկ ո՞րը՝ պասիվ:
8. Թաղանթում ինչպիսի՞ պոմպեր գիտեք, ի՞նչ նշանակություն դրանք ունեն:
9. Բացատրեք, ինչո՞ւ է թաղանթի կառուցվածքի հեղուկը ուրեղյա նողելն այդպես կոչվում:

Առաջադրանք.

Մտածեք, թե բջջաբաղանքների մասին ո՞ր տեղեկությունը կարող է օգտակար լինել մարդու կյանքում:

14. ՑԻՏՈՊԼԱԶՄԱՆ ԲՁՁԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍՆ Է ՈՒ ՆՐԱ ԿԻՍԱՀԵՂՈՒԿ ՆԵՐԸԻՆ ՄԻՋԱՎԱյՐԸ:


Ցիտոպլազման բջջի հիմնական բաղադրամասն է ու նրա կիսահեղուկ ներքին միջավայրը:

Ցիտոպլազման, կարծես, հանքային աղերի և տարբեր օրգանական նյութերի ջրային լուծույթ է: Նրա բաղադրության մեջ գերակշռում են սպիտակուցները: Ցիտոպլազմայի կազմը հարաբերականորեն կայուն է, թեև ցիտոպլազմայի և բջջի շրջակա միջավայրի միջև անընդհատ տեղի է ունենում նյութերի փոխանակություն, իսկ ցիտոպլազմայում շարունակվում են քիմիական նյութերի փոխարկումները: Ցիտոպլազման ունի որոշակի ռեակցիա: բջջների մեջ նաև այլ հիմնային է:

Ցիտոպլազման մածուցիկ է: Ցիտոպլազմայի հատկություններից է մշտական շարժումը, որի ընթացքում փոխվում է նաև նրա վիճակը:


Ցիտոպլազմայում կարող են կուտակվել տարբեր նյութեր: Դրանք կոչվում են **ներառուկներ**, որոնք ցիտոպլազմայի ոչ մշտական կառուցվածքներ են: Խիստ ներառուկները կոչվում են գրանուլներ: Այդ ներառուկները պարունակում են նյութափոխանակության արգասիքներ, օրինակ՝ գունակներ, սպիտակուցային մասնիկներ, կամ պահեստային սննդանյութեր, օրինակ՝ գլիկոգեն, ճարպի կաթիլներ:

Կորիզավոր բջջների ցիտոպլազմայում տարբերում են արտաքին շերտը՝ էկտոպլազման, որին բնորոշ է սպիտակուցային թելիկների խրձերի և տուրուլին սպիտակուցից կազմված միկրոխողովակների առկայությունը. դրանք կազմավորում են բջջակմախրը (նկ. 76): Դա տալիս է բջջին ոչ միայն ամրություն, այլ նաև որոշակի ճկունություն: Սպիտակուցային թելիկների խրձերը մասնակցում են միկրոթափիկների կառուցմանը: Բջջի կիսման ժամանակ միկրոխորովակները կազմավորում են բաժանման իլիկը:



Նկ. 76. Բջջակմախր:

Բջջակմախքի կազմի մեջ են մտնում նաև թարթիչները, մտրակները, կեղծոտիկները և այլ կառուցյներ, որոնց միջոցով իրագործվում են բջջների տարրաբույթ շարժումները կամ ստեղծվում է բջջները շրջապատող հեղուկի կամ մասնիկների հոսք: Թարթիչներ և մտրակներ ունեն շատ բակտերիաներ, սնկերի, բույսերի և կենդանիների շատ բջջներ (նկ. 77): Մարդու շնչառական ուղիների էպիթելիային բջջները և ձվատարների բջջները ևս ունեն թարթիչներ: Թարթիչների և մտրակների հիմքում կան հենքային մարմնիկներ՝ կազմված սպիտակուցներից: Թարթիչները և մտրակները կծկվում են շատ արագ՝ կատարելով տատանողական ալիքաձև, կեռիկաձև, ձագարաձև և այլ տիպի շարժումներ: Այդպիսի շարժումների համար պահանջվում է զգալի քանակի էներգիա:



Նկ. 77. Թարթիչները և մտրակները տարբեր բջջներում:

Ցիտոպլազմայի ներքին շերտում՝ էնդոպլազմայում գտնվում են տարբեր օրգանոիդներ՝ էնդոպլազմային ցանց, Գոլցիի ապարատ, ռիբոսոններ, միտոքոնիրիումներ, վակուոլներ և այլն: Բուսական բջջներում կան նաև պլաստիդներ: Կորիզավոր բջջների ցիտոպլազմայի համար բնորոշ է կորիզը, որը սովորաբար գտնվում է նրա կենտրոնական մասում: Ցիտոպլազմայի միջոցով բոլոր օրգանոիդները փոխազդում են միմյանց հետ:


Դարցեր կրկնության համար.



1. Ի՞նչ է իրենից ներկայացնում կորիզավոր բջջի ցիտոպլազման, ի՞նչ հասկություններ այն ունի:
2. Ի՞նչ են ներառուկները: Բերեք օրինակներ:
3. Ո՞ր կառույցներն են կազմավորում բջջակմախքը:
4. Ի՞նչ գիտեք թարթիչների և մտրակների մասին, ինչպես են դրանք իրականացնում բջջի շարժումները:

15. ԷՆԴՈՊԼԱԶՄԱՅԻՆ ՑԱՆՑԻ, ԳՈԼՋԻԻ ԱՊԱՐԱՏԻ, ԼԻԶՈՍՈՍՄԵՐԻ ԵՎ ՎԱԿՈՒՈԼՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՖՈԽՆԿՑԻԱՆԵՐԸ


Էնդոպլազմային ցանց: Էնդոպլազմային ցանցն, ինչպես հայտնի է, հայտնագործվել է 20-րդ դ. կեսերին ամերիկացի գիտնական ք. Պորտերի կողմից: Այն կազմված է բազմաթիվ խուղակներից և խոռոչներից, լավ զարգացած է կորիզավոր քջիջներում (**նկ. 78**), իսկ պրոկարիոտների մոտ բացակայում է: Էնդոպլազմային ցանցի կազմավորվածությունը տարբերվում է բջջի կյանքի տարբեր փուլերում, այն հատկապես զարգացած է բույն նյութափոխանակության ժամանակ: Էնդոպլազմային ցանցի ծավալը կազմում է բջջի ընդհանուր ծավալի միջինը 30-50%-ը:



Նկ. 78. Յարթ և հատիկավոր էնդոպլազմային ցանց:

Էնդոպլազմային ցանցը բջջային թաղանթների կառույց է և դրանց մի բարդ համակարգ: Սակայն ի տարբերություն պլազմալեմի՝ այդ թաղանթը շատ բարակ է: Բջջում էնդոպլազմային ցանցի թաղանթները տարբերվում են իրարից կառուցվածքով, կազմով և ֆունկցիաներով: Տարբերում են էնդոպլազմային ցանցի երկու տեսակ՝ հարթ և հատիկավոր: Յարթ կամ ողորկ էնդոպլազմային ցանցի հիմնական ֆունկցիան լիպիդների և ածխաջրերի սինթեզն է, ինչպես նաև օտարածին նյութերի օքսիդացումը և դուրս բերումը: Այդ ցանցով հարուստ են կենդանիների, այդ թվում՝ ճարպագեղձերի, սեռական գեղձերի, լյարդի, ինչպես նաև բույսերի սերմների բջիջները: Սկանային բջիջներում այդ ցանցը կազմավորում է սարկոպլազմային ցանց, որի միջոցով ցիտոպլազմայում պահպանվում է կալցիումի իոնների շատ ցածր խտություն: Դա կարևոր է մկանաթելերի կծկման համար: Բջջում էնդոպլազմային ցանցի ներփակումների հաշվին կարող են առաջանալ տարբեր մարմնիկներ:

Հատիկավոր ցանցի թաղանթների վրա դասավորված են բազմաթիվ մանր կլորավուն մարմնիկներ՝ **ռիբոսոմներ** (**նկ. 79**), որոնք ել թաղանթներին



Նկ. 79. Ռիբոստմ:

խորդուբորդ տեսք են տալիս (նկ. 92): Հատիկավոր էնդոպլազմային ցանցը որոշակի դեր է կատարում սպիտակուցի կենսասինթեզում, որն, ինչպես գիտեք, իրագործվում է ռիբոսումներում: Այս ցանցում տեղափոխվում և կուտակվում են սինթեզված սպիտակուցները, կարող է կատարվել նաև սպիտակուցների փոխակերպում: Հատիկավոր ցանցով հարուստ են կենդանիների, այդ թվում՝ մարդու ենթաստամքային գեղձի, բջագեղձերի բջիջները, սակայն այն լավ չի զարգացած ձվաբջիջներում, սաղմնային բջիջներում:

Ռիբոսումները բնորոշ են բոլոր բջիջներին. դա պայմանավորված է այդ օրգանոիդներում սպիտակուցի կենսասինթեզի իրականացմամբ: Մեկ բջջում ռիբոսումների քանակը կարող է հասնել միլիոնների:

Ռիբոսումները շատ մանր մարմնիկներ են և ունեն կլորավուն ձև, սակայն տարբեր են նախակորիզավոր և կորիզավոր բջիջներում: Միտոքոնդրիումներում և պլաստիդներում պարունակվող ռիբոսումներն ավելի մանր են:

Յուրաքանչյուր ռիբոսուն կազմված է, ինչպես գիտեք, երկու տարբեր չափսեր ունեցող մասերից՝ փոքր և մեծ: Դրանց միակցմանը մասնակից են կալցիումի իոնները: Ռիբոսումների բաղադրության մեջ գրեթե հավասար քանակությամբ մտնում են տասնյակ սպիտակուցներ և ռ-ՌՆԹ: Այդ ՌՆԹ-ի պարունակության շնորհիվ փոքր մարմնիկներն անվանվել են ռիբոսումներ: Ռիբոսումների սպիտակուցներն ունեն տարբեր տարածական կառուցվածքներ, իսկ ռ-ՌՆԹ-ները՝ տարբեր չափսեր:

Մի քանի ռիբոսումներ կարող են միանալ մեկ ի-ՌՆԹ-ի հետ և առաջացնել պոլիռիբոսում:

Ռիբոսումների մասին տեղեկատվության հիման վրա ստեղծվել են այդ օրգանոիդների տարբեր մոդելներ, որոնք շատ կարևոր են բջջից դուրս սպիտակուցի սինթեզի իրականացման համար:

Գոլջիի ապարատը: Այս օրգանոիդը բնորոշ է բոլոր կորիզավոր բջիջներին: Այն ներկայացված է խտացված խոշոր և մանր բշտիկների, խոշոր վակուոլների կամ մանր պղպջակների փաթեթների ձևով, որոնք առաջացնում են ցանց (նկ. 80): Դրանք բոլորը կազմված են հարթ բջջային բաղանթից, չեն կրում ռիբոսումներ: Գոլջիի ապարատը բացահայտվել է 19-րդ դ. վերջուն իտալացի հյուսվածաբան, Նորեյան միցանակակիր Կ. Գոլջիի (նկ. 81) կողմից նյարդային բջիջներում:

Գոլջիի ապարատը կատարում է շատ ֆունկցիաներ: Դրանց թվում՝ էնդոպլազմային ցանցի բաղանթների վրա սինթեզված սպիտակուցների, ածխաջրերի, լիպիդների մոլեկուլների փոխակերպումն է, այդ միացություններին տարբեր խմբերի միացումը, բարդ սպիտակուցների առաջացումը, լիպիդների և ածխաջրերի սինթեզը, դրանց կուտակումը: Բշտիկներում փաթեթավորված

ԳԼՈՒԽ 4. ԲՁՁԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՖՈԽՆԿՑԻՎԱԾՔՆ



Նկ. 80. Գոլցի ապարատ: Լիզոսոմներ:

այդ նյութերը կարծես ճանաչվում են, այնուհետև բջջում տեղափոխվում տարրեր միկրոխողովակների օգնությամբ: Այդ նյութերն օգտագործվում են պլազմալեմի նորացման ընթացքում: Բացի դրանից, Գոլցի ապարատում առաջանում են լիզոսոմները և պերօքսիսոնները:

Լիզոսոմներ: Լիզոսոմները հայտնաբերվել են 20-րդ դարի կեսերին Ք. դե Պյուվի կողմից: Դրանք ոչ մեծ, կլորավոլուն մարմնիկներ են՝ մոտավորապես 0,5 մկմ տրամագծով, և շրջապատված են թաղանթով (**նկ. 80**): Լիզոսոմի ներսում գտնվում են մոտ 30 տարրեր մարսողական ֆերմենտներ, որոնք ունակ են ճեղքելու տարրեր օրգանական նյութեր, այդ թվում՝ սպիտակուցներ, ճարպեր, նուկլեինաթթուներ, պոլիսախարիդներ:

Լիզոսոմներն առաջանում են Գոլցի ապարատում կամ անմիջապես էնդոպլազմային ցանցում, տարրերում են առաջնային և երկրորդային լիզոսոմներ:

Լիզոսոմներն ունեն տարաբնույթ ֆունկցիաներ: Դրանք կարող են մոտենալ տարրեր մասնիկներ պարունակող բշտիկին, միաձուլվել նրա հետ: Արդյունքում ձևավորվում է **մարսողական վակուոլ**: Դա բնորոշ է ֆազոցիտոզի ունակությամբ օժտված բջիջներին: Որոշակի պայմաններում լիզոսոմների թաղանթը դառնում է թափանցելի ֆերմենտների համար, ֆերմենտները դուրս են գալիս՝ մասնակցելով մի կողմից՝ կենսագործունեության ընթացքում մեռնող բջջամասերի և այլ կառույցների հեռացմանը և, մյուս կողմից՝ բջջային կառույցների վերականգնմանը կամ վերակառուցմանը: Լիզոսոմները կարող են մարսել միտոքոնդրիումներ: Մեռնող բջիջներում մեծանում է լիզոսոմների քանակը, ավելանում է մարսման արդյունքում մնացած մարմնիկների թիվը: Փաստորեն բջջում լիզոսոմների մեծ քանակը կարող է վկայել նրա ծերացման մասին: Հատկանշական է, որ բջջում առկա է հատուկ համակարգ, որը լիզոսոմները պաշտպանում է ինքնամարսումից:


Լիզոսոմներից տարբերվում են շատ ավելի փոքր չափսեր ունեցող մարմնիկներ՝ **պերօքսիսոմներ**, որոնցում կատարվում է շատ նյութերի օքսիդացումը:



Նկ. 81. Կ. Գոլցի
(1844-1926):

թթվածնի մասնակցությամբ: Պերօքսիտոմներ առաջին անգամ նկարագրվել են կենդանիների լյարդի և երիկամների բջիջներում:

Վակուոլներ: Վակուոլները թաղանթով մեկուսացված օրգանոիդներ են (նկ. 82): Նրանք պարունակում են տարրեր նյութերով, այդ թվում ածխաջրերով, ամինաթթուներով, սպիտակուցներով և այլ օրգանական միացություններով հեղուկ: Վակուոլներում այս կամ այն նյութի խտությունը կարող է տարբերվել ցիտոպլազմայում այդ նյութի խտությունից: Բուսական բջջի վակուոլում բացի տարբեր աղերից, թթուներից և շաքարներից հանդիպում են նաև գունակներ: Կան տարբեր տեսակի և չափսերի վակուոլներ: Խոշոր վակուոլներ բնորոշ են բուսական բջիջներին: Դրանք կարող են կազմել բջջի ներքին ծավալի գգալի մասն, առանձին դեպքերում վակուոլները գրավում են բջջի ծավալի մինչև 70-95 տոկոսը:



Նկ. 82. Վակուոլը բուսական բջջի ներսում:

Ծավալը: Այդտեղ են կուտակվում նյութափոխանակության արդյունքները և թունավոր նյութերը: Որոշ ֆերմենտների առկայության շնորհիվ վակուոլները կատարում են լիզոսումների դեր բուսական բջջում:

Վակուոլները որոշում են բջջի տուրգորային ճնշումը, կարգավորում բջջի ծավալը: Այդտեղ է պոլիսումը:



Յարցեր կրկնության համար.

1. Նկարագրեք էնդոպլազմային ցանցի և ոիբրոսումների կառուցվածքն ու ֆունկցիաներն: Ի՞նչ տարբերություններ կան հարթ և հատիկավոր էնդոպլազմային ցանցերի մեջ: Ի՞նչ է պոլիսումը:
2. Ինչպես է էնդոպլազմային ցանցի կառուցվածքը կապված նրա ֆունկցիաների հետ:
3. Ի՞նչ կառուցվածք ունի գոլջիի ապարատը և ի՞նչ ֆունկցիաներ է այն կատարում բջջում:
4. Ո՞րն է լիզոսումի և պերօքսիտոմի ֆունկցիան:
5. Ի՞նչ գիտեք վակուոլների մասին, ո՞ր բջիջներում են դրանք շատ և ի՞նչո՞ւ:

16. ՄԻՏՈՔՈՆԴՐԻՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԼԱՍԻԴՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ: ԲԶՋԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ


Միտոքոնդրիումներ: Միտոքոնդրիումները տարբեր չափսերի (0,2-1 մկմ տրամագծով և 1-ից ընդհուար մինչև 20 կամ առանձին դեպքերում 40 մկմ երկարությամբ) և զանազան ձևերի մարմնիկներ են: Բջջում միտոքոնդրիում-

ԳԼՈՒԽ 4. ԲՁՁԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՖՈԽՆԿՑԻԱՆԵՐԸ

Աերն անընդհատ շարժվում են և փոխում իրենց ձևը: Հանդիպում են գնդաձև հատիկների, երկարավուն ձողիկների կամ բարակ թելիկների նման միտոքոնդրիումներ, հայտնի են նաև թիթեղանման կամ բշտիկավոր, ինչպես նաև կույտերի ձևի միտոքոնդրիումներ: Բջջում դրանք կարող են առաջացնել ճյուղավորված ցանցեր: Նկարագրվել են 19-րդ դ. վերջում, անվանումը տվել է գերմանացի հյուսվածաբան Կ. Բենդան:

Միտոքոնդրիումների թիվը տարբեր հյուսվածքների բջիջներում նույնը չէ: Բջջում կարող են լինել մեկ հսկա միտոքոնդրիում կամ էլ հազարավոր միտոքոնդրիումներ: Դրանք հատկապես շատ են այն բջիջներում, որոնցում տեղի է ունենում ուժգին նյութափոխանակություն կամ էներգիայի մեծ ծախս: Միտոքոնդրիումները շատ են հսկա ամերբաներում, կենդանիների լյարդի, սեռական գեղձերի բջիջներում: Կան բջիջներ, որտեղ միտոքոնդրիումներ չկան:

Միտոքոնդրիումների պատը կազմված է երկու թաղանթից՝ արտաքին և ներքին, որոնց միջև կա ոչ մեծ տարածություն: Արտաքին թաղանթը հարթ է, դրանում շատ են ֆոսֆոլիպիդները և քիչ են սպիտակուցները: Ներքին թաղանթն առաջացնում է բազմաթիվ ծալքեր կամ ներփակումներ, որոնք ուղղված են դեպի միտոքոնդրիումի ներքին խոռոչը (նկ. 83): Այդ ծալքերը կոչվում



Նկ. 83. Միտոքոնդրիումները բուսական (1) և կենդանական բջիջներում:

Են կատարմեր՝ կրիստաներ: Որոշ բջիջներում դրանք խողովակաձև են: Կատարմերը մեծացնում են ներքին թաղանթի մակերևույթը, դրանց քանակը կախված է նյութափոխանակության ուժգնությունից: Դրանք կարող են այնքան շատ լինել, որ զբաղեցնեն միտոքոնդրիումի ողջ ներքին խոռոչը: Կատարմերում շատ են սպիտակուցները, հատկապես ֆերմենտներն, այդ թվում ԱԵՖ-ի մոլեկուլներ սինթեզող ԱԵՖ-սինթազները: Կան նյութերի ակտիվ փոխադրման բազմաթիվ համակարգեր, որոնք շատ ընտրողական են: Ներքին թաղանթն անթափանցելի է իոնների համար, նրա այդ հատկությունը շատ կարևոր է իոնային (պրոտոնային) գրադիենտի առաջացնան և պահպանան համար, որը միտոքոնդրիումներում ԱԵՖ-ի սինթեզման շարժիչ ուժն է:

Միտոքոնդրիումների ներքին թաղանթի բաղադրության փոփոխության դեպքում, որոշակի պայմաններում նվազում է ԱԵՖ-ի սինթեզը և անջատվում է ջերմություն: Դա կարևոր է բջի տաքացման համար:

Միտոքոնդրիումների ներքին խոռոչում պարունակվում է ՂՆԹ, տարբեր տեսակի ՌՆԹ-ներ, ֆերմենտներ և ռիբոսոմներ: Դրա շնորհիվ միտոքոնդրիումներում սինթեզվում են որոշակի սպիտակուցներ: Միտոքոնդրիումներին բնորոշ է լիափեների փոխանակությունը:

Միտոքոնդրիումների ներքին կառուցվածքի, հետևաբար և ֆունկցիաների խանգարման դեպքում մարդու մոտ զարգանում են ծանր հիվանդություններ, որոնք դրսուրշում են մկանային թուլության, բջի կենսագործունեության նվազման ձևով: Տարբեր խանգարումներ կարող են առաջանալ թունավոր նյութերի ազդեցությամբ:

Պլաստիդներ: Բույսերի և որոշ նախակենդանիների բջիջների ցիտոպլազմայում կան պլաստիդներ (**նկ. 84**): Դրանք տեսանելի են լուսային մանրադիտակի օգնությամբ և նկարագրվել են դեռևս 17-րդ դ. հանրահայտ կենսաբան Ա. վան Լևենհուկի կողմից (**նկ. 85**):



Նկ. 84. Տարբեր տեսակի պլաստիդներ:
1-քլորոպլաստներ; 2-քրոմոպլաստներ; 3-լեյկոպլաստներ:




Նկ. 85. Ա. վան Լևենհուկ
(1632-1723):

Գունակների պարունակությամբ և ձևով տարբերում են պլաստիդների երեք հիմնական տեսակներ՝ (**նկ. 84**) կանաչ՝ քլորոպլաստներ, որոնք պարունակում են քլորոֆիլ գունակը և իրականացնում են ֆոտոսինթեզ, քրոմոպլաստներ, որոնք պարունակում են ծաղիկների և պտուղների վառ գունավորումը պայմանավորող մի շարք տարբեր գունակներ և ունեն կլորավուն, բազմանիստ կամ թելանման ձև: Վերջապես, անգույն և կլորավուն կամ ձողաձև՝ լեյկոպլաստներ, որոնցում մոնո- և դիսախարիդներից սինթեզվում է օսլա կամ կուտակվում են ծարպեր կամ սպիտակուցներ: Օսլան պաշարող պլաստիդները կոչվում են ամիլապլաստներ,

ԳԼՈՒԽ 4. ԲՋԱԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՖՈԽՆԿՑԻԱՆԵՐԸ

սպիտակուցներ պաշարողները՝ պրոտեալաստներ: Փաստորեն պլաստիդները տարբերվում են նաև իրենց ֆունկցիաներով: Պլաստիդները կարող են փոխարկվել մեկը մյուսին: Բացի դրանից, պլաստիդները միմյանցից տարբերվում են կառուցվածքով:

Բջջում քլորոպլաստների քանակը մի քանի տասնյակի է հասնում (**նկ. 86**): Կան ջրիմուռներ, որոնք ունեն մեկ քլորոպլաստ:



Նկ. 86. Քլորոպլաստները բջջում:

Քլորոպլաստների մարմինը հաճախ ձվաձև է, 4-6 մկմ տրամագծով, հանդիպում են նաև գնդաձև, սկավառակաձև կամ ցանցաձև քլորոպլաստներ: Դրանք սահմանազատված են երկու թաղանթներով, որոնք նման են միտոքոնդրիումների թաղանթներին: Ներքին թաղանթն առաջացնում է բազմաթիվ թիթեղիկներ՝ **թիլակոիդներ**, որոնք կուտակվելով մեկը մյուսի վրա՝ կազմավորում են **միստեր** (գրաններ) (**նկ. 87**):




Նկ. 87. Քլորոպլաստների կառուցվածքը:

Դրանցում են գտնվում քլորոֆիլը, (որը իրենից ներկայացնում է մագնեզիում պարունակող պորֆիրին, **նկ. 88**), ինչպես նաև շատ ֆերմենտներ, այդ թվում՝ ԱԵՖ-սինթազներ:

Այսպիսի կառույցը և գրանների տեղաբաշխումը ապահովում են արեգակնային լույսի առավելագույն կլանումը և ֆոտոսինթեզի լուսային փուլի իրագործումը:

Քլորոպլաստների ներքին խոռոչում պարունակվում են ԴՆԹ, տարբեր տեսակի ՌՆԹ-ներ, ֆերմենտներ և ռիբոսոմներ: Դրա շնորհիվ սինթեզվում են որոշակի սպիտակուցներ: Այդ խոռոչի ֆերմենտները մասնակցում են ածխաթթու գազի կապմանը: Ինչպես միտոքոնդրիումներում, այստեղ էլ է տեղի ունենում լիակիդների փոխանակություն:




Նկ. 88. Քլորոֆիլի կառուցվածքը:

Բջջային կենտրոն: Բջջային կենտրոնը հայտնաբերվել է կենդամիների և որոշ բույսերի բջիջներում: Բացահայտվել է գերմանացի բջջաբան Վ. Ֆլեմինգի 19-րդ դ.: Այս օրգանիզմը կազմված է երկու շատ փոքր գլանաձև մարմնիկներից՝ **ցենտրիոլներից**, որոնք միմյանց նկատմամբ գտնվում են ուղիղ անկյան տակ (նկ. 89): Տենտրիոլի պատը կազմված է 24 նմ տրամագծով միկրոխողովակներից, որոնք դասավորվում են երեքական խմբերով:

Բջջում ցենտրիոլները գտնվում են Գոլջիի ապարատի կամ բջջակորիզի մոտ:

Տենտրիոլներում կան ՌՆԹ և տարբեր սպիտակուցներ:

Տենտրիոլները փոխազդում են բջջակմախքի հետ: Դրանք կարևոր դեր են խաղում բջջի բաժանման գործընթացում՝ բերելով բաժանման իլիկի առաջացմանը: Տենտրիոլների ֆերմենտները կարող են մասնակցել քրոմոսոնների տեղաշարժմանը դեպի բջջի բևեռներ բաժանման ընթացքում:



Նկ. 89. Բջջային կենտրոն:

Որոշ բջիջներում ցենտրիոլներից առաջանում են հենքային մարմնիկներ, որոնց միանում են բարիքները:

Նոր ցենտրիոլն առաջանում է ինքնահավաքման ճանապարհով:

Յարցեր կրկնության համար.

1. Նկարագրեք միտոքոնդրիումների կառուցվածքն ու ֆունկցիաները:
2. Պլաստիդների ի՞նչ տեսակներ կան բուսական բջջում, ի՞նչ կառուցվածք դրամբ ունեն և ո՞րն է դրանց դերը:
3. Ինչո՞վ են միտոքոնդրիումները և պլաստիդներն իրար ննան:
4. Ի՞նչ է բջջային կենտրոնը և ինչո՞ւմ է դրա դերը: Ո՞ր տեսակի բջիջներն ունեն այդ օրգանիզմը:



17. ԲՁՁԱԿՈՐԻԶԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ


Բջջակորիզի կառուցվածքը: Բջջակորիզը սնկերի, բուսական և կենդանական բջիջների հիմնական բաղադրամասն է: Կաթնասունների հասուն էրիթրոցիտներում կորիզ չկա: Բջջակորիզը գտնվում է ցիտոպլազմայում. կորիզը և ցիտոպլազման իրար հետ փոխադարձ կապված են: Բջջակորիզը դեռևս 19-րդ դ. սկզբում դիտարկել է չեխ կենսաբան Յա. Պուրկինյեն (Ակ. 90):

Կորիզն ամենամեծ օրգանուիդն է, ունի տարբեր ձևեր և մեծություն: Կորիզը բջիջների մեջ մասում ունի կլորավուն ձև, սակայն բուսական բջիջներում հաճախ կորիզն իր ձևով նման է ոսպնյակի (Ակ. 91): Սարդերի որոշ բջիջներում կամ որոշ կենդանիների լեյկոցիտներում կորիզն անկանոն ձևի է: Կորիզի չափսերը տրամագծով կարող են հասնել մեկ մմ-ի:


Բջիջների մեջ մասում կա մեկ կորիզ, դրանք կոչվում են միակորիզ բջիջներ: Սակայն գոյություն ունեն նաև երկու, երեք, մի քանի տասնյակ և նույնիսկ հարյուրավոր կորիզներ պարունակող բջիջներ (Ակ. 92): Դրանք բազմակորիզ բջիջներ են, որոնք հանդիպում են նախակենդանիների մոտ, որոշ ողնաշարավորների յարդում, ոսկրածուծում, մկանների և շարակցական հյուսվածքներում: Միևնույն բջջում կարող են լինել տարբեր կորիզներ. նման դեպքում կորիզները կարող են կատարել տարբեր ֆունկցիաներ: Մեկ բջջում կորիզների մեջ թիվը կարող է լինել բջիջների միաձուլման արդյունք:

Կորիզը ցիտոպլազմայից մեկուսացված է կորիզաթաղանթով, նրանում տարբերակում են կորիզահյութը, կորիզակը և քրոմոսոմները:


Կորիզաթաղանթը կազմված է երկու թաղանթից, որոնց միջև



Ակ. 90. Յա. Պուրկինյեն (1787-1869):




Ակ. 91. Տարբեր ձևի բջջակորիզները:



Ակ. 92. Բազմակորիզ բջիջներ:

կա տարածք՝ լցված կիսահեղուկ նյութով։ Կորիզաթաղանթի արտաքին թաղանթը պատված է ողբոստմներով և Գոլջիի ապարատի և էնդոպլազմային ցանցի խողովակների հետ առաջացնում է հաղորդակցվող խողովակների ընդհանուր համակարգ։ Ներքին թաղանթը հարթ է, դրա դեպի կորիզ ուղղված կողմուն գտնվում է խիտ շերտ, որն անրություն է տալիս այդ կառուցվածքին։ Այս թաղանթին բնորոշ են որոշակի սպիտակուցներ (նկ. 93)։ Արտաքին և ներքին թաղանթների միջև կա որոշակի տարածություն։



Նկ. 93. Բջջակորիզի և կորիզաթաղանթի կառուցվածքը։

Կորիզաթաղանթում կան բազմաթիվ և բավական խոշոր՝ մինչև 70 նմ տրամագծով բարդ ծակոտիներ, որոնց միջով կորիզից դեպի ցիտոպլազմա և հակառակ ուղղությամբ անցնում են սպիտակուցներ, ածխաջրեր, լիպիդներ, ոիբրոնուկլեինաթրուներ, ջուր և զանազան իոններ, այսինքն՝ կորիզից և ցիտոպլազմայի միջև անընդհատ նյութափոխանակություն է կատարվում։ Այդ ծակոտիներում կան ֆերմենտներ։ Ծակոտիները շատ են կենդանիների կորիզաթաղանթում։ Կորիզից դեպի ցիտոպլազմա և հակառակը նյութերը կարող են անցնել նաև կորիզաթաղանթի ելուստներով, հնարավոր են նաև այլ ճանապարհներ։ Բացի փոխադրականից, կորիզաթաղանթը կարող է կատարել նաև այլ ֆունկցիաներ։

Կորիզահյութը կամ **կարիզոպլազման** գտնվում է կորիզաթաղանթի տակ և ներկայացնում է կորիզի ներքին միջավայրը։ Այն կիսահեղուկ նյութ է, չկարգավորված զանգված, որը լցնում է քրոնոստմների և կորիզակների միջև եղած տարածությունները։ Կորիզահյութի կազմի մեջ մտնում են զանազան սպիտակուցներ, այդ թվում՝ ոչ հիստոնային սպիտակուցներ և ֆերմենտներ, ինչպես նաև ՈՆԹ և ազատ նուկլեոտիդներ, ամինաթթուներ, քրոնոստմների և կորիզակների գործունեության արգասիքներ, որոնք այնուհետև անցնում են ցիտոպլազմա։ Կան նաև հանքային աղեր։ Թեև կորիզից և ցիտոպլազմայի միջև տեղի է ունենում նյութափոխանակություն, կորիզահյութի քիմիական կազմը զգալիորեն տարբերվում է ցիտոպլազմայի բաղադրությունից։


Կորիզակը կլորավուն ամուր նարմնիկ է, որն ընկղմված է կորիզայութիւն մեջ: Կորիզակները ձևավորվում և լուսային կամ էլեկտրոնային մամրադիտակի տակ տեսանելի են դաշնում միայն չքաժանվող բջիջներում, իսկ քաժանման ժամանակ քայլայվում են: Դրանք առաջանում են քրոմոսոմի՝ ռ-ՌՆԹ-ի կառուցվածքը ծածկագրող հատվածների շուրջը: Կորիզակը պարունակում է մեծ քանակությամբ ռ-ՌՆԹ, որտեղ, ինչպես արդեն նշվել է, ձևավորվում են ռիբոսոմների մեջ և փոքր ենթամասնիկները, որոնք այնուհետև անցնում են ցիտոպլազմա: Կորիզակների չափսերը և քանակը կարող են փոփոխվել: Մեկ կորիզում կարող են հայտնաբերվել շատ կորիզակներ:

Կորիզում են գտնվում նաև **քրոմոսոմները**, կազմված քրոմատինից: Քրոմատինը ՌՆԹ-ի և հիստոնային և ոչ հիստոնային սպիտակուցների համալիր է (**նկ. 94**): Սպիտակուցներից հիստոնները հարուստ են արգինինի և լիզինի մնացորդներով, ունեն ալկալիական՝ հիմնային հատկություններ: Սպիտակուցները կարևոր դեր ունեն ՌՆԹ-ի ակտիվության կարգավորման մեջ:

Բջջակորիզի ֆունկցիաները: ԴՆԹ-ի շնորհիվ կորիզն իրականացնում է երկու գլխավոր ֆունկցիաներ՝ **գենետիկական տեղեկատվության պահպանում և վերարտադրում ու բջջում ընթացող նյութափոխանակության գործընթացների կարգավորում**.

Գենետիկական տեղեկատվության պահպանումը և վերարտադրումը կատարվում է ՌՆԹ-ի մոլեկուլի կրկնապատկման միջոցով: Այդ գործընթացի հնարավոր խափանումներն ուղղվում են ֆերմենտների մասնակցությանը և այլ պաշտպանական մեխանիզմների շնորհիվ:

Գենետիկական տեղեկատվության իրագոր-



Նկ. 94. Քրոմատինի կառուցվածքը:



Նկ. 95. Բջջակորիզների տեղափոխման տեխնոլոգիան:

ծումը, նյութափոխանակության կարգավորումը կատարվում են ԴՆԹ-ի մոլեկուլի վրա ՈՆԹ-ի մոլեկուլի սինթեզի միջոցով: Բջջակորհզում սինթեզված ՈՆԹ-ն ենթարկվում է որոշակի ձևափոխության: Ինչպես նշվեց, կորիզակ-ներում կազմավորվում են ռիբոսումները, որոնք ի-ՈՆԹ-ի և այլ գործոնների հետ միասին ապահովում են ժառանգական տեղեկատվության իրականացումը բջջում:

Այն բջջները, որոնցում բջջակորհզը բացակայում է, չեն բաժանվում, դրանք ունեն նաև սահմանափակ կենսունակություն:

Վերջին տարիներին զարգացել է մեկ բջջից դեպի մյուսը բջջակորհզի տեղափոխման տեխնոլոգիան (**Ակ.** 95), իհնք դնելով **բջջային ճարտարագիտությանը** (**ինժեներիա**):

Յարցեր կրկնության համար.



1. Ո՞ր բջջներն ունեն բջջակորհզ: Կարո՞՞ղ են արդյոք մեկ բջջում լինել մի քանի կորիզներ:
2. Ի՞նչպիսի՞ կառուցվածք ունի բջջակորհզը:
3. Ի՞նչ առանձնահատկություններ ունի կորիզարադանթը և ի՞նչ դեր է այն կատարում: Ինչպես՞ է կատարվում նյութափոխանակությունը բջջակորհզի և ցիտոպլազմայի միջև:
4. Ի՞նչ է կորիզայիութն, ի՞նչ նյութեր է այն պարունակում:
5. Ի՞նչպիսի՞ կառուցվածք ունի կորիզակը, որտե՞՞ղ է այն առաջանում և ի՞նչ դեր է կատարում:
6. Ի՞նչ են քրոմոսումները ու ի՞նչ նյութից են դրանք կազմված:
7. Ի՞նչ ֆունկցիաներ ունի բջջակորհզը:

18. ՆԱԽԱԿՈՐԻԶԱՎՈՐ ԲՋՋԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ: ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ

Նախակորիզավոր բջջներ: Պրոկարիոտիկ բջջի հիմնական առանձնահատկությունը ձևափորված կորիզի բացակայությունն է: Ժառանգական տեղեկատվությունն ամփոփված է ԴՆԹ-ի օղական մոլեկուլում, որը գտնվում է ցիտոպլազմայում (**Ակ.** 96): Ցիտոպլազմայում թաղանթների պարունակությունը փոքր է:


Նախակորիզավոր բջջում օրգանիզմներից առկա են ռիբոսումները, որոնք իրականացնում են սպիտակուցների սինթեզը, և վակուունները, որտեղ կուտակվում են պահեստային նյութեր՝ պոլիսախարիդներ, ճարպեր և այլն: Այդ նյութերը ներառվում են փոխանակության գործընթացների մեջ և երկարացնում են բջջների կյանքը՝ էներգիայի արտաքին աղբյունների սակավաթիվ լինելու կամ բացակայության պայմաններում:

Բակտերիաների կառուցվածքը և նյութափոխանակությունը: Բակտերիաները շատ մանր բջիջներ են: Յիշենք, որ բակտերիաների չափսերը տատանվում են 1-ից մինչև 10-15 մկմ: Դրանք լինում են տարբեր ձևերի՝ գընդաձն կողեր, երկարաձեզգած՝ ձողիկներ կամ բացիլներ, ինչպես նաև պարուրաձև բակտերիաներ՝ սպիրիլներ կամ վիբրիոններ: Կան նաև ծորոված, լաստանման, աստղաձև և օղակաձև բակտերիաներ:


Որոշ բակտերիաներ մենակյաց են, որոշ ձևեր, օրինակ՝ ստրեպտոկոկները կամ ստաֆիլակոկներն առաջացնում են կուտակումներ: Կան անշարժ և շարժունակ բակտերիաներ:

Բակտերիաների կառուցվածքն ավելի պարզ է, քան սնկերի, բույսերի կամ կենդանիների բջիջներին:

Բջջաբաղանքը կազմավորվում է բջջապատից և պլազմային թաղանթից: Բջջապատի հաստությունը կազմում է 50 նմ, առանձին տեսակների մոտ այն բազմաշերտ է, մինչև 250 նմ հաստությամբ: Բջջապատը կազմված է սպիտակուցներից և ածխաջրերից, հանդիպում են նաև լիպիդներ: Բջջապատի ածխաջրերում կապերը կարող են քայբայվել լիզոցիմի միջոցով, որը բերում է բակտերիաների ոչնչացմանը: Լիզոցիմ շատ է արտադրվում կենդանիների և մարդու թքում, աղցունքում, քթալորձում, այն պարունակվում է կենդանիների ձվի սպիտակուցում և ունի կարևոր նշանակություն որոշ հիվանդածին բակտերիաների դեմ պայքարում: Բջջապատը բավական պինդ է և ամուր, այն որոշում է բջջի ձևը: Բջջապատը կատարում է նաև պաշտպանիչ դեր և ունի այլ նշանակություն ևս, օրինակ՝ սահմանափակում է որոշ նյութերի փոխադրումը: Բջջապատում կան հատուկ անցքեր, որոնցից դուրս են գալիս մտրակ-



Նկ. 96. Նախակորհզավորների կառուցվածքը:




Նկ. 97. Բջջապատի և պլազմալեմի փոխագոյեցությունը բակտերիաներում: Սլաքմերով ցույց են տրված մեզոսոմները:

Եթե ու տարբեր տեսակի այլ կառույցներ: Բջջապատը փոխագրում է պլազմալեմի հետ: Որոշ բակտերիաներում բջջապատը հարում է պլազմալեմին՝ առաջացնելով **մեզոսումներ** (**նկ. 97**): Դրանք մասնակցում են բջջապատի բաղադրանասերի սինթեզին:

Պլազմալեմի կառուցվածքը նույն է տարբեր բջիջներում: Սակայն բակտերիաներում այն առավել հարուստ է սպիտակուցներով: Պլազմալեմի ֆունկցիան բջջապատից ցիտոպլազմայի սահմանազատումն է, այն կատարում է շատ կարևոր այլ ֆունկցիաներ ևս: Բջջի կենսագործունեությունն ապահովող ֆերմենտները ցրված են ցիտոպլազմայում կամ ամրացված են պլազմալեմին: Սա էական նշանակություն ունի շրջակա միջավայրի փոփոխություններին բակտերիաների հարմարվածության գործում և ապահովում է դրանց լայն տարածումը բնության մեջ: Յիշենք, որ բակտերիաներն ապրում են, գրեթե, ամենուրեք՝ ջրում, հողում, օդում, սարքերի վրա, բույսերի, կենդանիների և մարդու օրգանիզմներում՝ հարուցելով զանազան հիվանդություններ և այլն: Առանձնահատուկ է բակտերիաների լյանքը թու միջավայրում, հաճային աղերի վրա, բարձր ջերմաստիճաններում, մթնոլորտի վերին շերտերում: Բակտերիաներ են հայտնաբերվել նաև տարբեր հանքային ջրերում, այդ թվում Զերմուկի և Արզոն աղբյուրներում:

Բակտերիաների **ՂՆԹ-ն** սպիտակուցի մոլեկուլների հետ համալիրներ չի առաջացնում, որի հետևանքով ՂՆԹ-ի կազմում գտնվող բոլոր գեներն «աշխատում են» և ընդգրկվում են ժառանգական տեղեկատվության իրացման գործընթացում: Սակայն այս գործընթացում գեների ընդգրկումը կարգավորվում է որոշակի գործոններով:

Որոշ բակտերիաներում բացի բակտերիայի ՂՆԹ-ից կամ պլազմիդներ (**տես նկ. 23**), որոնց թիվը կարող է հասնել մինչև մի քանի տասնյակի: Պլազմիդները կարող են կրել մինչև մի քանի տասնյակ գեներ, որոնք կարող են որոշել որոշ հակաբիոտիկների նկատմամբ բակտերիաների կայունությունը, այլ բակտերիաների համար թունավոր տարբեր սպիտակուցների սինթեզը: Յակաբիոտիկների նկատմամբ բակտերիաների կայունությունը որոշող



Նկ. 98. Անօրգանական և օրգանական նյութերի օրսիդացում իրականացնող տարբեր բակտերիաներ:

ԳԼՈՒԽ 4. ԲՁՁԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՖՈԽՆԿՑԻԱՆԵՐԸ

պլազմիդները նշանակվում են լատիներեն R տառով: Այդպիսի պլազմիդների առկայությունը դժվարեցնում է հիվանդածին բակտերիաների դեմ պայքարը:

Բակտերիաները կարող են ապրել անթրվածին և թթվածնային պայմաններում, և կենսագործունեության համար անհրաժեշտ էներգիան նրանք ստանում են՝ օգտագործելով տարրեր քիմիական նյութեր: Դա կատարվում է անօրգանական կամ օրգանական նյութերի օքսիդացման ճանապարհով (**ճկ.**)

(98): Անօրգանական նյութերի օքսիդացում իրականացնողներից են երկաթաբակտերիաները, ծծմբային բակտերիաները: Օրգանական նյութերի օքսիդացումն իրականանում է խմորման կամ շնչառության միջոցով: Խմորման արդյունքում առաջանում են պարզ օրգանական միացություններ, իսկ շնչառության արդյունքում՝ անօրգանական նյութեր: Օրգանական նյութերի օքսիդացում իրականացնող բակտերիաներից են աղիքային ցուպիկները, սալմոնելները, կաթնաթթվային բակտերիաները, քացախաթթվային բակտերիաները:

Կան նաև այնպիսի բակտերիաներ, որոնք օգտագործում են լուսային էներգիա՝ իրականացնելով ֆոտոսինթեզ: Դրանց օրինակ են ծիրանագույն բակտերիաները: Բակտերիաներում ֆոտոսինթեզը նման է կանաչ բույսերում իրականացվող համանման գործնթացին, սակայն բակտերիայի ֆոտոսինթեզի առանձնահատկությունը թթվածնի առաջացման բացակայությունն է:



Դարցեր կրկնության համար.

1. Բնութագրեք նախակորհզավոր քջօք:
2. Ի՞նչ ծև և կառուցվածք ունի բակտերիան:
3. Ինչպես բացատրել բակտերիաների մեջ տարածվածությունը բնության մեջ:
4. Ի՞նչ առանձնահատկություններ ունի բակտերիայի ԴՆԹ-ն:
5. Ի՞նչ ծանապարհով է բակտերիան ստանում կենսագործունեության համար անհրաժեշտ էներգիա:
6. Ինչի՞ց է կազմված բակտերիայի բջջապատը: Ի՞նչ են մեզոսոմները:

19. ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: ԿԱՊՏԱԿԱՆԱՉ ԶՐԻՍՈՒՂՆԵՐ

Բակտերիաների նշանակությունը: Բակտերիաների նշանակությունը բնության մեջ շատ մեծ է: Բակտերիաները երկրագնդի կենսացենոզների բաղադրիչներ են: Բակտերիաների քանակը երկրագնդի վրա առավել շատ է բույսերի, սնկերի, կենդանիների համեմատությամբ: Բակտերիաներն ապահովում են մթնոլորտի գազային կազմի կայունությունը: Դրանք մասնակցում են բնության մեջ շատ նյութերի շղթապույտին: Նշենք բակտերիաների միջոցով մոլեկուլային ազոտի ֆիքսումը հողում, ազոտ պարունակող օրգանական միացությունների ձևափոխումը, որը կարևոր է բույսերի հանքային սնուցման, նրանց աճի և զարգացման համար: Մյուս կողմից, բակտերիաների

միջոցով տեղի է ունենում բույսերի և կենդանիների քայքայման ընթացքում նրանցից անջատվող օրգանական միացությունների ձևափոխումն անօրգանական նյութերի և, ի վերջո՝ նոլեկուլային ազոտի և այլն:

Բակտերիաները **կենսատեխնոլոգիայում** հիմնական «արտադրողներն» են: Դրանք լայնորեն օգտագործվում են կաթնամթերքների ստացման համար: Բակտերիաների օգնությամբ արտադրում են բազմաթիվ սպիտակուցներ, կերային այլ բաղադրիչներ, ֆերմենտներ, վիտամիններ, հակարիոտիկներ և այլ դեղամիջոցներ, տարբեր թքուներ և այլ օրգանական միացություններ:

Վերջին տարիներին բակտերիաների միջոցով ստանում են էթիլ սպիրտ, մեթան, գազային (նոլեկուլային) ջրածին, որոնք արդեն իսկ կիրառվում են որպես կենսավառելիք էներգետիկայում (**նկ. 99**): Ստացվել են բակտերիաներ, որոնք ունեն նոլեկուլային ջրածնի արտադրության առավել մեծ արդյունավետություն, ինչը խոստումնալից է և նախանշում է մեծ հեռանկարներ:




Նկ. 99. Կենսավառելիքի արտադրամաս և մեթանաբակտերիաներ:

Դայտնաբերվել են մետաղները հանքանյութերից անջատող (լավարկող) բակտերիաներ, որոնք արդեն իսկ օգտագործվում են երկաթի, պղնձի, ուրանի և այլ մետաղների ստացման գործում:

Բակտերիաների նշանակությունը մարդու կյանքում պայմանավորված է նաև նրանով, որ դրանք հարյուրավոր տեսակներով և զգալի քանակությամբ ապրում են մարդու աղիներում և այլտեղ կատարում են կարևոր դեր ոչ միայն աղիքային մարսողության մեջ, այլև աղիների պատերի հետ փոխազդեցության արդյունքում կարգավորում են մարդու օրգանիզմի որոշ այլ ֆունկցիաներ: Աղիքային բակտերիաների հետ է կապվում նաև մարդու իմունային համակարգի ձևավորումը:

Սարդու վարակիչ հիվանդությունները և դրանց կանխարգելումը: Շատ են այն բակտերիաները (**նկ. 100**), որոնք մարդու տարբեր հիվանդությունների հարուցիչներ են: Այդպիսի վարակիչ հիվանդություններից են անգինան, դիֆթերիան, տիֆը, սիֆիլիսը, խոլերան, թքախտը, սիբիրախտը: Մի շարք վաղուց հայտնի հիվանդությունների, օրինակ՝ խոցային հիվանդության, զարգացմանը մասնակցում են տարբեր բակտերիաներ:



Նկ. 100. Յիշանդածին բակտերիաներ. 1-բուքաբորբի հարուցիչ; 2-բուտուլիզմի հարուցիչ:

Բակտերիաները վնասում են մարդու օրգանիզմն իրենց կողմից անջատվող թունավոր նյութերով՝ տոքսիններով:

Մարդու վարակիչ իիշանդությունների բուժման գործում, բակտերիաների դեմ պայքարում էական դեր են խաղում հակարիոտիկները:

Դրանցից առաջինը՝ պենիցիլինը հայտնաբերել է 1929 թ. անգլիացի մանրէաբան, Նորեյան մրցանակակիր Ա. Ֆլեմինգը: Այսօր հայտնի են հազարավոր հակարիոտիկներ. դրանք տարբեր բնույթի օրգանական միացություններ են (Ակ. 101), որոնք ունակ են ընտրողաբար սպանել մանրէներ կամ ճնշել դրանց աճը: Տետրացիլինը, քլորամֆենիկոլը, ռուբրոմիցինը, դիֆամպիցինը, ամպիցիլինը, ցեֆտրիաքսոնը և տասնյակ այլ, այդ թվում՝ նոր հակարիոտիկներ հաջողությամբ օգտագործվում են բուժական գործում: Սակայն հակարիոտիկների լայն, հաճախ անվերահսկելի, օգտագործման և այլ պատճառներով բակտերիաները ձեռք են բերում կայունություն, ուստի հակարիոտիկների օգտագործումը և նոր հակարիոտիկների անջատումը և ստեղծումն արդիական են վարակիչ իիշանդությունների հաղթահարման համար:



Նկ. 101. Նորեյան մրցանակակիր Ա. Ֆլեմինգը (1881-1955 թթ.)
1929 թ. հայտնաբերել է պենիցիլին հակարիոտիկը:




Նկ. 102. Է. Զեներ (1749-1823 թթ.):

շարք այլ միջոցառումներ, որոնցից են նրանց մեկուսացումը, հիվանդների անձնական օգտագործման իրերի և տարբեր պարագաների ջերմային և ճնշմանը մշակումը, վակ տարածըների ուլտրամանուչակագույն ճառագայթներով, իսկ միջավայրի քիմիական նյութերով ախտահանումը, սննդանթերքների և ջրի որակի վերահսկողությունն, անձնական հիգիենայի կանոնների պահպանումը:

Կան բակտերիաներ, որոնք կենդանիների և բույսերի օրգանիզմներում հիվանդությունների հարուցիչներ են:


Կապտականաչ ջրիմուռներ: Կապտականաչ ջրիմուռները (նկ. 103) տարածված են քաղցրահամ ջրերում, ծովերում, օվկիանոսներում, հողում, ջերմային աղբյուրներում և այլն: Բակտերիաների նման դրանք նույնական առաջացնում են կուտակումներ:

Կապտականաչ ջրիմուռները շատ բազմազան են: Դրանք չունեն ձևավորված կորիզ, սակայն ունեն բակտերիաներից ավելի բարդ կառուցվածք, պատված են լորձով, պարունակում են քլորոֆիլ, կարոտինիդներ և տարբեր այլ գունակներ: Դրանց շնորհիվ նրանք ունեն կապտականաչ գունավորում կամ վարդագույն են: Բջջի ներսում հայտնաբերվում են պահեստանյութեր:



Նկ. 103. Կապտականաչ ջրիմուռների կառուցվածքը:

Մարդու վարակիչ հիվանդությունների կանխարգելման մեջ կարևոր է, ինչպես գիտեք, պատվաստուկների (վակցին) ստեղծումը և դրանց կիրառումը: 1798 թ. անգլիացի բժիշկ Է. Զեները (նկ. 102) առաջին անգամ պատվաստման միջոցով կանխեց մարդու ծաղկի վիրուսային հիվանդության առաջացումը: Պատվաստուկների միջոցով հաջողվում է կանխել դիֆթերիան, խոլերան և այլ հիվանդություններ: Այդպիսի հիվանդությունների կանխարգելում ընդգրկում է նաև մի



Նկ. 104. Նոստոկ և սպիրուլինա:

Այս ջրիմուռների շատ տեսակներ ֆիքսում են մթնոլորտային ազոտը:

Կապտականաչ ջրիմուռները բազմանում են՝ երկու մասի կիսվելով: Դրանք առատորեն բազմանում են տարբեր օրգանական նյութերով աղտոտված ջրերում, ուստի դրանց քանակով կարելի է դատել միջավայրի աղտոտվածության աստիճանի մասին: Ընդունված է ասել, որ կապտականաչ ջրիմուռներով հարուստ ջրավազաններում ջուրը «ծաղկում» է: Կապտականաչ ջրիմուռներից թելանմանները բազմանում են թալումի հատվածներով:

Կապտականաչ ջրիմուռներն օգտագործվում են մարդու կողմից որպես պարարտանյութ, կերային և սննդային սպիտակուցների ստացնան համար: Դայտնի են նոստոկի, սպիրուլինայի և մի քանի այլ տեսակներ (Նկ. 104), որոնք օգտագործվում են սննդում:



Դարցեր կրկնության համար.

1. Ո՞րն է բակտերիաների նշանակությունը: Բակտերիաների օգտագործման ի՞նչ օրինակներ գիտեք:
2. Մարդու վարակիչ ի՞նչ բակտերիալ իիվանդություններ գիտեք: Ինչպես կարելի է կազմակերպել դրանց արդյունավետ կանխարգելումը:
3. Ի՞նչ գիտեք կապտականաչ ջրիմուռների մասին: Ի՞նչ նպատակներով են դրանք օգտագործվում մարդու կյանքում:
4. **Ի՞նչ են հակաբիոտիկներն, ինչպես բացատրել բակտերիաների կայունությունը որոշ հակաբիոտիկների նկատմամբ, ի՞նչ նոր հակաբիոտիկներ գիտեք:**

20. ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԲԶՁՈՒՄ: ՆՈՒԿԼԵԻՆԱԹԹՈՒՆԵՐԻ ՍԻՆԹԵԶԸ, ՏՐԱՆՍԿՐԻՊՑԻԱ

Բջջի ժառանգական տեղեկատվությունն, ինչպես գիտենք, պահպանվում է ԴՆԹ-ի մոլեկուլում նուկլեոտիդների հաջորդականության ձևով: ԴՆԹ-ի մոլեկուլում սպիտակուցի մեկ պոլիպեպտիդային շղթայի առաջնային

կառուցվածքի մասին տեղեկատվություն կրող հատվածը կոչվում է **գեն**: ԳԵՆը ժառանգական տեղեկատվության միավորն է: Մի քանի տարբեր պոլիխեպտիդային շղթաներից կազմված սպիտակուցի համար կան համապատասխան գեներ՝ այդ շղթաներից յուրաքանչյուրի համար առանձին: ԴՆԹ-ի մոլեկուլը բաղկացած է հարյուրավոր և հազարավոր գեներից:

ԴՆԹ-ում նույնականացնելու հաջորդականությունը գաղտնագրում է սպիտակուցի մոլեկուլի ամինաթթուների հաջորդականության մասին տեղեկատվությունը նույնականացնելով, երբ չորս տարբեր նույնականություններից կազմված այդ եռյակներից յուրաքանչյուրը կրում է տեղեկատվություն որևէ ամինաթթվի մասին: Չորս՝ **Ա, Ց, Թ և Ց** նույնականություններից երեքական համակցումով կարող է 64 եռյակ: Յաշվի առնենք այն, որ սպիտակուցների մեծ մասում կան 20 տարբեր տեսակի ամինաթթուներ, ուրեմն մի քանի եռյակներ կարող են գաղտնագրել միևնույն ամինաթթուն: Ընդ որում, մեկ ամինաթթուն կարող է գաղտնագրվել մինչև վեց տեսակի եռյակներով (**այսուսակ 1**): Նման եռյակներում մեկ նույնականությունից պատճենական փոփոխությունները չեն բերի համապատասխան ամինաթթվի փոխարինմանը: Սա մեծացնում է սպիտակուցի պոլիխեպտիդային շղթայում տվյալ ամինաթթվի ընդգրկման հուսալիությունը: ԴՆԹ-ի եռյակներից երեքը՝ **Ա-Թ-Թ-Ց, Ա-Թ-Ց-Ց և Ա-Ց-Թ-Ց** այդպիսի տեղեկատվություն չեն կրում, դրանք ազդարարում են սպիտակուցի պոլիխեպտիդային շղթայի սկիզբը կամ վերջը: Գենետիկական գաղտնագիրը կամ կոդը օժտված է որոշ հատկություններով, որոնցից նշեցինք ավելցուկայնությունն, այսինքն այն, որ միևնույն ամինաթթուն գաղտնագրվում է մեկից ավելի եռյակներով:

Այսուսակ 1.

Ամինաթթուները գաղտնագրող եռյակները ի-ԴՆԹ-ի մոլեկուլում:
Փակագծերում նշված են ԴՆԹ-ի համապատասխան (լրացնող՝ կոմլեմենտար) նույնականությունները:


Առաջին հիմք	Երկրորդ հիմք				Երրորդ հիմք
	ՈՒ(Ա)	Ց(Գ)	Ա(Թ)	Գ(Ց)	
ՈՒ(Ա)	ֆեն ֆեն լեյ լեյ	սեր սեր սեր սեր	թիր թիր -	ցիս ցիս -	ՈՒ(Ա) Ց(Գ) Ա(Թ) Գ(Ց)
	լեյ լեյ լեյ լեյ	պրո պրո պրո պրո	հիս հիս գլն գլն	արգ արգ արգ արգ	ՈՒ(Ա) Ց(Գ) Ա(Թ) Գ(Ց)
	իլե իլե իլե մեթ	տրե տրե տրե տրե	ասն ասն լիզ լիզ	սեր սեր արգ արգ	ՈՒ(Ա) Ց(Գ) Ա(Թ) Գ(Ց)
	վալ վալ վալ վալ	ալա ալա ալա ալա	ասպ ասպ գլու գլու	գլի գլի գլի գլի	ՈՒ(Ա) Ց(Գ) Ա(Թ) Գ(Ց)

ԳԼՈՒԽ 4. ԲՁՁԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՖՈԽՆԿՑԻԱՆԵՐԸ

Յաջորդ հատկությունն այն է, որ գենետիկական գաղտնագիրը միացանակ է և ունիվերսալ, այսինքն՝ համընդհանուր է բոլոր կենդանի օրգանզմների համար, քանի որ բոլոր օրգանիզմներում նույն եռյակները պայմանավորում են նույն ամինաթթուն: Յետաքրքիր է նաև այն, որ կոդը վերածածկվող չէ, այսինքն՝ յուրաքանչյուր նուկլեոտիդ կարող է լինել միայն մեկ որոշակի եռյակի կազմում: Միաժամանակ պետք է նշել նաև, որ գեների միջև կան «ընդհատումներ»:

Ժառանգական տեղեկատվությունն իրականացվում է տարրեր սպիտակուցների կենսասինթեզի միջոցով, որոնք ապահովում են կենսագործունեության բազմապիսի դրսևորումները: Նշենք, օրինակ, կանաչ բույսերում գունակներից քլորոֆիլի սինթեզը կատալիզային ֆունկցիա կատարող սպիտակուցների՝ ֆերմենտների մասնակցությամբ, կաթնասունների մոտ՝ շնչառության իրականացումը հեմոգլոբին սպիտակուցի միջոցով, մարդու աճ՝ սպիտակուցային բնույթի հորմոնների օգնությամբ և այլն: Սպիտակուցների կառուցվածքի մասին տեղեկատվությունը ԴՆԹ-ից փոխանցվում է ոիբոնուկլեինաթթուների միջոցով և կենսագործվում ոիբոսուններում:

ԴՆԹ-ի շղթաներից մեկի վրա սինթեզվում է ի-ՈՆԹ-ն, որում նուկլեոտիդային հաջորդականությունը ճշգրտորեն համապատասխանում է ԴՆԹ-ի տվյալ շղթայի որոշակի հատվածի՝ մեկ կամ մի քանի գեների նուկլեոտիդային հաջորդականությանը: Դա ապահովվում է համապատասխան նուկլեոտիդների միջև լրացչության սկզբունքի համաձայն: Այս գործընթացի արդյունքում ԴՆԹ-ում նուկլեոտիդային հաջորդականության լեզվով գաղտնագրված տեղեկատվությունը նույն հերթականությամբ արտագրվում է ի-ՈՆԹ-ի վրա (**նկ. 105**), այս դեպքում եռյակներում Ա նուկլեոտիդին համապատասխանում



Նկ. 105. ԴՆԹ-ի շղթաներից մեկի վրա ի-ՈՆԹ-ի սինթեզի գժապատկերը:

Է ՈՒ նուկլեոտիդը, Գ-ին՝ 8-ն, Թ-ին՝ Ա-ն, իսկ Ց-ին՝ Գ-ն (**տե՛ս աղյուսակ 1**):

Ի-ՈՆԹ-ի կենսասինթեզի սկիզբը պայմանավորված է ՂՆԹ-ուն նուկլեոտիդների հաջորդականությամբ և որոշվում է որոշակի սպիտակուցներով:

Ի-ՈՆԹ-ի կենսասինթեզին մասնակցում են տարբեր ֆերմենտներ: Դրանցից է ՂՆԹ-պոլիմերազը (**նկ. 105**): Այս ֆերմենտն ապահովում է ի-ՈՆԹ-ի սինթեզվող շղթայի երկարացումը և տարբեր գործոնների մասնակցությամբ շղթայի սինթեզի ավարտը:

Ի-ՈՆԹ-ի կենսասինթեզը կոչվում է **տրանսկրիպցիա** (արտագրում): Սինթեզված ի-ՈՆԹ-ն անցնում է դեպի ռիբոսոմներ:



Դարցեր կրկնության համար.

1. Որտե՞ղ է պահպանվում բջջի ժառանգական տեղեկատվությունն, ի՞նչ ձևով:
2. Սպիտակուցներում ամինաթթուների հաջորդականության մասին
տեղեկատվությունն ինչպե՞ս է գաղտնագրված նուկլեինաթթուների մոլեկուլներում:
3. Ի՞նչ հատկություններ ունի գենետիկական գաղտնագիրը:
4. Ինչպե՞ս է իրագործվում ժառանգական տեղեկատվությունը բջջում:
5. Նկարագրեք ի-ՈՆԹ-ի կենսասինթեզը՝ տրանսկրիպցիան:

Առաջադրանք.

Սպիտակուցում կա մի հատված՝ կազմված վալինի-լեյցինի-հիստիդինի-հիստիդինի-արգինինի-թրիոզինի մնացորդներից: Օգտվելով գենետիկական գաղտնագրի մասին աղյուսակից (աղյուսակ 1)՝ տվեք այդ հատվածը գաղտնագրող ՂՆԹ-ի մոլեկուլի կառուցվածքը:

21. ՄՊԻՏԱԿՈՒՑԻ ԿԵՆՍԱՍԻՆԹԵԶԸ: ՏՐԱՆՍԼՅԱՑԻԱ


Նշենք, որ ռիբոսումում ամինաթթուների միմյանց միացումը որոշակի հաջորդականությամբ և պոլիպեպտիդային շղթայի սինթեզը կատարվում են ի-ՈՆԹ-ուն եռյակների հաջորդականության համապատասխան: Ամինաթթուների ճգրիտ համապատասխանությունը ի-ՈՆԹ-ի համապատասխան եռյակներին ապահովում են փ-ՈՆԹ-ի մոլեկուլները: Յուրաքանչյուր ամինաթթու ունի իր համապատասխան փ-ՈՆԹ-ն (**տե՛ս նկ. 64**), որի կառուցվածքում նուկլեոտիդային եռյակներից մեկը համապատասխանում է ի-ՈՆԹ-ի որոշակի եռյակին: Այսպես, օրինակ՝ ալանին ամինաթթվի փ-ՈՆԹ-ն ունի 8-Գ-Ա եռյակ, որին ի-ՈՆԹ-ուն լրացնում է Գ-8-ՈՒ եռյակը: Կամ էլ արգինինի փ-ՈՆԹ-ն ունի Գ-8-Ա եռյակը, որին ի-ՈՆԹ-ուն լրացնում է 8-Գ-ՈՒ եռյակը: Բացի այդ, յուրաքանչյուր ամինաթթվին համապատասխանում է իր ֆերմենտը, որը նրան կապում է համապատասխան փ-ՈՆԹ-ին:

ԳԼՈՒԽ 4. ԲՁՁԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՖՈԽՆԿՑԻԱՆԵՐԸ

Ոիբոսումը փոխազդում է ի-ՈՆԹ-ի հետ՝ բարձրանում նրա վրա և սողալով շարժվում դեպի այդ նուկլեինաթթվի մյուս ծայրը: Փ-ՈՆԹ-ն կապում է համապատասխան ամինաթթուն և հասցնում այն ռիբոսոմին (**նկ. 106**): Հատ սպիտակուցների դեպքում սինթեզը սկսվում է մեթիոնին ամինաթթվից, որը փոխազդում է համապատասխան փ-ՈՆԹ-ի հետ մեթիոնիլ-փ-ՈՆԹ-սինթազ ֆերմենտի մասնակցությամբ. հետո մեթիոնինին միանում է այլ ամինաթթու: Սպիտակուցի սինթեզի սկզբնավորող գործընթացում էական է ռիբոսոմի դերը, որն իր հերթին «ճանաչում է» համապատասխան եռյակը ի-ՈՆԹ-ում: Ոիբոսոմի գործառական կենտրոնում նախորդ փ-ՈՆԹ-ի կողմից բերված ամինաթթվի և հաջորդ փ-ՈՆԹ-ի կողմից բերված ամինաթթվի միջև առաջանում է պետիդային կապ. այսպես շարունակվում է պոլիպեպտիդային շղթայի երկարացումը: Դրան մասնակցում են որոշակի ֆերմենտներ, ծախսվում է էներգիա: Կան նաև այդ գործընթացը կարգավորող բազմաթիվ գործոններ: Ոիբոսոմի գործառական կենտրոնում միաժամանակ կարող են գտնվել փ-ՈՆԹ-ի երկու մոլեկուլներ, որոնք միացած են համապատասխան ամինաթթուների հետ, իսկ գործառական կենտրոնում գտնվող ի-ՈՆԹ-ի հատվածն ընդգրկում է նուկլեոտիդների երկու եռյակ:

Սինթեզի ավարտից հետո ռիբոսոմը պոլիպեպտիդային շղթայի հետ միասին իջնում է ի-ՈՆԹ-ից և շատ դեպքերում տրոհվում ենթամիավորների:

Հետաքրքիր է, որ բակտերիաներում պոլիպեպտիդային շղթայի սինթեզը ռիբոսոմի վրա միշտ սկսվում է որոշակի ծևափոխված ամինաթթվից, որը հետագայում անջատվում է սինթեզված սպիտակուցից:



Նկ. 106. Ոիբոսոմներում ի-ՈՆԹ-ի հետ փ-ՈՆԹ-ների փոխազդեցության և ամինաթթուների միմյանց միացման պատկերը:


Ոիբոսոնմի վրա պոլիպեպտիդային շղթայի սինթեզը լավ կարգավորված գործընթաց է և իրականանում է շատ արագ. մի քանի վարկյանում առաջանում է հարյուրավոր ամինաթթուներից կազմված պոլիպեպտիդային շղթա:

Ի-ՈՆԹ-ի վրա պոլիպեպտիդային շղթայի սինթեզի գործընթացը կոչվում է **սրանսյացիա** (թարգմանություն, քանի որ ի-ՈՆԹ-ի նուկլեոտիդային «լեզվով» գրված տեղեկատվությունը թարգմանվում է «պոլիպեպտիդային լեզվի»): Ի-ՈՆԹ-ն փաստորեն կատարում է միջնորդի դեր ԴՆԹ-ից սինթեզվող սպիտակուցին տեղեկատվության փոխանցման գործում:

Սպիտակուցին նկարագրված կենսասինթեզը կարելի է անվանել մատրիցային, քանի որ սինթեզված մոլեկուլն իրենից նուկլեոտիդային է մատրիցայի (կաղապար) պատճենը: Բջջում մատրիցայի դերը կատարում են նուկլեինաթթուների մոլեկուլները: Նուկլեոտիդները կամ ամինաթթուները համապատասխան մատրիցայի վրա դասավորվում և ֆիքսվում են խիստ որոշակի կարգով: Այնուհետև տեղի է ունենում դրանց միացումը՝ նուկլեինաթթվի կամ սպիտակուցի պոլիմերային շղթայի առաջացումը, որից հետո պոլիմերն իջնում է մատրիցայից:

Սպիտակուցների կենսասինթեզը կարգավորվում է տարբեր գործոններով, որոնց շնորհիկ բջիջներում իրագործվում է ժառանգական տեղեկատվության տվյալ բջիջներին բնորոշ մասը: Այդպիսի կարգավորումը կարող է իրականացվել գեների միմյանց հետ բարդ փոխազդեցության արդյունքում, ինչպես տրանսկրիպցիայի, այնպես էլ տրանսլյացիայի ընթացքում հատուկ սպիտակուցների մասնակցությամբ: Ամեն մի բջջում սինթեզվում են տվյալ բջջին բնորոշ սպիտակուցներ:

Նշենք, որ 20-րդ դ. իրականացվեց սպիտակուցի սինթեզ արհեստական ճանապարհով: Դա ինսուլինի (**նկ. 107**) սինթեզն էր: Այս սպիտակուցը, որը կարգավորում է արյան մեջ և բջիջներում շաքարի մակարդակը, մեծ պահան-



Նկ. 107. Ինսուլին սպիտակուցի մոդելը և նրա արտադրությունը:

ԳԼՈՒԽ 4. ԲՅԱՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՖՈԽՆԿՑԻԱՆԵՐԸ

Զարկ ունի շաքարախտով հիվանդների շրջանում: Ներկայումս ինսուլ-լինի սինթեզն իրականացվում է բակտերիաներում մեծ ճգրտությամբ գենային ծարտարագիտության (հնծեներիա) մեթոդական մոտեցումների կիրառմանը: Նույն ճանապարհով են ստանում ինտերֆերոնը, սոմատոտրոպինը:



Դարցեր կրկնության համար.

1. Սկարագրեք ի-Ռևժ-ի կենսասինթեզը՝ տրամսկրիպցիան:
2. Ինչպե՞ս է տեղի ունենում սպիտակուցմերի կենսասինթեզը ռիբոսոմում՝ տրամսլյացիան: Ինչպիսի՞ դեր ունեն փ-Ռևժ-ները:
3. Քանի՞ ամինաթթուներ կարող են միաժամանակ գտնվել ռիբոսոմի գործառական կենտրոնում:
4. Ի՞նչ գիտեք սպիտակուցմերի կենսասինթեզի կարգավորման մասին:
5. Դնարավո՞ր է սպիտակուցմերի սինթեզն արհեստական ճանապարհով:

22. ԿՅԱՆՔԻ ՈՉ ԲՃՋԱՅԻՆ ԶԵՎԵՐ՝ ՎԻՐՈՒՍՆԵՐ

Վիրուսներ: Բնության մեջ գոյություն ունի կենդանի օրգանիզմներին բնորոշ օրգանական նյութերից կազմված կառուցների մի մեծ խումբ, որոնք կոչվում են **վիրուսներ**: Դրանք չունեն բջջային կառուցվածք, բջջներին բնորոշ բաղադրամասեր և օրգանոիդներ ու ներկայացնում են կյանքի ոչ բջջային ձևերը: Վիրուսներից առաջինը՝ ծխախոտի խճանկարի վիրուսը հայտնաբերել է ռուս գիտնական **Դ. Ի. Իվանովսկին** 19-րդ դ. վերջում (**նկ. 108**): Վիրուսներ անվանումը տվել է հոլանդացի բուսաբան և մանուկաբան **Մ. Բեյերինկը** (**նկ. 109**): Վիրուսների ուսումնասիրմամբ զբաղվում են վիրուսաբանությունը և մոլեկուլային կենսաբանությունը:

Վիրուսները շատ մանր են, ունեն պարզ կառուցվածք: Նրանց բնորոշ է բջջներում բազմանալը:

Բնության մեջ վիրուսները տարածվում են տարբեր փոխադրիչների միջոցով, տարերայնորեն և մեխանիկորեն: Բնակվելով բակտերիաների, սնկերի, բույսերի և կենդանիների բջջներում՝ վիրուսները բազմաթիվ և շատ վտանգավոր հիվանդություններ են հարուցում: Բույսերի վիրուսային հիվանդություններից հայտնի է ծխախոտի, ոլորի և այլ մշակովի բույսերի խճանկարային (նոզահկ) հիվանդությունը (**նկ. 110**): Վիրուսները քայլայում են ախտահարված բույսերի քլորոպլաստները, և տերևների ախտահարված մասերը գունազրկվում են: Մարդու վիրուսային հիվանդություններից են գրիպը, կարմրախտը,



Նկ. 108. Դ.Ի. Իվանովսկի (1864-1920թթ.):



Նկ. 109. Մ. Բեյերինկ (1851-1931թթ.):

ծաղիկը, խոզուկը, հեպատիտը, պոլիոմիելիտը, էնցեֆալիտը, ձեռքբերովի ինունային անբավարարությունը և այլն:

Վիրուսները ոչ միայն տարբեր հիվանդությունների հարուցիչներ են, այլ նաև գենետիկական տեղեկատվության փոխադրիչներ: Այդպիսի փոխադրումը կարող է կատարվել իրարից շատ տարբեր բջիջների և օրգանիզմների միջև: Իսկ այդ տեղեկատվությունը կարող է բերել բջիջների և օրգանիզմների փոփոխականության: Վիրուսների այս հատկությունն ունի գործնական կարևոր նշանակություն:

Վիրուսների կառուցվածքը և փոխազդեցությունը բջիջի հետ: Վիրուսային մասնիկը կամ **վիրիոնը** կազմված է ԴՆԹ-ից կամ ՌՆԹ-ից, որը պատված է սպիտակուցային շերտով (**նկ. 110**): Վիրուսային նուկլեինաթրուները կարող են լինել գծային կամ օղակաձև, միաշղթա կամ երկշղթա, տարբերվել իրենց երկարությամբ: Սպիտակուցային շերտը պաշտպանում է վիրուսը նուկլեինաթրուները ճեղքող տարբեր ֆերմենտներից, ինչպես նաև ուլտրամանուշակագույն ճառագայթման կործանարար ներգործությունից և որոշում է վիրուսի հակագենային հատկությունները: Վիրուսները փաստորեն կարելի է դիտարկել որպես «ժառանգական տարրեր»:



Նկ. 110. Ծխախոտի խճանկարի վիրուսային հիվանդության պատկերը:
Վիրուսային մասնիկի կառուցվածքը:

Կան նաև բարդ վիրուսային մասնիկներ, որոնք պարունակում են նաև ածխաջրերի հետ միացած սպիտակուցներ, ֆերմենտներ և շրջապատված են լիակատային թաղանթով: Դրանցից են, օրինակ, բշտիկավոր ստոմատիտի (բերանի խոռոչի բորբոքում), որոշ տեսակների քաղցկեղի կամ մարդու ինունային անբավարարության վիրուսները: Որոշ վիրուսների արտաքին շերտում հայտնաբերվում են նաև ածխաջրեր: Այդպիսիներից են գրիպի և հերպեսի վիրուսները: Սակայն վիրուսներում քացակայում է սպիտակուցների սինթեզման համակարգը:

Վիրուսները շատ փոփոխական են, նրանց մոտ հաճախ դրսնորվում են նոր հատկություններ:

Վիրուսների ծագումը պարզ չէ, վիճարկելի է: Ենթադրվում է, որ վիրուսները էվոլյուցիայի ընթացքում մանրէների դեգեներացիայի արդյունք են, պայմանավորված մակարույժ կենսակերպին անցնելու հետ: Կամ էլ հնարավոր է, որ վիրուսները բջիջների օրգանիզմների միտոքոնդրիումների, քլորոպլաստների մասեր են:


Ծխախոտի խճանկարային հիվանդություն հարուցող վիրուսի մասնիկն, օրինակ, ձողածն է, ննան սնամեջ գլանի: Այդ գլանի պատը կազմված է սպիտակուցի մոլեկուլներից, իսկ նրա ներսում տեղավորված է պարուրածն ոլորված ՌՆԹ-ի մեկ մոլեկուլը: Ծխախոտի տերևներում վիրուսային մասնիկներն իրար միանալով կազմում են կույտեր, որոնք երևում են լուսային մանրադիտակով (նկ. 110):

Մեկ այլ՝ ծխախոտի նեկրոզի վիրուսը ներկայացնում է գնդիկային տեսքով կառույց: Փոխազդելով միմյանց հետ, այդ վիրուսները ննան են բյուրեղային համալիրների:

Վիրուսները տարածված են ամենուրեք, սակայն կենսագործում են և բազմանում միայն կենդանի բջիջներում: Նրանք պինցիտոզի կամ այլ ճանապարհներով թափանցում են դեպի բջիջ բջջաբարդների վնասվածքների միջով ու բազմանում այդ բջիջ ցիտոպլազմայում կամ կորիզում: Վիրուսները բջիջ կարող են դուրս գալ բջջի վնասնան կամ բջջի մահանալու դեպքում: Կան բջջի քրոմոսոմում վերակառուցվող վիրուսներ, որոնք փոխանցվում են տվյալ բջջի բաժանման արդյունքում առաջացող նոր բջիջներին:

Բջջում մեկ վիրուսի առկայությունը հաճախ պաշտպանում է բջջը մեկ այլ վիրուսի թափանցումից: Այս երևույթը կոչվում է **ինտերֆերենցիա** և պայմանավորված է բջջում ինտերֆերոն սպիտակուցի սինթեզմամբ, որը հենց պաշտպանական դեր է կատարում:

Բջջի քրոմոսոմային ԴՆԹ-ում վերակառուցվող վիրուսային ԴՆԹ-ն անվանում են **նախավիրուս** (նկ. 111), իսկ որա գործընթացը՝ կոչվում է **ինտեգրում**: Աներիկացի վիրուսաբաններ **Դ. Բալթիմորը** (նկ. 112) և **Գ. Թեմինը** (նկ. 113) բացահայտել են, որ այդ վիրուսային ԴՆԹ-ն կարող է սինթեզվել վիրուսային ՌՆԹ-ի վրա որոշակի ֆերմենտների առկայության դեպքում: Շրջակա միջավայրի շատ գործոններ, օրինակ՝ ռենտգենյան ճառագայթները, որոշ քիմիական նյութեր կարող են խթանել այդ նախավիրուսը՝ բերելով բջջի ձևափոխման: Դրա արդյունքում բջիջները սկսում են արագ կիսվել, կորցնում են իրենց որոշակի հատկությունները և ֆունկցիաները, իսկ առանձին դեպքերում՝ սկսում են նաև տեղաշարժվել օրգանիզմում և դրա տարբեր մասերում առաջացնել նոր բջիջներ:



Նկ. 111. Վիրուսների բյուրեղների կառուցվածքը:
Նախավիրուսը:



Նկ. 112. Ռ. Գալլո:



Նկ. 113. Մ. Թեմին:


ցի վիրուսաբան **L. Մոնտանյեն** (**նկ. 114**) և **Ռ. Գալլոն** 1983 թ. (**նկ. 115**): Յետագայում **L. Մոնտանյեն** արժանացավ Նորելյան մրցանակի: Այս վիրուսը շատ փոքր գնդաձև մասնիկ է: Այն կազմված է ՌՆԹ-ից և հազարավոր սպիտակուցներից, այդ թվում ֆերմենտներից, որոնք պատված են լիպիդներից և սպիտակուցներից կազմված թաղանթով (**նկ. 116**):



Նկ. 114. L. Մոնտանյեն:



Նկ. 115. Ռ. Գալլո:



Նկ. 116. Մարդու ԶԻՎ-ի վիրուսը:

Բջիջներից դուրս վիրուսներն կենսագործել չեն կարող, և դրանցից շատերը շրջակա միջավայրում ունեն բյուրեղների ձև:

Վիրուսները օգտագործվում են գեների տեղափոխման համար գենային ճարտարագիտության մեջ:

ԶԻՎ-ի վիրուսը և վարակի կանխարգելումը:

Զեօքքերովի հմունային անթավարարության համախտանիշի՝ ԶԻՎ-ի վիրուսը հայտնաբերել են ֆրանսիական ամերիկացի ուռուցքաբան **Ռ. Գալլոն** (**նկ. 115**): Յետագայում **L. Մոնտանյեն** արժանացավ Նորելյան մրցանակի: Այս վիրուսը գնդաձև մասնիկ է: Այն կազմված է ՌՆԹ-ից և հազարավոր սպիտակուցներից, այդ թվում ֆերմենտներից, որոնք պատված են լիպիդներից և սպիտակուցներից կազմված թաղանթով (**նկ. 116**):

ԶԻՎ-ի վիրուսը փոխագործվում է մարդու հմունային համակարգի կարևոր բջիջների՝ որոշակի լիմֆոցիտների հետ, ներդրվում դրանց մեջ՝ վնասելով և քայլայելով դրանք: Այդպիսի լիմֆոցիտներն աստիճանաբար մահանում են, որի արդյունքում ենապես նվազում են հմունային համակարգի պաշտպանական հատկությունները: ԶԻՎ-ի վիրուսը վնասում է նաև այլ բջիջներ: Մարդու ԶԻՎ-ը զարգանում է տարիների ընթացքում: Մարդուց մարդ այդ վիրուսը փոխանցվում է սեռական ճանապարհով, վարակված արյան միջոցով, մորից պտղին կամ նորածնին: Օրգանիզմից դուրս վիրուսն անկայուն է, բարձր ջերմաստիճանում այն քայլայվում է: ԶԻՎ-ի բուժումը շատ բարդ է:

ԳԼՈՒԽ 4. ԲՁՁԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՖՈԽՆԿՑԻԱՆԵՐԸ

Բակտերիաֆազեր: Դրանք այնպիսի վիրուսներ են, որոնք բնակվում են և բազմանում բակտերիաների թջջներում: Դրանք կոչվում են **բակտերիաֆազեր** կամ ուղղակի **ֆազեր**: Բակտերիաֆազերը բացահայտել է կանադացի մանրէաբան Ֆ. դե Էրելը 20-րդ դ. սկզբում (**նկ. 117**): Դրանց մի մասը լիովին քայթայում է բակտերիաների թջջները և այդ պատճառով կարող է օգտագործվել տարբեր բակտերիալ հիվանդությունների, օրինակ, դիֆթերիայի, խոլերայի, որովայնային տիֆի բուժման նպատակով:


Աղիքային ցուափիկի թջջներում բնակվող T4 բակտերիաֆազն իր ձևով շերեփուկ է հիշեցնում (**նկ. 118**):

Նրա մարմինը կազմված է գլխիկից, պոչիկից և մի քանի պոչային ելուններից: Գլխիկի ներսում գտնվում է ԴՆԹ-ի մեկ մոլեկուլը, այն ծածկված է սպիտակուցային շերտով, իսկ պոչիկը կազմված է սպիտակուցներից և ներսում ունի խուղակ: Այդ բակտերիաֆազի ԴՆԹ-ը կը դրում է ավելի քան 150 տարբեր սպիտակուցների մասին տեղեկատվություն: Դրանց մի մասը մասնակցում է այդ ԴՆԹ-ի կրկնապատկմանը:


Բակտերիայի հետ բակտերիաֆազերի փոխազդեցությունը տարբերվում է այլ թջջների հետ վիրուսների փոխազդումից: T4 բակտերիաֆազը՝ փոխազդելով աղիքային ցուափիկի բջջաթաղանթի հետ՝ չի կարող ամբողջությամբ թափանցել թջջ (նկ. 119):



Նկ. 117. Ֆ. դե Էրել
(1873-1949թ.):



Նկ. 118. T4 բակտերիաֆազի կառուցվածքը:



Նկ. 119. Բակտերիայի հետ *T4* բակտերիաֆագի փոխազդեցությունը:

Սկզբում ամրանալով ցուպիկի մակերևույթին նա այդ տեղում «տարալուծում է» բակտերիայի բջջապատը և պլազմային թաղանթը: Այնուհետև բակտերիաֆագի λ լիստը ոչ նրա սպիտակուցները, ներարկվում է բջջի մեջ: Ապա ցուպիկը սկսում է սինթեզել ոչ թե իր սեփական λ լիստ-ն, այլ բակտերիաֆագի ժառանգական տեղեկատվությունը՝ λ լիստ-ն, իսկ այնուհետև նաև այդ λ լիստ-ում գաղտնագրված սպիտակուցները: Բակտերիաֆագը «բազմանում է», իսկ բակտերիան, ի վերջո, ոչնչանում:

Կան դեպքեր, երբ բակտերիաֆագի λ լիստ-ն երկար ժամանակ մնում է բջջում և դրա կիսվելուց հետո անցնում նոր բջիջներ: Նման դեպքում բակտերիաֆագի λ լիստ-ում գաղտնագրված և բջջում սինթեզվող սպիտակուցները որոշակի դեր են խաղում բակտերիաներում՝ նպաստելով դրանց տարբեր միջավայրերին հարմարվելուն:

Դարցեր կրկնության համար.



1. Ի՞նչո՞ւ են վիրուսները կյանքի ոչ բջջային ձևեր համարվում:
2. Ի՞նչ նշանակություն ունեն վիրուսները: Վիրուսային ինչպիսի՝ հիվանդություններ գիտեք:
3. Ի՞նչ կառուցվածք ունեն վիրուսները:
4. Ի՞նչ կարող եք ասել վիրուսների ծագման մասին:
5. Նկարագրեք ծխախոտի խճանկարային հիվանդություն հարուցող վիրուսը:
6. Նկարագրեք վիրուսների փոխազդեցությունը կենդանի բջջի հետ:
7. Ի՞նչպե՞ս են վիրուսները բազմանում: Կարո՞՞ղ են վիրուսները մնալ բջջում:
8. Ի՞նչ գիտեք ԶԻԱՆ-ի վիրուսի մասին:
9. Ի՞նչ են բակտերիաֆագերը: Ի՞նչո՞վ են դրանք տարբերվում վիրուսներից:
10. Նկարագրեք բակտերիաֆագի փոխազդեցությունը բակտերիայի հետ:
11. Ի՞նչ է նախավիրուսը:

I ԵՎ II ԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

Կենդանի օրգանիզմների ուսումնասիրման կարևոր նվաճումներից է նրանց կառուցվածքի, կենսագործունեության, բազմացման և զարգացման միավորի՝ բջի հայտնաբերումը և հետագա ուսումնասիրումը: Բջի մասին ձևավորված բջային տեսությունը ներառում է հիմնադրույթներ, որոնց հետ ծանոթ եք. դրանց նշանակությունը մեր օրերում շատ մեծ է:

Բոլոր կենդանի օրգանիզմների կազմի մեջ մտնում է բիմիական տարրերի մեծ մասը: Սակայն նրանցից չորսը՝ թթվածինն, ածխածինը, ջրածինը և ազոտը կազմում են բջի պարունակության գոերե 98 %-ը: Դրանք և որոշակի այլ տարրեր կենսածին դեր են կատարում: Մյուս տարրերը բիչ բանակով հանդիպելով բջիջներում հաճախ ունեն կարևոր նշանակություն նրա կենսագործունեության համար:

Զուրու (H₂O) կենդանի օրգանիզմների, նրանց բջիջների պարունակության շատ բանակով և տարածված անօրգանական նյութն է: Զուրու լուծիչ է, նա այն միջավայրն է, որում և հաճախ ջրի մասնակցությամբ իրականանում են նյութափոխանակության բազմաթիվ գործընթացներ:

Ածխաջրերը մեծ կամ փոքր օրգանական մոլեկուլներ են, որոնք հիմնականում կատարում են կառուցողական և էներգիական ֆունկցիաներ: Ածխաջրերից բաղանքանյութը (ցելյուլոզ) կազմում է բուսական և այլ բջիջների բջապատճ: Այն ունի մեծ դեր նարդու կյանքում՝ օգտագործվելով շատ նյութերի ստացման համար:

Լիպիդները միավորում են ծարպերը և ծարպաննան միացությունները: Նրանք բոլոր բջիջների բաղադրամասերից մեկի՝ բջջային բաղանքների հիմնական մասն են, լիպիդները երկշերտի ձևով կազմում են բջջային բաղանքների կառուցվածքի հիմքը: Ծարպերի բազմաթիվ ֆունկցիաներից լավ հայտնի է նաև էներգիականը:

Բջջի օրգանական մակրոմոլեկուլներից են սպիտակուցմները և նուկ-լեինաթթուները: Դրանք ունեն առավել մեծ չափսեր և առանձնանում են իրենց կառուցվածքում որոշակի և տարրեր կառուցմների կրկնությամբ:

Սպիտակուցմները բարդ կազմավորված միացություններ են՝ երրորդային կամ չորրորդային մակարդակների կառուցվածքներով: Սպիտակուցմների բազմաթիվ ֆունկցիաներից բացառիկ է կատալիզային ֆունկցիան: Դայտնի են հազարավոր ֆերմենտային սպիտակուցմներ, որոնց կառուցվածքում առկա է ակտիվ կենտրոնը (կամ կենտրոնները): Ակտիվ կենտրոնում է իրականանում ֆերմենտների կատալիզային ֆունկցիան: Բազմաթիվ ֆերմենտներ օգտագործվում են մարդու կյանքում: Շատ սպիտակուցմներ սինթեզվել են արհեստական պայմաններում:

Նուկլեինաթթուներից ԴՆԹ-ն ժառանգական տեղեկատվության կրողն է: Կենդանի օրգանիզմի հասկությունների և հատկանիշների մասին ժառանգական տեղեկատվությունը ԴՆԹ-ի և Ի-ՈՆԹ-ի մոլեկուլներում գաղտնագրված է նուկլեոտիդների հաջորդականության ձևով: Ինքը՝ գենետիկական գաղտնագիրն ունի առանձնահատուկ հատկություններ: Ժառանգական տեղեկատվությունը փոխանցվում է սերնդեսերունդ և տարբեր տեսակի





Ուժ-ների մասնակցությամբ իրագործվում է ռիբոսոմների վրա սպիտակուցների կենսասինթեզի գործընթացում: Դամ-ի առանձնահատուկ երկշղթա կառուցվածքն ապահովում է ժառանգական տեղեկատվության կայունությունը և նրա իրականացման հուսալիությունը: Այդ նույն եինաքը կառուցվածքի մասին մոդելը խթան է մոլեկուլարքջային կենսաբանության զարգացման, ինչպես նաև կիրառական կենսաբանության հիմնահարցերի նոր լուծումների մշակման համար:

Բջջում էներգիայի հիմնական աղբյուրներից է օրգանական միացություն ԱԵՖ-ը. դրա զգալի քանակի սինթեզը թաղանքներում գուգորդվում է նյութերի օքսիդացման հետ:

Բջջի կառուցվածքում տարբերում են հետևյալ բաղադրամասերը՝ բջջաբաղանք, ցիտոպլազմա և ժառանգականության նյութ:

Բջջաբաղանքի լիպիդներից և սպիտակուցներից կազմված կառուցվածքի հեղուկախճանկարային մոդելն էական նշանակություն ունեցավ նրանց հատկությունների և դերի ուսումնասիրման հարցում: Պլազմային թաղանքը մեկուսացնում է բջջը շրջակա միջավայրից և կատարում է բազմապիսի այլ ֆունկցիաներ:

Ցիտոպլազման բջջի կիսահեղուկ ներքին միջավայրն է որոշակի ռեակցիայով: Բջջում կան առանձին ֆունկցիաներ կատարող շատ կառուցներ՝ օրգանիզմներ, որոնք ցիտոպլազմայի միջոցով փոխազդում են միմյանց հետ: Նախակորիզավոր բջջներում դրանք ռիբոսոմներն են, կան շարժման օրգանիզմներ: Կորիզավոր բջջների օրգանիզմներից միտոքոնդրիումների և քլորոպլաստների առանձնահատկությունն է ԴՆԹ-ի, տարբեր տեսակի Ուժ-ների, ֆերմենտների և ռիբոսոմների առկայությունը:

Ժառանգական բջջի նախակորիզավոր բջջներում ներկայացված է ԴՆԹ-ի մեկ օղակածև մոլեկուլով, իսկ կորիզավոր բջջներում, որոնցից են բուսական, սնկային և կենդանական բջջները՝ բջջակորիզով: Սա իր հերթին տարբեր բաղադրամասերից կազմված կառուցյալ է: ԴՆԹ-ի մոլեկուլները կազմում են քրոնոստմներ: ԴՆԹ-ի հաշվին բջջակորիզը կատարում է շատ կարևոր ֆունկցիաներ: Բջջակորիզի բացակայությունը սահմանափակում է կորիզավոր բջջի կենսունակությունը:

Նախակորիզավոր բջջներ են բակտերիաները և կապտականաչ ջրիմուները, որոնք ունեն հարաբերանակորեն պարզ կառուցվածք: Նրանց դերը շատ մեծ է մարդու կյանքում, հատկապես կենսատեխնոլոգիայի զարգացման մեջ: Շատ բակտերիաներ առաջացնում են մարդու և կենդանի այլ օրգանիզմների տարբեր հիվանդություններ և կարևոր է ախտածին բակտերիաների դեմ պայքարը՝ համալիր ծևով և լավ մշակված միջոցառումների շնորհիկ:

Վիրուսները կյանքի ոչ բջջային ձևեր են, որոնք իրենց կազմում ունեն ԴՆԹ կամ ՌՆԹ: Վիրուսները շատ փոփոխական են: Թափանցելով բջջի մեջ՝ նրանք կարող են փոփոխել բջջի ժառանգական հատկանիշները: Վիրուսներն օգտագործվում են գենային ճարտարագիտության մեջ գեների տեղափոխման համար: Շատ վիրուսներ առաջացնում են մարդու և կենդանի այլ օրգանիզմների տարբեր հիվանդություններ: Բակտերիաներում ապրող վիրուսները բակտերիաֆագերն են:

ԲԱԺԻՆ III. ՕՐԳԱՆԻԶՄ

ԳԼՈՒԽ 5. ՆՅՈՒԹԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ԲՁՋՈՒՄ

23. ՆՅՈՒԹԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՁՋՈՒՄ: ԱՎՏՈՏՐՈՒՑ ԵՎ ԴԵՏԵՐՈՏՐՈՒՑ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ

Յուրաքանչյուր կենդանի օրգանիզմ, ինչպես նաև առանձին բջիջ, իրենից ներկայացնում է բարդ, կազմավորված բաց համակարգ, որն արտաքին միջավայրի հետ գտնվում է նյութերի, էներգիայի և տեղեկատվության փոխանակության մեջ։ Շրջապատող միջավայրից նյութերն անընդհատ թափանցում են բջիջներ, որտեղ դրանք ենթարկվում են տարրեր փոխարկումների, որոնց հետևանքով սինթեզվում են բջիջներին անհրաժեշտ նյութեր, իսկ նյութափոխանակության ոչ պիտանի արգասիքները դուրս են բերվում բջիջներից։

Բջջում ընթացող ռեակցիաները կարելի են բաժանել երկու խմբի։ Ռեակցիաների առաջին խումբը նպատակառուղղված է բջիջն էներգիայով ապահովելուն։ Սրանք ճեղքավորման ռեակցիաներ են, որոնց ամբողջությունը կազմում է բջջի էներգիական փոխանակությունը կամ **կատարուիզմը** (հուն. *katabole* – ներքև նետում, ճեղքում)։ Այս ռեակցիաների արդյունքում խոշոր նոլեկուլները ճեղքվում են ավելի փոքր և պարզ նոլեկուլների, ինչն ուղեկցվում է էներգիայի անջատմամբ։ Այդ էներգիան բջիջն օգտագործում է իր կենսագործունեության տարրեր գործընթացների իրականացման համար (շարժում, նյութերի կենսասինթեզ, բջջի բաժանում և այլն), և մի ձևով այն կարող է ձևափոխվել մեկ այլ ձևի։

Ռեակցիաների երկրորդ խումբը նպատակառուղղված է բջջի կառուցվածքային բաղադրամասերով ապահովմանը, որոնք անհրաժեշտ են բջջի աճի, նորոգման, նոր պայմաններին հարմարվելու համար։ Դրանք սինթեզի ռեակցիաներն են, որոնց ամբողջությունը կոչվում է **ալլաստիկ փոխանակություն** (հուն. *ալլաստոս-ծեփել, քանդակել*) կամ **անարուիզմ** (հուն. *anabole* – վերելք, բարձրացում)։ Պլաստիկ փոխանակության արդյունքում սինթեզվում են բջջի կառուցվածքային բաղադրամասերը, դրանց թվում՝ ածխաջրեր, լիպիդներ, սպիտակուցներ, նուկլեինաթթուներ և այլն, որոնք օգտագործվում

Են ինչպես բջջի աճի և նորոգման, այնպես էլ կենսագործունեության ապահովման համար: Պլաստիկ փոխանակության ռեակցիաներն ընթանում են ինչպես երիտասարդ, այնպես էլ աճը և զարգացումը ավարտած բջիջներում: Օրինակ՝ սպիտակուցների «կյանքի տևողությունը» մի քանի ժամից մինչև մի քանի օր է, հազվադեպ՝ տարիներ, և անընդհատ անհրաժեշտ է դրանց փոխարինումը նոր սինթեզված սպիտակուցներով:

Պլաստիկ և էներգիական փոխանակությունները միասին կազմում են բջջի նյութափոխանակությունը կամ **մետարոլիզմը**, որի միջոցով իրականանում է բջջի կապն արտաքին միջավայրի հետ:

Պլաստիկ և էներգիական փոխանակություններն անքակտելիորեն կապված են միմյանց հետ: Նախ՝ պլաստիկ փոխանակության ելանյութերն էներգիական փոխանակության վերջնանյութերն են և հակառակը: Երկրորդ՝ միջանկյալ նյութերը նույնն են: Երրորդ՝ էներգիական փոխանակության արդյունքում անջատվում է էներգիա, իսկ պլաստիկ փոխանակության ռեակցիաներն ուղեկցվում են էներգիայի կլանմամբ: Չորրորդ՝ և պլաստիկ, և էներգիական փոխանակության ռեակցիաները հիմնականում իրականանում են ֆերմենտների մասնակցությամբ, որոնք սինթեզվում են պլաստիկ փոխանակության արդյունքում: Նշենք նաև, որ կենդանի օրգանիզմների բջիջներում կան շատ նուրբ համակարգեր, որոնք կարգավորում են նյութափոխանակությունն, ապահովում տարբեր քիմիական ռեակցիաների համաձայնեցված ընթացքը: Տարբեր կենդանի օրգանիզմներում նյութափոխանակությունը կարող է ընթանալ ընդհանուր և միանման ուղիներով, սակայն կան նաև նյութափոխանակային գործընթացների յուրահատուկ ուղիներ:

Նյութափոխանակության ավտոտրոֆ և հետերոտրոֆ եղանակները: Կախված նրանից, թե կենսասինթեզի համար քիմիական տարրերն, առաջին հերթին ածխածինն, ինչ ձևով են անցնում բջջի, կենդանի օրգանիզմները բաժանվում են **ավտոտրոֆների և հետերոտրոֆների:** Ավտոտրոֆները որպես ածխածնի աղբյուր օգտագործում են անօրգանական միացություն CO₂ և սինթեզում են օրգանական միացություններ: Ավտոտրոֆ սննդառության եղանակներից են **ֆոտոսինթեզը և քեմոսինթեզը:** Ֆոտոսինթեզի դեպքում որպես էներգիայի աղբյուր ծառայում է լուսային էներգիան, իսկ քեմոսինթեզի դեպքում՝ անօրգանական միացությունների օքսիդացումից անջատված էներգիան: Երկրի վրա ապրող օրգանիզմներից ֆոտոսինթեզ իրականացնում են բույսերի մեծ մասը, ֆոտոսինթեզող բակտերիաները և կապտականաչ ջրիմուները, որոշ նախակենդանիներ: Էներգիայի սկզբնաղբյուրն Արեգակի էներգիան է, որն այս օրգանիզմները վերափոխում են քիմիական կապի էներգիայի: Հետագայում այդ էներգիան սննան շղթաներով օգտագործվում է հետերոտրոֆ օրգանիզմների կողմից: Քեմոսինթեզ իրականացնում են որոշ բակտերիաներ:

Հետերոտրոֆ օրգանիզմներն ընդունակ չեն անօրգանական միացություններից սինթեզելու օրգանական միացություններ: Նրանք իրենց կենսագործունեության համար անհրաժեշտ օրգանական նյութերը՝ օրինակ՝ ածխացրերը, լիպիդները, սպիտակուցները, նուկլեինաթթուները, սինթեզում են՝

օգտագործելով արտաքին միջավայրից ստացված օրգանական նյութերը: Դետերոտրոֆ են կենդանիների մեծ մասը, այդ թվում՝ մարդը, ինչպես նաև սնկերը, բակտերիաների մեծ մասը, որոշ բույսեր: Արտաքին միջավայրից տարբեր կենդանի օրգանիզմների բջիջներ թափանցող և դրանցից արտազատվող նյութերի բնույթն էապես տարբերվում է մինչանցից: Օրինակ՝ կանաչ բույսերն արտաքին միջավայրից կլանում են ածխաթթու գազ, ջուր, հանքային նյութեր, իսկ արտաքին միջավայր են արտազատում ֆոտոսինթեզի արդյունքում առաջացած թթվածինը: Միևնույն ժամանակ, ամբողջ օրվա ընթացքում շնչառության համար կլանում են թթվածին և արտազատում՝ ածխաթթու գազ:

Մարդն արտաքին միջավայրից ստանում է ածխաջրեր, լիախիներ, սպիտակուցներ, ջուր, հանքային աղեր, վիտամիններ, իսկ միջավայր է արտազատում կենսագործունեության արդյունքում առաջացած և օրգանիզմին արդեն ոչ պիտանի ածխաթթու գազ, միզանյութ, միզաթթու, ջրի ու աղերի ավելցուկները և այլն:

Մարդու, կենդանիների մեծ մասի և որոշ մանրէների կողմից կլանված և արտաքին միջավայր արտազատված նյութերը բնույթով ննան են (**նկ. 120**):

Ազոտ ֆիքսող բակտերիաները մթնոլորտից կլանելով մոլեկուլային ազոտն՝ այն վերածում են ամոնիակի, ինչն իրականանում է նիտրոգենաց ֆերմենտի միջոցով: Գոյություն ունեն ինչպես ազատ ապրող, այնպես էլ սինթիոտիկ հարաբերությունների մեջ գտնվող ազոտ ֆիքսող բակտերիաներ: Ավելի հաճախ ազոտ ֆիքսող բակտերիաները սինթիոզի մեջ են մտնում ընդապորների ընտանիքին պատկանող բույսերի հետ՝ լորի, ոլոր, սոյա և այլն: Ազոտ ֆիքսող բակտերիաների դերը շատ մեծ է ազոտի շրջապտույտում,



Նկ. 120. Բույսերի և կենդանիների կողմից կլանվող և արտազատվող նյութեր:

քանի որ դրանք մոլեկուլային ազոտը, որը բույսերն ուղղակիորեն ընդունակ չեն յուրացնել, վերածում են բույսերի համար պիտանի վիճակի:

Ֆոտոսինթեզող ծծմբաբակտերիաներն արտաքին միջավայրից կլանում են ածխաթթու գազ, ծծմբաջրածին և արտազատում են ծծումբ, որը փառի ձևով կարող է ծածկել ջրի և հողի մակերևույթը:

Այսպիսով, քանի դեռ բջիջը կենդանի է, արտաքին միջավայրից նյութերը թափանցում են բջիջ, իսկ բջիջը՝ արտաքին միջավայր, ընդ որում նյութերի կոնցենտրացիաները բջջում և արտաքին միջավայրում էապես կարող են տարբերվել մինյանցից:

Դարցեր կրկնության համար.



1. Ի՞նչ է իրենից ներկայացնում բջջի նյութափոխանակությունը:
2. Բնութագրեք պլաստիկ և էներգիական փոխանակությունները:
3. Կարող են արդյո՞ք բջջում իրարից անկախ գոյություն ունենալ պլաստիկ և էներգիական փոխանակությունները:
4. Ինչպիսի՞ ավտոտրոֆ և հետերոտրոֆ օրգանիզմներ գիտեք:
5. Արդյո՞ք բոլոր օրգանիզմները կլանում և արտազատում են նույն նյութերը:

24. ԷՆԵՐԳԻԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ: ԱԵՖ-Ի ՍԻՆԹԵԶՆ ԱՌԱՑ ԹԹՎԱԾՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

Աերոր և անաէրոր օրգանիզմներ: Մեր մոլորակի կենդանի օրգանիզմների մեջ մասի կենսագործունեության համար անհրաժեշտ է թթվածնի առկայությունն, առանց որի այդ օրգանիզմները չեն կարող գոյատևել: Դրանք աերոր օրգանիզմներն են:


Անաէրոր օրգանիզմների կենսագործունեության համար թթվածնի առկայությունը պարտադիր չէ: Դրանց մի մասի համար նույնիսկ թթվածնը թույն է հանդիսանում, այդ պատճառով դրանք կարող են ապրել միայն անթթվածին պայմաններում: **Ֆակոլտատիվ անաէրոր** օրգանիզմներն աճում են ինչպես թթվածնի առկայության, այնպես էլ դրա բացակայության, այնպես էլ դրա բացակայության պայմաններում, իսկ մյուս մասը թթվածնի բացակայության պայմաններում իրենց դրսկորում են որպես անաէրոր, իսկ թթվածնի առկայության պայմաններում որպես աերոր օրգանիզմներ:

Էներգիական փոխանակություն: Բջիջն էներգիայով ապահովելու համար օգտագործվում են օրգանական նյութեր՝ ածխաջրեր, ճարպեր, սպիտակուցներ:

Բջիջների մեջ մասը որպես էներգիայի աղբյուր առաջին հերթին օգտագործում են ածխաջրերը: Օրինակ՝ կաթնասունների գլխուղեղի բջիջների համար էներգիայի աղբյուր է գլյուկոզը: Պոլիսախարիդները ներ-

ԳԼՈՒԽ 5. ՆՅՈՒԹԵՐԻ ՓՈԽԱՍԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ԲՁՋՈՒՄ

գրավվում են կատարողիզմի ռեակցիաներում նախապես հիդրոլիզվելով մինչև մոնոսախարիդների:




ճարպերը նախապես ճեղքվում են գլիցերինի և ճարպաթթուների և որպես էներգիայի աղբյուր սկսվում են օգտագործվել, գլխավորապես այն ժամանակ, երբ վերջանում են ածխաջրերը: Բայց կան բջիջներ, որոնք գերադասում են որպես էներգիայի աղբյուր օգտագործել ճարպաթթուները:

Սպիտակուցները նախապես ճեղքվում են ամինաթթուների և որպես էներգիայի աղբյուր օգտագործվում, եթե վերջացել են բջջում առկա ածխաջրերը և ճարպերը, քանի որ սպիտակուցները բջջում իրականացնում են այլ շատ կարևոր ֆունկցիաներ: Սպիտակուցները որպես էներգիայի աղբյուր կարող են օգտագործվել միայն երկար սովորական պայմաններում:

Գյուկոզի անթթվածին ճեղքումը կոչվում է **գլիկոլիզ**, որն ընդհանուր է ինչպես անաերոր, այնպես էլ աերոր ճեղքավորումների համար:

Գլիկոլիզի արդյունքում մեկ մոլեկուլ գյուկոզից առաջանում են երկու մոլեկուլ պիրոխաղողաթթու և ջրածնի չորս ատոմ: Անջատված էներգիայի հաշվին սինթեզվում է երկու մոլեկուլ ԱԵՖ: Զրածինների (նաև էներգոնների) համար որպես ակցեպտոր հանդես է գալիս **ՆԱԴ⁺-Ծ (Աիլուտինամիդադենինդինուկլեոտիդը)**, որն, իրեն միացնելով ջրածինները, վերականգնվում է՝ **ՆԱԴ·Հ⁺Հ₂**: Գլիկոլիզը եռկարիոտ բջջներում տեղի է ունենում ցիտոպլազմայում, և այդ գործընթացի իրականացման համար անհրաժեշտ չէ թթվածի առկայությունը:

Գյուկոզի մինչև պիրոխաղողաթթվի ճեղքման գումարային հավասարումը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.




Գլիկոլիզը բազմաստիճան բարդ պրոցես է, որին մասնակցում են բազմաթիվ ֆերմենտներ և առաջանում են բազմաթիվ միջանկյալ նյութեր: Ցու-

րաքանչյուր ռեակցիայի արդյունքում փոքր քանակությամբ էներգիա է անջատվում, որը վերջնագույնարում կազմում է մոտ 150 կՋ/մոլ: Այդ էներգիայի մեջ մասը ցրվում է որպես ջերմային էներգիա (մոտ 60 %-ը), իսկ մյուս մասը (մոտ 40 %-ը)՝ պահեստավորվում է ԱԵՖ-ի ձևով:

Գլիկոլիզի պրոցեսը կարելի է բաժանել երկու փուլի. առաջին փուլի ընթացքում գյուկոզի փոխարկումների արդյունքում ծախսվում է երկու մոլ ԱԵՖ, իսկ հետագա ճեղքավորման արդյունքում սինթեզվում է չորս մոլեկուլ ԱԵՖ, այսինքն գլիկոլիզի մաքուր ելքը կազմում է երկու մոլեկուլ ԱԵՖ: Առաջացած ՆԱԴ⁺·H₂-ներին կանդրադառնանք հետագայում: Պիրոխաղողաթթվի վերջնական ճակատագիրը կախված է քցում թթվածնի առկայությունից և քանակից:

Որոշ օրգանիզմներ ԱԵՖ-ի սինթեզը կարող են իրականացնել՝ օգտագործելով միայն անթթվածին ճեղքումը: Այդ դեպքում միջավայրում կուտակվում է որևէ օրգանական վերջնանյութ: Դրանք խմորման պրոցեսներն են, որոնց թվում կամ նաև գերակշռող վերջնանյութով գործընթացները: Եթե գերակշռող վերջնանյութն էրիլ սպիրտն է, ապա պրոցեսը կոչվում է սպիրտային խմորում, եթե կաթնաթթուն է՝ կաթնաթթվային խմորում, եթե քացախաթթվային խմորում և այլն: Խմորման տարրեր տիպերը բնորոշ են տարրեր օրգանիզմներին:

Խմորման տարրեր գործընթացները հիմնականում նման են և տարրերվում են վերջին փուլերով: Կաթնաթթվային խմորման դեպքում առաջացած պիրոխաղողաթթուն ֆերմենտների ազդեցության տակ վերածվում է կաթնաթթվի: Նույնը տեղի է ունենում մկաններում թթվածնի պակասի հետևանքով.



Կաթնաթթվային խմորման գումարային հավասարումն է.




գյուկոզ

կաթնաթթու

Խմորման այս տեսակն է ընկած կաթի թթվեցման, կաթից՝ մածուն, հուն սերից՝ թթվասեր ստանալու և այլ պրոցեսների հիմքում: Կաթնաթու կարող է կուտակվել նաև աերոբ օրգանիզմներում թթվածնի պակասի հետևանքով:

Սպիրոտային խմորման դեպքում, որը բնորոշ է որոշ բակտերիաներին և խմորասնկերին (դրոժներին), առաջանում են էթիլ սպիրտ և ածխաթթու գազ:

Անջատված էներգիայի քանակը կազմում է 210 կՋ/մոլ:



Սպիրոտային խմորման վրա են հիմնված գինու, գարեջրի, կվասի, հացարխման և այլ արտադրությունները:




Դարցեր կրկնության համար.

1. Որո՞նք են աերոբ օրգանիզմները:
2. Ինչպիսի՞ անաէրոբ օրգանիզմներ գիտեք:
3. Ինչո՞ւ անթթվածին միջավայրում օրգանիզմներն ավելի շատ են սնունդ կլանում:
4. Ինչպիսի՞ խմորման պրոցեսներ գիտեք:
5. Ո՞ր օրգանիզմներն են իրականացնում կաթնաթթվային խմորումը:
6. Ի՞նչ նյութի է փոխարկվում գյուկոզը մկաններում թթվածնի պակասի հետևանքով:
7. Ո՞րն է սպիրոտային խմորումը և ի՞նչ արտադրությունների հիմքում է այն ընկած:

25. ՇՆԴԱՌՈՒԹՅՈՒՆ: ԱԵՖ-Ի ՍԻՆԹԵԶԸ ԹԹՎԱԾՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Կորիզավոր բջիջներում գլիկոլիզի արդյունքում առաջացած պիրոխաղողաթթուն թթվածնի բավարար քանակության պայմաններում անցնում է միտոքոնդրիումներ և ենթարկվում հետագա ճեղքման, որի արդյունքում առաջանում է ացետիլ-կոֆերմենտ A: Վերջինս կարող է առաջանալ նաև ճարպերի, ամինաթթուների ճեղքումից: Ացետիլ-կոֆերմենտ A-ի հետագա փոխարկումներն իրականանում են **եռկարբոնաթթվային ցիկլում**, որն իրենից ներկայացնում է օղակաձև ֆերմենտային հոսքագիծ (**նկ. 121, 122**):

Եռկարբոնաթթվային (Կրեբսի) ցիկլ: Ացետիլ-կոֆերմենտ A-ն միանալով թրթնջկաքացախաթթվին առաջացնում է կիտրոնաթթու (այս ցիկլում առաջանում են նաև այլ եռկարբոնաթթուներ, որոնց անունով ել անվանվում է ցիկլը):



Նկ. 121. Եռկարբոնաթթվային (Կրեբսի) ցիկլ:

Նկ. 122. Հանս-Ադոլֆ
Կրեբս (1900-1981թ.)
կենսարիմիկոս, Նորբեյյան
մրցանակի դափնեկիր:


Կիտրոնաթթվի հետագա փոխարկումների արդյունքում վերականգնվում է ծախսված թրթնջկաթացախաթթուն, անջատվում է CO_2 , առաջանում է մեկ մոլ ԱԵՖ, իսկ առաջացած 3 մոլ $\text{NAD} \cdot \text{H}_2$ -ները և մեկ մոլ $\text{ՖԱԴ} \cdot \text{H}_2\text{-ը}$ (**Փլավինադենինդինուկլեոտիդը**) ուղղվում են շնչառական շղթա: Առաջացած ածխածնի (IV) օքսիդն ազատ անցնում է միտոքոնդրիումի թաղանթներով և հեռանում է շրջապատող միջավայր:

Շնչառական շղթան և ԱԵՖ-ի սինթեզը: Կենսաբանական օքսիդացման հաջորդ փուլը ծառայում է գլիկոլիզի արդյունքում և եռկարբոնաթթվային ցիկլում առաջացած $\text{NAD} \cdot \text{H}_2$ -ի և $\text{ՖԱԴ} \cdot \text{H}_2$ -ի մոլեկուլներում կուտակված էներգիայի վերափոխմանն ԱԵՖ-ի մակրոէրգիկ կապի էներգիայի: Այդ պրոցեսի ընթացքում $\text{NAD} \cdot \text{H}_2$ -ի և $\text{ՖԱԴ} \cdot \text{H}_2$ -ի պրոտոնները և էլեկտրոնները բազմաստիճան շղթայով փոխարկվում են վերջնական

ակցեպտորի՝ մոլեկուլային թթվածնի վրա: Դա օքսիդավերականգնման պրոցեսների շղթա է: Պրոտոնների և էլեկտրոնների փոխադրումը մի աստիճանից մյուսին ուղեկցվում է էներգիայի ձևափոխմամբ, որն օգտագործվում է ԱԿՖ-ից և ֆուֆորական թթվից ԱԵՖ սինթեզելու համար: Շնչառական շղթան, որը տեղակայված է միտոքոնդրիումների ներքին թաղանթում, բաղկացած է մի շարք փոխադրիչներից:

Էլեկտրոնների փոխադրումը հիմնականում իրականացվում է մետաղների վալենտականության փոփոխությամբ, օրինակ՝ երկարի և պլնձի:

Միտոքոնդրիումների ներքին թաղանթի երկու կողմերում հակառակ լիցքեր ունեցող մասնիկների կուտակմանը զուգընթաց, մեծանում է դրանց միջև էլեկտրաքիմիական պոտենցիալների տարբերությունը: Միտոքոնդրիումների ներքին թաղանթում կան ներկառուցված **ԱԵՖ-սինթազ** ֆերմենտի մոլեկուլներ, որոնք կարող են ԱԿՖ-ից և ֆուֆորական թթվից սինթեզել ԱԵՖ: Երբ պոտենցիալների տարբերությունը (**արտոնային պոտենցիալ**) թաղանթի երկու կողմերում հասնում է որոշակի սահմանային մեծության, պրոտոններն էլեկտրական դաշտի ազդեցության տակ մղվում են ԱԵՖ-սինթազի անցուղու միջով: Պրոցեսի հետևանքով անջատված էներգիայի հաշվին սինթեզվում է ԱԵՖ (Ակ. 123):




Ակ. 123. ԱԵՖ-ի սինթեզը միտոքոնդրիումներում:

Պրոտոնների և էլեկտրոնների վերջնական ակցեպտորը թթվածինն է, որի արդյունքում առաջանում է ջուր:




Կաթնաթթվից սկսված՝ թթվածնային ճեղքման գումարային հավասարումը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.




Գումարային արդյունքում մեկ մոլ գյուկոզի լրիվ ճեղքումից անջատվում է 2800 կԶ էներգիա: Այդ էներգիայի մոտ կեսը կուտակվում է ԱԵՖ-ի ձևով, իսկ մնացածը ցրվում է որպես ջերմություն:

Պրոկարիոտ և էուկարիոտ օրգանիզմներում մեկ մոլ գյուկոզից տարբեր քանակությամբ ԱԵՖ է սինթեզվում: Դա պայմանավորված է այդ օրգանիզմներում շնչառական շղթայի առանձնահատկություններով:

Գյուկոզի լրիվ ճեղքման գումարային հավասարումն էուկարիոտ օրգանիզմներում կլինի.



Գյուկոզի լրիվ ճեղքման գումարային հավասարումը պրոկարիոտ օրգանիզմներում կլինի.



Անթթվածին և թթվածնային ճեղքման պրոցեսների հիման վրա կարելի է հանգել որոշ եզրակացությունների.

Նախ, որ ԱԵՖ-ի սինթեզը գլիկոլիզի ընթացքում թաղանթի առկայության կարիք չի գործ: Այն ընթանում է նաև փորձանոթում, եթե առկա են բոլոր անհրաժեշտ ելանյութերը և ֆերմենտները: Թթվածնային ճեղքման իրականացման համար անհրաժեշտ է **միտոքրոնդրիումների չվճարված ներքին թաղանթ**, քանի որ որոշիչ դեր են խաղում դրանում ընթացող էլեկտրական երևույթները:

Դրա հետո մեկտեղ, բջջում մեկ մոլեկուլ գյուկոզի ճեղքումը մինչև ածխաթթու գագ և ջուր ապահովում է 38 մոլեկուլ ԱԵՖ-ի սինթեզ, որից 2 մոլեկուլը սինթեզվում են անթթվածին փուլում, իսկ 36 մոլեկուլը՝ թթվածնային փուլում: Վերջին տարիներին պարզվել է, որ միտոքրոնդրիումներում գյուկոզի թթվածնային ճեղքման փուլում առավելագույնս սինթեզվում է ԱԵՖ-ի 30 (ոչ թե 36) մոլեկուլ, և, հետևաբար, բջջում գյուկոզի լրիվ ճեղքումը գուգորդվում է 32 մոլեկուլ ԱԵՖ-ի սինթեզի հետ: Այսպիսով, թթվածնային գործընթացը շատ ավելի արդյունավետ է, քան անթթվածնայինը:



Դարցեր կրկնության համար.

1. Ինչպիսի՞ հետագա փոխարկումների է ենթարկվում պիրոխաղողաթքուն ակրոր օրգանիզմներում:
2. Ի՞նչ նյութեր են առաջանում եռկարբոնաթթվային ցիկլի ժամանակ:
3. Էռևարդիոս օրգանիզմներում որտե՞ղ են տեղի ունենում եռկարբոնաթթվային ցիկլի ռեակցիաները:
4. Ի՞նչ է իրենից ներկայացնում շնչառական շղթան:
5. Արդյո՞ք միևնույն քանակությամբ ԱԵՖ է սինթեզվում 1 մոլ գյոււկոզի ճեղքման արդյունքում պրոկարիոտ և էռևարդիոտ քիշներում:
6. Դամեմատե՞ք անթթվածին և թթվածնային ճեղքումները:
7. Ինչո՞ւ է թթվածնային ճեղքման անհրաժեշտ պայման հանդիսանում միտոքոնդրիումների չվնասված ներքին թաղանթի առկայությունը:

26. ՊԼԱՍՏԻԿ ՓՈԽԱՍԱԿՈՒԹՅՈՒՆ: ՖՈՏՈՍԻՆԹԵԶ

Պլաստիկ փոխանակություն: Այս փոխանակությունն (այլ կերպ այն կոչվում է նաև **ասիմիլացիա**) արտացոլում է բջջում տեղի ունեցող օրգանական նյութերի կենսասինթեզի գործընթացները: Քիշները շրջակա միջավայրից վերցնելով իրենց կենսագործունեության համար անհրաժեշտ հարաբերականորեն պարզ մոլեկուլներ՝ և դրանցից սինթեզում են տվյալ բջիջն բընորոշ և յուրահատուկ ավելի բարդ միացություններ: Այսպես, տարբեր ամինաթթուներից սինթեզվում են բազմաթիվ սպիտակուցներ, մոնոսախարիդներից կազմվում են պոլիսախարիդներ, ազոտային հիմքերն անցնում են նուկլեոտիդների մեջ, դրանցից էլ սինթեզվում են նուկլեինաթթուներ և այլն: Բջջում ընթացող նյութերի սինթեզը կոչվում է **կենսասինթեզ**: Սինթեզված միացություններն օգտագործվում են բջիջների, դրանց տարբեր օրգանիզմների կառուցման, բջիջների կենսագործունեության, ինչպես նաև օգտագործված կամ քայլայված մոլեկուլները փոխարինելու համար:

Պլաստիկ փոխանակության ռեակցիաների մեջ ամենակարևոր նշանակությունն ունեցողը սպիտակուցների կենսասինթեզն է: Յուրաքանչյուր տեսակի բջիջ ունի յուրահատուկ սպիտակուցներ, որոնք բնորոշ են միայն տվյալ տեսակին: Նման սպիտակուցներ սինթեզելու հատկությունը ժառանգաբար բջիջ է անցնում, և պահպանվում է ամբողջ կյանքի ընթացքում: Բոլոր բջիջները կյանքի ընթացքում սպիտակուց են սինթեզում, քանի որ բնականոն կենսագործունեության ընթացքում սպիտակուցներն աստիճանաբար բնափոխվում են, դրանց կառուցվածքն ու ֆունկցիան խախտվում են:

Ժառանգական տեղեկատվության իրականացումը և սպիտակուցի կենսասինթեզը մենք քննարկել էինք նախորդ գլխում: Այժմ պլաստիկ փոխանակության ռեակցիաներից դիտարկենք ֆոտոսինթեզի գործընթացը:

Ֆոտոսինթեզ: Երկրի վրա ապրող կենդանի օրգանիզմների համար որպես էներգիայի հիմնական աղբյուր է ծառայում Արեգակի ճառագայթային էներգիան: Ինչպես գտնենք 9-րդ դասարանի դասընթացից, **Ֆոտոսինթեզը լույսի էներգիայի փոխարկումն է քիմիական կապերի էներգիայի:** Ֆոտոսինթեզ իրականացնում են բույսերի մեջ մասը, ֆոտոսինթեզող բակտերիաները և կապտականաչ ջրիմուռները, որոց նախակենդանիներ:

Բույսերի քիչներում տեղի ունեցող ֆոտոսինթեզն արտահայտվում է հետևյալ գումարային ռեակցիայով.



Այս գործընթացում էներգիայով աղքատ նյութերից՝ ածխածնի (IV) օքսի- դից և ջրից առաջանում է էներգիայով հարուստ ածխածուր (գլյուկոզ, $\text{C}_6\text{H}_{12}\text{O}_6$), հետագայում նաև այլ օրգանական միացություններ: Ֆոտոսին- թեզի հետևանքով առաջանում է նաև մոլեկուլային թթվածին: Ֆոտոսինթեզը բաժանվում է երկու փուլի՝ լուսային և մթնային: Լուսային փուլը ընթանում է միայն լույսի առկայության պայմաններում, իսկ մթնային փուլը կարող է իրականանալ ինչպես լուսային, այնպես էլ մթնային պայմաններում: Ֆոտո- սինթեզի պրոցեսում կարևոր նշանակություն ունեն ֆոտոսինթեզող գումակ- ները, որոնցից բուսական օրգանիզմներում հատկապես մեծ է կանաչ գու- մակի՝ քլորոֆիլի դերը: Գումակները ներդրված են քլորոպլաստի գրանների մեջ և շրջապատված են սպիտակուցների, լիափորների և այլ նյութերի մոլե- կուլներով: Քլորոֆիլը իր կառուցվածքով նման է հեմոգլոբինում պարու- նակվող հեմին, բայց այն տարբերությամբ, որ հեմում պարունակվում է երկաք, իսկ քլորոֆիլում մագնեզիում: Քլորոֆիլը հիմնականում կլանում է կարմիր և կապտամանուշակագույն լույսը, իսկ կանաչն անդրադարձնում է, որի պատ- ճառով բույսերը հիմնականում կանաչ գույն ունեն, իիարկե, եթե դրան չեն խանգարում այլ գումակներ:

Ֆոտոսինթեզի լուսային փուլը: Ֆոտոսինթեզը բարդ, բազմաստիճան գործընթաց է:

Այն սկսվում է քլորոպլաստը տեսանելի լույսով լուսավորվելով: Ֆոտոնը, ընկնելով քլորոֆիլի մոլեկուլի վրա, գրգռում է այն, մոլեկուլի էլեկտրոններն անցնում են էներգիական ավելի բարձր մակարդակ, այսինքն միջուկից ավելի հեռու գտնվող ուղեծրի վրա: Դրա շնորհիվ հեշտանում է էլեկտրոնների ան- ջատումը մոլեկուլներից: Գրգռված էլեկտրոններից մեկն անցնում է փոխա- դրիչ մոլեկուլի վրա, որը փոխանցում է այն էլեկտրոն-փոխադրող շղթայով այլ փոխադրիչների: Պրոցեսն ուղեկցվում է էներգիայի ծևափոխմամբ, և դրա հաշվին ԱԵՖ-ից և ֆուֆորական թթվից **ԱԵՖ-սինթազ** ֆերմենտի միջոցով սինթեզվում է ԱԵՖ: Առաջացած ԱԵՖ-ն ուղղվում է քլորոպլաստի այն մասերը, որտեղ ածխաջրերի սինթեզ է տեղի ունենում: Քլորոֆիլի մոլեկուլը վերա-


կանգնում է էլեկտրոնի կորուստը՝ այն վերցնելով ջրի մոլեկուլից: Էլեկտրոն-ներ կորցնելու հետևանքով ջրի մոլեկուլներն ենթարկվում են ֆոտոլիզի:



Մոլեկուլային թթվածինն անցնում է քաղանթով դիֆուզիայի եղանակով և արտամղվում մթնոլորտ: Զրածնի իոնները (H^+) միանալով այլ գրգռված էլեկտրոնի՝ վերածվում են ջրածնի ատոմների, որոնք միանում են փոխադրիչ մոլեկուլների հետ: Զրածնի ատոմները նույնաբես շարժվում են դեպի քլորոպլաստի այն մասը, ուր տեղի է ունենում ածխաջրերի սինթեզը:

Այսպիսով, արեգակնային ճառագայթման էներգիան առաջացնում է երեք պրոցես՝ ջրի քայլայման հետևանքով՝ մոլեկուլային թթվածնի առաջացում, ԱԵՖ-ի սինթեզ, ատոմային ջրածնի առաջացում: Այս 3 գործընթացներն ընթանում են լույսի առկայության պայմաններում և կազմում են ֆոտոսինթեզի լուսային փուլը:

Ֆոտոսինթեզի մթնային փուլ: Ֆոտոսինթեզի հետագա ռեակցիաները կապված են ածխաջրերի առաջացման հետ: Այդ ռեակցիաներն ընթանում են ինչպես լույսի տակ, այնպես էլ մրության մեջ (եթե առկա են ԱԵՖ և Հ) և կոչվում են մթնային փուլի ռեակցիաներ: Ֆոտոսինթեզի մթնային փուլը կազմված է մի շարք հաջորդական ֆերմենտային ռեակցիաներից: Այդ ռեակցիաների հետևանքով ածխածնի (IV) օքսիդից և ջրածնից առաջանում են ածխաջրեր: Մթնային ռեակցիաների համար անընդհատ ելանյութեր են քափանցում լուսային փուլից: Ածխածնի օքսիդը քափանցում է շրջապատի մթնոլորտից և ֆիքսվում հատուկ ֆերմենտի **ռիբոլոզարիֆոսֆատ-կարբօքսիլազի** միջոցով, որի արդյունքում առաջանում է վեցածխածնային միացություն: Ոիքուլոզարիֆոսֆատ-կարբօքսիլազ ֆերմենտը մեծ քանակությամբ գտնվում է քլորոպլաստների պարունակության մեջ՝ ստրոմայում: Այն բնության մեջ ամենաշատ տարածված ֆերմենտներից է: Զրածինն առաջանում է ֆոտոսինթեզի լուսային փուլում ջրի ֆոտոլիզի հետևանքով: Էներգիայի աղբյուր է ԱԵՖ-ը, որը սինթեզվում է ֆոտոսինթեզի լուսային փուլում: Այս բոլոր նյութերի շնորհիվ քլորոպլաստներում իրականանում է ածխաջրերի սինթեզը:



Առաջացած գյուկոզից կարող են սինթեզվել այլ ածխաջրեր: Կարևոր ածխաջրերից են սախարոզը և օսլան: Տերևներից ածխաջրերը կարող են լուրով փոխադրվել հիմնականում դիսախարիդ սախարոզի ձևով, իսկ պահեստավորվում են հիմնականում պոլիսախարիդ օսլայի ձևով:

Բուսական բջիջները կարող են սինթեզել իրենց անհրաժեշտ բոլոր նյութերը: Սինթեզի համար անհրաժեշտ ազոտը, ֆոսֆորը, ծծումբը և այլ տարրեր բույսերը ստանում են հողից արմատների միջոցով:



Յարցեր կրկնության համար.

1. Բուսական բջիջը ո՞ր օրգանիդներում է ընթանում ֆոտոսինթեզը:
2. Ի՞նչ գործընթացներ են տեղի ունենում ֆոտոսինթեզի լուսային փուլում:
3. Ի՞նչ նյութեր են առաջանում լուսային փուլի արդյունքում:
4. Ի՞նչ գործընթացներ են տեղի ունենում ֆոտոսինթեզի մթնային փուլում:
5. Ի՞նչ դեր ունի ռիբոլոզարիֆոսատ-կարբօքսիլազ ֆերմենտը:

27. ՖՈՏՈՍԻՆԹԵԶԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ: ՖՈՏՈՍԻՆԹԵԶԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ֆոտոսինթեզի վրա ազդող գործոններ: Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության համար կարևոր նշանակություն ունի ֆոտոսինթեզի արագությունը, որը կախված է բազմաթիվ գործոններից: Լուսավորվածությունը, ածխաբթու գազի կոնցենտրացիան և ջերմաստիճանը այն գլխավոր գործոններն են, որոնցից կախված է ֆոտոսինթեզի արագությունը:

Լույսի ազդեցության գնահատման համար կարևոր են լույսի ուժգնությունը (ինտենսիվությունը), որակը (սպեկտրային կազմը) և ազդելու ժամանակամիջոցը: Մթնային փուլի ռեակցիաների իրականացման համար անհրաժեշտ են ԱԵՖ և ջրածին, որոնք ստացվում են լույսի ազդեցության տակ: Ցածր լուսավորվածության պայմաններում այս նյութերի սինթեզի արագությունը պակասում է, որից դանդաղում են նաև մթնային փուլի ռեակցիաները: Լուսավորվածության ավելացմանը զուգընթաց, ֆոտոսինթեզի արագությունն սկզբնական շրջանում ավելանում է ուղիղ համեմատական կարգով, սակայն հետագայում գործընթացը դանդաղում է և գալիս է մի պահ, երբ լուսավորվածության ավելացումը չի մեծացնում ֆոտոսինթեզի արագությունը: Լույսի շատ բարձր ինտենսիվության պայմաններում, երբեմն քլորոֆիլը սկսում է գումազրկվել, որը դանդաղեցնում է ֆոտոսինթեզը:

Դիմնականում ածխաբթու գազի կոնցենտրացիայի նվազումն է դանդաղեցնում ֆոտոսինթեզը: Դրա ավելացումը էապես արագացնում է ֆոտոսինթեզը, ինչը կիրառվում է ջերմոցային տնտեսություններում որոշ բույսերի աճեցման ժամանակ:

Ջերմաստիճանը, ջուրը, քլորոֆիլի քանակը նույնականացնելու ազդում են ֆոտոսինթեզի արագության վրա: Թթվածնի բարձր կոնցենտրացիան ֆոտոսինթեզի պրոցեսի վրա ունի ճնշող ազդեցություն, որովհետև պարզվել է, որ թթվածինը մրցակցում է ածխաբթու գազի հետ ռիբոլոզարիֆոսատ-կարբօքսիլազ ֆերմենտի ակտիվ կենտրոնի համար, որը իջեցնում է ֆոտոսինթեզի գումարային

ինտենսիվությունը: Ֆոտոսինթեզի վրա բացասաբար են ազդում նաև շրջապատող միջավայրի աղտոտվածության աստիճանը, հատկապես արդյունաբերական ծագում ունեցող տարրեր գազերը:


Ֆոտոսինթեզի նշանակությունը բնության համար: Ֆոտոսինթեզի ժամանակ ածխաթթու գազի յուրացման ընթացքում լույսի և քլորոֆիլի դերի ուսումնասիրնան մեջ մեջ ավանդ է ներդրել ռուս խոշորագույն գիտնական Կ.Ա. Տիմիրյազել (նկ. 124): Նա ֆոտոսինթեզի մասին գրել է այսպես. «Դա մի գործնքաց է, որից ի վերջո կախված են կյանքի բոլոր որսկորումները մեր մոլորակի վրա»: Այդ կարծիքը միանգամայն հիմնավորված է, որովհետև ֆոտոսինթեզը երկրի վրա ոչ միայն օրգանական միացությունների, այլև ազատ թթվածնի հիմնական մատակարարն է:

Ֆոտոսինթեզն ունի համանոլորակային նշանակություն, քանի որ արեգակնային էներգիան վերափոխվում է քիմիական կապերի էներգիայի, առաջանաւ են օրգանական միացություններ, որոնք օգտագործվում են ինչպես ավտոտրոֆ, այնպես էլ հետերոտրոֆ օրգանիզմների կողմից: Ֆոտոսինթեզի շնորհիվ պահպանվում է երկրի մթնոլորտի որոշակի բաղադրությունը: Ֆոտոսինթեզի արդյունքում առաջանաւ է մոլեկուլային թթվածին, որն անհրաժեշտ է բոլոր ակտոր օրգանիզմների համար: Բացի դրանից, առաջացած մոլեկուլային թթվածնի հետ է կապված նաև օգնային էկրանի գոյությունը, որը պաշտպանում է բոլոր երկրային կենդանի օրգանիզմները մահացու ուլտրամանուշակագույն ճառագայթներից:

Կարևոր է նաև ածխաթթու գազի կլանումը ֆոտոսինթեզի գործնքացում, որի արդյունքում նվազում է նրա քանակը մթնոլորտում, և ածխածինը անօրգանական նյութից անցնում է օրգանական նյութի բաղադրության մեջ, ինչը կարևոր դեր ունի ածխածնի շրջապտույտում:

Երկրի բուսականությունը տարեկան կապում է $75 \cdot 10^9$ տ ածխածին: Բացի այդ, բույսերը սինթեզի մեջ ներառում են միլիարդավոր տոննաներով ազատ ֆոսֆոր, ծծումբ, կալցիում, մագնեզիում, կալիում և այլ տարրեր: Որպես արդյունք տարեկան սինթեզվում է մոտավորապես $15 \cdot 10^{10}$ տ օրգանական նյութ:

Չնայած վիթխարի մասշտաբներին՝ ֆոտոսինթեզը դանդաղ և քիչ արդյունավետ գործնքաց է. կանաչ տերևը ֆոտոսինթեզի համար օգտագործում է իր վրա ընկած արեգակնային էներգիայի ընդամենը 1 %-ը: Ֆոտոսինթեզի արդյունավետությունը 1 ժամում կազմում է, մոտավորապես, 1գ օրգանական նյութ 1 մ² տերևային մակերեսի վրա: Այսպիսով, ամռանը մեկ օրում 1 մ² տերևային մակերեսը սինթեզում է 15–16գ օրգանական նյութ: Ֆոտոսինթեզի արդյունավետությունը կարելի է բարձրացնել՝ մեծացնելով ածխածնի (IV) օքսիդի պարունակությունը մթնոլորտում, բարելավելով լուսավորվածությունը, ջրամատակարարումը և այլն:



Նկ. 124. Կ.Ա. Տիմիրյազել
(1843-1920թթ.):

Անհրաժեշտ է հիշել, որ բուսական բջիջները, ինչպես և այլ բջիջները, մշտապես շնչում են, այսինքն կլանում են թթվածին և անջատում են ածխածնի (IV) օքսիդ: Տերեկը, շնչառության հետ միասին, բուսական բջիջները լուսային էներգիան փոխարկում են քիմիական էներգիայի և օրգանական նյութեր են սինթեզում: Այդ ընթացքում, որպես ռեակցիայի կողմնակի նյութ, անջատվում է մոլեկուլային թթվածին: Ֆոտոսինթեզի ընթացքում բուսական բջիջի կողմից արտադրված թթվածնի քանակը 20-30 անգամ ավելին է, այդ նույն ընթացքում շնչառության համար կլանվող թթվածնի քանակից:

Յարցեր կրկնության համար.



1. Ո՞ր է երկրի վրա կանաչ բույսերի համամոլորակային նշանակությունը կյանքի համար:
2. Ինչպիսի՞ արդյունավետություն ունի ֆոտոսինթեզը:
3. Ինչպիսի՞ գործոններ են ազդում ֆոտոսինթեզի պրոցեսի վրա:
4. Ի՞նչ ազդեցություն ունի լույսը ֆոտոսինթեզի վրա:
5. Ի՞նչ ազդեցություն ունի թթվածնը ֆոտոսինթեզի վրա:
6. Նպատակահարմար է արդյո՞ք ննջասենյակներում ունենալ սենյակային բույսեր:
7. Ի՞նչ նշանակություն ունի ֆոտոսինթեզը հետերոտրոֆ օրգանիզմների համար:

28. ՖՈՏՈՍԻՆԹԵԶԻ ԱՌԱՋԱՆՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱԿՈՐԻՉԱՎԱՐՈՐ ԲՁԻՉՆԵՐՈՒՄ: ՔԵՍՈՍԻՆԹԵԶ

Ֆոտոսինթեզի առանձնահատկությունները պրոկարիոտ (նախակորիզավոր) բջիջներում: Ամենայն հավանականությամբ, ֆոտոսինթեզն առաջին անգամ ի հայտ է եկել պրոկարիոտ բջիջներում, այդ պատճառով, այն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում: Նախակորիզավոր օրգանիզմներից ֆոտոսինթեզի ընդունակ են կապտականաչ ջրիմուները և որոշ բակտերիաներ (**նկ. 125**):

Բակտերիաներում ընթացող ֆոտոսինթեզն որոշակիորեն տարբերվում է բույսերում ընթացող ֆոտոսինթեզի գործնարարությունը: Նախ բակտերիաներում բացակայում են քլորոֆլաստները, և քլորոֆիլի փոխարեն այստեղ հանդիպում է բակտերիաքլորոֆիլը և այլ ֆոտոսինթետիկ գունակներ: Այդ գունակները, ավելի հաճախ կապված են լինում պլազմային թաղանթին: Բացի դրանից, բակտերիաները որպես ջրածնի դոնոր կարող են օգտագործել մոլեկուլային ջրածնի, ծծմբաջրածնի, նաև որոշ օրգանական միացություններ, ուստի բակտերիաների ֆոտոսինթեզի դեպքում թթվածին չի անջատվում: Օրինակ՝ որոշ ծծմբաջրակտերիաների ֆոտոսինթեզի արդյունքում միջավայրում ծծունք է կուտակվում: Որոշ բակտերիաներ ֆոտոսինթեզն իրականացնում են աէրոր, իսկ մյուսներն՝ անաէրոր պայմաններում: Ֆոտոսինթեզող բակտերիաների գերակշռող մեծամասնությունը կարողանում է նաև ֆիբսել մոլեկուլային ազոտը:



Կապտականաչ ջրիմուռներում նույնական բացակայում են քլորոֆլաստները, բայց դրանք պարունակում են քլորոֆիլ և որպես ջրածնի աղբյուր օգտագործում են ջուրը, այդ պատճառով դրանց ֆոտոսինթեզն ուղեկցվում է թթվածնի անջատումով:

Քեմոսինթեզ: Անօրգանական նյութերից օրգանական նյութեր սինթեզելու ընդունակություն ունեն նաև բակտերիաների որոշ տեսակներ: Այն եղանակը, որի շնորհիվ դրանք էներգիա են կուտակում սինթեզի ռեակցիաների համար, սկզբունքորեն այլ է բուսական բջիջների համեմատությամբ: Փոխանակության այս տիպը հայտնաբերել է ռուս գիտնական, մանրէաբան Ա. Ն. Վինոգրադսկին (նկ. 126): Այդ բակտերիաներն օժտված են հատուկ ֆերմենտային ապարատով, որը նրանց հնարավորություն է տալիս անօրգանական նյութերի օքսիդացումից անջատված էներգիայի հաշվին սինթեզել օրգանական միացություններ: Այս գործընթացը կոչվում է քեմոսինթեզ: Էներգիա կարող է անջատվել ջրածնի, ծծմբաջրածնի, ծծմբի, երկաթի(II), ամոնիակի, նիտրիտի և այլ անօրգանական միացությունների օքսիդացումից:

Կարևոր քեմոսինթեզողներից են նիտրիֆիկացնող բակտերիաները: Դրանցից մի տեսակի համար էներգիայի աղբյուրն ամոնիակի օքսիդացումն է ազոտային թթվի, իսկ նիտրիֆիկացնող բակտերիաների մյուս խումբն օքտագործում է ազոտային թթուն ազոտականի օքսիդացնելու ժամանակ անջատվող էներգիան:




Նկ. 125. Կապտականաչ ջրիմուռ՝ *Phormidium*:



Ամոնիակը (կամ ամոնիում իոնը), որը կարող է առաջանալ ինչպես ազոտֆիքսացիայի, այնպես էլ օրգանական նյութերի հանքայնացման արդյունքում, թթվածնի առկայության պայմաններում, հողում արագ ենթարկվում է օքսիդացման: Կատիոնի փոխարկումն անհոնի բերում է հողի թթվայնության մեծացմանը, դրանով իսկ մեծացնելով հանքային աղերի լուծելիությունը:

Ավտոտրոֆ քենոսինթեզողներ են նաև **երկարաբակտերիաները** և **ծծմբարակտերիաները**: Դրանցից առաջիններն օգտագործում են երկվալենտ երկարն եռավալենտ երկարի փոխարկվելուց անջատվող էներգիան, երկրորդներն՝ օրինակ, անգույն ծծմբարակտերիաները, ծծումբը օքսիդացնում են մինչև ծծմբական թքու:



Նկ. 126. Ա.Ս. Վինոգրանսկի
(1856-1953թթ.):

Երկար և ծծումբ օքսիդացնող որոշ բակտերիաներ օգտագործվում են աղքատ հանքաքարերից տարբեր մետաղների՝ պղնձի, ցինկի, նիկելի, մոլիբդենի, ուրանի և այլ մետաղների կորզման համար: Ներկայումս այդ մեթոդը լայն կիրառություն ունի հանքարդյունաբերության բնագավառում:

Բոլոր քննարկված բակտերիաներն ակտոր օրգանիզմներ են: Քենոսինթեզողների դերը շատ մեծ է: Դրանք կարևոր նշանակություն ունեն նյութերի և տարրերի շոշապտույտում:

Դարցեր կրկնության համար.



1. Ի՞նչ առանձնահատկություններ ունի ֆոտոսինթեզը բակտերիաներում:
2. Ի՞նչ առանձնահատկություններ ունի ֆոտոսինթեզը կապտականաչ ջրիմուռներում:
3. Ի՞նչ է քենոսինթեզը: Բերեք քենոսինթեզող օրգանիզմների օրինակներ:
4. Ինչի՞ շնորհիվ է, որ բակտերիաները կարողանում են քենոսինթեզ իրականացնել:
5. Ի՞նչ փոխարկումներ են իրականացնում նիտրիֆիկացնող բակտերիաները:
6. Ի՞նչ քննիանուր առանձնահատկություններ ունեն քենոսինթեզող բակտերիաները:
7. Ի՞նչպիսի՞ նյութերի օքսիդացման էներգիան են օգտագործում քենոսինթեզող օրգանիզմները:
8. Ի՞նչ գործնական նշանակություն ունեն երկարաբակտերիաները և ծծմբարակտերիաները:


ԳԼՈՒԽ 6. ԲԶՋԻ ԿԵՆՍԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

29. ԲԶՋԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԾ ԲԱԺԱՆՄԱՆ: ԴՆԹ-Ի ԿՐԿՆԱՊԱՏԿՈՒԾ

Բջջի կենսական փուլերը: Բջջների բազմացումն իրականացվում է միայն բաժանման միջոցով: Բջջի նախապատրաստումը բաժանմանը և բաժանման հետագա պրոցեսների հաջորդականությունը կոչվում է **բջջի կենսական ցիկլ** կամ **բջջային ցիկլ**: Այլ կերպ ասած, բջջային ցիկլը բջջի կյանքն է նախորդ բաժանումից մինչև հաջորդ բաժանում: Տարբեր կենդանի օրգանիզմների բջջների կենսական ցիկլերի տևողությունն էապես տարբեր է և կախված է բջջների տիպից, դրանցում պարունակվող ժառանգական տեղեկատվությունից, միջավայրի գործոններից: Օրինակ՝ ամերիայի կենսական ցիկլը մոտ 36 ժամ է, իսկ որոշ ջերմասեր (թերմոֆիլ) բակտերիաներ կիսվում են յուրաքանչյուր 10-15 րոպեն մեջ:

Եռկարիոտ (կորիզավոր) բջջների բաժանման հիմնական եղանակը միտոզն է: Երկու բաժանումների միջև ընկած ժամանակահատվածը կոչվում է **ինտերֆազ** (լատ. *inter*-միջև): Բջջի կենսական ցիկլը ցույց է տրված **նկար 127-ում**:

Բաժանման արդյունքում առաջացած նոր բջջն անցնում է ինտերֆազ և նախապատրաստվում է ԴՆԹ-ի սինթեզին (ինտերֆազի **G₁**-փուլ): Այդ ընթացքում բջջն աճում է՝ հասնելով մայրական բջջի չափսերին, սինթեզվում են ՌՆԹ-ներ և սպիտակուցներ, ավելանում է օրգանիզմների թիվը: Ինտերֆազի ամբողջ ժամանակահատվածում քրոնոսումները վերահսկողություն են իրականացնում բջջի կենսագործունեության վրա: Հենց ինտերֆազում է, որ ցիտոպլազմայում անընդհատ կատարվում է սպիտակուցների, ածխաջրերի և լիպիդների սինթեզ: Այս բոլորը նշանակում են, որ բջջն ինտերֆազում ակտիվորեն գործում են, նրա մեջ կատարվում են կենսագործու-



Նկ. 127. Բջջի կենսական ցիկլը:

նեության բոլոր գործընթացները՝ ներառյալ սննդառությունը, շնչառությունը, ԱԵՖ-ի սինթեզը, նյութափոխանակության զանազան արգասիքների արտագատումն արտաքին միջավայր:

Կարևորագույն գործընթացը, որը տեղի է ունենում ինտերֆազի միջին փուլում, **ՂՆԹ-ի սինթեզն է (ՂՆԹ-ի ռեպլիկացիան)**, որի հետևանքով յուրաքանչյուր քրոմոսոմ կրկնապատկվում է: ՂՆԹ-ի սինթեզի տևողությունը տարբեր է կենդանիների և բույսերի տարբեր տեսակների մոտ (ինտերֆազի **S**-փուլ): Քրոմոսոմների բաղադրության մեջ մտնող սպիտակուցներն անցնում են ցիտոլազմայից կորիզ, որտեղ միանում են ՂՆԹ-ի մոլեկուլներին, այնուհետև տեղի է ունենում քրոմոսոմների կրկնապատկում:

ՂՆԹ-ի կրկնապատկումից հետո բջիջը նախապատրաստվում է կիսվելում (ինտերֆազի **G₂**-փուլ): Կրկնապատկվում են բջջային կենտրոնի ցենտրիոլները, տեղի են ունենում բաժանման իլիկի թելիկները կազմող սպիտակուցների սինթեզ և այլ գործընթացներ:

Բազմաթիվ օրգանիզմներն ունեն նաև այնպիսի բջիջներ, որոնք չեն բաժանվում, և դրանց ինտերֆազը շարունակվում է շատ տարիների ընթացքում: Դրանցից են նյարդային բջիջները, որոնք կորցրել են բաժանվելու ընդունակությունը և իրենց գոյությունը պահպանում են օրգանիզմի ամբողջ կյանքի ընթացքում:

ՂՆԹ-ի կրկնապատկումը: Էռլարիիտ բջիջներում ՂՆԹ-ն պարունակվում է կորիզում, ինչպես նաև միտոքոնդրիումներում և քլորոպլաստներում: Կորիզում ՂՆԹ-ն մտնում է քրոմոսոմների կազմի մեջ սպիտակուցների հետ միացած:

Բջջների և օրգանիզմների ժառանգական տեղեկատվության սերներից սերունդ փոխանցման հիմքում ընկած է ՂՆԹ-ի կրկնապատկման գործընթացը: Այս բարդ պրոցեսն իրականանում է մի շաբաթ ֆերմենտների և ֆերմենտային ակտիվություն չունեցող սպիտակուցների միջոցով: Կրկնապատկման արդյունքում առաջանում են ՂՆԹ-ի երկու միանման կրկնակի պարույրներ, որոնք չեն տարբերվում նախնական մայրական մոլեկուլից: ՂՆԹ-ի կրկնապատկման հիմքում ընկած է **լրացման** (**կոմպլեմենտարության**) **սկզբունքը**, որտեղ մայրական մոլեկուլի յուրահաքանչյուր շղթան մատրիցա է ծառայում նոր սինթեզվող շղթայի համար:

Թե ինչպես է տեղի ունենում ՂՆԹ-ի կրկնապատկումը, ցույց է տրված **նկար 128-ում**: ՂՆԹ-ի կրկնակի պարույրը ֆերմենտի ազդեցությամբ սկսում է մի ծայրից հետ ոլորվել, որի շնորհիվ նուկլեոտիդների միջև քանդվում են ջրածնային կապերը և միմյանցից առանձնացած շղթաներից յուրաքանչյուրի վրա շրջապատում գտնվող ազատ նուկլեոտիդներից նոր շղթաներ են հավաքվում: Նոր շղթաների հավաքումն ընթանում է ճշգրիտ համապատասխանությամբ կոմպլեմենտարության (լրացման) սկզբունքով: Ինչպես արդեն գիտենք, յուրաքանչյուր Ա-ի դիմաց կանգնում է **Թ-ն**, **Գ-ի** դիմաց՝ **Ց-ն**, և հակառակը: Որպես հետևանք ՂՆԹ-ի մեկ մոլեկուլի փոխարեն առաջանում են երկուսը՝ ճիշտ նույնական նուկլեոտիդային հաջորդականությամբ, ինչպիսին ուներ նախնականը:

Այսպիսով, շղթաներից մեկը չի փոխվում և ծառայում է որպես մատրիցա, իսկ մյուս շղթան նոր է սինթեզվում, այլ կերպ ասած, սինթեզն իրականանում է **կիսակոնսերվատիվ սկզբունքով**:


ԴՆԹ-պոլիմերագ ֆերմենտը, որն իրականացնում է նոր շղթաների սինթեզը, կարող է տեղաշարժվել միայն մեկ ուղղությամբ. Տախ սինթեզն իրականացնում է մի շղթայում, հետո՝ հակառակ ուղղությամբ տեղափոխվում է մյուս շղթա (**նկ. 128**), այսպիսով, հատված առ հատված իրականացնելով կրկնապատկման պրոցեսը: Առանձին հատվածների միացումը կատարվում է **ԴՆԹ-լիզագ ֆերմենտի միջոցով**:

Էռլարիոս քիզներում ԴՆԹ-ի կրկնապատկումը սկսվում է միաժամանակ մի քանի հատվածներում:


Բակտերիայի բջջում ԴՆԹ-ի կրկնապատկմանը մասնակցում է 15 սպիտակուց, իսկ էռլարիոս քիզներում ավելի շատ թվով սպիտակուցներ, որոնց փոխամածայնեցված գործունեությունը զարմանք է առաջացնում:

Ինչպես նշվեց, ԴՆԹ-ի սինթեզն ընթանում է ինտերֆազի միջն ժամանակահատվածում, և նրա տևողությունը տարբեր է կենդանիների և բույսերի տարբեր տեսակների մոտ: Օրինակ՝ կաթնասունների քիզներուն այդ գործընթացը տևում է 6-10 ժ, և այդ ժամանակի ընթացքում ԴՆԹ-ի յուրաքանչյուրը մոլեկուլ կառուցում է իր նման երկրորդ այդպիսի մոլեկուլը: Քետևաբար, եթե մինչև սինթեզի սկիզբը մեկ քրոմոսոմի մեջ կար ԴՆԹ-ի մեկ մոլեկուլ, ապա սինթեզի ավարտից հետո քրոմոսոմի կազմի մեջ մտնում են երկու կատարելապես իրար նման ԴՆԹ-ի մոլեկուլներ:

ԴՆԹ-ի կրկնապատկման տարբեր փուլերի հետազոտման մեջ մեծ է ամերիկացի գիտնական, Նոբելյան մրցանակի դափնեկիր **Ա. Կորնբերգի** (**նկ. 129**) դերը, ով հայտնաբերելով ԴՆԹ-պոլիմերագ ֆերմենտը՝ դեռևս 1956 թ. փորձանոթում կարողացավ սինթեզել ԴՆԹ:



Նկ. 128. ԴՆԹ-ի կրկնապատկումը:
Ալաբներով ցույց են տրված նոր սինթեզվող
շղթաները:




Նկ. 129. Ա. Կորնբերգ (ծ. 1918թ.):

Մատրիցային սինթեզի ռեակցիաները: Կենդանի օրգանիզմներում ԴՆԹ-ի կրկնապատկման, ՌՆԹ-ի և սպիտակուցի սինթեզի ռեակցիաների օրինակով մենք հանդիպում ենք նոր տիպի ռեակցիաների: Անկենդան մարմիններում այդպիսի ռեակցիաներ հայտնի չեն: Դրանք կոչվում են մատրիցային սինթեզի ռեակցիաներ:

Դիշենք, որ «մատրիցա» տերմինը տեխնիկայում նշանակում է կաղապար, որն օգտագործվում է մետաղադրամներ, մեղալներ և այլն ծուլելու համար: Ստացված համաձուլվածքը ստույգ վերարտադրում է ծուլման համար ծառայող կաղապարի բոլոր մանրամասները: Մատրիցային սինթեզը հիշեցնում է կաղապարի մեջ ծուլումը. նոր մոլեկուլները սինթեզվում են ստույգ համապատասխան պլանին: Մատրիցային սկզբունքն ընկած է նույլեինաթրուների և սպիտակուցների կուցնասահնթեզի ռեակցիաների հիմքում: Այս ռեակցիաներում ապահովում է մոնոմեր օղակների ստույգ հաջորդականությունը սինթեզվող պոլիմերներում: Եթե այսպիսի ռեակցիաները կատարվեին մոլեկուլների պատահական ընդհարման հետևանքով, դրանք անվերջ դանդաղ կնքանային: Բայց մոլեկուլների սինթեզը ֆերմենտների միջոցով, կաղապարի հիման վրա արագ և ստույգ է իրականանում:

Բջջում մատրիցայի դերը խաղում են ԴՆԹ-ի կամ ՌՆԹ-ի մոլեկուլներն: Այն մոնոմերները, որոնցից սինթեզվում է պոլիմերը, նույլեինաթրուները կամ ամինաթրուները կոմպլեքսներության սկզբունքին (Ակ. 130) համապատասխան ֆերմենտների միջոցով մատրիցայի վրա դասավորվում և ֆիքսվում են խիստ որոշակի կարգով: Այնուհետև տեղի է ունենում մոնոմեր օղակների միացում, պոլիմեր շղթայի առաջցում, և պատրաստի պոլիմերը իջնում է մատրիցայից: Դրանից հետո մատրիցան պատրաստ է ճիշտ նույնանձնան նոր պոլիմեր մոլեկուլի հավաքմանը:

Մատրիցային սինթեզի ռեակցիաները կենդանի բջջի ուրույն առանձնահատկությունն է: Այդպիսի ռեակցիաներից են ԴՆԹ-ի կրկնապատկումը, բոլոր տեսակի ՌՆԹ-ների սինթեզը, սպիտակուցի կենսասինթեզը: ԴՆԹ-ի կրկնա-



Նկ. 130. Նույլեինաթրուները միանում են միմյանց ըստ կոմլեմենտարության սկզբունքի:

պատկման համար մատրիցա են ծառայում ԴՆԹ-ի երկու շղթաները, ՌՆԹ-ների սինթեզի համար՝ ԴՆԹ-ի մեկ շղթան, իսկ սպիտակուցի կենսասինթեզի դեպքում՝ ի-ՌՆԹ-ի մոլեկուլը:

Մատրիցային սինթեզի ռեակցիաներն ընկած են ժառանգական ինֆորմացիայի իրականացման, դրա սերնդից սերունդ փոխանցման հիմքում:



Դարցեր կրկնության համար.

1. Ի՞նչպիսի՞ պրոցեսներ են տեղի ունենում ինտերֆազի շրջանում:
2. Ի՞նչ պրոցես է նախորդում բջիջների բաժանմանը:
3. **Ի՞նչ ֆերմենտներ են մասնակցում ԴՆԹ-ի կրկնապատկմանը:**
4. **Ի՞նչ սկզբունքներով է տեղի ունենում ԴՆԹ-ի կրկնապատկումը:**
5. **Ի՞նչ դեր ունի ԴՆԹ-ի գործառնությունը:**
6. **Ի՞նչ դեր ունի ԴՆԹ-ի կրկնապատկման գործընթացը բջիջների և օրգանիզմների ժառանգական տեղեկատվության սերնդից սերունդ փոխանցման գործում:**
7. Որո՞նք են մատրիցային սինթեզի ռեակցիաները: Բջջում ո՞ր մոլեկուլներն են հանդիսանում որպես մատրիցա:


30. ԲՁՁԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ: ՄԻՏՈԶ

Միտոզ: Կորիզավոր բջիջների բաժանման հիմնական ձևը միտոզն է (հուն. «միտոս» թել.) (**Ակ. 131:**)

Բջիջներն ինտերֆազի ընթացքում սկսում են նախապատրաստվել բաժանմանը: Նախապատրաստական կարևորագույն գործընթացներից մեկը ԴՆԹ-ի սինթեզն է, այսինքն նրա մոլեկուլների կրկնապատկումը, որը տեղի է ունենում ինտերֆազի միջին ժամանակահատվածում: Այսպիսով, միտոզը սկսում են այն բջիջները, որոնք պարունակում են սինթեզից հետո կրկնապատկված ԴՆԹ:

Միտոզն անընդհատ գործընթաց է, բայց այն պայմանականորեն բաժանվում է չորս փուլի՝ պրոֆազ, մետաֆազ, անաֆազ և թելոֆազ: **Պրոֆազի** ժամանակ քրոմոսոմները սկսում են պարուրվել, կարծանալ և հաստանալ, ընդունում են բարակ թելերի տեսք (**Ակ. 131, 132**), և պրոֆազի վերջում բոլոր քրոմոսոմները լավ տեսանելի են դառնում լուսային մանրադիտակի տակ: Այդպիսի փաթեթավորման հետևանքով ԴՆԹ-ից տեղեկատվության արտագրումը դադարում է: Քրոմոսոմների պարուրումը պարտադիր է դուստր բջիջների միջև ժառանգական ինֆորմացիայի հաջող բաժանում իրականացնելու համար:

Հնարավոր է դառնում որոշել քրոմոսոմների չափսերը, ձևը, կառուցվածքը, քանակը: Յուրաքանչյուր քրոմոսոմ երկարավուն, խիտ մարմնիկ է, որը կազմված է սեղմվածքներով միմյանցից սահմանազատված մի քանի մասերից: Տարբերում են **առաջնային սեղմվածքը** կամ **ցենտրոմերը** (հուն. «մերոս» - մաս): Ցենտրոմերն այն տեղն է, որին բաժանման ժամանակ միա-



Նկ. 131. Միտոզի փուլերը:

նում են բաժանման իլիկի թելիկները: Քրոմոսոմի վրա կարող է լինել նաև երկրորդային սեղմվածք:

Յուրաքանչյուր քրոմոսոմ բաղկացած է պարուրած ոլորված ԴՆԹ-ի երկու թելից (մոլեկուլ), որոնք կոչվում են **քրոմատիդներ** կամ **դուստր քրոմոսոմներ**:

Պրոֆազի ժամանակ ցենտրոլները (իսկ դրանք յուրաքանչյուր բջջում երկուսն են) իրարից հեռանում են (Ակ. 131) դեպի բջջի հակադիր բևեռները, և դրանց միջև գոյանում է բաժանման իլիկ: Պրոֆազի վերջում կորիզաքրաղանքը լուծվում է, իսկ քրոմոսոմներն ազատ դասավորվում են ցիտոպլազմայի մեջ, կորիզակները վերանում են:

Պրոֆազին հաջորդում է միտոզի **մետաֆազը**: Մետաֆազում ավարտվում է բաժանման իլիկի ձևավորումը, և քրոմոսոմները դասավորվում են իլիկի հասարակածային հարթության վրա: Քրոմոսոմներն առաջացնում են մետաֆազային թիթեղ, և յուրաքանչյուր քրոմոսոմին կենտրոնական մասում (ցենտրոլներ) կպչում է իլիկի թելիկներից մեջը: Յուրաքանչյուր քրոմոսոմում տեղի է ունենում բաժանում՝ քրոմատիդների միմյանցից առանձնացում (Ակ. 132):

Եթե բոլոր քրոմոսոմները կպած են լինում բաժանման իլիկի թելիկներին, յուրաքանչյուր քրոմոսոմի քրոմատիդները սկսում են միմյանցից հեռանալ դեպի բջջի բևեռները, մեկ բևեռին մոտենում է մի քրոմատիդ, հակադիր


բևեռին՝ մյուսը: Քրոմատիդների դեպի բջջի հակադիր բևեռներ տարամիտվելու սկիզբը նշանակում է, որ սկսվել է միտոզի հաջորդ փուլը՝ **անաֆազը**: Անաֆազում քրոմատիդները (դրւատը քրոմոսոմները) տարամիտվում են դեպի բջջի բևեռները: Քրոմոսոմների շարժումն իրականանում է բաժանման հիմքի թելիկների շնորհիվ, որոնք կծկվում են և դրւատը քրոմոսոմներին ձգում բջջի հասարակածից դեպի բևեռները (նկ. 131): Քրոմոսոմների շարժման ընթացքում օգտագործվում է ԱԵՖ-ի էներգիան:

Միտոզի վերջին փուլը **թելոֆազն** է: Թելոֆազում բջջի բևեռներին մոտեցած քրոմոսոմներն սկսում են ապապարուրվել, դրանք երկար թելիկների տեսք են ընդունում և միահյուսվում իրար, որը բնորոշ է բաժանվող կորիզիդն (նկ. 131): Դրւատը կորիզաներում նորից կորիզաթաղանթ է գոյանում, ձևավորվում են կորիզակները և լրիվ վերականգնվում է ինտերֆազին բնորոշ կորիզի կառուցվածքը: Թելոֆազի ընթացքում տեղի է ունենում նաև ցիտոպլազմայի բաժանում՝ **ցիտոլիհնեզ**, որի հետևանքով բջջաբանի բաժանման արդյունքում երկու դրւատը բջիջներն անջատվում են միմյանցից: Այս բջիջները լրիվ կերպով նման են մայր բջջին: Կենդանական բջիջներում ցիտոպլազմայի կիսումն իրականանում է ալազմային թաղանթի ներփակման եղանակով, իսկ բուսական բջիջներում թաղանթը ձևավորվում է բջջի ներսում՝ հասարակածային հարթությունում և տարածվելով դեպի բևեռներ՝ բջջը բաժանում է երկու մասի:

Միտոզի նշանակությունը: Միտոզի հիմնական կենսաբանական նշանակությունը կայանում է նրանում, որ դրւատը բջիջներն ստանում են նույն ժառանգական տեղեկատվությունն, ինչ ունի մայր բջիջը, դրա հետ մեկտեղ նաև նույն քրոմոսոմային հավաքակազմը (նկ. 133): Դա ապահովում է ծնողական բջիջների և դրւատը բջիջների գենետիկական կայունությունը:

Միտոտիկ բաժանումների հետևանքով բջիջների թիվն ավելանում է, որն ընկած է կենդանի օրգանիզմների աճման գործընթացների հիմքում:


Անսեռ եղանակով բազմացող շատ օրգանիզմների (տարբեր բույսեր, կենդանիներ և այլն) բազմացման հիմքում ընկած է միտոտիկ բաժանումը:



Նկ. 132. Քրոմոսոմը պրոֆազում:

Դրա հետ մեկտեղ, այն ընկած է նաև ռեգեներացիայի (վերականգնման) և բջիջների փոխարինման գործընթացների հիմքում:

Եթե միտոզի բնականոն ընթացքում տեղի ունենա որևէ խանգարում, և դուստր բջիջներում քրոմոսոմները հավասարաչափ չբաշխվեն, այլ լինեն ավելի կամ պակաս, քան մայր բջջի կորիզում էին, ապա դա կարող է բերել կենսագործունեության էական փոփոխությունների կամ նույնիսկ բջջի ոչնչացման: Դրա հետ մեկտեղ, քրոմոսոմային փոփոխությունները՝ մուտացիաներն էվոլյուցիայի համար կարող են ծառայել որպես նյութ:



Նկ. 133. Քրոմոսոմների հավասարաչափ բաշխումը
միտոտիկ բաժանման ժամանակ:

Բջջի կենսական ցիկլում միտոզի տևողությունը շատ ավելի կարծ է, քան ինտերֆազի տևողությունը: Բջիջների մեծ մասում միտոզի ամբողջ գործընթացը պրոֆազից մինչև բելոֆազի ավարտը, տևում է 1-2 ժ, իսկ ինտերֆազը շատ ավելի երկար ժամանակահատված է:

Դարցեր կրկնության համար.



1. Ինչպիսի՞ փուլեր են բնորոշ միտոտիկ բաժանմանը:
2. Նկարագրե՛ք միտոզի առանձին փուլերը:
3. Ի՞նչ նշանակություն ունի միտոտիկ բաժանումը կենդանի օրգանիզմների համար:
4. Ի՞նչ ժամանակամիջոց է գրավում միտոզը բջջի կենսական փուլերում:
5. Ինչի՞ կարող են հանգեցնել միտոզի բնականոն ընթացքի խանգարումները:

31. ՔՐՈՍՈՍՈՍԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՁՄԵՐ

Տեսակի չափանիշներից մեկի՝ գենետիկական չափանիշի հիմքը կազմում է քրոմոսոմների քանակը բջջում, որը օրգանիզմի յուրաքանչյուր տեսա-

կի համար հաստատուն մեծություն է: Կենդանի օրգանիզմների որոշ տեսակների քրոմոսոմների դիպլոիդ քանակը նշված են **աղյուսակ 2-ում**: Աղյուսակի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ կենդանի օրգանիզմների կազմավորվածության մակարդակը կախված չէ քրոմոսոմների թվից:

Աղյուսակ 2

Որոշ կենդանի օրգանիզմների քրոմոսոմների դիպլոիդ հավաքակազմները (փակագծերում նշված են տեսակների լատիներեն անվանումները):


կենդանի օրգանիզմ	քրոմոսոմների դիպլոիդ հավաքակազմը
------------------	-------------------------------------

մարդ բանական (<i>Homo sapiens</i>)	46
մակակ ռեզուս (<i>Macacus rhesus</i>)	42
այծ տնային (<i>Capra hircus</i>)	60
առնետ գորշ (<i>Rattus norvegicus</i>)	42
մողես ճարպիկ (<i>Lacerta agilis</i>)	38
ճանճ սենյակային (<i>Musca domestica</i>)	12
պտղաճանճ դրոզոֆիլ (<i>Drosophila melanogaster</i>)	8
հիդրա սովորական (<i>Hydra vulgaris</i>)	32
մալարիայի պլազմոնիտում (<i>Plasmodium malariae</i>)	2
ոլոր ցանքսային (<i>Pisum sativum</i>)	14
լոբի սովորական (<i>Phaseolus vulgaris</i>)	22
գարի սովորական (<i>Hordeum vulgare</i>)	14
ցորեն փափուկ (<i>Triticum aestivum</i>)	42

Չբաժանվող կորիզներում քրոմոսոմները նրբագույն թելերի ձև ունեն, և այդ պատճառով հնարավոր չէ դրանք տեսնել լուսային մանրադիտակով: Այս նրբագույն թելերը, որոնցից յուրաքանչյուրն սպիտակուցի հետ միացած ԴՆԹ-ի մեկ մոլեկուլ է, կարող են 1 սմ-ից ավելի երկար լինել: Չբաժանվող կորիզների թելաձև քրոմոսոմները դասավորվում են կորիզահյութում, միահյուսված են իրար հետ, և դրանց առանձին-առանձին տեսնելը լուսային մանրադիտակի օգնությամբ անհնարի:

Սակայն երկարությամբ խիստ ձգված թելաձև քրոմոսոմներն, ինչպես և դրանց առանձին մասերը, լավ երևում են էլեկտրոնային մանրադիտակի օգնությամբ:

Բջջակորիգում պարունակվող քրոմոսոմները միշտ զույգերով են լինում, այսինքն կան երկուական միանման կամ **հոմոլոգ քրոմոսոմներ**, որոնք զույգ են կազմում: Սեռական եղանակով բազմացող օրգանիզմների մոտ այդ քրոմոսոմներից մեկը մայրական է, իսկ մյուսը՝ հայրական: Այսպես, մարդու 46 քրոմոսոմները կազմում են 23 զույգ, յուրաքանչյուր զույգում կա երկու միանման քրոմոսոմ (**նկ. 134**): Տարբեր զույգերի քրոմոսոմներն իրարից տարբերվում են մեծությամբ, ձևով, առաջնային և երկրորդային սեղմվածքների դասավորության տեղերով, գեների պարունակությամբ և հաջորդականությամբ:



Նկ. 134. Տղամարդու և կնոջ քրոմոսոմային դրվագի հավաքակազմները:

Բջջակորիգում պարունակվող քրոմոսոմների ամբողջությունը կոչվում է **քրոմոսոմային հավաքակազմ**: Քրոմոսոմային որոշակի հավաքակազմը բնորոշ է օրգանիզմների յուրաքանչյուր տեսակի համար: **135-րդ նկարում** բերված են դրոգոֆիլ պտղածանմի արուի և էգի քրոմոսոմային հավաքակազմները:

Սեռական եղանակով բազմացող յուրաքանչյուր բազմաբջիջ օրգանիզմում կան երկու կարգի բջիջներ՝ **սոմատիկ** (մարմնական, ոչ սեռական),

որոնք մտնում են մարմնի բոլոր հյուսվածքների և օրգանների կազմության մեջ, և **սեռական բջիջներ** (գամետներ): Որպես կանոն, մարմնական բջիջների կորիզները պարունակում են դիպլոիդ (կրկնակի) հավաքակազմ: Սոմատիկ բջիջի քրոմոսոմային հավաքակազմի բանակական և որակական հատկանիշերի ամբողջությունը կոչ-



Նկ. 135. Դրոգոֆիլ պտղածանմի էգի և արուի քրոմոսոմային հավաքակազմները:

Վում է **կարիոտիպ**: Սեռական բջիջների կորիզները պարունակում են հապլոիդ թվով քրոմոսոմներ: Եթե ոլորի դիպլոիդ հավաքակազմը պարունակում է 14 քրոմոսոն, ապա հապլոիդ հավաքակազմում կա 7 քրոմոսոն: Եթե մարդու դիպլոիդ հավաքակազմը կազմված է 46 քրոմոսոմից, ապա հապլոիդ հավաքակազմը հավասար է 23 քրոմոսոմի: Հապլոիդ հավաքակազմում յուրաքանչյուր գույքից կա միայն մեկ քրոմոսոն:

Թե՛ դիպլոիդ և թե՛ հապլոիդ հավաքակազմի քրոմոսոմների թիվն օրգանիզմների յուրաքանչյուր տեսակի հաճար հաստատուն է:

Միտոզի և մեյոզի պրոցեսների խախտման հետևանքով տվյալ տեսակի որոշ առանձնյակների մոտ կարող են առաջանալ քրոմոսոմային հավաքակազմի առանձին խախտումներ, կապված քրոմոսոմների թվի փոփոխության հետ: Երբեմն, դա կարող է տեղի ունենալ օրգանիզմի անհատական զարգացման ընթացքում, բերելով նրան, որ օրգանիզմի բջիջների մի մասն ունենում է բնականոն քրոմոսոմային հավաքակազմ, իսկ մյուս մասը՝ խախտված:

Քրոմոսոմների թիվը կարող է հապլոիդ հավաքակազմի բազմապատճեկ անգամ ավելանալ՝ առաջացնելով **պոլիպլոիդ** ձևեր: Այն սովորաբար կապված է միտոզի կամ մեյոզի պրոցեսների խախտման հետ, որը կարող է կատարվել և սոսատիկ, և սեռական բջիջներում: Արդյունքում կարող են առաջանալ **տրիպլոիդ**, **տետրապլոիդ**, **հեքսապլոիդ** և այլ հավաքակազմով օրգանիզմներ: Բնության մեջ պոլիպլոիդ տեսակներ բավական հաճախ են հանդիպում բուսական աշխարհում և շատ հազվադեպ՝ կենդանիների մոտ: Հատկապես շատ են պոլիպլոիդ տեսակները ծածկասերմ բույսերի մետ, դրանց թվում շատ են մշակովի բույսերը: Կենդանիների պոլիպլոիդ տեսակներ հանդիպում են հիմնականում հերմաֆրոդիտ և կուսածին օրգանիզմների մոտ:

Քրոմոսոմների փոփոխությունները միտոզի տարբեր փուլերում: Ինտերֆազում և միտոզի տարբեր փուլերում քրոմոսոմներում առկա է ժառանգական տեղեկատվության տարբեր քանակ: ԴՆԹ-ի կրկնապատկումից հետո յուրաքանչյուր քրոմոսոն կրում է երկու քրոմատիդ, որը շարունակվում է ամբողջ պրոֆազում և մետաֆազում: Սկսած անաֆազից, երբ տեղի է ունենում քրոմատիդների տարամիտում դեպի բներներ, յուրաքանչյուր քրոմոսոն կրում է միայն մեկ քրոմատիդ, որը տևում է մինչև ինտերֆազի միջին, S-փուլը:

Դարցեր կրկնության համար.




1. Նոյն տեսակին պատկանող առանձմյակներն ինչպիսի՞ քրոմոսոմային հավաքակազմեր ունեն:
2. Միտոզի ընթացքում ի՞նչ փոփոխությունների են ենթարկվում քրոմոսոմները:
3. Կախված է արդյո՞ք քրոմոսոմների քանակը կենդանի օրգանիզմների կազմավորման մակարդակից:
4. Ո՞ր բջիջներն են ունենում քրոմոսոմների դիպլոիդ հավաքակազմ:
5. Ո՞ր բջիջներն են ունենում քրոմոսոմների հապլոիդ հավաքակազմ:
6. Ի՞նչ է կարիոտիպը:

32. ԲԱԶԱՆԻԳՄԱՆ ՕՐԳԱՆԻՉԱՍԵՐԻ ԲՁԻՉԱՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ

Միաբջիջ օրգանիզմների բջիջը կարող է կատարել կենդանի օրգանիզմի բոլոր ֆունկցիաներն՝ ինքնուրույն տեղափոխվել, սնվել, վերամշակել սնունդը, շնչել, բազմանալ և այլն: Որոշ միաբջիջ օրգանիզմների գաղութերում բջիջները ձեռք են բերում որոշակի մասնագիտացում այս կամ այն ֆունկցիան կատարելու համար, օրինակ, վոլվոքսի գաղութերում (**նկ. 136**): Ենթադրություն է, որ բջիջները ամբողջություն են կազմում, բայց եթե գգուշությամբ որևէ բջիջ անջատենք գաղութից, ապա նա կկարողանա ինքնուրույն ապրել, քանի որ պահպանում է ամբողջ օրգանիզմի բոլոր ֆունկցիաները:

Բազմաբջիջ օրգանիզմների գաղացման արդյունավետում բջիջները մասնագիտանում են որոշակի ֆունկցիաներ իրականացնելու համար, որը կոչվում է **տարբերակում**: Այլ կերպ ասած, առանձին բջիջների միջև տեղի է ունենում աշխատանքի բաժանում: Այդ բջիջները տարբերվում են ոչ միայն ֆունկցիաներով, այլ նաև ձևով (**տես նկ. 70**):



Նկ. 136. Վոլվոքսի գաղութը:

Տարբեր կենդանի օրգանիզմներում բջիջների և բջիջների տիպերի քանակն էապես տարբերվում է իրարից (**աղյուսակ. 3**): Այն ձևավորվել է կենդանի օրգանիզմների պատմական զարգացման ընթացքում:

Աղյուսակ 3.

Տարբեր կենդանի օրգանիզմներում բջիջների և բջիջների տիպերի մոտավոր թվաքանակը:

Օրգանիզմ	Բջիջների մոտավոր թիվը	Բջիջների տիպերի մոտավոր թիվը
նախակենդանիներ	1	1
իիդրա	10^8	10-20
օղակավոր որդեր	10^{12}	100
միջատներ	10^{12}	100
մարդ	10^{15}	1000

Բազմաբջիջ օրգանիզմների բջիջներն ըստ կառուցվածքի և կատարած ֆունկցիաների միավորվում են հյուսվածքների, իսկ հյուսվածքներն ել՝ օրգանների մեջ և, ձեռք բերելով մասնագիտացում, ավելի արդյունավետ են իրականացնում իրենց յուրահատուկ ֆունկցիան, բայց դրա հետ մեկտեղ ավելի կախյալ են դաշնում այլ բջիջների գործունեությունից: Օրինակ՝ մկանային բջիջների կծկումների շնորհիվ իրականանում են օրգանիզմի տարբեր շարժումները, բայց դրանց գործունեության համար անհրաժեշտ են՝ սննդանյութերի մատակարարում աղիքների կողմից, և թթվածնի մատակարարում երիթրոցիտների միջոցով: Միաժամանակ, աղիքային բջիջներին նույնպես անհրաժեշտ է թթվածին, այնպես որ օրգանիզմի բոլոր բջիջները գտնվում են փոխադարձ կախվածության վիճակում:

Որպեսզի օրգանիզմի բջիջները գործեն միասնական, անհրաժեշտ է օրգանիզմում դրանց սերտ համագործակցությունը:

Բազմաբջիջ օրգանիզմների աճը պայմանավորված է բջիջների բաժանումով, որը իրականացվում է միտոզի եղանակով: Դա նշանակում է, որ բոլոր բջիջները, որոնք առաջացել են նախնական զիգոտից կամ սպորից, նման են իրենց գենոտիպով և, հետևաբար, նաև պետք է ունենան նույն կառուցվածքը և ֆունկցիան: Ակնհայտ է, որ հասուն օրգանիզմներում դա այդպես չէ: Ներկայումս գիտնականներն ապացուցել են, որ բջիջների մասնագիտացումը պայմանավորված է տարբեր բջիջներում տարբեր գեների «միացման» և «անջատման» հետ: Դա հնարավոր է եղել նաև ապացուցել բույսերի և կենդանիների վրա կատարած փորձերով: Դեռևս անցած դարի 60-ական թվականներին հայտնի դարձավ, որ տարբերակված բուսական բջջից կարելի է ստանալ ամբողջական օրգանիզմ (**նկ. 137**): Նմանատիպ արդյունքներ ստացվել են նաև կենդանիների վրա կատարած փորձերից: Օրինակ՝ գորտի աղիքային էպիթելի բջջի կորիզից ժառանգական ինֆորմացիան տեղափոխելով ձվաբջիջ, որտեղից նախապես հեռացված էր ժառանգական ինֆորմացիան, հնարավոր է եղել ստանալ շերեփուկ, հետագայում նաև սեռահասուն գորտ: Այս մեթոդի շնորհիվ հնարավոր է ստանալ ցանկացած թվով իրար նման գորտեր: Մեկ ծնողական առանձնյակից ստացված գենետիկորեն նիակերա սերունդը կոչվում է **կլոն**, իսկ մեթոդը **կլոնավորում**: Դաջողվել է ստանալ նույնիկ կաթնասունների կլոններ (**նկ. 138**):



Նկ. 137. Տարբերակված բուսական բջջից կարելի է ստանալ ամբողջական օրգանիզմ:



Նկ. 138. Կաթնասունների կլոնավորումը՝ Դոլլի ռժխարք, կլոնավորմամբ ստացված շներ և հորթեր:

Դարցեր կրկնության համար.

1. Ի՞նչ գործոններ են ազդում բջիջների տարրերակման վրա:
2. Յուրաքանչյուր բջիջ պարունակում է արդյո՞ք օրգանիզմի մասին լրիվ տեղեկատվություն:
3. Ինչի՞ է բերում բջիջների տարրերակումը:
4. **Ի՞նչ է կլոնավորումը:**
5. Ի՞նչ նպատակով կարելի է օգտագործել կլոնավորումը:

Կան գեներ, որոնց տրանսկրիպ-
ցիան իրականանում է բոլոր բջիջ-
ներում՝ ապահովելով դրանց միանման
ֆունկցիաներով: Իսկ մնացած գեները
յուրահատուկ են առանձին բջիջներին՝
բնորոշ հատկանիշների, ֆունկցիանե-
րի իրականացման համար:

Երեմն տարրերակված բջիջներն
սկզբում են այլ սպիտակուցներ սին-
թեզել: Այդ երևույթը ընկած է ռե-
գեներացիայի (վերականգնման) հիմ-
քում: Ուգեներացիայի ընդունակու-
թյուն ունեն բոլոր կենդանի օրգա-
նիզմները, որոնց մոտ այն կարող է
ունենալ տարբեր դրսևորումներ: Որ-
քան բարձր է կենդանի օրգանիզմների
կազմավորվածության մակարդակը և
«մասնագիտացումը», այնքան նրանք
ավելի դժվարությամբ են փոխում
իրենց «մասնագիտացումը»:

Ընդհանուր առմամբ, բջիջների
տարրերակման վրա ազդում են կո-
րիզը, ցիտոպլազման, այլ բջիջներ,
ինչպես նաև արտաքին միջավայրը:
Ներկայումս մարդկության առաջ ծա-
ռացած խնդիրներից է նաև բջիջների
տարրերակման մեխանիզմի լրիվ բա-
ցահայտումը: Դաստատված է, որ բը-
ջիջների տարրերակման վրա ազդում
են նաև հորմոնները, որոնք ուղղակի
կամ անուղղակի կերպով կարող են
ազդել գեների գործունեության վրա:



ԳԼՈՒԽ 7. ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

33. ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԲԱԶՄԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ: ԱՆՍԵՌ ԲԱԶՄԱՑՈՒՄ

Բազմացումը կյանքի էության կարևորագույն բնութագրերից մեկն է: Բազմացման ընդունակություն ունեն առանց բացառության բոլոր կենդանի օրգանիզմները՝ բակտերիաներից մինչև կարնասունները: Կենդանիների և բույսերի յուրաքանչյուր տեսակի գոյությունը, ծնողական առանձնյակների և նրանց սերնդի հաջորդականությունը (ժառանգականությունը) պահպանվում է միայն բազմացման շնորհիվ:

Մոլեկուլային մակարդակում տեղի ունեցող այն գործընթացը, որը պայմանականորեն կարելի է բազմացում անվանել, արտահայտվում է ԴՆԹ-ի մոլեկուլների ինքնակրկնապատկման եզակի ընդունակությամբ: Բջջում բազմանալու ընդունակ են նաև այնպիսի օրգանիզմներ, ինչպիսիք են միտոքոնդրիումները և քլորոֆիլաստները: Միաբջիջ և բազմաբջիջ օրգանիզմների բջիջները բազմանում են բաժանմամբ: Օրգանիզմի բազմացման ձևերը շատ բազմազան են ու բարդ, բայց բազմացման բոլոր ձևերի հիմքում ընկած է բջջի բաժանումը:


Հայտնի են օրգանիզմների բազմացման երկու հիմնական ձևեր՝ անսեռ և սեռական:

Անսեռ բազմացում: Անսեռ բազմացմանը մասնակցում է ծնողական միայն մեկ առանձնյակ, որը բաժանվում է, բողբոջում կամ սպորներ է առաջացնում: Արդյունքը լինում է այն, որ ձևավորվում են երկու կամ ավելի դուստր առանձնյակներ, որոնք իրենց ժառանգական հատկանիշներով նման են ծնողական առանձնյակին: Նրանց հատկանիշների տարբերություն առաջանում է միայն առանձին մոլուսացիաների արդյունքում:

Անսեռ բազմացումը լայնորեն տարածված է բակտերիաների և կապտականաց ջրիմուռների մոտ: Դրանց մոտ բացակայում է մեյոզը: Այս պրոկարիոտ օրգանիզմներն ունեն անսեռ բազմացման առավել պարզ ձև: Արանց մարմինը կիսվում է և առաջանում են երկու դուստր առանձնյակներ, որոնցից յուրաքանչյուրը մեկ ամբողջական օրգանիզմ է (**նկ. 139**):

Ավելի հաճախ հանդիպում է կրկնակի կիսումը, որի արդյունքում առաջանում են միանման դուստր բջիջներ: Երկու մասերի բաժանվելով են բազմանում նախակենդանիները (ամերիբաները, էվգլենաները, ինֆուզորիաները), միաբջիջ կանաչ ջրիմուռները: Սրանց բջիջների բաժանման հիմքում ընկած է միտոզը:

Բազմակի կիսումը բնորոշ է նախակենդանիներից սպորավորներին, մասնավորապես մալարիայի հարուցիչին՝ պլազմոդիումին: Սրանց բազմակի կիսումը կոչվում է **շիզոգնիա:**




Ակ. 139. *Salmonella* և *Bacillus* ցեղերի բակտերիաների կիսումը:

Բողբոջնամբ են բազմանում խմորասնկերը, հիդրաները, հիդրոիդ և կորալյան պոլիպները և մի շաբթ այլ առողջաշարներ: Բողբոջնամ ընթացքում մայրական առանձնյակի մարմնի մի փոքր հատվածն արտափրկում է, որը աստիճանաբար մեծանալով՝ ի վերջո անջատվում է և վարում ինքնուրույն կենսակերպ (Ակ. 140):


Տափակ որդերի որոշ տեսակներ, ծովաստղերը, որոշ ջրիմուռներ կարող են բազմանալ մարմինը մի քանի մասի բաժանելով, որոնցից յուրաքանչյուր մասը վերականգնում է բացակայող օրգանները և փոխարկվում ծնողական առանձնյակի նման անբողջական օրգանիզմի (Ակ. 141): Բազմացման այսպիսի ծեր կոչվում է **հատվածավորում (ֆրագմենտացիա):**

Ֆրազմենտացիան ավելի հաճախ դիտվում է ցածրակարգ օրգանիզմների մոտ, որոնք, ի տարբերություն ավելի բարձրակարգերի, պահպանում են **վերականգնման (ռեգեներացիայի)** ընդունակությունը համեմատաբար թույլ տարբերակված բջիջներից: Եթե որոշ որդերի մարմինը հեշտությամբ բաժանվում է առանձին մասերի և յուրաքանչյուր մասից վերականգնվում է առանձին օրգանիզմ, ապա ծովաստղերի մոտ այն իրականանում է պատահական ֆրազմենտացիայից հետո: Այս կենդանիները հետազոտման հետաքրքիր օբյեկտներ են տարբերակման պրոցեսի բացահայտման համար:



Ակ. 140. Հիդրայի բողբոջումը:

Բույսերի մեջ մասը, սնկերը բազմանում է անսեռ եղանակով՝ **սպորներով:** Սպորը հապլոիդ բջիջ է, պատված է խիտ թաղանթով և արտաքին միջավայրի անբարենպաստ պայմանների նկատմամբ կայուն է: Սպորներն առաջանում են հատուկ կառուցվածքներում՝ **սպորանգիումներում:** Զրում ապրող ջրիմուռները և որոշ սնկեր բազմանում են **զոռապոր-**



Նկ. 141. Տափակ որդերի բազմացումը մարմնի կիսվելով և ծովաստղի ռեգեներացիան մեկ ժառագայթից:

Աերով, որոնք ունեն մտրակներ և ջրային միջավայրում ակտիվ կերպով տարածվում են: Ցամաքային բույսերի սպորներն անշարժ են և պասիվորեն տարրում են քամու, ջրի և կենդանիների օգնությամբ: Սպորներն առաջանում են մեծ քանակությամբ և տեսակների արագ բազմացման և տարածման հնարավորություն են տալիս: Ծածկասերմ բույսերի միկրոսպորների և մեգասպորների մասին կարող եք տեղեկանալ կրկնակի բեղմնավորմանը նվիրված 38 պարագրաֆում:

Բակտերիաների սպորները ծառայում են ոչ թե բազմացման, այլ անբարենպաստ պայմաններին դիմակայելու համար:



Դարցեր կրկնության համար.

1. Ի՞նչ ձևով է արտահայտվում բազմացումը մոլեկուլային և օրգանոիդային մակարդակներով:
2. Ո՞րն է անսեռ բազմացումը:
3. Անսեռ բազմացման ի՞նչ ձևով գիտեք:
4. Ի՞նչ ձևով կարող են տարածվել սպորները:
5. Կարող է արդյո՞ք անսեռ բազմացմամբ ստացված սերունդը տարբերվել ծնողական առանձնյակներից:
6. Ի՞նչ է ֆրագմենտացիան և ի՞նչ պրոցես է ընկած նրա հիմքում:
7. Կիսման ինչպիսի՞ եղանակներ գիտեք: Ո՞ր օրգանիզմներին են դրանք բնորոշ:

34. ՎԵԳԵՏԱՏԻՎ ԲԱԶՄԱՑՈՒՄ: ԱՆՍԵՌ ԲԱԶՄԱՑՄԱՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բազմացնան այն եղանակը, որի դեպքում նոր բույսն առաջանում է վեգետատիվ օրգաններից, կոչվում է **ՎԵԳԵՏԱՏԻՎ ԲԱԶՄԱՑՈՒՄ**: Նոր առաջացած բույսը ժառանգում է մայրական օրգանիզմի բոլոր հատկանիշները և հատկությունները: Վեգետատիվ բազմացումը բույսերի մեջ լայն տարածում ունի և նրա ձևերը շատ բազմազան են:

Կոճղարմատը, պալարը և սոխուկը ձևափոխված ընձյուղներ են: Կոճղարմատներով բազմանում են սեզը, հիրիկը, հովտաշուշանը, թարխունը, շաքարեղեգը և այլ բույսեր: Կոճղարմատներն իրենց մեջ պարունակում են սննդանյութեր, որոնց հաշվին դրանց վրա գտնվող հանգույցներից զարգանում են հավելյալ արմատներ, իսկ բողբոջներից՝ վերգետնյա կանաչ ընձյուղներ:

Սոխուկներով բազմանում են սոխը, սխտորը, վարդակակաչը, շուշանը, ձնձաղիկը և այլն: Սոխուկի կողային բողբոջներից մայր սոխուկի վրա հաճախ ձևավորվում են դուստր սոխուկներ, որոնք հեշտությամբ բաժանվում են մայր սոխուկից: Սոխուկներում կուտակված պաշարանյութերի հաշվին առաջանում են հավելյալ արմատներ, իսկ գագաթնային բողբոջներից զարգանում են վերգետնյա ընձյուղներ: Այսպես, յուրաքանչյուր դուստր սոխուկ սկիզբ է տալիս նոր բույսի (**նկ. 142**):

142:



Նկ. 142. Սոխուկներով բազմացում:

Պալարներով բազմանում են կարտոֆիլը, գետնատանձը, գեղրգենին և այլն: Կարտոֆիլը կարելի է բազմացնել ամբողջական պալարներով, նրանից առանձնացված բողբոջներով՝ աչքերով, լույսի տակ նախապես ծըլեցրած պալարի վրա առաջացած ծիլերով և պալարի գագաթով, որտեղ կան բողբոջներ: Նպաստավոր պայմաններում բողբոջից զարգանում են հավելյալ արմատներ և վերգետնյա ընձյուղ, ձևավորվում է նոր

բույս, որը սկզբնական շրջանում սնվում է պալարում կուտակված սննդանյութերով (**նկ. 143**):

Որոշ բույսեր բազմանում են բեղիկներով. ծաղկած և պտղակալած թփից առաջանում են գետնատարած երկար ու բարակ ընձյուղներ՝ բեղիկներ: Բեղիկներով են բազմանում մշակովի ելակն, անտառամորին:

Սողացող ընձյուղներով են բազմանում սողացող երեքնուկը, մատնունին, սողացող սեզը, գորտնուկը և այլն:

Որոշ բույսերի ոչ շատ խոր, հորիզոնական տեղակայված արմատների վրա առաջանում են հավելյալ բողբոջներ, որոնցից աճում են վերգետնյա երիտասարդ ընձյուղներ՝ շառավիղներ: Արմատային շառավիղներ են համարվում նաև կտրած ծառի շուրջն առաջացած մացաները: Այսպես են բազմանում բալենին, բարդին, փշատենին, չիչխանը, կաղամախին, սալորենին, թխենին և այլն:

Կտրոնը բույսի վեգետատիվ օրգանների (արմատ, ընձյուղ, տերև) հատվածն է, որի վրա կան բողբոջներ և որն ընդունակ է արմատակալելու: Կրտորոններով բազմացումը վեգետատիվ բազմացման ամենատարածված ձևն է: Բուսերը կարող են բազմանալ ցողունային, արմատային, տերևային կրտորոններով: Այս ձևով են բազմանում բարդին, ուռենին, ֆիկուսը, բեգոնիան, տրադեսկանցիան, խաղողը, խորդենին, հաղարծենին, կոկոռչենին, փշատենին, մասրենին, խնձորենին, խատուտիկը, շատ բազմամյա մոլախոտեր:

Անդալիսով են բազմացնում խաղողը, տխենին, սալորենին, բալենին, կեռասենին և հատկապես այն բույսերը, որոնց կտրոնները չեն արմատակալու: Կարնանը հողին մոտ գտնվող ընձյուղը, առանց մայր բույսից կտրելու, թեքում են դեպի հողը այնպես, որ այն իր միջին մասով լինի հողի մեջ, իսկ ծայրը լինի հողից դուրս: Հողի մեջ գտնվող հատվածում կտրում են ընձյուղի բողբոջի տակ գտնվող կեղևը: Կտրվածքի տեղում ընձյուղը ծածկում են հողով, իսկ դուրս մնացած մասը ուղղաձիգ վիճակում ամրացնում հենակով: Աշնանն արմատակալելուց հետո ընձյուղը կտրում են մայր բույսից և տնկում հիմնական տեղում:



Նկ. 143. Կարտոֆիլի պալարներով բազմացում:



Ակ. 144. Բազմացում պատվաստով:

Նպատակահարմար է հազվադեպ հանդիպող տեսակների և դեղաբույսերի բազմացման համար:

Վեգետատիվ բազմացումը բնության մեջ ապահովում է բույսերի բազմաթիվ նոր առանձնյակների առաջացումը և տարածումը: Վեգետատիվ բազմացումը գյուղատնտեսության մեջ օգտագործում են մայրական բույսի սորտային հատկանիշները պահպանելու, կարծ ժամանակում առատ բերք ստանալու և արժեքավոր սորտերը պահպանելու համար: Այս եղանակը կարեւոր է այն բույսերի բազմացման համար, որոնք տվյալ պայմաններում չեն ծաղկում, փոշոտվում և պտղակալում կամ կազմավորում են վատորակ սերմեր:

Անսեռ բազմացման կենսաբանական նշանակությունը: Դամենատելով անսեռ և սեռական բազմացման գործընթացներն՝ անհրաժեշտ է նշել, որ երկու եղանակներն էլ ունեն խիստ որոշակի կենսաբանական նշանակություն: Երկուսն էլ պայմանավորում են կենդանի էակներին բնորոշ կարևորագույն՝ բազմացման ֆունկցիայի իրականացումը տարբեր մեխանիզմներով: Շատ օրգանիզմների մոտ դրանք մեկը մյուսին զուգակցված են, և բույսերի, կենդանիների շատ ներկայացուցիչներ բազմանում են թե՝ անսեռ, և թե՝ սեռական եղանակներով:

Անսեռ բազմացմանը բնորոշ են գործընթացի հեշտ իրականացումը (մասնակցում է մեկ առանձնյակ), արագ ընթացքը, մեծ արդյունավետությունը

գյուղատնտեսության մեջ լայնորեն կիրառվում է բույսերի բազմացումը պատվաստով (Ակ. 144): Պատվաստով բազմացնում են հատկապես այն բույսերը, որոնք դժվար են արմատակալում: Պատվաստը կիրառվում է բույսերի սորտային հատկանիշները բարելավելու և բերքատվությունը բարձրացնելու նպատակով: Եթե երկու տարբեր բույսեր կամ նրանց մասերը (բողբոջ, ցողուն) միակցվում, սերտաճում են մինյանց հետ, կազմավորվում է նոր բույս՝ պատվաստ:

Ներկայում լայն կիրառություն է ստացել բազմացումը բույսերի օրգանների այս կամ այն մասից կամ նույնիսկ մի քանի քչից հյուսվածքային կուլտուրայի ստացման եղանակով: Այդ նպատակով հյուսվածքի կտորը կամ մի քանի քչիցներ տեղափորում են փորձանորթի կամ թասիկների մեջ՝ հատուկ սննդային միջավայրում: Փորձանոթը դնում են խցիկում, որտեղ պետք է ապահովել համապատասխան ջերմություն, խոնավություն, լույս և այլն: Որոշ ժամանակ անց հյուսվածքային կուլտուրայից աճում են փոքրիկ բույսեր՝ իրենց բոլոր օրգաններով (Ակ. 145): Այս եղանակով բույսեր կարելի են բազմացնել տարվա բոլոր եղանակներին: Դա հատկապես



Նկ. 145. Բույսերի բազմացումը հյուսվածքային կուլտուրաներով:

(բեղունությունը): Այս առումով սեռական բազմացումն էապես գիշում է, քանի որ իրականացնան հաճար, որպես կանոն, անհրաժեշտ են երկու սեռին պատկանող ծնողական ձևերի հասունացած սեռական բջիջներ, դրանց միաձուլում, ինչը, բնականաբար, լրացուցիչ դժվարություններ է առաջ բերում և բացասաբար անդրադառնում գործընթացի արագության և բեղունության վրա: Հետևաբար, անսեր բազմացումն ունի վերոհիշյալ առավելությունները սեռական բազմացման նկատմամբ:

Միաժամանակ, անսեր բազմացման գլխավոր յուրահատկությունն այն է, որ առաջացած նոր առանձնյակներն ունենում են ծնողական առանձնյակին բնորոշ, նույնատիպ, այսինքն միկրոօջն ժառանգական հատկանիշները: Այդ պատճառով, միջավայրի հաստատուն պայմանների դեպքում առաջանում են ավելի մեծ թվով տվյալ պայմաններին հարմարված առանձնյակներ: Ժառանգական որոշ նոր հատկանիշներ կարող են ի հայտ գալ միայն հազվադեպ հանդիպող մոլուստացիաների հետևանքով: Այլ կերպ ասած՝ անսեր բազմացման հետևանքով տեսակի ներսում աճում է հիմնականում միևնույն ժառանգական հատկանիշներով օժտված առանձնյակների թվաքանակը և գենետիկական բազմազանություն գրեթե չի դիտվում: Հատկանիշների փոփոխականության բացակայությունը կարող է կործանարար լինել շրջակա միջավայրի մշտապես փոփոխվող պայմաններում: Չէ՞ որ միջավայրի պայմանների փոփոխությունները կարող են բարենպաստ չլինել տեսակի անփոփոխ հատկանիշների նկատմամբ, ինչը հարցականի տակ կդնի միջավայրի նոր պայմաններում տեսակի գոյությունն ընդհանրապես:



Դարցեր կրկնության համար.

1. Ո՞րն է կոչվում վեգետատիվ բազմացում և ի՞նչ նշանակություն այն ունի:
2. Ի՞նչ է արմատային շառավիղը, և ո՞ր բույսերն են բազմանում այդ ձևով:
3. Ո՞ր բույսերն է հնարավոր բազմացնել կտրոններով:
4. Ո՞ր բույսերն են բազմանում կոճղարմատներով, սիսուկներով և պալարներով:
5. Ինչպես է կատարվում բազմացումն անդալիսով և պատվաստով:
6. Ի՞նչ է հյուսվածքային կուլտուրան:
7. Ի՞նչ նշանակություն ունի անսեր բազմացումը:

35. ՍԵՌԱԿԱՆ ԲԱԶՄԱՑՈՒՄ

Սեռական բազմացման հիմքում ընկած է սեռական բջիջների՝ գամետների առաջացման պրոցեսը: Որպես կանոն, սեռական բազմացմանը մասնակցում են երկու ծնողական առանձնյակներ՝ արական ու իգական, բայց կարող է մասնակցել նաև մեկ ծնողական առանձնյակ, օրինակ, **հերմաֆրոդիտ օրգանիզմների** կամ **կուսածնության** դեպքում: Հերմաֆրոդիտ կոչվում են այն առանձնյակները, որոնք առաջացնում են և արական, և իգական գամետներ:

Այդպիսի օրգանիզմներից են ծածկասերմ բույսերի, աղեխորշավորների, տափակ որդերի ներկայացուցիչների մեծ մասը, շատ օղակավոր որդեր, որոց խեցքետնակերպեր, փափկամարմիններ, և նույնիսկ ծկներ: Յնարավորության դեպքում, հերմաֆրոդիտ օրգանիզմների բեղմնավորումը խաչածն է: **Բաժանասեր** օրգանիզմներում, ի տարբերություն հերմաֆրոդիտ օրգանիզմների, արական և իգական գամետները առաջանում են տարբեր առանձնյակներում: Շատ բաժանասեր օրգանիզմներում արտահայտված է **սեռական դիմորֆիզմը**, այսինքն արուները և էգերն արտաքնապես տարբերվում են միմյանցից (**նկ. 146**): Կուսածնությունն օրգանիզմի զարգացումն է չբեղմնավորված ձվից:

Իգական առանձնյակի սեռական գեղձերում առաջանում են **ձվաբջիջներ**, իսկ արական առանձնյակում՝ **սպերմատոզոդիմեր**: Իգական և արական գամետները միաձուլվում են և առաջացնում **զիգոս**՝ բեղմնավորված ձվաբջիջ, որը նոր օրգանիզմի զարգացման սկիզբ է տալիս:

Կենդանիների սեռական բազմացումը: Կենդանիների զգալի մասը միայն սեռական եղանակով է բազմանում: Անողնաշար և ողնաշարավոր կենդանիների տարբեր տեսակների սեռական բջիջների ձևը և չափսերը տարբեր են:

Ձվաբջիջներն ավելի հաճախ կլորավուն ձև են ունենում և դրանց ցիտոպլազմայում պարունակվում է սննդային նյութերի պաշար՝ դեղնուց: Ձվաբջիջներն անշարժ են: Ողնաշարավոր կենդանիների մեծ մասի ձվաբջիջները մանր են: Օրինակ՝ ճագարի ձվաբջիջի տրամագիծը 0,2 մմ է, մարդունը 0,06-0,15 մմ, ձըկներինը և երկկենցաղներինը 1-2 մմ, սողունների և թռչունների ձվաբջիջները խոշոր են և շատ դեղնուց են պարունակում, իսկ չափսերը հաս-



Նկ. 146. Կակաղողի արուն և էգը:

ԳԼՈՒԽ 7. ՕՐՎԱՆԻՉԱՌԵՐԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

Նույն են սանտիմետրերի (**տես նկ. 69**): Համեմատության համար ասենք, որ մարդու միջին մարմնական բջջի չափսերը մոտ 20 մկմ է:

Այս ձվաբջիջներում, որոնց զարգացումը տեղի է ունենում մայրական օրգանիզմից դուրս և բերում է մեծ կենդանիների ձևավորման, դեղնուցը կազմում է անբողջ ծավալի 95 %-ը, այն դեպքում, երբ կաթնասունների մոտ այն կազմում է 5 %-ից պակաս:

Ձվաբջիջն արտաքինից պատված է ձվաբջջային թաղանթով, որի բաղադրության մեջ գերակշռում են գլիկոպրոտեինները: Թաղանթի ներքին շերտը պաշտպանում է ձվաբջիջը մեխանիկական վնասվածքներից և գործում է որպես յուրահատուկ արգելք մեկ այլ տեսակին պատկանող սպերմատոզիդների համար:


Շատ ձվաբջիջների ալազմային թաղանթի տակ (այդ թվում նաև կաթնասունների ձվաբջիջ) կան հատուկ ներզատիչ բշտիկներ, որոնց պարունակությունը դուրս է գալիս, երբ սպերմատոզիդը թափանցում է ձվաբջիջ: Բշտիկների պարունակությունը փոխում է ձվաբջջի թաղանթն այնպես, որ այլևս այդտեղով չեն կարող անցնել այլ սպերմատոզիդներ:

Ինչպես երևում է **147-րդ**


նկարում, թոշնի ձուն ունի բավականին բարդ կառուցվածք: Զվի կենտրոնում դեղնուցն է, որի բևեռներից մեկում տեղակորված է սաղմնային սկավառակը: Դեղնուցը հատուկ կախանների օգնությամբ պահպում է ձվի կենտրոնում և արտաքինից պատված է սպիտակուցային թաղանթով: Սպիտակուցային թաղանթից բացի ձուն պատված է նաև կճեպով և ենթակճեպային թաղանթներով: Զվի բութը ծայրում, երկու ենթակճեպային թաղանթների միջև կա օդախորշ: Կճեպն ունի մանր ծակոտիներ և ծածկված է նույր վերնակճեպային թաղանթով:

Արական սեռական բջջները՝ **սպերմատոզիդներն**, իրենց բավականին փոքր չափսերով և շարժունակությամբ տարբերվում են ձվաբջիջներից: Կաթնասունների սպերմատոզիդն (**նկ. 148**) ունի երկար թելի տեսք, որի վրա տարբերում են գլխիկը, վզիկը և պոչիկը:

Գլխիկում տեղադրված է ԴՆԹ պարունակող կորիզը: Գլխիկի ծայրում ձևավորվում է բշտիկ՝ **ակրոսոմ**, որը պարունակում է ֆերմենտներ, որոնք կարող են բեղմնավորման ժամանակ լուծել ձվաբջջի թաղանթը: Վզիկում գտնվում են միտոքրոններիումները, ցենտրիուլը: Պոչիկի օգնությամբ սպերմատոզիդն առաջ է շարժվում:



Նկ. 147. Թոշնի ձվի կառուցվածքը:




Նկ. 148. Կարմասումների սպերմատոզիդը և ծվաբթիզը:

սոմների դիպլոիդ հավաքակազմ ($2n=2c$): Այսուհետև դրանք անցնում են աճման գոտի, որտեղ տեղի է ունենում ԴՆԹ-ի կրկնապատկում, և սպերմատոզիդները վերածվում են **առաջին կարգի սպերմատոցիտների** ($2n=4c$) և մտնում՝ հասունացման գոտի, որտեղ տեղի են ունենում մեյօզի երկու բաժանումները:

Մեյօզի առաջին բաժանումից առաջանում են **երկրորդ կարգի սպերմատոցիտներ** ($1n=2c$), որոնք անցնելով մեյօզի երկրորդ բաժանումը՝ վերածվում են **սպերմատիդների** ($1n=1c$): Սպերմատիդներն՝ անցնելով ձևավորման բարդ պրոցես (**սպերմիոզնեզ**), վերածվում են սպերմատոզիդների:

Տղամարդկանց սպերմատոզիդների առաջացումը սկսվում է սեռահասուն դաշտում, իսկ կանանց ծվաբթիզների զարգացումը սկսվում է դեռևս օրգանիզմի սաղմնային զարգացման ընթացքում և ավարտվում է միայն ծվաբթիզի բեղմնավորումից հետո: Աղջկե երեխայի ծնվելու պահին նրա յուրաքանչյուր ծվարանում լինում են մոտ մեկ միլիոն առաջին կարգի օվոցիտներ (առաջնային ֆուլիկուլներ), բայց դրանցից սեռահասուն կնոջ մոտ ծվազատման փուլի կարող են հասնել մինչև 500-ը: **Նկար 149-ում** բերված է մարդու օվոգենեզի փուլերի գծապատկերը: Սաղմի զարգացման ընթացքում առաջնային սեռական բթիզները բազմակի անգամ բաժանվում են միտոզի եղանակով՝ առաջացնելով բազմաթիվ դիպլոիդ բթիզներ՝ **օվոգոնիումներ** ($2n=2c$): Վերջիններս մեծանում են՝ հասնելով տեսակի սեռական բթիզներին բնորոշ չափսերի, և վերածվում առաջին կարգի դիպլոիդ օվոցիտների ($2n=4c$):

Այնուհետև, առաջին կարգի օվոցիտը հասունացման գոտում բաժանվում է մեյօզի եղանակով: Մեյօզի առաջին բաժանումից առաջանում են երկու անհավասար հապլոիդ բջիջներ ($1n2c$): Խոշոր կոչով է երկրորդ կարգի օվոցիտ, իսկ փոքրը՝ առաջին ուղղորդող մարմին: Երկրորդ կարգի օվոցիտն անցնում է մեյօզի երկրորդ բաժանման, բայց երկրորդ մետաֆազի փուլում զարգացումը կանգ է առնում: **Զգացատման** հետևանքով երկրորդ կարգի օվոցիտը հեռանում է ձվարանից և առաջանակ է ավարտել մեյօզի երկրորդ բաժանումն այդտեղ սպերմատոզիդի թափանցումից հետո: Սպերմատոզիդի թափանցումը խթանում է երկրորդ ուղղորդող մարմնի ($1n1c$) և հասուն ձվաբջջի ($1n1c$) առաջացումը, որից հետո զամետների կորիզները միաձուլվում են՝ առաջացնելով դիպլոիդ զիգոտ: Բոլոր ուղղորդող մարմինները շատ մանր բջիջներ են և, ի վերջո, ոչնչանում են:



Նկ. 149. Գամետոգենեզ: *a* - քրոմոսոմների թիվը,
c - հնարին քանակը:

Դարցեր կրկնության համար.



1. Անսեր բազմացումն ինչո՞վ է տարրերվում սեռական բազմացումից:
2. Ի՞նչն է ընկած սեռական բազմացման հիմքում:
3. Որո՞նք են ձվաբջջի և սպերմատոզիդի կառուցվածքի առանձնահատկությունները:
4. Ինչի՞ շնորհիվ է սպերմատոզիդը կարողանում թափանցել ձվաբջջի մեջ:
5. Թվարկեք սպերմատոզիդների առանձնահատկությունները:
6. Թվարկեք օվոցենեզի առանձնահատկությունները:
7. Ինչո՞ւ է արական և իգական սեռական բջիջների զարգացումը տարրեր կերպ ընթանում:
8. Ինչպիսի՞ հավաքակազմ ունեն սեռական բջիջները:

36. ՍԵՌԱԿԱՆ ԲԱԶՄԱՑՄԱՆ ՕՐԳԱՆՆԵՐ

Սեռական բազմացման օրգանները քննարկենք մարդու օրինակով:

Արական սեռական համակարգ: Մարդու արական սեռական համակարգի օրգաններն են **ամորձիները, սերմնածորանները, սերմնաբշտերը, շագանակագեղձը և առնանդամը** (նկ. 150):

Ամորձիները (սերմնարանները), զույգ խառը գեղձեր են, որոնցում զարգանում են սպերմատոզոֆիդներ և սինթեզվում արական սեռական հորմոններ: Տեղավորված են ամորձապարկի մեջ և կազմված են զալարում խողովակներից: Սերմնարաններում արտադրված սեռական հորմոնները նպաստում են արական օրգանիզմին բնորոշ երկրորդային սեռական հատկանիշների՝ ցածր ձայնի, դեմքի մազերի, մարմնակազմվածքի ձևավորմանը և կարգավորում են սեռական ֆունկցիաները: Ամորձուց սպերմատոզոֆիդներն անցնում են սերմնածորանի մեջ, որին ամորձու հետևով բարձրացնում է վեր ու սերմնալարի կազմում մտնում որովայնի խոռոչ, ապա իջնում կոնքի խոռոչ:


Սերմնաբշտերը գտնվում են կոնքի խոռոչում, արտադրում են սպերմատոզոֆիդների կենսունակությունն ապահովող հեղուկ, որի մեջ նրանք վերջնականացն հասունանում են: Սերմնաբշտից սկսվում է արտազատող ծորան, որը միանալով նույն կողմի սերմնածորանին, բացվում է միզուկի մեջ:

Հագանակագեղձն իր անվանումն ստացել է շագանակի ձև ու մեծություն ունենալու

շնորհիվ: Այն տեղավորված է միզապարկի տակ, արտադրում է սպերմատոզոփիդների ակտիվությունն ու կենսունակությունն ապահովող հեղուկ, որը ծորաններով լցվում է միզուկի մեջ: Սպերմատոզոփիդների և նշված հեղուկների խառնուրդը կոչվում է **սպերմ**:

Իգական սեռական համակարգ: Իգական սեռական համակարգի օրգաններն են **ծվարանները, արգանդապիոլերը, արգանդը, հեշտոցը, մեծ և փոքր սեռական շրթերը (ամոթույքային շրթեր)** (նկ. 151):

Զվարանները զույգ խառը գեղձեր են, տեղավորված են որովայնի խոռոչում: Նրանցում զարգանում են իգական սեռական բջիջներ՝ ձվաբքիչներ



Նկ. 150. Արական սեռական համակարգ:

ԳԼՈՒԽ 7. ՕՐՎԱՆԻՉԱՌԵՐԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ


և սինթեզվում սեռական հորմոններ: Վերջիններս ապահովում են իգական օրգանիզմին բնորոշ երկրորդային սեռական հատկանիշները (բարձր ձայն, կաթնագեղձերի մեծացում, մարմնի որոշ մասերում ճարպի կուտակում, մարմնակազմվածքի ձևավորում) և սեռական ֆունկցիաները: Զվարանը կազմված է կեղևային և միջուկային շերտերից: Կեղևային շերտում կան ծվարանային բշտեր (**ֆոլիկուլներ**), որոնցում զարգանում են ձվաբջիջներ: Նորածին աղջկա յուրաքանչյուր ձվարանում կա մոտ մեկ միլիոն չհասունացած ձվաբջիջ, որոնցից կանքի ընթացքում հասունանում են մինչև 500-ը: Մնացածներն ապաճում են: Զվարանի միջուկային շերտը պարունակում է արյունատար անորներ, նյարդեր:

Արգանդափողերը սկսվում են արգանդից և մոտենում ծվարաններին: Զվարանին մոտեցող ծայրը ձագարածն է, որի մեջ ձվարանից անցնում է հասունացած ձվաբջիջը: Արգանդափողի խոռոչը ծածկված է թարթչավոր էպիթելիային հյուսվածքով: Թարթիչների տատանողական շարժումների ու փողերի գալարակծկումների շնորհիվ ձվաբջիջը մղվում է արգանդի խոռոչ (**նկ. 151**):


Արգանդը տանձածն մկանային օրգան է, որն ապահովում է պտղի սնուցումն ու պաշտպանումը: Արգանդի խոռոչը ծածկված է լորձաթաղանթով իսկ ստորին նեղ մասը՝ վզիկը, տեղափորված է հեշտոցում (**նկ. 151**): **Հեշտոցը** մկանաշարակցահյուսվածքային խողովակ է, որն իր վերին ծայրով ընդգրկում է արգանդի վզիկն, իսկ ստորին ծայրով բացվում է ամոթույքային ճեղքի մեջ: Նրա խոռոչը ծածկված է լորձաթաղանթով: **Հեշտոցով սպերմատոզիդները** թափանցում են արգանդի խոռոչ, ապա արգանդափողերի մեջ: **Հեշտոցը** ծննդաբերական ուղղութանքում բաղկացուցիչ մասն է:

Կույսերի հեշտոցի ստորին բացվածքը ծածկված է շարակցահյուսվածքային թաղանթով **կուսաքաղանթով**: Նրա վրա կա փոքր անցք դաշտանային արյունը դուրս գալու համար: Հեշտոցի մուտքի մոտ գտնվում է միզուկի արտաքին բացվածքը:

Սեռահասուն օրգանիզմում յուրաքանչյուր ամսին պարբերաբար ձվարաններից մեկում հիպոֆիզի հորմոնի ազդեցությամբ հասունանում է մեկ ձվաբջջով ֆոլիկուլ: Զվարջի հասունացումից հետո ֆոլիկուլի արտաքին շերտը խիստ բարակում է, երկրորդ շաբաթվավերջում պատռվում և ձվաբջիջը արտանը-



Նկ. 151. Իգական սեռական համակարգ:



Նկ. 152. Դաշտանային փուլի գծապատկերը:

Ավորվել, ձվազատման 13-14-րդ օրը դեղին մարմինը դադարում է արտազատել հորմոն, արգանդի լորձաբաղանքը պոկվում է և վնասված մազանորմերի արյան ու քայլայված ձվաբջի հետ արտամղվում դեպի հեշտոց և հեռանում օրգանիզմից: Դա տևում է 3-5 օր, կրկնվում է յուրաքանչյուր 24-30-րդ օրը և կոչվում է **դաշտանային փուլ** (նկ. 152): Դրանից հետո արգանդի լորձաբաղանքը վերականգնվում է:

Դարցեր կրկնության համար.



1. Ի՞նչո՞ւ են սեռական գեղձերը կոչվում խառը գեղձեր:
2. Ո՞ր օրգաններն են կազմում արական սեռական համակարգը:
3. Ի՞նչ ֆունկցիաներ են կատարում սերմնարանները:
4. Ի՞նչ դեր ունի շագանակագեղձը:
5. Ո՞ր օրգաններն են կազմում իգական սեռական համակարգը:
6. Ի՞նչ են իրենցից ներկայացնում ֆոլիկուլները:
7. Ի՞նչպե՞ս է տեղի ունենում ձվաբջի հասունացումը: Ի՞նչ է ձվազատումը:
8. Ի՞նչո՞վ են սպերմատոզիդներն ու ձվաբջիջները տարբերվում սոմատիկ բջիջներից:
9. Ի՞նչ է դեղին մարմինը և ո՞րն է նրա դերը:

37. ՄԵՅՈԶ

Սեյոզը բջիջների բաժանման հատուկ ձև է, որի արդյունքում, օրինակ, կենդանիների մոտ առաջանում են սեռական բջիջներ:

Բջիջներում տեսակին բնորոշ քրոմոսոմների թվի կայունությունը պահպանվում է շնորհիվ միտոզի, որին նախորդում է ԴՆԹ-ի սինթեզը և յուրաքանչյուր քրոմոսոմների թվի կայունությունը սեռական բազմացնան ժամանակ, չէ՞ որ սոմատիկ բոլոր բջիջներն ունեն քրոմոսոմների դիպլոիդ հավաքակազմ, իսկ հասունացած սեռական բջիջները քրոմոսոմների հապլիտիդ հավաքակազմ:


Քրոմոսոմների թվի կիսով չափ պակասելը տեղի է ունենում սեռական բջիջների հասունացնան ընթացքում: Հասունացնան գոտում տեղի ունեցող երկու բաժանումները մեյոզի երկու բաժանումներն են:

Մեյոզի երկու բաժանումներն ունեն միտոզի նույն փուլերը՝ պրոֆազ, մետաֆազ, անաֆազ, թելոֆազ: Մեյոզի առաջին բաժանումից առաջ սեռական բջիջներում տեղի է ունենում ԴՆԹ-ի սինթեզ, դա նշանակում է ԴՆԹ-ի կրկնապատկում, այսինքն երկու քրոմատիդների առաջացում (**նկ. 153**):

Մեյոզի առաջին բաժանման՝ **պրոֆազի** ընթացքում քրոմոսոմները պարուրվում են: Պրոֆազի վերջուն, երբ պարուրումն ավարտվում է, քրոմոսոմները ձեռք են բերում իրենց բնորոշ չափսեր ու ձև: Յուրաքանչյուր զույգ, այսինքն հոմոլոգ քրոմոսոմներն, ամբողջ երկարությամբ հապում են իրար և ոլորվում: Հոմոլոգ քրոմոսոմների միացնան այս գործընթացն անվանում են **կոնյուգացում**:

Կոնյուգացիայի ընթացքում որոշ հոմոլոգ քրոմոսոմների միջև տեղի է ունենում դրանց հոմոլոգ մասերի (գենների) փոխանակում (**տրամախաչում** կամ **կրոսինգօվեր**) (**նկ. 153**): Մարդու բջիջներում յուրաքանչյուր հոմոլոգ քրոմոսոմային զույգի մասերի փոխանակում տեղի է ունենում միջինը երկուսից երեք կետերում: Տրամախաչման ժամանակ քանովում են մեկ հայրական և մեկ մայրական քրոմատիդների ԴՆԹ-ի պարույները և ստացված հատվածները միանում են խաչաձև: Կոնյուգացիայից հետո հոմոլոգ քրոմոսոմները միմյանցից բաժանվում են, բայց իրար միացած են մնում տրամախաչված հատվածներում (**խիազմներ**):

Երբ քրոմոսոմները լրիվ առանձնանում են, առաջանում է բաժանման իլիկը, և սկսվում է մեյոզի մետաֆազը, քրոմոսոմները դասավորվում են հասարակածային հարթության վրա: Այնուհետև սկսվում է մեյոզի անաֆազը և դեպի բներներն են շարժվում ոչ թե յուրաքանչյուր քրոմոսոմի կեսը, որը կրում է մեկ քրոմատիդ, ինչպես միտոզի ժամանակ, այլ ամբողջ քրոմոսոմներ, որոնցից յուրաքանչյուրը կազմված է երկու քրոմատիդից: Հետևապես, դուստր բջի մեջ ընկնում է յուրաքանչյուր զույգ հոմոլոգ քրոմոսոմներից միայն մեկը (**նկ. 153**), հետևաբար քրոմոսոմների քանակը երկու անգամ պակասում է:



Նկ. 153. Մեյոզի փուլերի գծապատկերը:

Առաջին բաժանումից անմիջապես հետո տեղի է ունենում մեյոզի երկրորդ բաժանումը, ընդ որում այս բաժանմանը ԴՆԹ-ի սինթեզ չի նախորդում: Չէ՞ որ դեռևս առաջին բաժանման ժամանակ դեպի դուստր բջիջների բևեռները տարամիտվեցին ամբողջական քրոմոսոմներ, որոնցից յուրաքանչյուրն ուներ երկուական քրոմատիդ: Կարճատև պրոֆազից հետո այդ կրկնակի քրոմատիդներից կազմված քրոմոսոմները երկրորդ բաժանման մետաֆազում դասավորվում են հասարակածի հարթության վրա և ամրանում իլիկի թելիկներին: Երկրորդ բաժանման անաֆազում դեպի բջիջի բևեռներ են շարժվում քրոմատիդներն, այսինքն յուրաքանչյուր դուստր բջջի մեջ ընկնում է մեկական դուստր քրոմոսոմ (նկ. 153):

Այսպիսով, քրոնոսոմների թիվը սպերմատոզուիդներում և ձվաբջիջներում կխսով չափ պակասում է, և հասունացման երկրորդ բաժանումից հետո ձևավորված սպերմատոզուիդներում կան հապլոիդ հավաքակազմով քրոնոսոմներ:

Տրամախաչումը ոչ միայն նպաստում է վերահամակցմանն, այլև կարևոր դեր ունի մեյօզի առաջին բաժանման ժամանակ քրոնոսոմների տարածիտմանը դեպի բջջի բնեղներ, որովհետև խիազմներն են միասին պահում մայրական և հայրական քրոնոսոմները մինչև առաջին բաժանման անաֆազը:


Սա բնորոշ է առլտոսոմ քրոնոսոմներին, որոնք հոմոլոգ քրոնոսոմներ են: Իսկ ինչպես են տարամիտվում բնեղներ սեռական քրոնոսոմները: Մասնավորապես կաթնասունների մոտ, իգական սեռը ունի երկու հոմոլոգ **X** քրոնոսոմներ, որոնք կոնյուգացիայի են ենթարկվում և գնում են բնեղներ այնպես, ինչպես առլտոսոմ քրոնոսոմներն: Արական սեռը ունի մեկ **X** և մեկ **Y** քրոնոսոմ, որոնց միջև կոնյուգացիան հնարավոր է դառնում հոմոլոգ հատվածների առկայության շնորհիվ, որը նաև ապահովում է ճիշտ տարամիտումը դեպի բջջի հակադիր բնեղներ: Այդ դեպքում յուրաքանչյուր գամետ կրում է կամ **X**, կամ **Y** քրոնոսոմ:

Մեյօզի առանձին փուլերի տևողությունը տարբեր է ինչպես տարբեր տեսակների մոտ, այնպես էլ նույն տեսակի արուների և էգերի մոտ: Օրինակ, տղամարդկանց մոտ մեյօզը տևում է 24 օր, իսկ մկների արուների մոտ 12 օր: Բայց բոլոր դեպքերում, մեյօզի առաջին բաժանման պրոֆազն անհամենատ տևական է, քան մնացած փուլերը միասին վերցրած: Մկների արուների մոտ այն կազմում է ամբողջ մեյօզի տևողության 90%-ից ավելին:

Մեյօզի նշանակությունը: Մեյօզի արդյունքում դիպլոիդ հավաքակազմով բջից առաջանում են հապլոիդ հավաքակազմով բջիջներ (վերջին հաշվով՝ գամետներ), որոնց հետագա միաձուլումից բեղմնավորման արդյունքում նորից վերականգնվում է քրոնոսոմների դիպլոիդ հավաքակազմն, այսինքն՝ սեռական եղանակով բազմացող օրգանիզմների համար մեյօզն ապահովում է տեսակի քրոնոսոմային հավաքակազմի հաստատունությունը:

Բացի վերը նշվածից, մեյօզը կարևոր նշանակություն ունի նաև օրգանիզմների փոփոխականության մեծացման գործում, ինչը նյութ է հանդիսանում բնական ընտրության համար: Փոփոխականության մեծացման մեջ կարևոր են նաև՝ մեյօզի առաջին բաժանման պրոֆազում տեղի ունեցող տրամախաչման պրոցեսը, և ապա՝ առաջին բաժանման անաֆազում քրոնոսոմների անկախ բաշխումը, որը բերում է հատկանիշների անկախ, պատահական բաշխման:

Մեյօզի և միտոզի համեմատությունը: Մեյօզը կազմված է երկու բաժանումներից, իսկ միտոզը՝ մեկ: Մեյօզի առաջին բաժանման պրոֆազն, ի տարբերություն միտոզի պրոֆազի, ավելի երկար է տևում, որի դեպքում տեղի է ունենում հոմոլոգ քրոնոսոմների իրար ընդիուած մոտեցում և ճշգրիտ դիրքավորում (կոնյուգացիա). Երբեմն տեղի է ունենում նաև հոմոլոգ մասերի փոփոխակում (տրամախաչում կամ կրոսինգօվեր): Մեյօզի առաջին



Նկ. 154. Մեյոզի և միտոզի համեմատությունը:

Դարցեր կրկնության համար.


1. Ինչպե՞ս է ընթանում մեյոզը:
2. Ինչո՞վ է մեյոզը տարբերվում միտոզից:
3. Ի՞նչ են քրոմոսոմների կոնյուգացիան և տրամախաչումը, և ո՞րն է դրանց նշանակությունը:
4. Ո՞րն է մեյոզի կենսաբանական նշանակությունը:
5. Ինչի՞ շնորհիվ է մեյոզով բաժանման արդյունքում մեծանումը փոփոխականությունը:
6. Ինչպիսի՞ քրոմոսոմային հավաքակազմ ունեն բջիջները մեյոզի առաջին բաժանումից հետո:
7. Մեյոզի առաջին բաժանման ժամանակ ի՞նչն է նպաստում հոմոլոգ քրոմոսոմների տարամիտմանը:

բաժանման մետաֆազում հասարակածային հարթության վրա դասավորվում և ապա առաջին բաժանման անաֆազում թևուներ են գնում հոմոլոգ քրոմոսոմներն (նկ. 154), ի տարբերություն միտոզի մետաֆազի և անաֆազի, որտեղ համապատասխանաբար դասավորվում և թևուներն են տառամիտվում քրոնատիդները: Միտոզի յուրաքանչյուր բաժանմանը նախորդում է ԴՆԹ-ի կրկնապատկում, իսկ մեյոզի առաջին և երկրորդ բաժանմումների միջև ընկած ժամանակաշրջանում ԴՆԹ-ն չի կրկնապատկվում: Մեյոզի արդյունքում մեկ դիպլոիդ հավաքակազմով բջիջ առաջանում են չորս հապլոիդ հավաքակազմով բջիջներ, իսկ միտոտիկ բաժանման արդյունքում մեկ բջիջ առաջանում են նույն հավաքակազմով երկու բջիջ (դիպլոիդից դիպլոիդ, հապլոիդից հապլոիդ) (նկ. 154):



38. ԲԵՂՄՆԱՎՈՐՈՒՄ: ԾԱՂԿԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ԲԵՂՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Բեղմնավորումը քրոմոսոմների հապլոիդ հավաքակազմ ունեցող արական և իգական գամետների միաձուլումն է (**նկ. 155**): **Բեղմնավորված ձվաբջիջը կոչվում է զիգոտ:** Զիգոտը դիպլոիդ է, քանի որ այն առաջանում է երկու հապլոիդ գամետների միաձուլումից:



Նկ. 155. Սարդու ձվաբջիջը և դրա մեջ թափանցող սպերմատոզոդին:

Զիգոտի կորիզում բոլոր քրոմոսոմները նորից զույգեր են կազմում, յուրաքանչյուր հիմոլոգ զույգի մեկ քրոմոսոմը հայրական է, մյուսը՝ մայրական: Այսպիսով, օրգանիզմների յուրաքանչյուր տեսակի սոմատիկ բջիջներին բնորոշ քրոմոսոմների դիպլոիդ հավաքակազմը բեղմնավորման ժամանակ վերականգնվում է:

Բեղմնավորումը կարող է լինել արտաքին և ներքին:

Արտաքին բեղմնավորման դեպքում սեռական բջիջները միաձուլվում են եգի օրգանիզմից դուրս: Օրինակ, ձկների եգերը դնում են ձկնկիթն, իսկ արուները սերմնահեղուկը լցնում են ջրի մեջ, որտեղ և տեղի է ունենում բեղմնավորումը: Նման ձևով է տեղի ունենում նաև երկկենցաղների, շատ փափկանարմինների, որոշ որդերի բեղմնավորումը:

Արտաքին բեղմնավորման դեպքում ձվաբջիջի և սպերմատոզոդի միաձուլումը կախված է միջավայրի բազմաթիվ գործոններից, այդ պատճառով, բեղմնավորման այդ ձևի դեպքում օրգանիզմներն առաջացնում են հսկայական թվով գամետներ: Օրինակ, լճագորտը դնում է մինչև 11000 ձու, սաղմոնը՝ 100000, ձողաձուկը՝ 9 միլիոն:

Ներքին բեղմնավորման դեպքում գամետների հանդիպումը և միաձուլումը տեղի են ունենում եգի սեռական ուղիներում: Եգի և արուի համաձայնեցված գործողությունների և զուգավորման օրգանների շնորհիվ

արական սեռական բջիջները թափանցում են իգական օրգանիզմ: Այդ դեպքում բեղմնավորման հավանականությունը բարձրանում է, այդ պատճառով տվյալ դեպքում սեռական բջիջների քանակը անհամենատ քիչ է: Ներքին բեղմնավորում ունեն միջատները, սողունները, թռչունները, կաթնասունները և այլն:

Սեռական բջիջների քանակը կախված է նաև սերնդի նկատմամբ ծնողների խնամքից: Օրինակ, աֆրիկական ծուկ տիյապին բերանում կրում է մոտ հարյուր ձկնիկի, իսկ կաթնասունները, որոնք ունեն բարդ ծնողական վարք և մեծ խնամք սերնդի նկատմամբ, ծնում են մեկ կամ մի քանի ձագեր:

Մարդու բեղմնավորումն, ինչպես և մնացած կաթնասուններինը, ներքին է և այն տեղի է ունենում կմոջ ձվատարմերում:

Այն բեղմնավորումը, որն իրականացվում է մարդու միջամտությամբ կոչվում է **արհեստական**: Այն հիմնականում կիրառվում է բույսերի նոր սորտերի և կենդանիների նոր ցեղատեսակների ստեղծման, ինչպես նաև դրանց բարելավման համար: Անասնաբուժությունում արտադրողների սերմնահեղուկը ցածր ջերմաստիճանային պայմաններում պահպանվում է երկար տարիներ, և արհեստական սերմնավորման եղանակով ստացվում է բազմաքանակ սերունդ:

Արհեստական փոշոտնան եղանակով հնարավոր է դաշնում անհրաժեշտ ծնողական հատկանիշների գործակցումը նոր ստացվող բույսերի սորտերում:

Բժշկության մեջ արհեստական բեղմնավորումը կիրառվում է անպտղության որոշ ձևերի բուժման ժամանակ: Մեթոդի հությունը կայանում է նրանում, որ ձվաբջի բեղմնավորումը կատարվում է օրգանիզմից դուրս, հետագայում տեղափոխելով արգանդ՝ նորմալ զարգացումը շարունակելու համար:

Իգական և արական սեռական բջիջների զարգացումը և բեղմնավորումը բույսերում տեղի են ունենում այնպես, ինչպես կենդանիների իգական և արական սեռական օրգաններում:

Դիտարկենք ծածկասերմ բույսերի բեղմնավորման և սերմի զարգացման գործընթացը:


Ծաղկի մեջ առաջանում են սպորներ (անսեռ բազմացում), գամետներ (սեռական պրոցես), տեղի է ունենում բեղմնավորում: Բեղմնավորման հետևանքով ձևավորվում են սերմն ու պտուղը:

Առեջի փոշանոթներում մեկ դիպլոիդ հավաքակազմով բջիջ մեյոզի հետևանքով առաջանում են չորս հապլոիդ հավաքակազմով **միկրոսպորներ**, որոնցից յուրաքանչյուրը պատվում է լրացուցիչ թաղանթներով և դրանցից հետագայում ձևավորվում է փոշեհատիկը. սկզբում միկրոսպորը կիսվում է միտոզով և առաջանում են երկու հապլոիդ հավաքակազմով բջիջներ՝ **վեգետատիվ** և **գեներատիվ**: Գեներատիվ բջիջը հետագայում նույնպես կիսվում է միտոզով և առաջանում են երկու հապլոիդ հավաքակազմով **սպերմիումներ**: Վեգետատիվ բջիջը հետագայում զարգանում է **փոշեխողովակը** (նկ. 156):

Վարսանդի սերմնարանում դիպլոիդ հավաքակազմով բջջից մեյոտիկ բաժանման արդյունքում առաջանում են չորս բջջներ հավալիդ հավաքակազմով, որոնցից երեքը ոչնչանում են, իսկ մեկը (**մեգասպորը**) երեք միտոտիկ բաժանմաներից հետո սկիզբ է տալիս ութ հավալիդ կորիզներ պարունակող սաղմնապարկին, որը գտնվում է **սերմնարողբօջում** (**սերմնասկզբնակում**):

Սաղմնապարկում գտվող ծվաբջջն անշարժ է (**նկ. 156**): Վարսանդի սերմնարանում կարող են լինել մեկ կամ մի քանի սերմնարողբօջներ: Սաղմնապարկը, բացի հավալիդ ծվաբջջից, պարունակում է մեկ դիպլոիդ կենտրոնական բջջ, որը մասնակցում է բեղմնավորմանը և գտնվում է սաղմնապարկի կենտրոնում: Կան ևս մի քանի հավալիդ բջջներ:

Փոշոտման ժամանակ փոշեհատիկմերը տեղափոխվում են վարսանդի սպիի վրա: Փոշեհատիկմերի տեղափոխումը նույն բույսի կամ ծաղկի վարսանդի սպիի վրա կոչվում է **ինքնափոշոտում**, որի առավելությունը կայանում է նրանում, որ առավել հուսալի է դարձնում բեղմնավորման պրոցեսը: Դա հատկապես կարող է այն տեսակների համար, որոնք հանդիպում են հազվադեպ և իրարից գտնվում են մեծ հեռավորությունների



Նկ. 156. Ծածկասերմ (ծաղկավոր) բույսերի կրկնակի բեղմնավորման գծապատկերը:

վրա: ճիշտ է, ինքնափոշոտումը բերում է հոմոզիգոտության բարձրացման, բայց դրա հետ մեկտեղ, այն կախված չէ այնպիսի գործոններից, ինչպիսիք են քամին կամ միջատների առկայությունը:

Փոշեհատիկների տեղափոխումը այլ բույսի վարսանդի սպիի վրա կոչվում է **խաչածն փոշոտում**, որը բարձրացնում է փոփոխականությունը: Բույսերի խաչածն փոշոտումը կարող է իրականացվել քամու, միջատների միջոցով և այլ եղանակներով: Խաչածն փոշոտվող շատ բույսերի մոտ հնարավոր է նաև ինքնափոշոտում, որը կանխելու համար բույսերն ունեն հատուկ հարմարանքներ: Դրանցից են նույն ծաղկի փոշեհատիկների և սաղմնապարկերի հասունացման տարբեր ժամկետները, վարսանդների ավելի երկար լինելը առեջներից և այլ հարմարանքներ:

Փոշեհատիկների արտաքին նակերնույթը հաճախ անհարթ է, խորդութորդ, իսկ վարսանդի սպիի վրա արտադրվում է կազուն նյութ, որը պահում է փոշեհատիկը: Փոշեհատիկն, ընկնելով վարսանդի սպիի վրա, ծլում է՝ առաջացնելով փոշեխողովակ, որով սպերմիումները տեղափոխվում են սաղմնապարկ, որտեղ և տեղի է ունենում բեղմնավորումը (**նկ. 156**):

Փոշեխողովակում գտնվում են երկու սպերմիումներ: Երբ փոշեխողովակը մտնում է սաղմնապարկի մեջ, սպերմիումներից մեկը միաձուլվում է ծվաբջջի հետ և առաջացնում դիպլոիդ զիգոտ, որից զարգանում է ապագա բույսի սաղմը: Երկրորդ սպերմիումը միաձուլվում է դիպլոիդ կենտրոնական բջջի հետ՝ առաջացնելով քրոմոսոմների **տրիպլոիդ** հավաքակազմով նոր բջիջ: Դրանից առաջանում է սերմի էնդոսպերմը (**նկ. 156**): Սաղմնապարկից (սերմնաբողբօջ, սերմնասկզբնակ) ձևավորվում է սերմը, իսկ սաղմնապարկի պատից սերմնամաշկը: Վարսանդի սերմնարանից ձևավորվում է պտուղն, իսկ սերմնարանի պատից պտղապատը: Բոլոր ծաղկավոր բույսերին բնորոշ այս սերական պրոցեսը կոչվում է **կրկնակի բեղմնավորում**: Այն հայտնաբերվել է 1898թ. ռուս բուսաբան **Ս.Գ. Նավաշինի** կողմից (**նկ. 157**):



Նկ. 157. Ս.Գ. Նավաշին
(1857-1930թ.):

Կրկնակի բեղմնավորման կենսաբանական նշանակությունն այն է, որ ինչպես զիգոտի, այնպես էլ էնդոսպերմի առաջացմանը նաև սպերմում են արական և իգական սեռերը: Էնդոսպերմն ունի քրոմոսոմների տրիպլոիդ հավաքակազմ, և առաջանում ու զարգանում է միայն ծվաբջջի բեղմնավորման դեպքում: Ծածկաներմ բույսերի տրիպլոիդ էնդոսպերմը պահեստային սննդանյութ է զարգացող սաղմի համար:



Դարցեր կրկնության համար.

1. Ի՞նչ է բեղմնավորումը և ի՞նչ է ձևավորվում դրա արդյունքում:
2. Բեղմնավորման ինչպիսի՞ ծևեր կան: Ո՞ր օրգանիզմներին են բնորոշ արտաքին և ներքին բեղմնավորումները:
3. Որտե՞ղ և ինչպե՞ս է ձևավորվում փոշեհատիկը:
4. Որտե՞ղ է զարգանում ծածկասերմ բույսերի ձվաբջջը:
5. Փոշուտման ինչպիսի՞ ծևեր գիտեք: Ինչպիսի՞ առավելություններ և բերություններ ունեն փոշուտման տարրեր ծևերը միմյանց նկատմամբ:
6. Ո՞վ և ե՞ր է առաջինը նկարագրել կրկնակի բեղմնավորումը: Ո՞րն է կրկնակի բեղմնավորման կենսաբանական նշանակությունը:
7. Ինչո՞ւ է ծաղկավոր բույսերի բեղմնավորումը կոչվում կրկնակի:

39. ԿՈՒՍԱԾՆՈՒԹՅՈՒՆ: ՍԵՌԱԿԱՆ ԲԱԶՄԱՑՄԱՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կուսածնություն (պարբենոգենեզ): Սեռական բազմացման տարրերակներից է կուսածնությունը կամ պարբենոգենեզը: Դա օրգանիզմի զարգացումն է չընդունավորված ձվաբջջից: Բնության մեջ կուսածնություն հանդիպում է շատ բույսերի ու կենդանիների մոտ, օրինակ՝ խատուտիկների, որդերի, մեղուների, ցածրակարգ խեցգետնակերպերի, որոշ սողունների մոտ: Կուսածնության հետևանքով առաջանում են միայն մեկ սեռի առանձնյակներ: Այսպես՝ մեղուների մոտ չընդունավորված ձվաբջջներից զարգանում են արուները՝ բռները, իսկ բեղմնավորվածներից՝ մայր մեղուն և աշխատավոր մեղուները:

Կուսածնությունը կարող է լինել բնական և արհեստական: Առանձնյակները, որոնք ձևավորվում են ձվաբջջից, կարող են ունենալ կամ հապլոիդ, կամ դիպլոիդ քրոմոսոմային հավաքակազմեր: Դիպլոիդ հավաքակազմ կարող է ստացվել, եթե ձվաբջջի առաջացման ժամանակ խախտվում է մեյոզի պրոցեսը: Մեկ այլ դեպքում, հավաքակազմը դառնում է դիպլոիդ տրոհման հենց առաջին բաժանումից հետո:

Ավելի հաճախ, բնական կուսածնությունը հանդիսանում է տվյալ տեսակի համար ոչ միակ բազմացման ձևը (կամ զուգակցվում է նորմալ սեռական բազմացման հետ, կամ հանդիպում է առանձին խմբերի մոտ): Առանց արուի հնդկահավերի դրված ձվերի մոտ 40 %-ը կարող են սկսել զարգանալ, բայց զարգացումը միշտ չէ, որ մինչև վերջ է ընթանում: Հաճախ այն ընդհատվում է որոշակի անոնմալիաների պատճառով:

Հայաստանում հանդիպում են բույսերի և կենդանիների բազմաթիվ կուսածին ներկայացուցիչներ: Բույսերում առանց բեղմնավորման սաղմի ու սերմի զարգացումը, որը կոչվում է **ապոմիքսիս**, դիտվում է խաղողի որոշ տեսակների ու սորտերի մոտ: Սևանա լճում և Արարատյան դաշտի լճակներում տարածվել է կուսածնությամբ բազմացող արծաթափավայլ կարասը:

1957թ. ռուս կենդանաբան **Ի.Ս.Դարևսկին** առաջին անգամ ողնաշարավոր կենդանիների մոտ հայտնաբերեց բնական կուսածնության երևույթը (**Ըկ. 158**): Պարզվեց, որ Հայաստանում լայն տարածում ունեցող ժայռային մողեսների չորս տեսակներ չունեն արուներ և բազմանում են կուսածնությամբ: Այժմ հայտնի է, որ կուսածնությամբ կարող են բազմանալ սողունների դասի տասնյակ տեսակներ:



Նկ. 158. Ի.Ս.Դարևսկին (1924-2009թ.) Հայաստանում, և իր կողմից հայտնաբերված կուսածնությամբ բազմացող ժայռային մողեսներից մեկը:

Արեստական կուսածնությունը, հավանաբար, հնարավոր է բոլոր կենդանիների մոտ: Ցույց է տրված, որ ձվաբջի ակտիվացումը սպերմատոզոնիդով կարելի է փոխարինել ձվաբջի ակտիվացմանը մի շաբթ ֆիզիկական և քիմիական գործոններով: Որոշ միջատների, օրինակ թթենու շերամի մոտ, արեստական ճանապարհով խթանվում է կուսածնությունը, ստացվում են էգեր, որոնք գործնականորեն ավելի արժեքավոր են:

Սեռական բազմացման կենսաբանական նշանակությունը: Սեռական բազմացումն ունի զգալի առավելություններ անսեռ բազմացման նկատմամբ, քանի որ առաջացած նոր առանձնյակն ունենում է ծնողական օրգանիզմներին ննան, բայց ոչ միևնույն հատկանիշները՝ լինելով մայրական և հայրական սեռական բջիջների միաձուլման արդյունք: Մայրական և հայրական օրգանիզմների գեների գուգակցումը պայմանավորում է սերունդներում դիտվող գենետիկական զգալի բազմազանությունը: Այսպիսով, սեռական բազմացումը մի կողմից պայմանավորում է սերունդների նմանությունը ծնողական ձևերին, մյուս կողմից նրանց հատկանիշների զգալի տարրերու-

թյունը և ժառանգական հատկանիշները վերահամակցելու հնարավորություն է տալիս: Սա ունի չափազանց կարևոր կենսաբանական նշանակություն, քանի որ տեսակի ներսում առանձնյակները ժառանգական առումով միմյանցից տարրերվում են, հետևաբար, ունեն տարրեր հատկանիշներ և միջավայրի փոփոխվող պայմաններուն կարող են ցուցաբերել հարմարվածության տարրեր դրսևորումներ: Բնական է, որ միջավայրի մշտապես փոփոխվող պայմաններում տեսակի ներսում միշտ էլ կգտնվեն առանձնյակներ, որոնց հատկանիշները կիամապատասխանեն փոփոխված պայմաններին: Այդ իսկ պատճառով սերունդը կարող է ավելի կենսունակ լինել, քան ծնողական առանձնյակներից յուրաքանչյուրը: Դրանք կգոյատևեն և բեղուն սերունդ կտան՝ ապահովելով տվյալ տեսակի սերնդեսերունդ գոյությունը:

Այսպիսով, սեռական բազմացման գլխավոր առավելությունն անսեռ բազմացման նկատմամբ ժառանգական օգալի բազմազանության ապահովումն է, որը մեծացնում է փոփոխականությունը, որն էլ իր հերթին նյութ է բնական ընտրության համար:

Օրգանիզմների էվոլյուցիայում կարևոր դերը պատկանում է հենց սեռական բազմացմանը:



Հարցեր կրկնության համար.

1. Ո՞րն է սեռական բազմացման գլխավոր առավելությունն անսեռ բազմացման նկատմամբ:
2. Արդյո՞ք սեռական բազմացումն ունի միայն առավելություններ անսեռ բազմացման նկատմամբ:
3. Ի՞նչ է կուսածնությունը և ո՞ր օրգանիզմներին է այն բնորոշ:
4. Ինչո՞ւ է կուսածնությունը համարվում սեռական բազմացման եղանակ:
5. Քացի սպերմատոզուիդները ակտիվացնելուց, ինչպես կարելի է ակտիվացնել ձվաբջջը:
6. Ինչո՞ւ է օրգանիզմների էվոլյուցիայում կարևոր դերը պատկանում սեռական բազմացմանը:

40. ԿԵՆԴԱՆԻ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԵՆՍԱԿԱՆ ՑԻԿԼԵՐ


Զարգացման փուլերի հաջորդականությունը, որով անցնում են տվյալ տեսակին պատկանող առանձնյակները, մի սերնդի զիգոտից մինչև հաջորդ սերնդի զիգոտը կոչվում է **կենսական ցիկլ**: Տարրեր կենդանի օրգանիզմների կենսական ցիկլերի բարդության աստիճանը տարրեր է, և կարող է ներառել երկու և ավելի սերունդներ, որոնք տարրերվում են ինչպես ձևաբանորեն, այնպես էլ բազմացման եղանակով: Յաճախ դա անվանվում է **սերունդների հերթագայություն**: Ցանաքային բույսերի և որոշ ջրիմուռների դիպլոիդ, սպորտածացնող սերունդը, որը կոչվում է **սպորոֆիտ**, հերթագայվում է հապլոիդ գամետներ առաջացնող **գամետոֆիտով**: Անսեռ և սեռական

սերունդների հերթագայությունը բնորոշ է նաև որոշ աղեխորշավորների, որոնց մոտ հապլոիդ են միայն գամետները:

Սակարույծների կենսական ցիկլերը հաճախ շատ բարդ են և ներառում են մի քանի սերունդներ: Յուրաքանչյուր սերունդ հարմարված է կյանքի որոշակի պայմանների մի դեպքում տիրոջ օրգանիզմում գոյատևելու, մյուս դեպքում՝ մեկ տիրոջից մյուսին անցնելու համար: Լրացուցիչ սերունդներ կարող են առաջանալ ապահովելու համար տեսակի առանձնյակների թվաքանակի մեծացումը անսեռ բազմացման միջոցով:

Քննարկենք ավելի հաճախ հանդիպող կենսական ցիկլերի մի քանի տիպեր:

Որոշ ջրիմուռների (օրինակ՝ ջլամիդոննադ, սպիրոգրիա) բնորոշ է սեռահասուն հապլոիդ օրգանիզմը: Դիպլոիդ է միայն զիգոտը, որի առաջին բաժանումն իրականանում է մեյօզի եղանակով և օրգանիզմը նորից դառնում



- Նկ. 159. Հաճախ հանդիպող կենսական ցիկլերի գծապատկերը:
1. Սեռական օրգանիզմն ունի քրոմոսոմների հապլոիդ հավաքակազմ: Դիպլոիդ է միայն զիգոտը: Զարգացող զիգոտի առաջին բաժանումը կատարվում է մեյօզով և բերում է հապլոիդ վիճակի: Գամետներն առաջանում են միտոզով բաժանման արդյունքում:
 2. Հասուն օրգանիզմը դիպլոիդ է և հապլոիդ են միայն գամետները, որոնք առաջանում են մեյօզով բաժանման արդյունքում:
 3. Բնորոշ է երեք ծմաբանորեն տարրեր ծների գոյությունն: Ընդ որում, բոլոր ծներն են դիպլոիդ սեռական սերունդին հաջորդում է դիպլոիդ ամսեռ սերունդն, իսկ գամետներն ստացվում են մեյօզով բաժանման արդյունքում:
 4. Բնորոշ է հապլոիդ և դիպլոիդ սերունդների հերթագայությունն, իսկ գամետներն առաջանում են միտոզով բաժանման արդյունքում:

է հապլոիդ հավաքակազմով: Գամետներն առաջանում են միտոզով բաժանման արդյունքում (**նկ.159.1**): Կենդանիների մեծ մասին բնորոշ է այնպիսի կենսական ցիկլ, երբ հասուն օրգանիզմը դիպլոիդ է և հապլոիդ են միայն գամետները, որոնք առաջանում են մեյոտիկ բաժանման արդյունքում (**նկ.159.2**):


Որոշ աղեխորշավորների կենսական ցիկլում բնորոշ է երեք ձևաբանորեն տարրեր ձևերի գոյությունն: Ընդ որում, բոլոր ձևերն եւ դիպլոիդ են: Դիպլոիդ սեռական սերնդին հաջորդում է դիպլոիդ անսեռ սերունդն, իսկ գամետներն ստացվում են մեյոզով բաժանման արդյունքում (**նկ.159.3**):

Մանուռներին, պտերանմաններին, սերմնավոր բույսերին բնորոշ է հապլոիդ և դիպլոիդ սերունդների հերթագայությունը, իսկ գամետներն առաջանում են միտոզով բաժանման արդյունքում (**նկ. 159.4, 160**):

Սպորոֆիտը և գամետոֆիտն իրենց չափսերով և «կյանքի տևողությամբ» բույսերի տարրեր բաժիններում էապես տարրերվում են: Եվոլյուցիոն զարգացումն ընթացել է գամետոֆիտի նկատմամբ սպորոֆիտի՝ անսեռ սերնդի գերակայությամբ: Այն հստակ դրսևորվում է ծաղկավոր բույսերի մոտ. Եթե սպորոֆիտն ամբողջ բույսն է, ապա գամետոֆիտը նրա կյանքի միայն որոշակի փուլում առաջացող փոշեհատիկն (**արական գամետոֆիտ**) ու սաղմնապարկն (**իգական գամետոֆիտ**): Բարձրակարգ բույսերի բաժիններից միայն մանուռների մոտ է դիտվում գամետոֆիտի գերակայություն սպորոֆիտի նկատմամբ:

Մանուռների վերարտադրողական օրգանները՝ արական **անտերիորիտմ-ները** և իգական **արխեգոնիումները** գտնվում են բույսի վերին մասերում, որտեղ առաջանում են գամետները: Բեղմնավորման համար անհրաժեշտ է ջրի առկայությունը: Անտերիորիտմները խոնավանալու ընթացքում մեծ քանակությամբ ջուր են կլանում, ինչի հետևանքով ուռչում են և պայթում: Այնտեղից դուրս են գալիս սպերմատոզովիդները և մտրակների օգնությամբ լողում են դեպի արխեգոնիումները, որտեղ և տեղի է ունենում բեղմնավորումը: Վերջինիս արդյունքում առաջանում է զիգոտը, որն ունենում է քրոնոսումների դիպլոիդ հավաքակազմ: Զիգոտից զարգանում է ոտիկով տուփիկը (**սպորոֆիտ**), որը չունի քլորոֆիլ, չի կարող իրականացնել ֆոտոսինթեզ և ամբողջությամբ կախված է **գամետոֆիտից**: Ոտիկով տուփիկում գտնվում են սպորների մայրական բջիջներ, որոնց մեյոտիկ բաժանման արդյունքում առաջանում են հապլոիդ սպորներ: Տուփիկը բացվում է, և սպորներն ընկնելով բարենպաստ, խոնավ պյամաններ ծլում են՝ առաջացնելով գամետոֆիտ (**նկ.160**): Ինչպես երևում է նկարից, մանուռների կենսական ցիկլում դիպլոիդ է միայն ոտիկով տուփիկն, իսկ բույսն ամբողջությամբ ունի քրոնոսումների հապլոիդ հավաքակազմ: Գամետներն առաջանում են միտոզով բաժանումից:

Կենսական ցիկլերում կարևոր նշանակություն ունի բջիջների բաժանման եղանակը, որը կարող է իրականացվել միտոզի կամ մեյոզի եղանակով: Մեյոզը տեղի է ունենում միայն այն օրգանիզմների կենսական ցիկլերում, որտեղ ներառված է սեռական բազմացում: Մեյոզի արդյունքում դիպլոիդ հավաքակազմով բջիջ առաջանում են հապլոիդ հավաքակազմով բջիջներ (վերջին հաշվով՝ գամետներ), որոնց հետագա միաձուլումից առաջացած



Նկ. 160. Մամուռների կենսական ցիկլը:

զիգոտում նորից վերականգնվում է քրոնոսոմների դիպլոիդ հավաքակազմը և սկսվում է հաջորդ կենսական ցիկլը: Եթե մեյօզի պրոցեսը տեղի չունենար, ապա առաջացած գամետները կլինեն դիպլոիդ հավաքակազմով, իսկ զիգոտը տեսրապլոիդ: Դրա հետ մեկտեղ, մեյօզը մեծացնում է փոփոխականությունը, որն անհրաժեշտ է տվյալ տեսակի առանձնյակներին հարմարվելու միջավայրի փոփոխվող պայմաններին:

Որոշ դեպքերում, մեյօզի արդյունքում առաջանում են ոչ թե գամետներ, այլ սպորներ (**նկ. 159, 160**):



Դարցեր կրկնության համար.

1. Ի՞նչ է կենսական ցիկլ:
2. Կենսական ցիկլի ինչպիսի՝ ծևեր գիտեք:
3. Ի՞նչ են իրենցից ներկայացնում սպորոֆիլով և գամետոֆիլով:
4. Ինչպիսի՞ն է անսեր և սեռական սերունդների հերթագայությունը բույսերի տարբեր բաժիններում:
5. Նշեք մամուռների կենսական ցիկլի առանձնահատկությունները:
6. Արդյո՞ք գամետներն առաջանում են միայն մեյօզով:
7. Ի՞նչ է իրենցից ներկայացնում ոսկեկով սուվիկը:
8. Որտե՞ղ են զարգանում մամուռների արական և իգական սեռական բջիջները:

ԳԼՈՒԽ 8. ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՆԴԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

41. ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՆԴԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ՍՊՇԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ՏՐՈՅՆՈՒՄ

Կենդանիների սեռական զարգացման ժամանակ ժառանգական տեղեկատվության փոխանցումը սերնդեսերունդ ապահովում է սեռական բջջներով: Նրանք են կրում այն ամբողջական տեղեկատվությունը, որն ապահովում է օրգանիզմի զարգացումը: Այդ պատճառով օնտոգենեզը կարելի է որակել որպես ծնողներից ստացած տեղեկատվության իրականացման գործընթաց:


Սեռական եղանակով բազմացող օրգանիզմների անհատական զարգացումը կամ **օնտոգենեզը** սկսվում է զիգոտի առաջացման պահից մինչև օրգանիզմի վախճանը: Այն բաժանվում է երկու, մինյանցից եապես տարրերվող ժամանակահատվածների՝ **սաղմնային** և **հետսաղմնային** շրջանների: Սաղմնային շրջանն ընկած է զիգոտի ձևավորման պահից մինչև օրգանիզմի ծնունդը կամ ձվի թաղանքներից դուրս գալը, իսկ հետսաղմնային շրջանը՝ օրգանիզմի ծնվելուց կամ ձվի թաղանքներից դուրս գալուց մինչև նրա վախճանը:

Սաղմնային զարգացում: Անհատական զարգացման սաղմնային շրջանն իր հերթին բաժանվում է երեք հիմնական փուլերի: Դրանք են՝ **տրոյիկումը**, որի հետևանքով առաջանում է բազմաթիվ սաղմ՝ **բլաստուլ**, **գաստրոլացում**, որի ժամանակ առաջանում են երկու **սաղմնային թերթիկներն էկտոդերմը** և **էնտոդերմն**, իսկ սաղմը դառնում է երկշերտ, և **առաջնային օրգանոգենեզը** առաջանում են առանցքային օրգանները: Կենդանիների տարրեր տիպերի, ինչպես նաև նույն տիպի տարրեր դասերի ներկայացուցիչների մոտ այդ երեք փուլերի ընթացքն ունի որոշակի առանձնահատկություններ:

Տրոյիկում: Բոլոր կենդանիների ձվաբջիջն ունի բնեռայնություն: Երկու հակառակ բնեռները կոչվում են **անիմալ** և **վեգետատիվ**: Ձվաբջիջը բնեռայնությունն արտահայտվում է ցիտոպլազմային ներառուկների տեղադրվածությամբ: Ծատ ձվաբջիջներում դեղնուցը տեղադրված է ոչ հավասարաչափ: Նրա քանակությունը շատանում է անհմալ բներից դեպի վեգետատիվ բներ: Ձվաբջիջը տրոյիկան տիպը կախված է դեղնուցի քանակից

և ցիտոպլազմայում նրա բաշխվածությունից: Տարբերում են **ամբողջական** տրոհում, երբ տրոհվում է ամբողջ ձվաբջիջը և **ոչ ամբողջական**, երբ տրոհվում է նրա միայն մի մասը: Դա պայմանավորված է նրանով, որ դեղնուցը խոչընդոտում է ձգումների առաջացմանը բջիջի բաժանման ժամանակ: Ամբողջական տրոհումն իր հերթին լինում է **հավասարաչափ**, եթե բաժանման ժամանակ առաջացող բջիջները հավասար են իրար, և անհամաչափ, եթե դրանք տարբերվում են իրենց չափսերով:

Նշտարիկի ձվաբջջում դեղնուցը քիչ է, այդ պատճառով զիգոտի տրոհումն ամբողջական է և հավասարաչափ: Առաջին ակոսն առաջանում է միջօրեականի հարթությամբ անհնալ բևեռից մինչև վեգետատիվ բևեռ՝ բաժանելով բջիջը երկու հավասար մասերի: Առաջացած հավասարաչափ բջիջները կոչվում են **բլաստոմերներ** (*հուն. βλαστος-սաղմ, մերոս-մաս*): Երկրորդ ակոսը նույնական անցնում է միջօրեականի հարթությամբ, բայց ուղղահայաց առաջինին: Առաջանում են չորս բջիջներ: Երրորդ ակոսը լայնակի է, այն անցնում է հասարակածից մի քիչ վերև և բաժանում է չորս բջիջներն 8 բլաստոմերների: Յետազայում հերթափոխվում են երկայնակի և լայնակի բաժանումները: Բջիջների քանակի ավելացման հետ զուգընթաց




Նկ. 161. Մեղուզայի սաղմնային զարգացումը զիգոտի կիսումից
մինչև բլաստոլ:

ԳԼՈՒԽ 8. ՕՐՎԱՍԻԶՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

բաժանումները դառնում են ասինխրոն: Բլաստոմերներն ավելի հեռու են գնում սաղմի կենտրոնից՝ առաջացնելով խոռոչ: Ի վերջո սաղմն ընդունում է բշտիկի տեսք, որի պատճ ձևավորված է լինում մեկ շերտ իրար կիա հարող բջիջներից: Տրոհման արդյունքում առաջացած սաղմը կոչվում է **բլաստոլ**, իսկ բլաստոլի ներքին խոռոչը միջավայրից լինում է լրիվ մեկուսացված և կոչվում է մարմնի առաջնային խոռոչ: Բլաստոմերների ընդհանուր ծավալը, որն առաջացել է տրոհման արդյունքում, համարյա չի գերազանցում զիգոտի ծավալը:

Այսպիսով, զիգոտի միտոզով բաժանումը չի ուղեկցվում բլաստոմերների չափսերի մեծացմամբ մինչև մայրական բջիջների չափսերն, այլ ընդհակառակը, բլաստոմերները գնալով փոքրանում են (*այստեղից էլ գործընթացի անվանումը՝ տրոհում*): Այդ երևույթն ընդհանուր է բոլոր տիպի բեղմնավորված ծվաբջիջների համար (**նկ. 161**):

Գորտի ծվաբջջում դեղնուցն ավելի շատ է, քան նշտարիկի ծվաբջջում և այն հիմնականում տեղաբաշխված է վեգետատիվ բևեռում: Դա անդրադառնում է տրոհման բնույթի վրա: Առաջին երկու երկայնակի ակոսները զիգոտը բաժանում են չորս միանման բլաստոմերների, իսկ երրորդ՝ լայնակի ակոսը խիստ շեղված է դեպի ամինալ բևեռ, որտեղ դեղնուցը քիչ է: Այդ պատճառով, բլաստոմերների չափսերն արդեն ութքջային փուլում կտրուկ տարրերվում են: Բջիջների հետագա տրոհումը շարունակվում է, և քիչ դեղնուց պարունակող բջիջներն ավելի հաճախ են կիսվում, հետզհետե դառնալով ավելի փոքր վեգետատիվ բևեռում գտնվող և շատ դեղնուց պարունակող բջիջներից: Գորտի սաղմի տրոհումը նույնպես ավարտվում է բլաստոլի առաջացմանք,



Նկ. 162. Գորտի զիգոտի տրոհումը:

որը մի շարք առանձնահատկություններով տարբերվում է նշտարիկի բլաստուլից (**նկ. 162**):

Տրոհման գործընթացն այլ կերպ է ընթանում թռչունների և սողունների մոտ: Նրանց ձվաբջիջը շատ դեղնուց է պարունակում (դեղնուցից ազատ ցիտոպլազման կազմում է ընդհանուր ծավալի հինգ տոկոսից պակաս): Դեղնուցը խանգարում է տրոհմանը, և տրոհման է ենթարկվում միայն ցիտոպլազմայի և կորիզի սկավառակն, իսկ դեղնուցը չի տրոհվում: Կաթնասունների ձվաբջիջներում դեղնուց գրեթե չկա, և տրոհումն ամբողջական է, բայց առաջացած բլաստոմները հավասար չեն չափսերով:

Անկախ տրոհման առանձնահատկություններից, զարգացման այդ փուլին բնորոշ են հետևյալ ընդհանուր գծերը.

1.Տրոհման հետևանքով առաջանում է բազմաբջիջ սաղմ՝ բլաստոլ, և հետագա զարգացման համար կուտակվում է բջջանյութ,

2.Բլաստոլի բոլոր բջիջներն ունեն քրոմոսոմների դիպոլիդ հավաքակազմ, բջիջները նման են կառուցվածքով, բայց տարբերվում են դեղնուցի քանակով, այսինքն բլաստոլի բջիջները տարբերակված չեն,

3.Մեծ կենդանիների զիգոտի տրոհմանը բնորոշ է շատ կարճատև կենսական ցիկլը, ի տարբերություն հետսաղմնային զարգացման շրջանի տևողության,

4.Տրոհման ընթացքում ուժգնորեն սինթեզվում է ԴՆԹ, ՈՆԹ չի սինթեզվում. բլաստոմների կորիզներում գտնվող գենետիկական տեղեկատվությունը չի օգտագործվում:

Յարցեր կրկնության համար.



1. Ի՞նչ է օնտոգենեզն, ի՞նչ հիմնական ժամանակահատվածների է այն բաժանվում:
2. Որո՞նք են անհատական զարգացման սաղմնային շրջանի երեք հիմնական փուլերը:
3. Նկարագրեք տրոհման գործընթացն, ի՞նչ է առաջանում տրոհման արդյունքում:
4. Ինչպիսի՞ ընդհանուր գծեր են բնորոշ տրոհման փուլին:
5. Կենդանիների տարբեր խմբերի մոտ տրոհման ինչպիսի՞ առանձնահատկություններ կան:
6. Դեղնուցի քանակից կախված ինչպիսի՞ տրոհման ձևեր կան:

42. ԳԱՍՏՐՈԻԼԱՑՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՅՅԻՆ ՕՐՎԱՆՈԳԵՆԵԶ


Գաստրոլացում: Սաղմնային զարգացման հաջորդ փուլը գաստրոլացումն է, որի արդյունքում սաղմը դառնում է երկշերտ (**նկ. 163**): Այն իրականացվում է տարբեր եղանակներով և կախված է բլաստուլի կառուցվածքից, հատկապես, ձվաթիզներում դեղնուցի պարունակությունից:

Գաստրոլացմանը բնորոշ է բջջային զանգվածի տեղաշարժը և բջջների տարբերակումն, իսկ բջջների բաժանումը կամ թույլ է արտահայտված, կամ ընդհանրապես բացակայում է: Գաստրոլացման ժամանակ սաղմը չի աճում (**նկ. 163**):


Նշտարիկի մոտ երկշերտ սաղմն առաջանում է բլաստուլի պատի ներփրումով բլաստուլի խոռոչի մեջ: Առաջանում են երկու սաղմնային թերթիկներ. արտաքին՝ **էկտոռերմ** և ներքին՝ **էնտոռերմ**: Ներփրման եղանակով առաջացած և էնտոռերմով սահմանազատված խորշն առաջնային աղիքի խորշն է, որը դեպի դուրս է բացվում անցքով՝ առաջնային թերթանով:

Երկվենցաղների բլաստուլի խոռոչի ծավալը մեծ չէ, ներփրում քիչ է նկատվում, այդ պատճառով անհնալ բնեոի փոքր բջջները սողում են դեպի խորշը վեգետատիվ բնեու և աճելով հայտնվում են սաղմի ներսում: Այդպես առաջանում է ներքին սաղմնային թերթիկ՝ էնտոռերմը:

Սողունների և թօչունների մոտ գաստրոլացումը այլ կերպ է կատարվում: Սաղմնային սկավառակը կարծես ճեղքավորվում է երկու թերթիկի. վերին՝ էկտոռերմի և ներքին՝ էնտոռերմի: Կենդանիների ճնշող մեծանասնության մոտ էկտոռերմի և էնտոռերմի միջև առաջանում է երրորդ սաղմնային թեր-



Նկ. 163. Նշտարիկի գաստրոլի առաջացումը:



Նկ. 164. Նշտարիկի առանցքային կոմպլեքսի առաջացումը:

պիսի օրգանիզմներից են աղեխորշավորներն: Իսկ այն օրգանիզմները, որոնք իրենց զարգացումը սկսում են երեք սաղմնային թերթիկներից՝ էնտոդերմից, էնտոդերմից և մեզոդերմից կոչվում են եռաշերտ օրգանիզմներ: Կենդանիների տիպերից եռաշերտ են տափակ, կլոր և օղակավոր որդերը, փափկամարմինները, փշամորթները, հողվածոտանինները, քորդավորները:

Առաջնային օրգանոգենեզ: Սաղմնային թերթիկներն առաջանում են շնորհիվ միատարր բլաստուլայի բջիջների տարբերակման (դիֆերենցիայի): Տարբերակումը՝ սաղմի առանձին բջիջների և մասերի միջև ձևաբանական և ֆունկցիոնալ (գործառութային) տարբերությունների առաջացման և խթաննան գործընթացն է: Ձևաբանական տեսակետից տարբերակումն արտահայտվում է որոշակի կառուցվածքով մի քանի հարյուր տիպի բջիջների առաջացումով: Կենսաքիմիական տեսակետից բջիջների մասնագիտացումն արտահայտվում է յուրահատուկ սպիտակուցների սինթեզով, որոնք հատուկ են տվյալ տեսակի բջիջներին: Վերնամաշկում սինթեզվում է կերատին, էրիթրոցիտներում՝ հեմոգլոբին, ենթաստամոքսային գեղձի կողյակային հյուսվածքում՝ ինսուլին և այլն:

Հետագա տարբերակնան արդյունքում **Էկտոդերմի** բջիջներից ձևաբույսում են նյարդային համակարգը, զգայարանները, մաշկի էպիթելին, ատամների էմալը, **Էնտոդերմից՝** աղիքի էպիթելը, մարսողական գեղձերը, խոհիկների և թոքերի էպիթելը, **մեզոդերմից՝** մկանային, ուկրային հյուսվածքները, երիկամները, սեռական գեղձերն, արյունատար համակարգը և այլն:

թիկը՝ մեզոդերմը (Ակ. 164):

Այսպիսով, սաղմնային թերթիկները սաղմնում որոշակի տեղում գտնվող բջիջների շերտեր են, որոնք համապատասխան օրգաններ են սկզբնավորում: Տարբեր թերթիկների բջիջները կառուցվածքով տարբերվում են իրարից:

Այն օրգանիզմները, որոնք իրենց զարգացումն սկսում են երկու սաղմնային թերթիկներից՝ էնտոդերմից և էնտոդերմից, կոչվում են երկշերտ օրգանիզմներ: Այդ-

Հատկանշական է, որ կենդանիների տարբեր տեսակների մոտ նույն սաղմնային թերթիկներն սկզբնավորում են նույն օրգանները և հյուսվածքները: Սաղմնային թերթիկների այսպիսի **հոմոլոգիան**, որը դիտվում է կենդանիների ճնշող մեծամասնության մոտ, կենդանական աշխարհի միասնականության ևս մեկ ապացույց է:

Սաղմնային զարգացման երրորդ փուլում առաջանում են առանցքային օրգանները՝ նյարդային խողովակը, քորդան, մարսողական խողովակը (**Ծկ. 164**): Սաղմի բջիջների հետագա տարբերակումը բերում է սաղմնային թերթիկների բազմաթիվ ածանցյալների՝ օրգանների և հյուսվածքների ձևավորման:

Ողնաշարավոր կենդանիների գաստրոլազման փուլի վերջում նրա առաջնային բերանի անցքի առջևում գտնվող էկտոդերմի բջիջները սկսում են արագ բաժանվել և առաջացնում են նյարդային թիթեղ, որը ձգվում է սաղմի ամբողջ թիկնային կողմուն: Նյարդային թիթեղի եզրին առաջանում են դեպի վեր դարձած ծալքեր, նրա կենտրոնական մասն իջնում է՝ կազմելով նյարդային փողորակ (կիսախողովակ): Վերջինս խորանում է, վերին եզրերը կցվում են, և այն դառնում է էկտոդերմի տակ ընկած նյարդային խողովակ՝ կենտրոնական նյարդային համակարգի սկզբնակ: Նյարդային խողովակի զարգացման ամենասկզբից նրա առջևի ծայրը լայնացած է: Լայնացած մասը հետագա փուլերում փոխակերպվում է գլխուղեղի: Զարգացող գլխուղեղի դիմային մասում, նրա կողքին հայտնվում են աչքերի երկու գավաթած սկզբնակներ: Սաղմի առջևի մասում էկտոդերմի ներփքվածքների ձևով հանդես են գալիս նաև լսողության և հոտառության օրգանների սկզբնակները: Բացի նյարդային համակարգից և նրա հետ կապված զգայարաններից, էկտոդերմից սկիզբ են առնում օրգանիզմի արտաքին ծածկույթները:

Առաջնային աղիքի էնտոդերմով սահմանազատված նյարդային խողովակին կից թիկնային կողմուն ծևավորվում են մեզոդերմի սկզբնակները երկու գրապանների տեսքով (**Ծկ. 164**): Նրանք առանձնանում են առաջնային աղիքներից, և նրանց խոռոչը հետագայում դառնում է մարմնի խորշը: Մեզոդերմի աջ և ձախ սկզբնակների միջև, անմիջապես նյարդային խողովակի տակ, առանձնանում է ամբողջ սաղմի երկարությամբ ձգված քորդայի սկզբնակը (**Ծկ. 164**): Այն ընկած է նյարդային խողովակի և աղիքի միջև:

Վերևում նկարագրված փոփոխությունների ընթացքում փոխվում է սաղմի տեսքը: Այն երկարում է, առանձնանում են գլխի և իրանի բաժիններն: Աղիքը սկզբում խողովակի ձև ունի: Հայտնվում են բերանի անցքը և հետանքը: Աղիքների պատերի ելուններից զարգանում են ստամոքսը, յարդը և մարսողական համակարգի մյուս օրգանները: Մարմնի առաջնամասի կողքերին, էնտոդերմի և էկտոդերմի համան տեղերում բացվում են խոիկային ծեղքերը: Նշտարիկի և ձկների խոիկները գործում են ամբողջ կյանքի ընթացքում, ցանաքային ողնաշարավորներինը՝ ծածկվում են հյուսվածքով: Թոքերի զարգացումը նույնական կապված է առջևի աղիքի հետ, դրանք զարգանում են աղիքի ելունից:

Մեզողերմը կազմում է զարգացող սաղմի զանգվածի մեջ մասը: Ինչպես նշվեց վերևում, դրանից ձևավորվում են մկանները, կնախքի բոլոր կոճիկային և ոսկրային տարրերը, արյունատար համակարգն, արտաթորման համակարգը, սեռական օրգանները:

Կենդանիների սաղմը զարգանում է որպես միասնական օրգանիզմ, որի բոլոր բջիջները, հյուսվածքները և օրգանները գտնվում են սերտ փոխազդեցության մեջ:

Դարցեր կրկնության համար.



1. Ի՞նչ է գաստրուլը, և ինչպես է այն առաջանում սաղմի զարգացման ընթացքում:
2. Ի՞նչ է տարրերակումը:
3. Կենդանիների ո՞ր օրգաններն ու հյուսվածքներն են սկզբնավորվում էկտոդերմից, էնտոդերմից և մեզոդերմից: Կազմե՛ք աղյուսակ:
- 4.Որո՞նք են երկշերտ և եռաշերտ օրգանիզմները:
5. Ի՞նչ է սաղմնային թերիկների հոմոլոգիան:
6. Ի՞նչ առանցքային օրգաններ են ձևավորվում սաղմնային զարգացման երրորդ փուլում:

43. ՔԵՏՍԱՂՄԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ՈՒՂԱՎԿԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ինչպես արդեն նշվեց, կենդանական օրգանիզմի անհատական զարգացման հետսաղմնային շրջանը սկսվում է օրգանիզմի ծնվելուց կամ ձվի թաղանթներից դուրս գալուց մինչև նրա վախճանը: Քետսաղմնային զարգացումը կարող է լինել **ուղղակի**, երբ ծնված օրգանիզմը նման է հասունացածին, և **անուղղակի**, երբ սաղմնային զարգացման հետևանքով առաջանում է թթուր, որը հասունացած օրգանիզմից տարրերվում է ներքին և արտաքին կառուցվածքի շատ հատկանիշներով, սննան և տեղաշարժման բնույթով և մի շարք այլ առանձնահատկություններով:

Ուղղակի զարգացում: Ուղղակի զարգացումը ծագել է մի շարք անողնաշարների, օրինակ, տղրուկների, բազմոտանիների, սարդերի էվոլյուցիայի ընթացքում: Ուղղաշարավորների մեջ մասը, դրանց թվում սողունները, թռչունները և կաթնասունները, ունեն ուղղակի զարգացում:

Այս դեպքում ծնվում կամ ձվի թաղանթներից դուրս է գալիս փոքր չափսերով, բայց հասուն օրգանիզմին հատուկ բոլոր օրգաններն ունեցող առանձնյակ, որը զարգացման հետսաղմնային փուլում չափսերով մեծանում, աճում է և սեռահասուն դաշնում (**Ակ. 165**):



Նկ. 165. Կարնասումների ուղղակի զարգացումը:


Աճի տիպերը: Կենդանի օրգանիզմներուն հանդիպում են աճման տարրեր տիպեր, որոնցից են **իզոմետրիկ** և **ալլոմետրիկ** աճի տիպերը:

Իզոմետրիկ (*հուն. isos—միանման, նույն, metron-չափ*) կոչվում է այնպիսի աճը, որի դեպքում տվյալ օրգանն աճում է նույնային միջին արագությամբ, ինչ որ մարմնի մնացած մասերը: Այդ դեպքում օրգանիզմի չափսերի մեծացումը չի ուղեկցվում մարմնի ձևի փոփոխությամբ: Աճի այդպիսի տիպը բնորոշ է ձկներին, թերի կերպարանափոխությամբ զարգացող որոշ միջատների (նկ. 166): Իզոմետրիկ աճով օրգանիզմներին բնորոշ է գծային չափերի, մակերեսի, ծավալի և զանգվածի պարզ հարաբերակցությունը: Սակերեսը մեծանում է գծային չափերի քառակուսիով, իսկ ծավալը և զանգվածը՝ խորանարդով:



Նկ. 166. Ձկների իզոմետրիկ աճը:

Ալլոմետրիկ (*հուն. allos—այլ, metron-չափ*) կոչվում է այնպիսի աճը, որի դեպքում տվյալ օրգանն աճում է այլ միջին արագությամբ, քան մարմնի մնացած մասերը: Այդ դեպքում օրգանիզմի աճն ուղեկցվում է ձևի



Նկ. 167. Մարդու ալլոմետրիկ աճը:

Վիովիոնությամբ: Այդպիսի աճի տիպը բնորոշ է, օրինակ կաթնասուններին (**Ակ.** 167):

Բազմացնան օրգանների զարգացումն ու տարբերակումը համարյա բոլոր կենդանիների մոտ կատարվում է վերջին հերթին: Այդ օրգաններն աճում են ալլոմետրիկ, բայց նրանց աճը կարելի է նկատել միայն արտաքին սեռական օրգաններ ունեցող օրգանիզմների մոտ:

Բույսերի և կենդանիների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ իր տևողությամբ աճը կարող է լինել **սահմանափակ** և **անսահմանափակ**:

Սիամյա բույսերի աճը սահմանափակ է. աճնան առավելագույն ինտենսիվությանը, որի ժամանակ բույսը հասնում է հասունության և բազմանում է, հաջորդում է բացասական աճի ժամանակաշրջանը՝ ծերացումը և ոչնչացումը: Կենդանիներից սահմանափակ աճ ունեն, մասնավորապես, թռչունները, կաթնասունները:

Ծառատեսակների մեջ մասին բնորոշ է անսահմանափակ աճը, որի դեպքում աճը շարունակվում է մինչև մահ: Այդպիսի աճ կարելի է նկատել նաև սնկերի, ստորակարգ բույսերի մոտ:

Դարցեր կրկնության համար.



1. Դետսաղմնային զարգացման ինչպիսի՞ ձևեր գիտեք:

2. Ուղղակի զարգացումն ինչո՞վ է տարբերվում անուղղակի զարգացումից:

3. Բնութագրեք ալլոմետրիկ աճը:

4. Աճման ինչպիսի՞ ձևեր գիտեք:

5. Ո՞ր օրգանիզմներին է բնորոշ սահմանափակ և որոնց անսահմանափակ աճը:

44. ԱՆՈՒՂՂԱԿԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ԼՐԻՎ ԵՎ ԹԵՐԻ ԿԵՐՊԱՐԱՍԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Անուղղակի զարգացում: Կերպարանափոխությունը (մետամորֆոզ, հում. meta-միջև, morpha-ձև) հետսաղմնային զարգացման գործընթաց է, երբ թրուրն արագ փոփոխություններով անցում է կատարում հասուն ձևի: Այն հանդիպում է միջատների, փշանորթների, երկկենցաղների և այլ օրգանիզմների մոտ:

Կերպարանափոխությամբ ուղեկցվող հետսաղմնային զարգացման դեպքում ձվից դուրս է գալիս թրուրը, որը, սովորաբար, ավելի պարզ կառուցվածք ունի, քան հասուն առանձնյակը: Թրուրի օրգանիզմն ունենում է օրգաններ, որոնք բնորոշ են միայն իրեն և բացակայում են հասուն կենդանու օրգանիզմում: Թրուրային վիճակից հասուն վիճակի անցնան ժամանակ այդ օրգանները քայլավում, վերանում են, և առաջանում են հասուն օրգանիզմին բնորոշ օրգանները:


Թրուրային փուլը հիմնականում կարևոր նշանակություն ունի տեսակի տարածնան համար: Հատկապես այն կարևոր է նստակյաց կենսակերպ վարող օրգանիզմների համար՝ հնարավորություն տալով խուսափել գերբնակեցվածությունից: Վերջինս կարող է առաջանալ սերնդի քանակի ավելացման հետ մեկտեղ, որն էլ իր հերթին կրերի տեղի, սննդի և այլ պայմանների համար մրցակցության մեջացման, ներտեսակային գոյության կովի սրման և որն էլ կարող է վտանգել տեսակի գոյությունը:

Թրուրները, սովորաբար, տարբերվում են հասուն ձևերից բնակության տեղով, սննդան բնույթով, տեղաշարժմանք, ինչը մեծացնում է տեսակի պահպանման հնարավորությունը: Որոշ տեսակներ, օրինակ՝ ճպուները, սնվում են միայն թրուրային փուլում, որը նրանց կյանքի առավել երկար ժամանակաշրջանն է:

Կառուցվածքի և փունկցիաների փոփոխությունները, որոնք կատարվում են կերպարանափոխության ժամանակ, նախապատրաստում են օրգանիզմը հասուն կյանքի նոր պայմաններին: Որոշ դեպքերում, թրուրներն առավել դիմացկուն են լինում, ինչը նրանց հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ դիմակայել անբարենպաստ պայմաններին:


Շատ դեպքերում թրուրները հասնում են կազմավորվածության բարձր մակարդակի, սակայն նրանց մեծ մասի մոտ զարգացած չեն լինում վերարտադրողական օրգանները: Հատկապես հետաքրքիր և բազմազան է միջատների կերպարանափոխությունը, որը կարող է լինել **լոիվ** կամ **թերի**:

Թերի կերպարանափոխությամբ զարգացման գործընթացում առկա են հետևյալ փուլերը. **ձու - թրուր - հասուն կենդանի**: Բացի միջատներից այսպես են զարգանուն երկկենցաղները, որոշ այլ քորդավորներ և այլն: Միջատները ձվադրում են տարբեր միջավայրերում հողում, օրգանական մնացորդներում, բույսերի և կենդանիների հյուսվածքներում և այլն:



Նկ. 168. Թերի կերպարանափոխությամբ զարգացում

Թերի կերպարանափոխությամբ զարգացման դեպքում ձվից դուրս եկած թրթուրն արտաքին կառուցվածքի հիմնական գծերով նման է հասուն միջատին, սակայն նրանից տարբերվում է թերզարգացած թևերով։ Բացի այդ, սեռական դիմորֆիզմը լավ չի արտահայտված։ Թրթուրի և հասուն ձևի միջև եղած տարբերություններն աստիճանաբար վերաբռնում են։ Յուրաքանչյուր մաշկափոխությունից հետո թրթուրն ավելի ու ավելի է նմանվում հասուն ձևին։ Թերի կերպարանափոխությամբ զարգացող միջատներից են ծղրիդները, մորեխները, աղոթարարները (նկ. 168):



Նկ. 169. Գորտի ամուղղակի զարգացումը:

Անուղղակի զարգացումը քննարկենք ողնաշարավոր կենդանիներից երկենցաղների օրինակով: Լճագորտի թրթուրային ձևը շերեփուկն է, որը շատ հատկանիշներով նման է ծկներին. ծկնանման տեսք, խոհկներ, կողագիծ, երկխորշ սիրտ և արյան շրջանառության մեկ շրջան: Կերպարանափոխության պրոցեսը, որը կատարվում է վահանաձև գեղձի թիրօքսին հորմոնի ազդեցության տակ, ուղեկցվում է արտաքին և ներքին կառուցվածքի խոր վերափոխմամբ. ի հայտ են գալիս վերջույթները, նախ հետևի, ապա առջևի, վերանում է կողագիծը, զարգանում են թոքերը և ձևավորվում է արյան շրջանառության երկրորդ շրջանը, ներծծվում է պոչը, և գորտը դուրս է գալիս ցամաք (Ակ. 169):

Բնության մեջ հանդիպում է նաև **լրիվ կերպարանափոխությամբ** զարգացում, որն ունի չորս փուլ. **ծու - թրթուր - հարսնյակ - հասուն կենդանի:**

Լրիվ կերպարանափոխությամբ զարգացումը կապված է օրգանիզմի արտաքին և ներքին կառուցվածքի շատ խոր փոփոխությունների հետ: Այս դեպքում ձվից դուրս եկած թրթուրն իր արտաքին կառուցվածքով բոլորովին նման չէ հասուն ձևին (Ակ. 170): Նրա մարմնի բաժինները՝ գլուխը, կուրծքը, փորիկը, տարբերակված չեն, թևեր չունի, զգայարանները թույլ են զարգացած: Թրթուրը և հասուն ձևը միմյանցից շատ են տարբերվում նաև վերջույթների կառուցվածքով, բերանային ապարատի առանձնահատկություններով: Օրինակ՝ թիթեռների թրթուրն ունի կրծող, իսկ հասուն ձևը ծծող տիպի բերանային ապարատ: Թրթուրային շրջանում զարգացած են լինուն միայն կրծքի 3 զույգ քայլող ոտքերը, սակայն որոշ միջատների թթուրուններն ունեն նաև մի քանի զույգ ոտքեր փորային հատվածների վրա: Կան նաև բոլորովին անոտ թրթուրներ, օրինակ՝ սենյակային ճանճի թրթուրը: Թրթուրի զարգացումը տևում է մի քանի օրից (սենյակային ճանճ) մինչև մի քանի տարի (մայիսյան բգեզ):

Ինչպես արտեն նշվեց, թրթուրի կերպարանափոխումը հասուն ձևի կապված է կառուցվածքային շատ խոր փոփոխությունների հետ:



Ակ. 170. **Լրիվ կերպարանափոխությամբ զարգացում:**

Դրանց իրագործման ժամանակ թրթուրն անցնում է հանգստի վիճակի, որը կոչվում է **հարսնյակային** շրջան: Քանի որ թրթուրի և հասուն ձևի տեղաշարժման ու սննդառության առանձնահատկությունները շատ տարբեր են, հարսնյակային շրջանում վերակառուցվում են համապատասխան օրգանները, որոնց մեջ մասը քայլայվում է և ներծծվում: Դրան մասնակցում են ամերիբածն բջիջները, որոնք կեղծ ոտիկներով շրջապատում և ներբջջային մարսնան են ենթարկում քայլայված հյուսվածքների մասնիկները: Չեն քայլայվում միայն նյարդային համակարգը և տրախեաների մի մասը:

Վերակառուցումն ավարտվելուց հետո հարսնյակի ծածկույթները պատռվում են, նրանցից դուրս է գալիս հասուն միջատը: Լրիվ կերպարանափոխությամբ են զարգանում թիթեռները, բգեզները, ճանճերը, մոծակները և այլն:

Լրիվ կերպարանափոխությամբ զարգացող միջատներն այժմ մեծ ծաղկման են հասել: Անուղղակի հետսաղմնային զարգացման կենսաբանական նշանակությունը կայանում է նրանում, որ օնտոգենեզի ընթացքում թրթուրների և հասուն ձևերի միջև գրեթե վերանում է ներտեսակային գոյության կրիվը՝ նրանց տարրեր կենսակերպ ունենալու, տարբեր կենսամիջավայրերում ապրելու և տարբեր կերատեսակներ օգտագործելու հետ կապված: Միաժամանակ, ոչ ակտիվ կամ մակաբույժ կենսակերպ ունեցող կենդանիների ազատ ապրող և ակտիվ կենսակերպ ունեցող թրթուրները մեծ դեր ունեն տվյալ տեսակի տարածման, արեալի ընդարձակման առումով:

Կերպարանափոխությունը կարգավորվում է հորմոնների միջոցով, որոնք վերահսկում են ինչպես թրթուրային փուլի զարգացումը և մաշկափոխությունն, այնպես էլ թրթուրի փոխակերպումը հասուն ձևի:

Դարցեր կրկնության համար.

1. Ի՞նչ է անուղղակի զարգացումը:
2. Ի՞նչ կենսաբանական նշանակություն ունի անուղղակի զարգացումը:
3. Ո՞ր օրգանիզմներին է բնորոշ թերի և որո՞նց լրիվ կերպարանափոխություններով զարգացումը:
4. Ինչպես է տեղի ունենում կերպարանափոխության կարգավորումը:
5. Ինչպիսի՞ հատկանիշներով է շերեփուկը նման ձկներին:
6. Նկարագրեք միջատների լրիվ կերպարափախությամբ զարգացումը:



45. ՍԱՐԴՈՒ ԱՆԴԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ: ՍԱՂՄՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Բեղմնավորում: Զվարջի կենսունակությունն ու բեղմնավորվելու հնարավորությունը կնոջ օրգանիզմում պահպանվում է ձվագատումից 12-24 ժամ:

ԳԼՈՒԽ 8. ՕՐՎԱՍԻԶՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՅՑ


Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, միլիոնավոր սպերմա-սողոկիդներ հեշտոցից անցնում են արգանդ ինքնուրույն շարժվելով և հասնում են արգանդափողերի վերին ծայրը հինգ րոպեի ընթացքում շնորհիվ արգանդի և փողերի կծկումների, որոնք առաջանում են սեռական ակտի ժամանակ արտադրվող հորմոնների ազդեցության տակ: Սպերմատոզոիդները պահպանում են իրենց կենսունակությունը կանանց սեռական օրգաններում մինչև 72 ժամ, բայց առավել ակտիվ են 12-24 ժամերի ընթացքում: Սպերմատոզոիդներն ընդունակ են բեղմնավորելու օվոցիտը նիայն մի քանի ժամ մնալով կանանց սեռական օրգաններում, որի ընթացքում ակրոսոմի ծածկող թաղանթը փոփոխվում է, ինչը բեղմնավորման հնարավո-



Նկ. 171. Մարդու տարբեր հասակի սաղմերը:

բություն է տալիս: Բեղմնավորումը հիմնականում տեղի է ունենում արգանդափողի վերին մասում:

Եթե սպերմատոզուզը մոտենում է օվոցիտին, սպերմատոզուզի արտաքին թաղանթը, որը ծածկում է ակրոսոմի շրջանը, պատռվում է, և ակրոսոմում գտնվող ֆերմենտները լուծում են օվոցիտի թաղանթը: Սա հնարավորություն է տալիս սպերմատոզուզին թափանցել օվոցիտի մեջ: Այնուհետև, օվոցիտի պլազմային թաղանթի տակ գտնվող ներզատիչ բջիջիկները պատռվում են, որի ազդեցության շնորհիվ օվոցիտի թաղանթը հաստանում է և առաջացնում անանցանելի խոչընդոտ՝ **բեղմնավորման թաղանթը**, որը թույլ չի տալիս այլ սպերմատոզուզիների մուտքը ձվաբջիջ:



Նկ. 172. Մարդու սաղմնային զարգացումը:

Սպերմատոզուզի ներթափանցումը խթան է հանդիսանում մեյօզի երկրորդ բաժանման համար և երկրորդ կարգի օվոցիտը դառնում է հասուն, ընդ որում առաջանում է նաև 2-րդ ուղղորդող մարմնիկը, որը նույն

Վայրեկյանին ենթարկվում է դեգեներացիայի, իսկ սպերմատոզոֆիդի պոչը լուծվում է ձվաբջջի ցիտոպլազմայում: Կորիզները միաձուլվում են, վերականգնվում է քրոմոսոմների դիպլոիդ հավաքակազմը և բեղմնավորված ձվաբջջը կոչվում է **զիգոս:** Պտղի սեռը որոշվում է բեղմնավորման պահին և պայմանավորված է զիգոսի քրոմոսոմային հավաքակազմով:

Սաղմի զարգացում: Արգանդափողերով անցնելով արգանդ, զիգոտը **տրոհվում** է: Տրոհման շնորհիվ առաջանում է բազմաբջջ սաղմ, որը 4-5 օրվա ընթացքում մղվում է արգանդի խոռոչ: Բլաստոմերների արտաքին շերտը, կոչվում է **տրոֆորլաստ:**

Սաղմն արգանդի խոռոչում 2 օր ազատ է մնում, ապա ընկերման մեջ մնում է նրա լորձաթաղանքի մեջ և ամրանում: Սաղմի որոշ բջիջներից զարգանում են սաղմնային թաղանթները և ծածկում սաղմին: Սաղմնային զարգացման վաղ շրջանում սաղմի և մայրական օրգանիզմի միջև նյութափոխանակությունը տեղի է ունենում տրոֆորլաստի թափիկների միջոցով: Թափիկավոր թաղանքի տակ կա հեղուկով լցված բարակ թափանցիկ թաղանք, որի մեջ լողում է սաղմը և պաշտպանվում:

Ընկերքը ժամանակավոր օրգան է, որն ունեն միայն ընկերքային կաթնասունները: Կենդանիների մոտ դա միակ օրգանն է, որը բաղկացած է 2 տարբեր օրգանիզմների բջիջներից՝ մայրական և պտղի: Ընկերքում մայրական օրգանիզմի և պտղի արյունատար անորթները հաղորդակցվում են իրար հետ, ինչը հեշտացնում է սննդանյութերի, թթվածնի մատակարարումը և նյութափոխանակության արգասիքների հեռացումը: Այն իրենից ներկայացնում է առանձնացված սկավառակաձև գոյացություն, որը տեղադրված է արգանդի պատի մի հատվածում: Զարգացման հետ այն իր վրա է վերցնում տրոֆորլաստի թարթիչների ֆունկցիան և 12 շաբաթից այն դառնում է գլխավոր կառուցվածքը, որն ապահովում է մոր և պտղի կապը:

Մոր և պտղի արյունը երբեք չի խառնվում: Նրանց մազանոթները միմյանցից անջատված են բարակ թաղանթով, որով կատարվում է նյութերի փոխանակություն: Մի քանի շաբաթ հետո ընկերքը սաղմին միանում է միայն պորտալարով, որով անցնում են սաղմի արյունատար անորթները: Ընկերքի միջոցով պտղին են անցնում ջուր, գլյուկոզ, ամինաթթուներ, պարզ սպիրտներ, լիափիներ, անօրգանական աղեր, վիտամիններ, հորմոններ, հակամարմիններ և թթվածին, իսկ հակառակ ուղղությամբ՝ ջուր, միզանյութ և ազոտ պարունակող այլ արգասիքներ, հորմոններ և ածխաթթու գազ: Մայրական օրգանիզմից պտղին կարող են փոխանցվել նաև պոտենցիալ վնասակար գործոններ՝ բակտերիաներ, վիրուսներ, տոքսիններ, դեղանյութեր, սակայն նրանց ազդեցությունը չեղորանում է հակամարմինների, հակաբիոտիկների, հակատոքսինների միջոցով: Դրա շնորհիվ նորածինն օժտված է լինում որոշ հիվանդությունների նկատմամբ պասիվ ինունիտետով:

Արգանդում սաղմն արագ է զարգանում (նկ. 171, 172): Հայտնվում են ականջների, ապա աչքերի և քթի ուրվագծերը, սկսում է կծկվել սիրտը: Տարբերակվում են կրծքավանդակը, որովայնը, ծեռքերի և ոտքերի մատները:

Այդ պահից աճող սաղմը կոչվում է **պտուղ**: Նրանում զարգանում են բոլոր ֆիզիոլոգիական համակարգերը, որոշ չափով փոխվում են մարմնի համամասնությունները:

Հղիության 4-րդ ամսից սկսած ընկերքը ներգատական գեղձի դեր է կատարում: Հղիությունն ավարտվում է երեխայի ծնունդով: Մարդու ներարգանդային զարգացումը՝ բեղմնավորումից մինչև ծնունդ տևում է 40 շաբաթ: Երեխան ծնվում է միջինը մոտ 50 սմ հասակով և 3-3,5 կգ քաշով:

Հղիության ընթացքում ձվարանների հորմոնների արտազատումն ուժեղանում է, որոնց ազդեցությունից կնոջ մոտ առաջանում են մի շաբթ փոփոխություններ՝ կրծքագեղձերի ծավալի, արգանդի չափի և զանգվածի մեծացում, զարկերակային արյան ծնշման բարձրացում, ախտրժակի փոփոխություն: Երբեմն առաջանում է սրտխառնոց, քննկոտություն, մեծանում է ջրի պահանջը: Ուժեղանում է հանքային փոխանակությունը, որն անհրաժեշտ է պտղի կմախքի ծևավորման համար: Սկսած ունենալով այս բոլորը, հղի կնոջ նկատմամբ անհրաժեշտ է հանդես բերել հոգատարություն և սահմանել հատուկ ռեժիմ՝ լիարժեք սնունդ, բավարար քուն, սովորական ֆիզիկական ծանրաբեռնվածություն: Անհրաժեշտ է նաև գրոսանք թարմ օդում:

Հղի կինը չպետք է ծխախոտ և ալկոհոլ օգտագործի. դրանցով կարող է վտանգել երեխայի առողջությունը:

Նորածնին մայրը կերակրում է կրծքի կաթով: Մայրական կաթը լավագույն սնունդն է նորածնի համար, պարունակում է երեխայի կյանքի առաջին 6 ամիսներին պահանջվող սննդի բոլոր բաղադրամասերն, այն պարունակում է կաթնաշաքար, ճարպ և սպիրտներ: Բոլորն էլ ոյուրամարս են նորածնի համար: Կաթնարտադրությունը կարող է խթանվել մեխանիկական հպումից և անգամ երեխայի մասին մտածելիս: Մայրական կաթով սնվող երեխաներն ավելի առողջ են լինում: Կրծքով կերակրելը օգնում է ծննդաբերությունից հետո վերականգնել նաև մոր առողջությունը: Երբ երեխան ծնում է կուրծքը, արգանդի մկանները ռեֆլեքսորեն կծկվում են, և արգանդի բնականոն չափը վերականգնվում է:

Նարցեր կրկնության համար.



1. Ինչպիսի՞ առանձնահատկություններ ունի մարդու բեղմնավորումը:
2. Ինչպիսի՞ փոփոխությունների է ներքարկվում սաղմը զարգացման վաղ փուլերում:
3. Ինչպե՞ս է առաջանում ընկերքը և ի՞նչ դեր է կատարում:
4. Ի՞նչ նյութեր են մայրական օրգանիզմից անցնում պտղին:
5. Ի՞նչ նշանակություն ունի կրծքով կերակրումը:

46. ՄԱՐԴՈՒ ՀԵՏՍԱՂՄԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Պտղի արյան շրջանառության փոփոխությունները ծննդից հետո:

Ներարգանդային զարգացման շրջանում պտղի թոքերն ու մարսողական համակարգը չեն գործում, քանի որ թթվածին և սննդանյութեր ստանում է մայրական օրգանիզմից՝ ընկերքի միջոցով։

Ծնունդից հետո թոքերի բացումն իջեցնում է արյան հոսքի դիմադրությունը թթվային մազանորներում, և այնտեղ մղվում է ավելի շատ արյուն, որն էլ իջեցնում է ճնշումը թթվային զարկերակում։ Դրա հետ մեկտեղ պորտալարի կապումը խանգարում է ընկերքից արյան հոսքին, որն էլ մեծացնում է երեխայի մարմնով անցնող արյան քանակը և բերում է հանկարծակի ճնշման մեծացման առողջայում և սրտի ձախ կեսում։ Նախարտերի միջև առկա ձվաձև անցքը փակվում է մի քանի ամիսների ընթացքում։

Հետօննոյան զարգացման շրջաններ: Կենսաբանական առունով սեռական եղանակով բազմացող օրգանիզմների համար, կարևորագույն իրադարձությունը սեռական բազմացման իրականացումն է։ Այդ տեսակետից, հետսաղմնային զարգացումը կարելի է բաժանել **մինչվերարտադրողական, վերարտադրողական և հետվերարտադրողական** շրջանների։

Մինչվերարտադրողական շրջանում առանձնյակը բազմացման ընդունակ չէ։ Այս ժամանակահատվածի ընթացքում են կատարվում կառուցվածքային և ֆունկցիոնալ վերափոխումները, իրականացվում է ժառանգական ինֆորմացիայի հիմնական մասը՝ ապահովելով սեռահասուն օրգանիզմին բնորոշ առանձնահատկությունների առաջացումը։

Վերարտադրողական շրջանում առանձնյակն իրականացնում է սեռական բազմացում, աչքի է ընկնում օրգանների և համակարգերի առավել կայուն կենսագործունեությամբ, արտաքին պայմանների նկատմամբ առավել դիմացկունությամբ։

Հետվերարտադրողական շրջանը կապված է օրգանիզմի ծերացման հետ, որը բնութագրվում է նրանով, որ առանձնյակի մասնակցությունը բազմացմանը լրիվ կամ մասնակի թուլացած է։

Մարդու հետսաղմնային զարգացման ընթացքում առանձնացվում են հետևյալ շրջանները։

Կրծքային շրջանը համարվում է մինչև կյանքի առաջին տարվա վերջը։ Առաջին ամիսը համարվում է **նորածնության** շրջան, որի ժամանակ երեխան օրվա մեջ մասը քնած է, արթնանում է միայն քաղցած ժամանակ։ Այս շրջանում անհրաժեշտ է պահպանել կերակրման ռեժիմը, հակառակ դեպքում՝ խանգարվում են նորածնի քունը, մարսողությունը։

Կրծքային շրջանում երեխանների օրգանիզմում տեղի են ունենում կտրուկ փոփոխություններ՝ աստիճանաբար զարգանում են երեխայի շարժումները՝ բարձրացնում ու պահում է գլուխը, նստում է, կանգնում է, իսկ հետո փորձում է քայլել։ Խնամքը և սննդի ծիշտ կազմակերպումը նպաստում են նրա

աճին, հենաշարժիչ համակարգի զարգացմանը: Այդ շրջանում ինտենսիվ զարգանում է նաև Երեխայի հոգեկերտվածքը: Նա սովորում է ճանաչել մարդկանց և առարկաները, հաճելին և վտանգավորը, համը, հոտը, գույնը, սկսում է ժպտալ, ծիծաղել, արտասանել առաջին բառերն: Ի հայտ են գալիս ինքնուրույնության ձգտում, մեծերին նմանակում:

Վաղ մանկության շրջանը համարվում է 1-3 տարեկան հասակը: Այս տարիքում Երեխան արագ աճում է և ֆիզիկապես, և հոգեպես: Նա արդեն կարողանում է շատ բաներ ինքնուրույն անել, համաձայնեցված շարժումներ է իրականացնում, դրսնորում է բարդ վարք, նկարում է, ձգտում ինքնահաստատման: Այս շրջանում չի կարելի սահմանափակել Երեխայի ինքնուրույնությունն, ակտիվ խաղերը և հետաքրքրասիրությունը:

3-6 տարեկան հասակը համարվում է **նախադպրոցական շրջան**, Երեխայի հետաքրքրություններն այնքան մեծ են, որ այն անվանում են հարցերի շրջան: Այս շրջանում շարունակվում է գլխուղեղի զարգացումը, մտածողությունը, ձևավորվում է ներքին խոսքը, որն արտահայտվում է ինքն իր հետ խոսելով: Կրտասանում է բազմաբար նախադասություններ: Աշխույժ խաղերը նպաստում են վառ երևակայությանը և ֆիզիկական զարգացմանը:

Դպրոցական շրջանն ընդգրկում է 6-ից 17 տարեկան հասակը, որը բաժանվում է **կրտսեր և դեռահաս** (պատանեկան) տարիքի: Այս շրջանում Երեխայի օրգանիզմի բոլոր համակարգերի գործունեությունը ենթարկվում է վերակառուցման: Մինչև դպրոցական հասակը Երեխայի հիմնական զբաղմունքը խաղն է: Դպրոցական շրջանը համեմատաբար դժվար փուլ է, քանի որ նա պարտավոր է ենթարկվել դպրոցի կարգապահությանը, սովորել դասերը, շփվել հասակակիցների, չափահասների հետ: Կրտսեր դպրոցականն աստիճանաբար յուրացնում է բանավոր և գրավոր խոսքը: Դրան զուգընթաց աճում են շրջապատի, միջավայրի մասին ընդհանուր գիտելիքները:

11-15 տարեկան հասակը **դեռահասության շրջանն** է, որն համարվում է Երեխայի զարգացման դժվար ժամանակահատված:

Մակուղեղի և սեռական գեղձերի ուժգին գործունեությամբ սկսվում է սեռական հասունացումը: Այս շրջանում տղաների սեռական հասունացման առաջին հատկանիշները ներքին և արտաքին սեռական օրգանների չափսերի մեծացումն է, սպերմատոզուզների հասունացումը, երկրորդային սեռական հատկանիշների ձևավորումը՝ անութափությունը, դեմքի և ցայլքի մազածածկույթը: Արագ աճում է հենաշարժիչ համակարգը, մեծանում է կոկորդը, ծայնը դառնում է ցածր: 13-15 տարեկանում սկսում է արտադրվել սերմ, որը վկայում է սերմնարանների բնականոն ֆունկցիայի մասին: Այն հաճախ արտադրվում է քնած ժամանակ ինքնաբերաբար, որը կոչվում է **երազախաբություն**:

Աղջիկների սեռական հասունացումը սկսվում է 11 տարեկանից, երբեմն ավելի վաղ: Զվարաններն աճում են և սկսում արտադրել իգական սեռական հորմոններ, որոնց ազդեցությամբ զարգանում են նրանց օրգանիզմին բնորոշ երկրորդային սեռական հատկանիշները. կաթնագեղձերը մեծանում են,

ցայլքի վրա և անուբափոսերում ի հայտ են գալիս մազեր: Ուժգին աճում ու զարգանում է կնախըթ՝ իգական օրգանիզմին բնորոշ առանձնահատկություններով: Զվարաններում հասունանում են ձվաբջիջներ, սկսվում է դաշտանը:

Պատանեկան շրջանում ուժեղանում է նյարդային համակարգի դրդունակությունը. տղաները դառնում են չիավասարակշռված, առավել հուզական, կրվարար, աշխատում են աչքի ընկնել ճարպկությամբ, քաջությամբ: Աղջիկները ձգտում են աչքի ընկնել կանացիությամբ: Դեռահասի արյունատար անորների շրջագծի աճը դանդաղ է կատարվում սրտի աճի համեմատ, որը հանգեցնում է արյան ճնշման ժամանակավոր բարձրացման, սրտի աշխատանքի խանգարման, գլխապտույտի և այլն: Այսպիսի փոփոխությունները ժամանակավոր են, տարիքի հետ աստիճանաբար վերանում են:

Տարիքի հետ մարդու մարմնի համամասնությունները նույնպես փոխվում են (**նկ.167**):

Վերջին մի քանի տասնամյակներում նկատվել է երեխաների աճի ու զարգացման արագացում՝ **աքսելերացիա**, որն արտահայտվում է ֆիզիկական ու հոգեկան վաղ զարգացմամբ: Աքսելերացիայի պատճառներից են վիտամիններով հարուստ լիարժեք սննդոր, սպորտով գրաղվելը և այլն:

Դեռահասությանը հերթափոխում է **հասունության** շրջանը:

Տարերում են հասունության **ֆիզիոլոգիական, հոգերանական և սոցիալական** տեսակներ:

Ֆիզիոլոգիական հասունությունն արտահայտվում է օրգանիզմի սեռական հասունացմամբ: Դա անհատական է, պայմանավորված է ժառանգական, կլիմայական, սոցիալական և այլ գործոններով:

Հոգերանական հասունության փուլում տղաներն ու աղջիկները ձեռք են բերում բնավորության կայունություն, պատշաճ ինքնատիրապետում ընտանիքում և հասարակության մեջ:

Սոցիալական հասունությունը գիտակից անհատի, հասարակության լիարժեք անդամի ձևավորումն է: Դա որոշվում է կրթության ավարտով, աշխատանքային գործունեությամբ, տնտեսական ինքնուրույնությամբ և այլ:



Դարցեր կրկնության համար.

1. Սեռական եղանակով բազմացող օրգանիզմների համար, հետսաղմնային զարգացումն ինչպիսի՞ շրջանների կարելի է բաժանել:
2. Ի՞նչ առանձնահատկություններով է բնորոշվում մինչվերարտադրողական շրջանը:
3. Մարդու հետծննդյան զարգացման ի՞նչ շրջաններ կան:
4. Ի՞նչ առանձնահատկություններով է բնորոշվում կրծքային շրջանը:
5. Ի՞նչ նշանակություն ունի ծիշտ ռեժիմը ծնկեր երեխայի համար:
6. Ինչպիսի՞ են նախադպրոցական հասակի երեխաների աճի առանձնահատկությունները:

7. Որո՞նք են տղաների և աղջիկների սեռական հասունացման
առանձնահատկությունները:
8. Ի՞նչ է աքսելերացիան, որո՞նք են դրա պատճառները:
9. Դասունության ի՞նչ ձևեր գիտեք:

47. ՎԵՐԱՐՏԱՌՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՁՈՒԹՅՈՒՆ

«Առողջություն» հասկացության կարևոր բաղադրիչներից է **վերարտադրողական առողջությունը**, որը պայմանավորում է մարդու կյանքի ընթացքուն ֆիզիկական, մտավոր և սոցիալական բարեկեցիկ վիճակը, և վերաբերում է վերարտադրողական համակարգին: Դա նշանակում է բավարարված և անվըտանգ սեռական կյանքի հնարավորություն, երեխաներ ունենալու, ընտանիքի պլանավորման և ծննդի հիմքունքը: Վերարտադրողական առողջության մաս են կազմում անվտանգ հղիության և ծննդի ապահովման կնոջ իրավունքը, որն առողջ երեխայի ծնվելու գրավականն է:

Դասարակության վերարտադրողական առողջության վիճակն առաջին հերթին բնութագրվում է ծննդի հիմքունքը, երեխաների և մայրերի մահացության աստիճանով, ինչպես նաև արհեստական ընդհատումների և վիժումների քանակով, կանանց և տղամարդկանց անպտղության մակարդակով և այլն:

Սարդու և հասարակության վերարտադրողական առողջության համար կարևոր է ինչպես ծնողների, այնպես էլ պետության պատասխանատվությունն երեխաների պատշաճ ֆիզիկական, հոգևոր, բարոյական առողջության և անհրաժեշտ կրթության ապահովման գործում:

Վերարտադրողական առողջության վրա բացասական ազդեցություն կարող են ունենալ այն գործոնները, որոնք բերում են տղամարդու և կնոջ բնականոն սեռական զարգացման խանգարումների: Սպերմատոզենեզի և դաշտանային ցիկլի մշտական խախտումները, պտղաբերության և սեռական հակնան նվազումը, գինեկուլոգիական հիվանդությունները և հղիության ընթացքի խանգարումները (վիժումներ, հղիության արհեստական ընդհատումներ, բարդություններ, անժամանակ ծննդի վտանգ), վաղ վերարտադրողական ծերացումը խիստ բացասաբար են անդրադառնում վերարտադրողական առողջության վրա:

Քայլունի է, որ մանկահասակ երեխաների և պատանիների վերարտադրողական համակարգն առավել օգայուն է միջավայրի տարբեր գործոնների ազդեցության նկատմամբ: Դրանք դեռահասի օրգանիզմուն կարող են առաջացնել ֆիզիոլոգիական, իմունոլոգիական, կենսաքիմիական և այլ բնույթի փոփոխություններ, որոնք իրենց բացասական ազդեցությունը կարող են ունենալ ապագայուն նրանց վերարտադրողական առողջության վրա:

Ընտանիքի պլանավորումը կազմում է վերարտադրողական առողջության կարևոր մասն: Այն նաև սեփական կյանքի, հասարակության օպտիմալ գարգացման պլանավորում է:

Պետությունն ու հասարակությունը պարտավոր են պատշաճ պայմաններ ստեղծել, համապատասխան միջոցառումներ իրականացնել, որոնք կպայմանավորեն առողջ երեխաների ծնունդը, նախադրյալներ կստեղծեն աճող սերնդի լիարժեք դաստիարակության և բնակչության վերարտադրողականության ապահովման հանար:


Լավագույն սոցիալական կառույցն ընտանիքն է: Այն սոցիալական փոքր խումբ է՝ իմանված ամուսնության և արյունակցական կապի վրա, որի անդամներն ունեն ընդհանուր կենցաղ, միմյանց օգնելու, բարոյական և իրավական պատասխանատվություն: Յիմնականում ընտանիքում է իրականացնում վերարտադրողական ֆունկցիան՝ երեխաներ ունենալը, նրանց դաստիարակումը: Այստեղ են ծնողները երեխաներին ծանոթացնում բարոյական արժեքներին, միջավայրում և հասարակության մեջ վարքի նորմերին:

Վերարտադրողական առողջությանը մեջ վնաս են պատճառում ԶԻԱՀ-ը և սեռական համակարգի բազմաթիվ վարակիչ հիվանդություններ:

Սեռական համակարգի վարակիչ հիվանդություններ: Սեռական համակարգի վարակիչ հիվանդություններից են սիֆիլիսը, գոնորեան, խլամիդիոզը, փափուկ շանկը, վեներական լիմֆոգրանուլեման և այլն, որոնք կոչվում են վեներական հիվանդություններ:

Սիֆիլիսը քրոնիկ, համակարգային, գերազանցապես սեռական ճանապարհով փոխանցվող վարակային հիվանդություն է, որը բնորոշվում է մաշկի լորձաթաղանթների, ներքին օրգանների, ոսկրերի, նյարդային համակարգի ախտահարումով, հաջորդական պարբերական ընթացքով: Նարուցիչը *Տրիպոնեմա պլազմում* բակտերիան է (**Ընդ.173**): Նարուցիչներն առողջ մարդու օրգանզմ են թափանցում սիֆիլիսով հիվանդ մարդուց սեռական ճանապարհով: Չի բացառվում նաև վարակի արտասեռական ուղին, այդ թվում թքի, մայրական կաթի, արյան փոխներակման, բժշկական միջամտությունների և ընկերքի միջոցով:

Սիֆիլիսն ընթանում է մի քանի շըրջաններով՝ գաղտնի, առաջնային, երկրորդային, երրորդային: Վարակվելուց մի քանի շաբաթ հետո վարակի տեղում առաջանում է առաջին կլինիկական նշանը՝ **կարծր շանկը**: Այս շրջանում բուժումը կանխում է հիվանդության գարգացման հետագա բարդությունները: Չբուժվելու դեպքում մարմնի վրա առաջանում են բաց վարդագույն բծեր, ցան, տարբեր օրգաններում ի հայտ են գալիս հանգույցներ, խոցեր, ախտահար-



Աղ. 173. Սիֆիլիսի հարուցիչը:

վում են ոսկրերը, մկանները, սիրտը, երիկամները, յարդը, փայծաղը, նյարդային հանակարգը: Հիվանդությունը վերածվում է քրոնիկ ձևի, և առաջանում են անբուժելի ծանր բարդություններ՝ կաթված, հոգեկան խանգարումներ, կուրություն, անպտղություն և այլն:

Գոնորեան նույնացես վտանգավոր վարակիչ վեներական հիվանդություն է: Հարուցիչը նույնացես բակտերիա է (**նկ. 174**): Առողջ մարդու օրգանիզմ է թափանցում սեռական, հազվադեպ արտասեռական ճանապարհով: Գոնորեայի հարուցիչը ախտահարում է գլխավորապես միզուկի, արգանդի պարանոցի, ուղիղ աղու, ընպանի և շաղկապենու էափթելային հյուսվածքը: Հիվանդության բարդացումների դեպքում ախտահարվում է նաև շագանակագեղձը:


Վարակվելուց մի քանի օր հետո սեռական օրգաններից արտազատվում է թարախ, որը զուգակցվում է միզուկի ցավերով, դժվարանում է միզելը: Չբուժվելու դեպքում հիվանդությունը վերածվում է քրոնիկ ձևի, որի ժամանակ ախտահարվում են սեռական գեղձերը, ներքին օրգաններն, առաջանում է անպտղություն:

2007 թվականի տվյալներով աշխարհում արձանագրված են մոտ 600 միլիոն մարդ, ովքեր վարակված են եղել մեկ այլ վեներական հիվանդությամբ՝ **խլամիդիոզով** (**նկ. 175, 176**): Հարուցիչը փոխանցվում է սեռական ուղիների միջոցով,


ծննդաբերության և արյան փոխներարկման ժամանակ:

Կանանց մոտ հիվանդության ախտանշաններից են հեշտոցային արտադրությունը, ցավոտ միզարձակումը, ցավոտ սեռական հարաբերությունները, սեռական հարաբերությունից հետո արյունահոսությունը, ստորին որովայնային, մեջքային ցավը, ջերմությունը, սրտխառնոցը, ուղիղ աղիքի բորբոքումը: Տղամարդկանց մոտ հիվանդության ախտանշաններից են ցավոտ միզարձակումը, միզուկից լորձային արտադրությունն, ամործիների այտուցը, ցավը, ուղիղ աղիքի բորբոքումը:


Վեներական հիվանդություններով չվարակվելու համար խորհուրդ է տրվում գերծ մնալ պատահական սեռական հարաբերություններից, իսկ որևէ ախտանշան նկատելիս անհապաղ դիմել բժշկի:



Նկ. 174. Գոնորեայի հարուցիչը:



Նկ. 175. Խլամիդիոզի հարուցիչը:



Նկ. 176. Խլամիդիոզի հարուցիչի կենսական ցիկլը:

ԶԻԿԱ (ծեռբերովի ինունային անբավարարության համախտանիշ): Հարուցիչը ՄԻԱՎ (մարդու ինունային անբավարարության վիրուս)-ն է, որը ՌՆԹ-պաղունակող վիրուս է, կարող է ինտեգրվել ախտահարված բջջի ԴՆԹ-ում և պահպանվել ամբողջ կյանքի ընթացքում:

Հիվանդությամբ վարակման հիմնական ուղին չպաշտպանված սեռական հարաբերությունն է վարակված անհատի հետ: Հիվանդությունն առաջանում է նաև օգտագործված ներարկիչների կիրառման, արյան փոխներարկման և օրգանների փոխառության դեպքում, հիվանդ մայրական օրգանիզմից պտղին փոխանցման կամ մայրական կաթի միջոցով:

Վիրուսով հիմնականում վարակվում են Տ-լիմֆոցիտները: Դրանք քայլայվում են, որի հետևանքով մարդը ծեռք է բերում ինունային անբավարարություն: Ինունային համակարգի անբավարարության հետևանքով հիվանդն ի վիճակի չի լինում պայքարելու այլ հիվանդությունների հարուցիչների դեմ: Հիվանդություններն ունենում են ծանր ընթացք, արագ հարածում են և բերում հիվանդի հյուծման և, ի վերջո՝ մահվան:

Դարցեր կրկնության համար.



1. Ի՞նչ է վերարտադրողական առողջությունը:
2. Ինչո՞վ է այն բնութագրվում:
3. Ինչպիսի՞ սեռավարակներ գիտեք:
4. Ի՞նչ հիվանդություն է սիֆիլիսը և ո՞րն է նրա հարուցիչը:
5. Ի՞նչ հիվանդություն է գոնորեան և ո՞րն է նրա հարուցիչը:

6. Ի՞նչ ախտանշաններ են բնորոշ խլամիդիոզ հիվանդությանը:

7. Ինչո՞ւ է հատկապես վտանգավոր ՄԻԱՎ-ով վարակվելը:

48. ՄԻԶԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԳԱՆԻՉԱՌՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐՄ

Միջավայրի գործողներն էական նշանակություն կարող են ունենալ օրգանիզմների անհատական զարգացման մեջ թե՛ սաղմնային, թե՛ հետսաղմնային շրջաններում: Այդ գործողները շատ բազմազան են: Բնության նման գործողների թվին են պատկանում ջերմաստիճանը, լույսը, ճառագայթումը, միջավայրի աղային և գազային բաղադրությունը, սննդի պաշարները և այլն:

Գործողների դրական ազդեցությունը նպաստում է զարգացման տարբեր փուլերի առաջընթացին՝ առողջ սաղմի ձևավորմանն, օրգանիզմի բնականոն աճմանն ու հասունացմանը: Գործողների բացասական ազդեցությունը կարող է հանգեցնել անկանխատեսելի հետևանքների, տարաբնույթ հիվանդությունների առաջացման՝ ընդհուպ մինչև օրգանիզմի վաղաժամ վախճանի:

Գործողների ազդեցությունը սաղմնային շրջանում: Մարդկանց մոտ գործողների ազդեցությունը զգալի է արդեն զարգացման սաղմնային շրջանում: Զարգացման սաղմնային շրջանի բնականոն ընթացքն ապահովելու համար հղի կինը պետք է խուսափի տարաբնույթ սրբեսային վիճակներից, իսպառ բացառի իր կողմից ալկոհոլային խմիչքների օգտագործումը, ծխելը և, նույնիսկ, ծխող մարդկանց միջավայրում, չօդափոխված սենյակում գտնվելը, պետք է սնվի ռեֆինով, օգտագործի հաշվեկշռված սնունդի:

Գործողների ազդեցությունը հետսաղմնային շրջանում: Է՛լ ավելի վտանգավոր է բացասական գործողների անմիջական ազդեցությունն օրգանիզմի վրա զարգացման հետսաղմնային շրջանում: Մարդկանց, հատկապես դեռահասների ծխելը, ալկոհոլային խմիչքների, տարաբնույթ թմրանյութերի օգտագործումն առողջության ծանր խանգարումներ կարող են առաջացնել: Կարող են խիստ ախտահարվել մարդու բոլոր օրգան-համակարգերը՝ ամենից առաջ կենտրոնական նյարդային համակարգը, սիրտը և արյունատար անորները, թոքերը, երիկամները և այլն:

Ծխախոտի գործածումը շատ երկրների, այդ թվում նաև Հայաստանի համար դարձել է խսկական աղետ: Թեև մեր երկրում գործում է ծխախոտի արտադրության, իրացման և հասարակական վայրերում օգտագործման սահմանափակումներ սահմանող օրենքը, այնուամենայնիվ, մեր հանրապետությունում ծխախոտ օգտագործում է տղամարդկանց ավելի քան 60 %-ը, իսկ ծխող կանանց թիվը գնալով ավելանում է:

Ծխախոտի ծուխը պարունակում է **միկոտին** և այլ թունավոր նյութեր,

ԳԼՈՒԽ 8. ՕՐՎԱՆԻՉԱՌԵՐԻ ԱՆՎԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

որոնք ազդում են ոչ միայն ծխող, այլև ծխախոտի ծխով լցված միջավայրում գտնվող այլ անձանց վրա (հատկապես երեխաների և հղի կանանց), առաջացնելով ինչպես անմիջական, այնպես էլ ամիսների և տարիների ընթացքում նկատվող ազդեցություններ (Ակ. 177, 178): Բացի այդ, ծխելն ազդում է նաև մաշկի վրա. գույնը դառնում է անառողջ, ժամանակից շուտ առաջանում են կնճիռներ: Ըստ վիճակագրական տվյալների ծը-խողների մոտ, համեմատած չը-ծխողների հետ, էապես բարձր է բազմաթիվ վտանգավոր հիվանդությունների առաջացնան հավանականությունը (օրինակ՝ **քաղցկեղի**, հատկապես շնչառական օրգանների քաղցկեղի, **սիրտանորական հիվանդությունների** և այլն):

Թմրանյութերն ու ալկիհոլն արագորեն ներծծվում են արյան մեջ և հասնելով գլխուղեղ, ազդում են ուղեղի հատուկ կենտրոնների վրա, առաջ բերելով հաճույքի, հիշողության, մտածողության, ժամանակի զգացողության և շարժումների փոխհամաձայնեցման փոփոխություններ:

Թմրանությունը հիվանդություն է, որը պայմանավորված է թմրամիջոցների պարբերաբար օգտագործման հետևանքով առաջացած հոգեկան, երբեմն նաև ֆիզիկական կախվածությամբ: Թմրամիջոցների որոշ տեսակներից կախվածություն կարող է առաջանալ նույնիսկ փոքր չափաքաներից և շատ արագ: Թմրանոլը հետզհետեւ սկսում է օգտագործել ավելի



Ակ. 177. Թոքերը որպես մոխրաման:



Ակ. 178. Զծխող և ծխող մարդկանց թոքերը:

ու ավելի մեծ չափաբանակմեր, որպեսզի հասնի ցանկալի ազդեցության: Թմրամիջոցների օգտագործումը կարող է մահացու լինել դրանց օգտագործման հետևանքով առաջացած հիվանդությունների կամ գերդոզավորման պատճառով:

Թմրամյութերի օգտագործումն, ալկոհոլային խմիչքների չարաշահումը և թունամոլությունը կործանարար ազդեցություն կարող են ունենալ նաև մարդու մտավոր գործունեության, սրտի աշխատանքի, շնչառության և այլ կենսական գործընթացների վրա, ինչը կարող է հանգեցնել տարբեր հիվանդությունների ծագման և մարդու վաղաժամ մահվան: Օրինակ, ալկոհոլը քայլայում է յարդն, առաջացնում *ցիրոզ* հիվանդությունը: Ալկոհոլի պարբերաբար օգտագործումը հանգեցնում է ծանր հիվանդության՝ *ալկոհոլիզմի*, իսկ թմրանյութի օգտագործումը՝ *թմրամոլության*, որոնք պահանջում են երկարատև մասնագիտական բուժում:

Հատկանշական է, որ բացասական գործուների ազդեցությունը կարող է ճակատագրական լինել նաև ապագա սերունդների համար: Ալկոհոլամոլ, թմրանյութեր օգտագործող կամ թունամոլ ծնողներից, որպես կանոն, ծնվում են սակավամիտ և ֆիզիկապես ոչ լիարժեք երեխաներ:

Յարցեր կրկնության համար.



1. Ինչի՞ն կարող է նպաստել միջավայրի գործուների դրական կամ բացասական ազդեցությունը:
2. Ի՞նչ պետք է ձեռնարկի հղի կինը պտղի զարգացման սաղմնային շրջանի բնականոն ընթացքն ապահովելու համար:
3. Ի՞նչ բացասական ազդեցություն կարող են ունենալ ծխելն, ալկոհոլային խմիչքների, նարկոտիկ նյութերի օգտագործումը մարդկանց, հատկապես դեռահասների օրգանիզմում:
4. Ինչպե՞ս է ազդում ալկոհոլը մարդու զարգացման վրա:

III ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Բջջի նյութափոխանակությունը կամ մետաբոլիզմն, ունի երկու ուղղություն: Ուեակցիաների առաջին խումբը նպատակառուղղված է բջջին էներգիայով ապահովելուն: Սրանք ծեղբավորման ռեակցիաներ են, որոնց ամբողջությունը կազմում է բջջի էներգիական փոխանակությունը կամ կատարողիզմը: Ուեակցիաների երկրորդ խումբը նպատակառուղղված է բջջի կառուցվածքային բաղադրամասերով ապահովմանը, որոնք անհրաժեշտ են բջջի ածի, նորոգման, նոր պայմաններին հարմարվելու համար: Դրանք սինթեզի ռեակցիաներն են, որոնց ամբողջությունը կոչվում է պլաստիկ փոխանակություն կամ անարողիզմ:

Բջջին էներգիայով ապահովելու համար օգտագործվում են օրգանական նյութեր՝ ածխաջրեր, ճարպեր, սպիտակուցներ: Սրանց ծեղբման արդյունքում անջատվում է էներգիա, որի հաշվին սինթեզվում է ԱԵՖ: Այդոք օրգանիզմների կենսագործունեության համար անհրաժեշտ է թթվածնի առկայությունն, իսկ անակրոք օրգանիզմների կենսագործունեության համար թթվածնի առկայությունը պարտադիր է:

Ավտոտրոֆ օրգանիզմները որպես ածխածնի աղբյուր օգտագործում են անօրգանական միացություն՝ CO_2 և սինթեզում են օրգանական միացություններ: Ավտոտրոֆ սննդառության եղանակներից են ֆոտոսինթեզը և քեմոսինթեզը: Ֆոտոսինթեզի դեպքում որպես էներգիայի աղբյուր ծառայում է լուսային էներգիան, իսկ քեմոսինթեզի դեպքում՝ անօրգանական միացությունների օքսիդացումից անջատված էներգիան:

Բջջի նախապատրաստումը բաժանմանը և բաժանման հետագա պրոցեսների հաջորդականությունը կոչվում են բջջի կենսական ցիկլ կամ բջջային ցիկլ: Երկու բաժանումների միջև ընկած ժամանակահատվածը կոչվում է ինտերֆազ: Կարևորագույն գործընթացը, որը տեղի է ունենում ինտերֆազի միջին փուլում, ՂՆԹ-ի սինթեզն է: ՂՆԹ-ի կրկնապատկման հիմքում ընկած է լրացման (կոմպլեմենտարության) սկզբունքը, համաձայն որի մայրական մոլեկուլի առանձին շղթաները մատրիցա են ծառայում նոր սինթեզվող շղթաների համար: Կորիզավոր բջիջների բաժանման հիմնական ձևը միտոզն է: Միտոզն անընդհատ գործընթաց է, բայց այն պայմանականորեն բաժանվում է չորս փուլի՝ պրոֆազ, մետաֆազ, անֆազ և թելոֆազ:

ՂՆԹ-ի կրկնապատկումից հետո յուրաքանչյուր քրոմոսոմ կրում է երկու քրոմատիդ, ինչը շարունակվում է ամրող պրոֆազում և մետաֆազում: Ակսած անֆազից, երբ տեղի է ունենում քրոմատիդների տարամիտում դեպի բևեռներ, յուրաքանչյուր քրոմոսոմ կրում է միայն մեկ քրոմատիդ: Այն տևում է մինչև ինտերֆազի միջին՝ S-փուլը:

Դայտնի են օրգանիզմների բազմացման երկու հիմնական ձևեր՝ անսեռ և սեռական: Անսեռ բազմացմանը մասնակցում է ծնողական միայն մեկ առանձնյակ, որը բաժանվում է, բողբոջում կամ սպորներ է առաջացնում: Ալոյունքը լինում է այն, որ ծնավորվում են երկու կամ ավելի դուստր առանձնյակներ, որոնք իրենց ժառանգական հատկանիշներով նման են ծնողական առանձնյակին:

Բազմացման այն եղանակը, որի դեպքում նոր բույսն առաջանում է վեգետատիվ օրգաններից կոչվում է վեգետատիվ բազմացում:



Սեռական բազմացման հիմքում ընկած է սեռական բջիջների՝ գամետների առաջացման պրոցեսը: Սեռական բազմացմանը, որպես կանոն, մասնակցում են երկու ծնողական առանձնյակներ՝ արական ու իգական, բայց կարող է մասնակցել նաև մեկ ծնողական առանձնյակ, օրինակ՝ **հերմաֆրոդիտ օրգանիզմների** կամ **կուսածնության** դեպքում:

Իգական առանձնյակի սեռական գեղձերում առաջանում են **ձվաբջիջներ**, իսկ արական առանձնյակում՝ **սպերմատոզիդներ**: Իգական և արական գամետները միաձուլվում են և առաջացնում **զիգոտ**՝ բեղմնավորված ձվաբջիջ, որը նոր օրգանիզմի զարգացման սկիզբ է տալիս:

Սեյզի երկու բաժանումներն ունեն միտոզի նույն փուլերը՝ պրոֆազ, մետաֆազ, անաֆազ, թելոֆազ: Սեյզի առաջին բաժանման պրոֆազի ընթացքում քրոմոսոմները պարուրվում են: Ցուրաքանչյուր զույգ, այսինքն հոմոլոգ քրոմոսոմներն ամբողջ երկարությամբ հավաքվում են իրար և ոլորվում: Ցոմոլոգ քրոմոսոմների միացման այս գործընթացն անվանում են **կոնյուգացում**:

Կոնյուգացման ընթացքում որոշ հոմոլոգ քրոմոսոմների միջև տեղի է ունենում դրանց հոմոլոգ մասերի (գենների) փոխանակում (**տրամախաչում կամ կրոսինգօվեր**):

Սեռական եղանակով բազմացող օրգանիզմների անհատական զարգացմքը կամ **օնտոգենեզը** սկսվում է զիգոտի առաջացման պահից մինչև օրգանիզմի վախճանը: Այն բաժանվում է երկու, միջյանցից եակես տարրեր-վոր ժամանակահատվածների՝ **սաղմնային** և **հետսաղմնային** շրջանների:

Կենդանիների անհատական զարգացման սաղմնային շրջանն իր հերթին բաժանվում է երեք հիմնական փուլերի: Դրանք են՝ **տրոհումը**, որի հետևանքով առաջանում է բազմաբջիջ սաղմ՝ **բլաստոլ**, գաստրոլացումը, որի ժամանակ առաջանում են երկու սաղմնային թերթիկները՝ **էկտոդերմը** և **էնտոդերմը**, իսկ սաղմը դառնում է երկշերտ: Կենդանիների ճնշող մեծամասնության մոտ էկտոդերմի և էնտոդերմի միջև առաջանում է երրորդ սաղմնային թերթիկը՝ **մեզոդերմը**: Երրորդ փուլն առաջնային օրգանոգենեզն է, որի ժամանակ առաջանում են առանցքային օրգանները:

Հետագա տարրերակման արդյունքում **էկտոդերմի** բջիջներից ձևավորվում են նյարդային համակարգը, զգայարանները, մաշկի էպիթելը, ատամների էմալը, **էնտոդերմից**՝ աղիքի էպիթելը, մարսողական գեղձերը, խորիների և թոքերի էպիթելը, **մեզոդերմից**՝ մկանային, ուկրային հյուսվածքները, երիկամները, սեռական գեղձերը, արյունատար համակարգը և այլն:

Հետսաղմնային զարգացումը կարող է լինել **ուղղակի**, եթե ծնված օրգանիզմը նաև է հասունացածին, և **անուղղակի**, եթե սաղմնային զարգացման հետևանքով առաջանում է թրուլը, որը հասունացած օրգանիզմից տարրերվում է ներքին և արտաքին կառուցվածքի շատ հատկանիշներով, սնման և տեղաշարժման բնույթով և մի շարք այլ առանձնահատկություններով:

Սիջավայրի գործոններն էական նշանակություն կարող են ունենալ օրգանիզմների անհատական զարգացման վրա թե՝ սաղմնային և թե՝ հետսաղմնային շրջաններում: Սարդկանց, հատկապես դեռահասների ծիսելը, ալկոհոլային խմիչքների, տարաբնույթ թմրանյութերի օգտագործումն առողջության ծանր խանգարումներ կարող են առաջացնել:



ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. ԲԶՋԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՄՏՏՈՂ ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՅՏԱԲԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄԱԿԻՐՈՒՄ

Կենդանի բջջի բաղադրության մեջ մտնում են տարբեր օրգանական նյութեր: Դրանցից կարևոր են մեծ մոլեկուլները՝ նուկլեինաթթուները, սպիտակուցները և ածխաջրերը, որոնք կարող են հայտնաբերվել որոշ միացությունների հետ յուրահատուկ փոխազդեցության արդյունքում, որն արտահայտվում է գունավորման փոփոխությամբ: Դիմնային միջավայրում պղնձի կատիոնների հետ փոխազդելիս սպիտակուցները տալիս են վարդագույն կամ մանուշակագույն գունավորում: Յոդի հետ փոխազդելիս պղնձախարիդներից օսլան տալիս է կապտամանուշակագույն գունավորում:

Աշխատանքի նպատակը: Ամրագրել բջջի օրգանական նյութերի մասին գիտելիքները: Բացահայտել սպիտակուցները և ածխաջրերը կենդանի բջջներում, պարզել դրանց հատկությունները: Ամրացնել փորձարարությունը և փորձի արդյունքների վերլուծության ունակությունն, ինչպես նաև դիտարկումը:

Սյուրեր և սարքեր: Ամոնիումի սուլֆատի ($(\text{NH}_4)_2\text{SO}_4$) 10 %-անոց լուծույթ, կալիումի (KOH) կամ նատրիումի (NaOH) հիդրօքսիդի 10 %-անոց լուծույթ, պղնձի սուլֆատի (CuSO_4) 1 %-անոց լուծույթ, յոդի լուծույթ, ջուր, լոքագինների այսուհետեւ, կարտոֆիլի պալարի կտորներ, օսլայի փոշի, ֆիլտրի թուղթ, ապակյա թաժակներ, փորձանորներ, կառողիչ, ապակյա ձողիկ:

Աշխատանքի ընթացքը: Բաժակի մեջ տեղադրեք 20-30 գ լոբազգիների այսուհետեւ 50-80 մլ ամոնիումի սուլֆատի 10 %-անոց լուծույթ, լավ խառնեք և բողեք 30 րոպե: Այնուհետև այդ պարունակությունը ֆիլտրեք ֆիլտրի թղթի օգնությամբ: Ստացված խառնուրդը (2-3 մլ) տեղափոխեք ապակյա փորձանորի մեջ, ավելացրեք հավասար ծավալով KOH -ի կամ NaOH -ի 10 %-անոց լուծույթ և 4-5 կարիլ CuSO_4 -ի 1 %-անոց լուծույթ: Փորձանորն զգուշությամբ լավ թափահարեք: Փորձանորի պարունակությունը կը գունավորվի: Ի՞նչ նյութ եք հայտնաբերել:

Կարտոֆիլի պալարի կտորի վրա պիտի օգնությամբ ավելացրեք մի քանի կարիլ յոդի լուծույթ: Ի՞նչ կդիտվի: Ի՞նչ նյութի առկայության մասին կարող եք եզրակացնել:

Փորձանորի մեջ տեղադրեք մի քիչ օսլայի փոշի, ավելացրեք սառը ջուր, այնուհետև լավ խառնեք՝ օգտվելով ապակյա ձողիկից: Ի՞նչ կդիտվի: Բացատրեք արդյունքը:

2. ՄՊԻՏԱԿՈՒՑՆԵՐԻ ՖԵՐՄԵՆՏԱՅԻՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Ֆերմենտներն սպիտակուցներ են, որոնք էապես փոխում են կենդանի բջիջներում տարբեր նյութերի քիմիական փոխարկումների արագությունը: Դրանք իրենց ակտիվությունը դրսկորում են միջավայրի որոշակի պայմաններում:

Ֆերմենտներից մեկը՝ կատալազը պարունակվում է շատ հյուսվածքներում: Այն արագացնում է ջրածնի պերօքսիդի (H_2O_2) ճեղքումը, որի արդյունքում առաջանում են ջուր (H_2O) և անջատվում նոլեկուլային թթվածին (O_2):



Դրանով կատալազը պաշտպանում է բույսի կամ կենդանու բջիջը ջրածնի պերօքսիդի թունավոր ազդեցությունից:

Աշխատանքի նպատակը: Ամրագրել ֆերմենտների մասին գիտելիքները, ծանոթանալ ֆերմենտների դերին հյուսվածքներում և բջիջներում: Ցուցադրել ֆերմենտներից մեկի՝ կատալազի ներգործությունը ջրածնի պերօքսիդի վրա և պարզել այն պայմանները, որոնցում այդ ֆերմենտը գործում է: Ամրացնել փորձարարությունը և փորձի արդյունքների վերլուծության ունակությունը:

Նյութեր և սարքեր. Ջրածնի պերօքսիդի 3 %-անց լուծույթ, թորած ջուր, ավագ, սենյակային կամ որևէ այլ ծածկասերմ բույսի տերև, կարտոֆիլի պալարի հում և եփած կտորներ, հում և եփած մսի կտորներ, դպրոցական լուսային մանրադիտակներ, առարկայակիր ապակիներ, ապակյա փորձանոթներ, հավանագ:

Աշխատանքի ընթացքը: Առարկայակիր ապակու վրա տեղադրեք ջրի կաթիլ և դրանում՝ տերևի բարակ կտորվածքը, դիտեք այդ պատրաստուկը փոքր խոշորացումով դպրոցական լուսային մանրադիտակի տակ: Այնուհետև ավելացրեք ջրածնի պերօքսիդի 3 %-անց լուծույթի 1-2 կաթիլ: Նորից դիտարկեք պատրաստուկը մանրադիտակի տակ: Նկարագրեք պատրաստուկում փոփոխությունները ջրածնի պերօքսիդի ներգործությունից:

Տարբեր ապակյա փորձանոթների մեջ տեղավորեք ավագ, կատոֆիլի հում կամ եփած կտորներ, հում կամ եփած մսի կտորներ, իսկ փորձանոթներից մեկում տեղադրեք հավանգում մանրացված կարտոֆիլի հում կտորների և ավագի հետ խառնված զանգված: Յուրաքանչյուր փորձանոթում գգուշությամբ ավելացրեք 2-3 մլ ջրածնի պերօքսիդի 3 %-անց լուծույթ: Նկարագրեք փորձանոթներից յուրաքանչյուրում ջրածնի պերօքսիդի ներգործության արդյունքում դիտվող փոփոխությունները, թթվածնի անջատումը՝ ուշադրություն դարձնելով տարբերությունների վրա:

Կատարված աշխատանքի արդյունքները գրանցեք տետրում: Բացատրեք դրանց տարբերությունները: Ի՞նչ կարող եք ասել օգտագործված նմուշներում սպիտակուցների առկայության և դրանց ֆերմենտային ակտիվության մասին: Կարո՞՞ղ եք նշել այն պայմանները, որոնցում գործում է կատալազը: Ի՞նչ տարբերություն կա կարտոֆիլի հում կտորների և դրանց նանրացված զանգվածի միջև՝ նմուշներում ջրածնի պերօքսիդի ավելացման արդյունքում: Ինչպե՞ս դա բացատրել: Ինչո՞ւ է կատալազը կորցնում իր ակտիվությունը եփած կարտոֆիլում: Ի՞նչ տարբերություն եք արձանագրել բուսական և կենդանական նմուշների միջև:

3. ՄԱՆՐԱԴԻՏԱԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՄԱՆՐԵԱԶՆԱՍՆ ՏԵԽՆԻԿԱՆ


Աշխատանքի նպատակն է ծանոթացնել մանրադիտակի կառուցվածքի և մանրադիտակով ուսումնասիրությունների տեխնիկայի հետ:

Մանրադիտակը (*միկրոսկոպ*, *հոլո. micros* - փոքր, *scopere* - նայում եմ) օպտիկական սարք է, որը նախատեսված է անգեն աչքով անտեսանելի օբյեկտները ուսումնասիրելու համար: Մանրադիտակի օգնությամբ ուսումնասիրում են միկրոօրգանիզմների կենդանի և մահացած բջիջները՝ ներկված և չներկված տեսքով:

Մանրադիտակները շատ բազմազան են, սակայն դրանց հիմնական մասերը անփոփոխ են և կազմված են 2 մասից՝ մեխանիկական և օպտիկական (**Ընդ. 179**): Մեխանիկական մասին են պատկանում շտատիվը, առարկայակիր սեղանը և դիտափողը (տուբուսը): Շտատիվը կազմված է նալիկաձև հիմքից և տուբուսը կրող աղեղնաձև իրանից: Հիմքին պտուտակով ամրացրած է ատամնաձև անիվներից կազմված մեխանիզմը՝ տուբուսի շարժման համար: Համակարգը շարժվում է միկրոնետրիկ և մակրոնետրիկ պտուտակների օգնությամբ: Պտուտակների բռնակները պտտելով կարելի է սահուն ծևով բարձրացնել կամ իջեցնել առարկայակիր սեղանիկը, որի վրա 2 ամրակով ֆիքսված է ուսումնասիրվող պատրաստուկը: Ժամացույցի սլաքի ուղղությամբ պտտեցնելու ժամանակ տուբուսը իջեցվում է պրեպարատի ուղղությամբ, իսկ հակառակ դեպքում՝ պրեպարատից վերև:

Մակրոնետրի միջոցով ուսումնասիրվող օբյեկտը բերվում է նախնական կողմնորոշող ֆոկուսի, իսկ պարզորոշ պատկեր ստանալու համար օգտագործվում է միկրոնետրը:

Երկու պտուտակների օգնությամբ (աջից և ձախից) սեղանիկը կարելի է հորիզոնական դրությամբ շարժել բոլոր ուղղություններով, ինչը թույլ է տալիս տեսադաշտում տեղադրել պրեպարատի տարբեր մասերը:



Նկ.179. Լուսային մանրադիտակ:

Դիտափողն ամրացված է տուրուսակրի գլխիկին, իսկ գլխիկի ստորին մասին ամրացած է շրջագլխիկը, որի բների մեջ տեղադրված են խոշորացույցները: Խոշորացույցներն ըստ մեծացման աստիճանի և օգտագործման ձևի լինում են չոր և իմերսիոն: Չոր խոշորացույցները, որոնք համեմատաբար քիչ են մեծացնում, օգտագործվում են համեմատաբար խոշոր կենսաբանական օբյեկտների ուսումնասիրման համար: Միկրոօրգանիզմների ուսումնասիրման ժամանակ օգտագործվում են իմերսիոն օբյեկտիվները, որոնց օգտագործման դեպքում օբյեկտիվների և ծածկապակու միջև կաթեցվում է մի կաթիլ որևէ յուղ, որն ունի բարձր բեկման ցուցիչ:

Մանրադիտակի օպտիկական մասը բաղկացած է 2 համակարգից՝ լուսավորման և դիտողական: Առաջինը կազմված է հայելուց և լուսահավաքից (կոնդենսոր), իսկ 2-րդը՝ օբյեկտիվից և օկուլյարից, որոնք միացած են դիտափողով:

Ուսումնասիրվող պրեպարատը դնում են մանրադիտակի սեղանիկի վրա՝ օբյեկտիվի տակ և լուսավորում են ներքեաց՝ հայելուց անդրադարձվող լուսի փնջով: Կոնդենսորից հավաքած ճառագայթները անցնում են պատրաստուկի միջով և ընկնում են օբյեկտիվի մեջ, որը կառուցում է խոշորացրած, հակադարձ և իրական պատկերը: Այս պատկերը երևում է օկուլյարում (ակնապակի) այնպես, ինչպես խոշորացույցի մեջ:

Պատրաստուկի ուսումնասիրությունը միշտ սկսում են թույլ խոշորացումից: Հստակ պատկեր ստանալու համար պտտում են տուրուսի բռնակը, միաժամանակ նայելով կողքից (որպեսզի պրեպարատը չճգնվի) և օբյեկտիվը

իջեցնում են համարյա մինչև պատրաստուկին հպվելը: Այնուհետև նայելով օկուլյարից դեպի ներս օբյեկտիվը բարձրացնում են մինչև պատկերի հստակ երևալը:

Ավելի հաճախ պատրաստուկներն ուսումնասիրում են ջրի կաթիլում: Ջրի գոլորշիացման պատճառով նման պատրաստուկները երկար ժամանակ չեն պահպանվում և այդ պատճառով կոչվում են ժամանակավոր պատրաստուկներ: Նման պատրաստուկները պատրաստելու համար մաքուր առարկայակիր ապակու վրա կարեցնում են մի կարիլ ջուր, նույ մեջ տեղավորում են հետազոտվող օբյեկտը և ծածկում են ծածկապակիով: Ծածկապակին փխրուն է, դրա համար պետք է տեղադրվի շատ զգուշությամբ՝ երկու մատներով բռնում են անկյուններից և իջեցնում են սկզբից մի եզրով՝ մինչև կաթիլին հպվելը:

Աշխատանքից հետո օպտիկական ապակիները մաքրում են հատուկ ֆլանելից լաթով՝ առանց որևէ ուժ գործադրելու: Մաքրելուց առաջ կարելի է արտաշնչել ապակիների վրա: Եթե դա չի բավարարում, կարեցնում են մի կարիլ մաքրուր ջուր:

4. ՆԱԽԱԿՈՐԻԶԱՎՈՐ ԲԶԻՋՆԵՐԻ (ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԿԱՊՏԱԿԱՆԱՉ ԶՐԻՍՈՒԹՆԵՐԻ) ՊԱՏՐԱՍԻ ՄԱՆՐԱՊԱՏՐԱՍՈՒԿՆԵՐԻ ԴԻՏՈՒՄ ԵՎ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ

Նախակորիզավոր բջիջները բնութագրվում են զարգացած բջջապատով, այդ բջիջներում բացակայում է ձևավորված կորիզը և չկան շատ օրգանոիդներ: Նրանք մինյանցից տարբերվում են իրենց չափսերով և արտաքին տեսքով:

Աշխատանքի նպատակը: Ամրագրել նախակորիզավոր բջիջների մասին գիտելիքները: Դիտել և նկարագրել նախակորիզավոր բջիջները, նշել դրանց առանձնահատկություններն: Ամրացնել մանրադիտակի հետ աշխատանքի հմտությունը, դիտարկման ուշադրությունը և համեմատման ունակությունը:

Նյութեր և սարքեր: Բակտերիայի և կապտականաչ ջրինուուի բջիջների պատրաստի մանրապատրաստուկներ, թորած ջուր, հատուկ յուղ, լաբորատոր գործիքներ, առարկայակիր և ծածկող ապակիներ, դպրոցական լուսային մանրադիտակներ, նախակորիզավոր բջիջների կառուցվածքի մասին նկարներ, այուսակներ, մոդելներ:

Բնագիտական հոսքերում կարող են օգտագործվել դպրոցական կենսարամության լաբորատորիայում պատրաստված բակտերիաների (աղիքային ցուպիկի) և կապտականաչ ջրինուուի մանրապատրաստուկները: Այդ նպատակին կարող է ծառայել որևէ ոչ ախտածին բակտերիայի (աղիքային ցուպիկ) և կապտականաչ ջրինուուի ածեցված կուլտուրաները, որոնցից մի

հատվածը լաբորատոր գործիքների (պիպետ կամ հատուկ ասեղ) միջոցով տեղադրվում է մաքուր առարկայակիր ապակու վրա ջրի կամ հատուկ յուղի կաթիլում, ծածկվում ապակիով:

Աշխատանքի ընթացքը: Դիտեք բակտերիայի և կապտականաչ ջրիմուրի բջիջների պատրաստի կամ պատրաստված մանրապատրաստուկները մեծ խոշորացումով դպրոցական լուսային մանրադիտակի տակ: Տետրում նկարեք այդ բջիջները: Նշեք դրանց առանձնահատկությունը: Տարբերակեք բջջային ցիկլի տարրեր փուլերում կամ վիճակում գտնվող բջիջները:

5. ԲՈՒՍԱԿԱՆ, ՍՆԿԱՅԻՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԲՋԻՋՆԵՐԻ ՊԱՏՐԱՍԻ ՄԱՆՐԱՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԴԻՏՈՒ ԵՎ ՆԿԱՐՎՈՒՄ: ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ՍՆԿԱՅԻՆ ԲՋԻՋՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԱՆՐԱՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ, ԴԻՏՈՒ ԵՎ ՆԿԱՐՎՈՒՄ


Բուսական, սնկային և կենդանական բջիջներն իրենց չափսերով, արտաքին տեսքով և կառուցվածքով ունեն նմանություններ և տարբերություններ: Վերջինները վերաբերում են բջջապատիճ, տարբեր օրգանիդներին: Դրանք որոշում են շատ ֆունկցիաներ:

Աշխատանքի նպատակը: Ամրագրել բուսական, սնկային և կենդանական բջիջների մասին գիտելիքները: Դիտել և նկարագրել բուսական, սնկային և կենդանական բջիջները, նշել դրանց նմանությունները և տարբերություններն: Ամրացնել մանրադիտակի հետ աշխատանքի հմտությունը, դիտարկման ուշադրությունը և համեմատման ունակությունը:

Նյութեր և սարքեր: Բուսական (ջրիմուրի՝ քլամիդոնադի կամ սոխի թեփուկի) (**Ակ. 180**), սնկային (խմորասնկի կամ բորբոսասնկի) և կենդանական (էպիթելիալ հյուսվածքի) բջիջների պատրաստի մանրապատրաստուկներ, թորած ջուր, ապակյա թասիկներ, լաբորատոր գործիքներ, առարկայակիր և ծածկող ապակիներ, դպրոցական լուսային մանրադիտակներ, բուսական, սնկային և կենդանական բջիջների կառուցվածքի մասին նկարներ, այսուսակներ, մոդելներ:

Բնագիտական հոսքերում կարող են օգտագործվել դպրոցական կենսաբանության կարինետում կամ լաբորատորիայում պատրաստված բուսական կամ սնկային բջիջների մանրապատրաստուկները: Այդ նպատակին կարող է ծառայել քլամիդոնադը կամ սոխի թեփուկը, թասիկի վրա պենիցիլ կամ այլ բորբոսասնկի աճեցված կուլտուրան, որոնց բարակ կտրվածքը կամ հատվածը լաբորատոր գործիքների (նշտար կամ ասեղ) միջոցով տեղադրվում է մաքուր առարկայակիր ապակու վրա ջրի կաթիլում, ծածկվում ապակիով:

Աշխատանքի ընթացքը: Դիտեք բուսական, սնկային և կենդանական բջիջների պատրաստի կամ պատրաստված մանրապատրաստուկները մեծ խոշորացումով (մոտ 300 անգամ) դպրոցական լուսային մանրադիտակի տակ:



Նկ. 180. Սոխի թեփուկի թիցների ուսումնասիրումը:

Տետրուն նկարե՛ք բուսական, սնկային և կենդանական մեկական թջիջ՝ նշելով թջիջ մանրադիտակի տակ տեսանելի հիմնական բաղադրամասերը և օրգանոիդները: Համենատե՛ք այդ թիցները միմյանց հետ՝ հիշելով այդ թիցների նասին դպրոցական դասընթացի նյութը: Լրացրե՛ք աղյուսակը՝ նշելով նմանությունները և տարբերությունները:

Թիջ	Թջի համեմատական չափը	Թջի ձևը	Թջապատի առկայությունը և հաստությունը	Թջակորիզի առկայությունը, ձևը և դիրքը թջում	Օրգանոիդների առկայությունը	
					Պլաստիդներ և խոշոր վակուոլներ, ալաստիդներ որի ձևը	Այլ օրգանոիդներ
Բուսական						
Սնկային						
Կենդանական						

Ինչի՞ մասին է վկայում բուսական, սնկային և կենդանական բջիջների ննանությունը և տարբերությունը: Մեկնաբանեք բջջային տեսության հիմնադրույթների շրջանակում:

6. ԲՋՋԻ ՑԻՑՈՊԼԱԶՄԱՅԻ ԴԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Բջջի ցիտոպլազմայի հատկություններից է մածուցիկությունը, որի փոփոխությունն ունի մեծ նշանակություն միջավայրի տարբեր պայմաններին հարմարվելու գործընթացում: Կալիումի կատիոնների ազդեցությամբ ցիտոպլազմայի մածուցիկությունը նվազում է, իսկ կալցիումի կատիոնների ազդեցությամբ, հակառակը, այն մեծանում է:

Ցիտոպլազմայի մածուցիկությունը կարելի է որոշել՝ դիտարկելով պլազմոլիզի տևողությունը: Դա բարձր օսմոսային ճնշմամբ լուծույթի մեջ տեղադրելուց հետո բջջների ուռուցիկ պլազմոլիզի առաջացումն է մանրադիտակի տեսադաշտում կեսից ավելի թվով բջջների մոտ:

Աշխատանքի նպատակը: Ամրագրել բջջի ցիտոպլազմայի մասին գիտելիքները, ծանոթանալ բջջի մեջ ջրի մոլուքի և նրանից ջրի ելքի կազմավորմանը: Որոշել բջջի ցիտոպլազմայի մածուցիկության վիա տարբեր կատիոնների ազդեցությունը: Ամրացնել մանրադիտակի հետ աշխատանքի հմտությունը, դիտարկման ուշադրությունը, փորձարարությունը և փորձի արդյունքների վերլուծության ունակությունը:

Նյութեր և սարքեր: Սոլյի թեփուկի կամ սենյակային բույսի տերևներ, սախարոզի, կալիումի նիտրատի (KNO_3), նատրիումի քլորիդի ($NaCl$) 1 Մ-անոց լուծույթներ, կալցիումի նիտրատի ($Ca(NO_3)_2$) 0,7 Մ-անոց լուծույթ, ապակյա թասիկներ, ֆիլտրի թուղթ, լաբորատոր գործիքներ, առարկայակիր և ծածկող ապակիներ, դպրոցական լուսային մանրադիտակներ:

Աշխատանքի ընթացքը: Տեղադրեք բուսական հյուսվածքի փոքր կտորներ առարկայակիր ապակու վրա ջրի կաթիլում և դիտեք դրանց մեջ խոշորացումով դպրոցական լուսային մանրադիտակի տակ, ուշադրություն դարձեք ցիտոպլազմայի դիրքին: Դրանից հետո, ֆիլտրի թղթի օգնությամբ ջրի մնացորդները հեռացնելուց հետո, նմուշները տեղափոխեք սախարոզի, կալիումի, նատրիումի կամ կալցիումի կատիոնների լուծույթների կաթիլում: Յուրաքանչյուր 5 րոպե հետո մի քանի անգամ ուշադրությամբ արձանագրեք նմուշներում ցիտոպլազմայի դիրքի փոփոխությունը՝ պլազմոլիզի երևույթը: Լրացրեք այսուսակը:

Փորձեք վերլուծել ստացված արդյունքները և բացատրել ցիտոպլազմայի մածուցիկության փոփոխության պատճառները: Մտածեք, թե

Ի՞նչ կարող է կատարվել բջիջներում աղի կամ սախարոզի խիտ լուծույթներում երկար մնալուց հետո: Ի՞նչ տարբերություն կա տարբեր կատիոնների դեպքում: Ի՞նչ նպատակների համար կարելի է օգտագործել նման երևույթը:

Նմուշ	Միջավայրում կատիոնների առկայությունը	Կատիոնների կոնցենտրացիան, Մ	Լուծույթի մեջ նմուշը տեղադրելու ժամանակահատվածը, րոպե	Պլազմոլիզի առաջացման ժամանակը, րոպե	Ուռուցիկ Ներփակած
1	Սոուգիչ սախարոզի լուծույթ	1			
2	KNO_3	1			
3	NaCl	1			
4	$\text{Ca}(\text{NO})_2$	0,7			

7. ԲՈՒՍԱԿԱՆ ԲԶԻՋՆԵՐՈՒՄ ՄԻՏՈԶԻ ՓՈՒԼԵՐԻ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒՄԸ

Աշխատանքի նպատակը: Անրապնդել միտոզի տարբեր փուլերի մասին ունեցած տեսական գիտելիքները:

Նյութեր և սարքեր: Նոր առաջացած արմատներով սոխ կամ սխտոր, մանրադիտակ, առարկայակիր ապակի, ծածկապակի, Պետրիի թասիկներ, լարորատոր բաժակներ և փորձանոթներ, կաթոնիչ (պիպետ), ունելի, նշտար, ներկանյութ (ացետոկարմին):


Միտոզի փուլերը կարելի է դիտարկել սոխի ($2n=16$) կամ սխտորի ($2n=16$) արմատների գոյացնող հյուսվածքի բջիջներում:

Աշխատանքի ընթացքը: Նոր առաջացած սոխի արմատից ժամանակավոր մանրադիտակային պատրաստուկ ստանալու համար կաթոնիչով առարկայակիր ապակու վրա կաթեցվում է մեկ կարիլ ներկանյութ, որից հետո, ունելիով սոխի արմատի ծայրից պոկվում է մոտ մեկ սանտիմետր երկարությամբ հատված և տեղադրվում է ներկանյութի մեջ: Պատրաստուկի վրա դրվում է ծածկապակի և ունելիով թեթևակի սեղմվում՝ ճնշելով պատրաստուկը:

Պատրաստուկը տեղադրվում է մանրադիտակի տակ և դիտվում:

Դիտնան ընթացքում հայտնաբերվում են բջջի կենսական ցիկլի տարրեր փուլերում գտնվող բջիջներ և նկարագրվում:

Պատրաստուկում կարելի է հայտնաբերել ինտերֆազում, պրոֆազի սկզբում և վերջում, մետաֆազում, անաֆազում և թելոֆազում գտնվող բջիջներ (**նկ. 181**):



Նկ. 181. Կենսական ցիկլի տարրեր փուլերում գտնվող սոխի արմատի բջիջները:

ԱՊԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Աղենողինեռֆոսֆորական թթու (ԱԵՖ) 27, 55-57, 62-64
ԱԵՖ-սինթազ (ԱԵՖ-սինթետազ) 71-73, 104, 106-112
Աէրոր 102, 103, 105, 109, 113
Աժխացուր 42, 52, 54, 55
Ակտիվ 62, 71, 112, 133, 171, 172
Ակտիվ կենտրոն 49, 112
Ակրոսոմ 172
Ամերքա 59, 63, 64, 71, 117, 131, 171
Ամիլապլաստ 72
Ամինաթթու 33, 41, 45, 47, 54, 63, 70, 76, 86-91, 103, 105, 120
Ամորգանիտ 175
Անաբոլիզմ-տեն պլաստիկ փոխանակություն
Անարոր 102, 103, 105, 116
-Փակուլտատիվ 102
Անաֆազ 120, 127, 145, 147, 148
Անդալիս 135, 137
Անիմալ թևո 159, 160, 161, 163
Անտերիդիում 159
Աճ 20, 24, 25, 36, 56, 81, 83, 87, 99, 100, 129, 166, 167, 168, 179
-ալոմետրիկ 167
-անսահմանափակ 167, 168, 170
-իզոմետրիկ 167
-սահմանափակ 167, 170
Ապոմիքսիս 154
Առաջնային
-օրգանոգենեզ 159, 163
-աղիքի խորշ 163
-քերան 163
Ավտոտրոֆներ 100
Արգանդ 143, 144, 150, 172, 176, 182
Արգանդափողներ 143, 172
Արիստոնիում 158
Ացետիլ-կոֆերմենտ A 105
Աքսելերացիա 179

Բազմաշաբար (պոլիսախարիդ) 41
Բազմացում օրգանիզմների 24, 131, 134-137
-անսեռ 131, 137, 150
-սեռական 154, 158, 177
-վեգետատիվ 134, 135, 136, 137
Բաժանասեռ օրգանիզմներ 138

Բաժանման իլիկ 65, 74, 118, 122, 123, 145
Բակտերիա 11, 13, 16, 38, 58, 74-85, 181
-ազոտ ֆիքսող 101
-երկարաբակտերիա 81, 116
-քերմոֆիլ 117
-ծիրանագույն 81
-ծծմբարակտերիա 81, 102, 114, 116
-միտրիֆիկացնող 115
-ֆոտոսինթեզող 110, 114
Բակտերիաթթորոփիլ 114
Բակտերիաֆազ 95, 96
Բեղմնավորման թաղանթ 172, 176
Բեղմնավորում 138, 149-153, 158, 175
-արիեստական 150
-արտաքին 149
-կրկնակի 150-152
-մերքին 149, 150
Բերի-բերի 57
Բիոնիկա 16
Բլաստոմեր 160-162
Բլաստոլ 160
Բնափոխում 47
Բջիջ 13
-գեներատիվ 150
-կորիզավոր (էռկարիոտ) 58-60, 67-68
-նախակորիզավոր (պրոկարիոտ)
58-60, 68, 114
-սեռական-տեն գամետներ
-սոնատիկ 126, 127, 145, 149
-վեգետատիվ 150
Բջջարադանթ 60
Բջջակմախք 59, 65, 66
Բջջակորիզ 75, 77
Բջջային կենտրոն 74
Բջջային ճարտարագիտություն 78
Բջջային տեսություն 35, 36, 37
Բջջի կենսական ցիկլ (բջջային ցիկլ) 117

Գաղուր 128
Գամետներ 138, 147, 149, 150, 155-158
Գամետոֆիտ 157, 158
-արական 157
-իզական 157
Գաստրոլ 164
Գաստրոլացում 159, 163

ԳԵՆ 86-88, 90, 126, 129
 ԳԵՆԱՅԻՆ ճարտարագիտություն 14, 91, 94, 97
 ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ գաղտնագիր 87, 88
 Գլիկոզեն 42, 65
 Գլիկոլիզ 104-106, 108
 Գլուկոզ 41, 102-105, 108-111, 175
 Գոլցի ապարատ 59, 66, 68-70, 74, 76
 Գոնորեա 181, 182
 Գործառական կենտրոն 89, 91
 Գունակ 41, 65, 70, 110
 -ֆոտոսինթետիկ 72, 84, 110, 114
 Գրադիենտ 28, 63, 71
 Գրաններ 73, 110
 Գրգռականություն 25, 26, 28
 Գրիպ 91, 92

Պաշտանային փուլ 144, 175
 Ուղին մարմին 144
 Ոիֆրերիա 82, 84, 95
 Ութ 52, 53, 54, 92
 - կառուցվածքային մոդել 53
 - սինթեզ (կրկնապատկում) 118, 119
 Ութ-լիգազ 119
 Ութ-պոլիմերազ 119

Եռկարունարբվային (Կրեբսի) ցիկլ 105, 106
 Եռյակ գաղտնագրող (տրիպլետ) 86
 Երազախաբություն 181

Զարգացում 159-173
 -անհատական 159
 -անուղղակի 166, 168-173
 -հետսաղմնային 159, 166, 177
 -սաղմնային 159, 160, 174
 -ուղղակի 166, 168

Զիգուտ 129, 141, 152, 155, 156, 158-162, 172

Էլեկտրոնային մանրադիտակ 34
 Էկոլոգիական փոխագրեցություններ 15
 Էկտոդերմ 166-165
 Էկտոպլազմա 65
 Էնդեմիկ 20-22
 Էնդոպլազմա 66
 Էնդոպլազմային ցանց 59, 66-70, 76
 -հատիկավոր 67
 -հարք 67

Էներգիական փոխանակություն (կատարողական) 100, 102
 Էներգիայի աղբյուր 60, 102, 103, 111, 115
 Էնտոդերմ 163-165
 Էվգլենա 131
 Էվոլյուցիա 13, 17, 21, 93, 125, 155, 166
 Էրիթրոզ 41

Ըմկալիչ 51, 64
 Ընկերություն 174-177, 181

Թաղամթանյութ 32, 42, 44
 Թաղամթի կառուցվածքի հեղուկ բյուրեղյա մոդել 61
 Թարթիչ 49, 66, 74, 143, 174
 Թելոֆազ 121, 123, 125, 145
 Թիլակոիդ 73
 Թոքախտ 82
 Թորթնջկաքացախաթթու 106
 Թրթուր 169-171

Ժառանգականության 3, 14, 58
 Ժառանգական ինֆորմացիա 121, 129, 177

Ինսուլին 45, 46, 51, 90, 164
 Ինսերֆազ 117-119, 121, 123, 124, 127
 Ինքնավերարտադրում-տե՛ս բազմացում
 Ի-Ութ 54, 68, 78, 86-91, 121
 Ինֆուզորիա 131

Լեյկոպլաստ 72
 Լեցիտին 42
 Լիզոսում 69, 70
 Լիզոցին 74
 Լիպիդ 40, 42-44, 56, 60-62, 67, 68, 71-73, 117
 Լիպոսում 43
 Լնդախտ 57
 Լրացման (կոմպլեմենտարության) սկզբունք 118
 Լուր 111

Խիազմ 147
 Խիտին 42
 Խլամիդիոզ 181-183
 Խմորում 104, 105
 -սպիրուլային 104, 105
 -կարմաթթվային 104
 -քացախաթթվային 104

Խողով 92
Խոլեստերին 42
Խոլերա 82, 84, 95

Կազմավորման մակարդակներ 17, 125
Կատարօլիզմ-տեսն էներգիական փոխանակություն
Կատարմեր (կրիստաներ) 71
Կարիոտիպ 127
Կարմրախտ 91
Կենսասինթեզ 27, 55, 87, 88, 90, 91, 99, 101, 109
Կենսատեխնոլոգիա 8, 9, 14, 33
Կենսացենոզ 81
Կենսոլորտ 19, 29
Կերպարանափոխություն (մետամորֆոզ) 172
-քերի 169
-լրիվ 169-171
Կիսակրներվատիվ սկզբունք 119
Կիտրոնաթրու 106
Կլոն 16, 129
Կլոնացում 129, 130
Կոճղարմատ 134, 137
Կոնյուգացում 145
Կոնֆորմացիա 46, 47
Կորիզակ 75-78, 122, 123
Կորիզահյութ 75-78, 125
Կոտրոն 135, 137
Կուսաթաղանք 143
Կուսածնություն (պարթենոգենեզ) 138, 153-155
Կրծքային շրջան 177, 179

Շակաբիոտիկ 80
Շաճքային աղեր 40, 65, 76, 80, 101, 115
Շասունություն 179
-սոցիալական 179
Շավկուրություն 57
Շարսնյակ 171
Շեմ 110
Շեմոգլոբին 49, 87, 110, 164
Շեշտոց 143, 144, 172, 182
Շեպատիտ 92
Շեպարին 42
Շետերոտրոֆներ 100, 102, 113, 114
Շերմաֆրոնիտ օրգանիզմներ 127, 138
Շեքսապլիդ 127
Շիստոն 76, 77

Շորմոն 42, 43, 51, 64, 130, 142, 144, 171
Շյուսվածք 18, 19, 22, 23, 36, 42, 60, 164
Շյուսվածքային կուլտուրա 136, 137
Շոմոլոգիա 164, 165

Չեռքբերովի ինունային անբավարարության համախտանիշ (ՉԻԱՇ) 94, 110
Չեռքբերովի ինունային անբավարարություն 182, 183
Չվաբջիջ 140, 142, 143, 149
-անիմալ բևեռ 159
-վեգետատիվ բևեռ 159
Չվազառում 144, 172
Չվարան 140, 143, 176, 178
Չվարանային բշտեր (Փոլիկուլներ) 143

Թարպեր 27, 41-43, 55, 56, 72, 102, 103

Սազաթափություն 57
Մակրոէրգիկ 57, 106
Մանրադիտակ 20, 22, 23, 35, 125
-լուսային 31, 33, 72, 77, 93, 121
-էլեկտրոնային 31, 34, 36, 62, 77
Մատրիցային սինթեզ 122, 123
Մարդու ինունային անբավարարության վիրուս (ՄԻԱՎ) 182, 183
Մեզասպոր 151
Մեզոդերմ 163, 165
Մետաբոլիզմ 100
Մետամորֆոզ-տեսն կերպարանափոխություն
Մետաֆազ 121, 127, 141, 145, 146, 148
Միաշաքարներ (մոնոսախարիդներ) 41
Միկրոխողովակ 65, 69, 74
Միկրոսպոր 150
Միոզին 50, 56
Միտոզ 117, 121-124, 127, 131, 145, 147-150, 156, 157
Միտոքոնդրիում 23, 28, 55, 58, 66, 70-74, 105, 127
Մոռելավորում 30
Մոլեկուլային կենսաբանություն 91
Մտրակ 49, 66, 79, 133, 158

Ախավիրուս 93, 96

Նաստիս 25
Ներառուկներ 65, 66, 159
Սիկոտին 185

Նիկոսինամիդադենինուկլեոտիդ (ՍԱԴ+) 103, 104, 106
Սիտրոգենազ 101
Նովլեինաթթուներ 13, 41, 44, 52-54, 88, 92, 121
Նովլեոտիդներ 41, 52-54

Cագանակագեղձ 144, 182
Շերեփուկ 129, 170, 172
Շիզոգոնիա 131
Շնչառական շղթա 106, 108, 109

Pալար 42, 134, 135, 137
Պատվաստ 135-137
Պատվաստուկ 84
Պարբերականություն 24
Պենիցիլին 83
Պեպտիդ 45
Պեպտիդային կապ 45, 89
Պերմեազ 49-51
Պերօքսիտ 69, 70
Պինոցիտոզ 93
Պիրիմիդինային հիմք 52
Պիրոխաղողաթթու 103, 104, 109
Պլազմալեմ 28, 61-64, 67, 69, 79, 80
Պլազմիդ 14, 16, 80, 81
Պլազմոդիում մալարիայի 125, 131
Պլաստիդ 23, 28, 55, 60, 66, 68, 72-74
Պլաստիկ փոխանակություն 99, 100, 109
Պոլիմեր 41, 44, 45, 52, 90, 120
Պոլիսիլիտ 92
Պոլիպորիդ 127
Պոլամա նատրիում-կալիումական 62, 63
Պոպուլացիա 19, 30
Պուրինային հիմք 52
Պրոտեալլաստ 73
Պրոտոնային պոտենցիալ 107
Պրոֆազ 121-124, 127, 145-147

Rոլը 39, 40, 60, 76, 101, 107, 108, 111, 115, 175
Զրածնային կապեր 40, 46, 53, 118
Զրինուր 18, 20, 38, 73, 132, 155, 156
-կանաչ 20, 131
-կապտականաչ 58, 84, 85, 100, 110, 114-116

Uաղիկալ 44, 46
Ուախտ 57
Ուժլեքս 176
Ուրոնուկլեազ 45
Ուրոսում 26, 54, 58, 66, 68, 72, 73, 76-78, 88-91
Ուրուլոզաբիֆոսատկարբօքսիլազ 111
Ութ 54, 68, 78, 86-91, 93, 94, 120, 121, 182
Ութ-պոլիմերազ 88
Ո-Ութ 54, 68, 77

Վախարոզ 111
Սահմանափակ աճ 167
Սաղմնային թերթիկներ 163-165
Սեռական 126, 127, 136-145, 149-159
-բջիջներ-տեն գամետներ
-դիմորֆիզմ 169
Սերմնաբողոք (սերմնակզբնակ) 151, 152
Սերմնաբուշ 142
Սերմնածորան 142
Սերմնարան 142, 178
Սիրիախս 82
Սիֆիլիս 82, 181
Սոխուկ 42, 134
Սպերմատիդ 140
Սպերմատոզիդ 180
Սպերմատոզիդ 36, 59, 139-144, 147, 154, 158, 172
Սպերմատոցիտ 140
-առաջին կարգի 140
-երկրորդ կարգի 140
Սպերմիոգենեզ 140
Սպերմիում 152
Սպիտակուց 17, 41, 44-51, 54, 61-66, 68-74, 76-80, 85-96
Սպիտակուց կառուցվածք 44-47
-առաջնային 44-46, 85
-երկրորդային 46
-երրորդային 46
-չորրորդային 46-47
Սպոր 129, 131-133, 150, 158
Սպորանգիում 132
Սպորոֆիտ 157, 158

Կակուլ 66-68
Կաղ մանկության շրջան 178
Կեգետատիվ բևեռ 159-163
Կերականգնում (ռեգեներացիա) 132

Վերարտադրողական առողջություն 180, 181
Վիտամին 21, 38, 56, 57, 82, 101
Վիրուս 37, 84, 91, 96, 175, 182, 183
Վիրուսային հիվանդություններ 84, 91, 92

Sարբերակում (դիֆերենցիացիա) 128-130, 163-165
Տեսակ 4, 19-22, 85, 118, 124-127, 136-139, 154-156, 168
Տետրապլոիդ 158
Տիֆ 6, 82, 95
Տրամախաչում (կրոսինգովեր) 147, 148
Տրանսլյացիա 90, 91
Տրանսկրիպցիա 88, 90, 91, 130
Տրիպլոիդ 152, 153
Տրոհում 159-162
- ամբողջական 159, 160, 162
-հավասարաչափ 160
-ոչ ամբողջական 159
Տրոպիզմ 25
Տրոֆորլաստ 173, 174

Bենտրիոլ 74, 118, 122, 139
Եենտրոմեր (առաջնային սեղմվածք) 121, 122
Ցիտոզ 63, 64
Ցիտոլիմեզ 123
Ցիտոպլազմա 58, 63, 65-67, 70, 72, 75-78, 103, 123, 159
Ցիրոզ 186

Pլուղորդող մարմին 172

Oօլիսարիչ 49, 50, 57, 62, 107, 111
Փոշեխողովակ 152
Փոշոտում 150, 152
-արհեստական 150
-ինքնափոշոտում 152
-խաչաձև 152
Փոփոխականություն 24, 148, 152, 155
Փ-ՈՒԹ 54, 88, 89

Rեմոսինթեզ 100, 115, 116
Քլորոպլաստ 58, 72, 73, 91, 91, 110, 111, 114, 115, 116, 131
Քլորոֆիլ 72, 73, 84, 110, 111-115
Քսիլոզ 41
Քրոմատիդ 122, 123, 127, 145, 146, 148

Քրոմատին 77
Քրոմոլաստ 72
Քրոմոսոմ 75-78, 93, 117-119, 121-126, 141, 145-147
-հոմոլոզ 126, 147
-սեռական 147
Քրոմոսոմային հավաքակազմ 126, 147, 148
-դիպլոիդ 127, 145, 149, 154, 158, 162, 172
-հապլոիդ 127, 145, 147, 156, 158

Oնսողենեզ 159, 162 170
Օսլա 42, 111
Օվոգենեզ 141
Օվոգոնիում 140
Օվոցիտ 141
-առաջին կարգի 141
-երկրորդ կարգի 141
Օրգան 14, 18, 42-44, 126, 132-136, 140
Օրգանական միացություններ 27, 41, 56, 60, 70, 81-83, 100, 110, 113
Օրգանների համակարգ 18, 22, 184
Օրգանոիդ 31, 32, 49, 55, 58, 64, 66, 68, 74, 75, 109, 117

Dագոցիտող 13, 63, 64, 69
Ֆերմենտ 38, 40, 48-51, 55, 56, 62, 69-74, 76, 77, 80, 88, 89, 92-94, 100, 101, 103-105, 107, 110-112, 118
Ֆիզիոլոգիական հաստինություն 179
Ֆլավինադենինուկլեոտիդ (ՖԱԴ) 106
Ֆուֆոլիափիդներ 42, 71
Ֆուտոսինթեզ 4, 27, 41, 72, 100, 101, 109-115
-լուսային փուլ 73, 110, 111
-մքնային փուլ 110-111
Ֆուտոսինթեզի արդյունավետություն 113
Ֆրազմենտացիա 132, 133

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն 3



ԲԱԺԻՆ I

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆ: ԳԻՏԱԿԱՆ
ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՍՈՍ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1. ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ՆԾԱՆԱԿՈՐ ԿԵՆՍԱԲԱՆՆԵՐ 11

ԳԼՈՒԽ 2. ԿԵՆԴԱՆԻ ՆՅՈՒԹԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՑԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. ԿՅԱՆՔԻ ԷՌԻԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԵՆԴԱՆԻ ՆՅՈՒԹԻ ՔԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 17

3. ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՑԱՍԿԱՐԳԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՔԱՏԿԱՆԻՉՆԵՐԸ 22

4. ԿԵՆԴԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿՈՒԹՅԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ 29



ԲԱԺԻՆ II

ԲԶԻԶ

ԳԼՈՒԽ 3. ԿԵՆԴԱՆԻ ՆՅՈՒԹԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԱԿՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ:

5. ՈՒՍՏՈՒՆՔ ԲՋՁԻ ՄԱՍԻՆ.....	35
6. ԿԵՆԴԱՆԻ ՆՅՈՒԹԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԸ: ՔԻՄԻԱԿԱՆ ՏԱՐՐԵՐ:	
ԱԽՈՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ.....	37
7. ՕՐԳԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ: ԱԾԽԱՋՐԵՐԻ ԵՎ ԱԱՐՊԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ,	
ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐՆ ՈՒ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՆԾԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	41
8. ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊՈԼԻՍԵՐՆԵՐ:	
ՄՊԻՏԱԿՈՒՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԴԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	44
9. ՄՊԻՏԱԿՈՒՑՆԵՐԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ.....	48
10. ՆՈՒԿԼԵԻՆԱԹԹՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ.....	52
11. ԱՐԵՆՈՁԻՆԵՐՆԵՐՆԱՖՈՐԱԿԱՆ ԹԹՈՒ: ՎԻՏԱՄԻՆՆԵՐ.....	55

ԳԼՈՒԽ 4. ԲՋՁԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

12. ՆԱԽԱԿՈՐԻՉԱՎՈՐ ԵՎ ԿՈՐԻՉԱՎՈՐ ԲԺԻՉՆԵՐ:	
ԲՋՁԻ ԴԻՄՈՒԱԿԱՆ ԲԱՂԱՊՐԱՍԱՍԵՐԸ.....	58
13. ԲՋՁԻ ԹԱՎԱՆԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ	
ԹԱՎԱՆԹԱՅՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ.....	60
14. ՑԻՏՈՊԼԱԶՄԱՆ, ԲՋՁԱԿԱՆԱԿԱՆ: ԲՋՁԻ ՕՐԳԱՆՈՒԴՆԵՐԸ.....	65
15. ԷՆԴՈՊԼԱԶՄԱՅԻՆ ՑԱՏՑԻ, ԳՈԼՑԻ ԱՊԱՐԱՏԻ, ԼԻԶՈՍՈՄՆԵՐԻ	
ԵՎ ՎԱԿՈՒՈԼՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՈՒ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ.....	67
16. ՄԻՏՈՔՈՆԴՐԻՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԼԱՍՏԻԴՆԵՐԻ	
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ: ԲՋՁԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ.....	70
17. ԲՋՁԱԿՈՐԻՉԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ.....	75
18. ՆԱԽԱԿՈՐԻՉԱՎՈՐ ԲՋՁԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	
ԵՎ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ: ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐ.....	78
19. ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ՆԾԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ: ԿԱՊՏԱԿԱՆԱՀ ԶՐԻՄՈՒՆԵՐ.....	81
20. ԺԱԼԱՆԳԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԲՋՁՈՒ	
ՆՈՒԿԼԵԻՆԱԹԹՈՒՆՆԵՐԻ ՍԻՆԹԵԶԸ, ՏՐԱՍՍԿՐԻՊՑԻԱ.....	85

21. ՄՊԻՏԱԿՈՒՑԻ ԿԵՆՍԱՎԻՆԹԵԶԸ: ՏՐԱՆՍԼԵՅԻՆ.....	88
22. ԿՅԱՆՔԻ ՈՉ ԲՋՋԱՅԻՆ ԶԵՎԵՐ՝ ՎԻՐՈՒՏՆԵՐ.....	91
I ԵՎ II ԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ.....	97



ԲԱԺԻՆ III

ՕՐԳԱՆԻՉԱԾ

ԳԼՈՒԽ 5: ՆՅՈՒԹԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ԲՋՋՈՒՄ

23. ՆՅՈՒԹԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՋՋՈՒՄ: ԱՎՏՈՏՐՈՒՖ	99
ԵՎ ՀԵՏԵՐՈՏՐՈՒՖ ՕՐԳԱՆԻՉԱԾՆԵՐ.....	
24. ԷՆԵՐԳԻԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ: ԱԵՖ-Ի	
ՄԻՆԹԵՁՆ ԱՊԱՏ ԹԹՎԱԾՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ.....	102
25. ԾՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ: ԱԵՖ-Ի ՄԻՆԹԵՁՆ ԹԹՎԱԾՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆՔ.....	105
26. ՊԼԱՍՏԻԿ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ: ՖՈՏՈՍԻՆԹԵԶ.....	109
27. ՖՈՏՈՍԻՆԹԵԶԻ ՎՐԱ ԱՇԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ:	
ՖՈՏՈՍԻՆԹԵԶԻ ՆԾԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ.....	112
28. ՖՈՏՈՍԻՆԹԵԶԻ ԱՊԱՏՆԱՌԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
ՆԱԽԱԿՈՐԻՉԱՎՈՐ ԲՋԻՉՆԵՐՈՒՄ: ՔԵՄՈՍԻՆԹԵԶ.....	114

ԳԼՈՒԽ 6. ԲՋՋԻ ԿԵՆՍԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

29. ԲՋՋԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԲԱԺԱՆԱԱՆ: ԴՆԹ-Ի ԿՐԿՆԱՊԱՏԿՈՒՄ.....	117
30. ԲՋՋԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ: ՄԻՏՈԶ.....	121
31. ՔՐՈՍՊՈՍՈԱՅԻՆ ԴԱՎԱՔՐԱԿԱԶՄԵՐ.....	124
32. ԲԱԶՄԱԲՋԻԶ ՕՐԳԱՆԻՉԱԾՆԵՐԻ ԲՋԻՉՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՒՄԸ.....	128

ԳԼՈՒԽ 7. ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

33. ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԲԱԶՄԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ: ԱՆՍԵՌ ԲԱԶՄԱՑՈՒՄ.....	131
34. ՎԵԳԵՏԱՏԻԿ ԲԱԶՄԱՑՈՒՄ: ԱՆՍԵՌ ԲԱԶՄԱՑՄԱՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	134
35. ՍԵՌԱԿԱՆ ԲԱԶՄԱՑՈՒՄ.....	138
36. ՍԵՌԱԿԱՆ ԲԱԶՄԱՑՄԱՆ ՕՐԳԱՆՆԵՐ.....	142
37. ՄԵՅՈԶ.....	145
38. ԲԵՂՄԱԿՈՐՈՒՄ: ԾԱՂԿԱԿՈՐ ԲՈՒՅՍՆԵՐԻ ԿՐԿԱԿԻ ԲԵՂՄԱԿՈՐՈՒՄ.....	149
39. ԿՈՒՍԱԾՆՈՒԹՅՈՒՆ: ՍԵՌԱԿԱՆ ԲԱԶՄԱՑՄԱՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	153
40. ԿԵՆԴԱՆԻ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԵՆՍԱԿԱՆ ՑԻԿԼԵՐ.....	155

ԳԼՈՒԽ 8. ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

41. ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ՍԱՐՄԱՆՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ՏՐՈՅՉՈՒ.....	159
42. ԳԱԱՏՐՈՒԼԱՑՈՒՄ ԵՎ ԱՊԱՋԱՆՅԻՆ ՕՐԳԱՆՈԳԵՆԵԶ.....	163
43. ՔԵՏՍԱՊՄԱՆՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ՈՒՂՂԱԿԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ.....	166
44. ԱՆՈՒՂՂԱԿԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ԼՐԻԿ ԵՎ ԹԵՐԻ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ.....	169
45. ՍԱՐԴՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ: ՍԱՐՄԱՆՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.....	172
46. ՍԱՐԴՈՒ ՔԵՏՍԱՊՄԱՆՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.....	177
47. ՎԵՐԱՐՄԱՆՈՂՈՎԱԿԱՆ ԱՊՈՂԶՈՒԹՅՈՒՆ.....	180
48. ՄԻԶԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ.....	184
III ԲԱԺՆԻ ԱՍՓՈՓՈՒՄ.....	187
ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.....	189
ԱՊԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ.....	199
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	204

ԵՄԻԼ ՍՈՍԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝ կենս. գիտ. դրվագոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ
ՖԵԼԻՔՍ ԴԱՍԻԵԼԻ ԴԱՍԻԵԼՅԱՆ՝ կենս գիտ. դրվագոր, պրոֆեսոր
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀՐԱՍՏԻ ԵՍԱՅՅԱՆ՝ կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
ԳԱՐԵԳԻՆ ԳԵՎՈՐԳԻ ՍԵՎՈՅՅԱՆ՝ կենս. գիտ. թեկնածու, դոցենտ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - 10

(ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական և ընդհանուր հոսքերի համար)

Ընդհանուր խմբագրությամբ՝

կենս. գիտ, դրվագոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ ԱՐՄԵՆ ՀԱՍԲԱՐՁՈՒՄԻ ԹՈՉՈՒՅՑԱՆԻ

Հրատարակիչ-տնօրեն՝ Ս. Զունգուրյան
Սրբագրիչ՝ Ծ. Հովհաննիսյան
Հանակարգչային ձևավորող՝ Ա. Եսայան

Զափսը՝ 70x100 1/16:
Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:
7.5 տպ. մամուլ: Պատվեր՝ 962:
Տպաքանակը՝ 32000.



«ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ» հրատարակչություն
(0009, Երևան, Գևորգ Քոչարի փ., 21)

Տպագրվել է՝ «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» ՓԲԸ տպարանում